

**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Գլխավոր տեղեկություն**

Համար	N 713-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (02.04.2007-12.05.2007)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀԳՏ 2007.03.23/9.1 Հոդ.153.1
Ընդունող մարմին	Կենտրոնական բանկի խորհուրդ
Ընդունման ամսաթիվ	05.12.2006
Ստորագրող մարմին	Կենտրոնական բանկի նախագահ
Ստորագրման ամսաթիվ	11.12.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	02.04.2007

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

5 դեկտեմբերի 2006 թ.

N 713-Ն

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 4-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 18-րդ, 20-23-րդ, 27-29-րդ, 31-րդ, 32-րդ, 34-37-րդ, 39-րդ, 44-47-րդ, 67-րդ, 76-րդ, 78-րդ, 79-րդ, 81-83-րդ, 86-րդ, 88-րդ, 97-րդ, 98-րդ, 102-րդ, 103-րդ, 105-րդ, 107-րդ, 108-րդ, 110-րդ, 112-116-րդ, 132-րդ, 133-րդ, 138-րդ հոդվածները, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է.**

1. Հաստատել «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի 2001 թվականի սեպտեմբերի 28-ի ««Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագիրքը» հաստատելու, Հայաստանի Հանրապետության արժեթղթերի հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու և չեղյալ համարելու մասին» թիվ 392/01 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀՀ կենտրոնական  
բանկի նախագահ**

**S. Սարգսյան**

2006 թ. դեկտեմբերի 11  
Երևան

Հավելված  
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի  
2006 թվականի դեկտեմբերի 5-ի  
թիվ 713-Ն որոշման

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ**

**Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր Ք**

**Մ Ա Ս Ս**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

**Բ Ա Ժ Ի Ն 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՑՆԵՐ**

Սույն Կանոնագիրքը ներառում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակով սահմանված Կանոնները՝ դրանց կողիֆիկացիայի նպատակով:

**Գ Լ ՈՒ Խ 1**

**ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԳՐՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 1.1. Սույն Կանոնագրքի մեջ օգտագործված հետևյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը, եթե դրանց օգտագործման ենթատեքստից այլ բան չի բխում՝
  - 1.1.1. «**Ամսաթիվ**» բառը ներառում է ամսաթիվը, ամիսն ու տարեթիվը.
  - 1.1.2. «**Արժեթղթերի նշանակալից փաթեթ**» նշանակում է Նույն դասի արժեթղթերի 10 և ավելի տոկոսը.
  - 1.1.3. «**Արժեթղթերի խոշոր փաթեթ**» նշանակում է Նույն դասի արժեթղթերի 20 և ավելի տոկոսը.
  - 1.1.4. «**Արժեթղթերի հսկիչ փաթեթ**» նշանակում է արժեթղթերի այնպիսի խոշոր փաթեթ, որը դրա տիրապետողին հնարավորություն է ընձեռում կանխորոշել տվյալ թողարկողի գործունեությունը կամ դրա առանձին կողմերը, կամ հատվածները.
  - 1.1.5. «**Օրենք**» նշանակում է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.
  - 1.1.6. «**Կենտրոնական բանկ**» նշանակում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.
  - 1.1.7. «**Հավատարմագրված աուդիտոր**» նշանակում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան հավատարմագրված աուդիտոր կամ աուդիտորական կազմակերպություն.
  - 1.1.8. «**Հավատարմագրված ներդրող**» նշանակում է անձ, որի՝ սույն կանոնագրքի 2.3 կետով նախատեսված հավատարմագրման հայտարարագրի գրանցումն ուժի մեջ է.
  - 1.1.9. «**ՀՀՄ**» նշանակում է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներ, իսկ եթե ուղեկցվում է թվով (օրինակ՝ ՀՀՄ 19), ապա նշանակում է միայն տվյալ համարի ստանդարտը.
  - 1.1.10. «**Չուտ ակտիվ**» նշանակում է տվյալ անձի՝ ՀՀՄ-ին համապատասխան կազմված հաշվապահական հաշվեկշռի համաձայն որոշված սեփական կապիտալը.
  - 1.1.11. «**Մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձ**» նշանակում է այն անձը, որը Կենտրոնական բանկի որոշումներին համապատասխան արժեթղթերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու որակավորում ունի և դրան համապատասխան գործում է մասնագիտացված անձի անունից կամ կազմում.
  - 1.1.12. «**Թողարկողի կառավարման մարմինը**» օրենքով, այլ իրավական ակտերով և թողարկողի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված կամ նշանակված մարմինն է (տնօրենների խորհուրդը, գործադիր մարմինը, վերստուգող հանձնաժողովը և այլն).
  - 1.1.13. «**Կառավարման մասնակցող անձը**» թողարկողի կառավարման մարմիններում ընդգրկված կամ

կառավարմանը մասնակցող անձն է, գլխավոր հաշվապահը կամ նման պարտականություն կատարող անձը, ինչպես նաև ցանկացած այլ անձ, որն ընդգրկված է թողարկողի գործունեության մեջ և ղեկավարում է վերջինիս գործունեությանը վերաբերող որևէ նախագիծ, ծրագիր, մասնաճյուղ կամ ներկայացուցչություն:

1.1.14. «Փաստաթղթային արժեթուղթ» նշանակում է Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ցանկացած արժեթուղթ, որը թղթային կրիչ ունի, եթե նման կրիչը ներկայացնելով հնարավոր է փոխանցել տվյալ արժեթուղթը, դրանով ամրագրված իրավունքների մի մասը կամ կատարում պահանջել նման արժեթղթով, բացառությամբ անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրից տրված քաղվածքի կամ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից անձնական կամ նման այլ հաշվից տրված քաղվածքի, որոնք ընդամենը վկայում են, որ պահառուի և ռեեստրավարի կողմից տվյալ քաղվածքը պատրաստելու պահին տվյալ անձի կամ անձանց անունով գրանցված է որոշակի արժեթղթի որոշակի քանակություն:

## Գ Լ ՈՒ Խ 2

### ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՆԵՐՂՐՈՂ (ԿԱՆՈՆ 4-1.)

2.1. Օրենքով նախատեսված «Ինստիտուցիոնալ ներդրող» հասկացության «բ» կետի իմաստով՝ ինստիտուցիոնալ ներդրող է համարվում նաև հավատարմագրված ներդրողը:

2.2. Անձը կարող է հավատարմագրվել՝ Կենտրոնական բանկին հավատարմագրման հայտարարագիր ներկայացնելով: Հավատարմագրման հայտարարագիրը իրավաբանական անձի կողմից ներկայացվում է 4-1բ-1 ձևին, իսկ ֆիզիկական անձի կողմից՝ 4-1բ-2 ձևին համապատասխան: Հայտարարագրին կից ներկայացվող փաստաթղթերը դրա մասն են կազմում: Հայտարարագիրը և դրան կից ներկայացվող փաստաթղթերի յուրաքանչյուր էջը պետք է ստորագրի ներդրողը: Իրավաբանական անձի պարագայում հայտարարագիրը (կից փաստաթղթերով) պետք է լինի կարված, էջերը համարակալված, ստորագրված և կնքված գործադիր տնօրենի կամ լիազորված այլ անձի կողմից՝ ներկայացնելով լիազորության բավարար ապացույցը (լիազորագիր, կանոնադրություն, որոշում և այլն)՝ եթե դրանք ներառված չեն հայտարարագրում:

2.3. Ներդրողի հավատարմագրման հայտարարագրի գրանցումն ուժի մեջ է մտնում՝ տվյալ հայտարարագիրը սահմանված ձևով Կենտրոնական բանկ ներկայացնելու 10-րդ աշխատանքային օրը կամ դրան նախորդող այն օրը, երբ Կենտրոնական բանկը հայտարարագիրը գրանցված կհամարի, բացառությամբ սույն կանոնագրի 2.4 կետով նախատեսված դեպքերի: Եթե մինչև հավատարմագրման հայտարարագիրն ուժի մեջ մտնելու օրը դիմումում որևէ լրացում է ներկայացվում Կենտրոնական բանկ, ապա հայտարարագիրը ներկայացված է համարվում լրացումը ներկայացնելու օրվանից:

2.4. Կենտրոնական բանկը, նախնական ծանուցմամբ և լսման հնարավորության ընձեռմամբ, մերժում է հավատարմագրման հայտարարագիրը կամ դադարեցնում է դրա գործողությունը, եթե համարում է, որ տվյալ անձը չի համապատասխանում սույն կանոնագրի 2.5 կամ 2.6 կետերով սահմանված չափանիշներին:

2.5. Իրավաբանական անձի հավատարմագրման հայտարարագիրը չի մերժվում, եթե՝

2.5.1. դրա զուտ ակտիվները՝ տվյալ տարվան նախորդող տարվա, հավատարմագրված առևտրորդի կողմից վերստուգված ֆինանսական հաշվետվություններին համաձայն գերազանցել են երկու հարյուր միլիոն դրամ մեծությունը, իսկ ընդհանուր ակտիվների առնվազն 15 տոկոսը կազմել են հրապարակայնորեն վաճառվող արժեթղթերը, կամ

2.5.2. դրա զուտ ակտիվները՝ տվյալ տարվան նախորդող տարվա հավատարմագրված առևտրորդի կողմից վերստուգված ֆինանսական հաշվետվություններին համաձայն գերազանցել են մեկ միլիարդ դրամ մեծությունը:

2.6. Ֆիզիկական անձի հավատարմագրման հայտարարագիրը չի մերժվում, եթե նրա՝ տվյալ տարվան նախորդող տարվա ընթացքում ստացված եկամուտը գերազանցում է հարյուր միլիոն դրամը: Տվյալ անձի եկամուտներին են դասվում նաև նրա ընտանիքի անդամների (եթե համատեղ են բնակվում) եկամուտները:

2.7. Անկախ սույն գլխի դրույթներից, ներդրողի հավատարմագրման հայտարարագիրն ուժը կորցնում է՝ ուժի մեջ մտնելու 360-րդ օրը, եթե տվյալ ժամանակահատվածում հավատարմագրման նոր հայտարարագիր չի ներկայացվում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում հավատարմագրման նոր հայտարարագիր է ներկայացվում, ապա նախկին հայտարարագիրը պահպանում է իր ուժը մինչև նոր հայտարարագրի գրանցումը կամ մերժումը:

## Գ Լ ՈՒ Խ 3

### ՉՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆ 4-2.)

3.1. Օրենքով նախատեսված «Հաշվետու թողարկող» հասկացության «բ» կետի համաձայն՝ անձին հաշվետու թողարկող որակելու նպատակով «զուտ ակտիվների» մեծության չափը սահմանվում է 500.000.000 (հինգ հարյուր միլիոն) դրամ:

3.2. Չուտ ակտիվները մեծությունը հաշվարկվում է տվյալ տարվան նախորդող տարվա ՀՀՍ համաձայն կազմված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Եթե ֆինանսական հաշվետվությունները ՀՀՍ համաձայն կազմված չեն, ապա տվյալ թողարկողին հաշվետու որակելու նպատակով Կենտրոնական բանկն իրավունք ունի որպես զուտ ակտիվների մեծության կանխավարկած հիմք ընդունել հետևյալ երկու ցուցանիշներից առավելագույնը՝

3.2.1. տվյալ թողարկողի ֆինանսական հաշվետվություններում ֆիքսված զուտ ակտիվների մեծությունը, կամ

3.2.2. տվյալ թողարկողի կանոնադրական կապիտալի մեծությունը:

3.3. Եթե տվյալ թողարկողի զուտ ակտիվների մեծությունը Կենտրոնական բանկին հայտնի չէ, ապա Կենտրոնական բանկն իրավունք ունի առաջնորդվել այն կանխավարկածով, որ տվյալ թողարկողի զուտ ակտիվների մեծությունը հավասար կամ գերազանցում է տվյալ թողարկողի կանոնադրական կապիտալի այն մեծությունը, որն ամրագրված է դրա գրանցված կանոնադրությամբ: Հակառակն ապացուցելու պարտականությունը կրում է տվյալ թողարկողը:

## Գ Լ ՈՒ Խ 4

### ՏԵՂԵԲԱԾԽՈՂ ԳՀԱՍՏՐՎՈՂ ԱՆՁԻՆԸ (ԿԱՆՈՆ 4-3.)

4.1. Օրենքի 4-րդ հոդվածի իմաստով՝ անձը տվյալ արժեթղթերի տեղաբաշխող չի համարվում, եթե՝

4.1.1. դրանք ձեռք է բերել ներդրման նպատակով:

4.1.2. ձեռք բերելուց հետո անընդհատ հանդիսացել է դրանց սեփականատեր՝ առնվազն 720 օրվա ընթացքում:

4.1.3. ցանկացած տասներկու ամիսների ընթացքում մեկ կամ ավելի գործարքների արդյունքում չի օտարում կամ չի առաջարկում օտարել տվյալ դասի արժեթղթերի նշանակալից փաթեթը:

4.2. Անձի կողմից արժեթղթի ձեռքբերումը համարվում է «ներդրման նպատակով», եթե նա ձեռքբերման պահին վճարել կամ խոստացել է վճարել տվյալ արժեթղթի համար, ստանձնել է թողարկողի ձեռնարկատիրական գործունեության ռիսկը՝ վերջինիս ձեռնարկատիրական գործունեության արդյունքներով եկամուտ ստանալու նպատակով (ինչը չի ներառում տվյալ թողարկողի արժեթղթերով գործարքների արդյունքում ստացվող եկամուտը): Ընդ որում, ձեռքբերման նպատակի հիմնավորման պարտականությունը տվյալ անձին է: Այն կարող է հիմնավորվել գործարքի հանգամանքներով, ինչպես նաև այլ ապացույցներով:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ: ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բ Ա Ժ Ի Լ 2

ԱՉՂԱԳԻՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Գ Լ ՈՒ Խ 5

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԶԵՎՆ ՈՒ ԿԱՌՈՒԹՅԱԾԵԸ (ԿԱՆՈՆ 9.1-1.)

5.1. Արժեթղթերի գրանցման հայտարարագիրը կազմված է գրանցման հայտարարագրի տիտղոսաթերթից, ազդագրից (հայտարարագրում պահանջվող տեղեկություններից) և գրանցման հայտարարագրին կից ներկայացվող այլ փաստաթղթերից:

5.2. Գրանցման հայտարարագրի տիտղոսաթերթը պետք է ներառի թողարկողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման ամսաթիվը, արժեթղթերի դասը (տեսակը), ձևը, քանակը, անվանական արժեքը (ամկայության դեպքում), թողարկողի գործունեության հիմնական տեսակը, թողարկման մասին որոշումն ընդունող իրավասու մարմնի անվանումը և որոշման ընդունման ամսաթիվը, թողարկողի գտնվելու վայրը, կապի միջոցները, դրույթը: «Մենք հավաստիացնում ենք, որ սույն հայտարարագրում պարունակվող տեղեկությունները ստույգ են, և լիակատար գիտակցում ենք, որ նրանում որևէ էական փաստի սխալ ներկայացում կամ բացթողում կարող է հանգեցնել հայտարարագրի գրանցման մեթոմանը և (կամ) ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը:», ինչպես նաև գրանցման հայտարարագիրը ստորագրող անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, ստորագրությունները և յուրաքանչյուր ստորագրման ամսաթիվը, դրույթը: «Ստորագրությունները վավերացնում են.», ստորագրությունները վավերացնող անձի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը և ստորագրման ամսաթիվը:

5.3. Հայտարարագիրը պետք է ստորագրված լինի թողարկողի տնօրենների խորհրդի (կամ նման իրավասություն ունեցող այլ մարմնի) անդամների մեծամասնության, գործադիր տնօրենի, գլխավոր հաշվապահի (եթե թողարկողի կառուցվածքում վարչություն կամ գործադիր այլ մարմին է նախատեսված, ապա դրա բոլոր անդամների) կողմից: Ստորագրությունները պետք է վավերացվեն թողարկողի տնօրենների խորհրդի նախագահի կամ գործադիր տնօրենի կամ նման իրավասություն ունեցող այլ անձի կողմից: Վավերացումը պետք է հաստատվի թողարկողի կնիքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի կնիքով:

5.4. Ազդագրում տեղեկությունները ներառվում են սույն կանոնագրքի 7-րդ գլխին և դրանով սահմանված հերթականությանը համապատասխան, եթե սույն կանոնագրքի դրույթներով այլ բան նախատեսված չէ:

5.5. Գրանցման հայտարարագրի մասն են կազմում և ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

5.5.1. տվյալ արժեթղթերի թողարկման ամսաթվով առավելագույնը երեք տարի վաղեմության ժամկետ ունեցող որոշումները և պայմանագրերը կամ դրանց պատճենները՝ այդ թվում.

- ա) թողարկողի կանոնադրության բնօրինակը կամ դրա պատճենը.
- բ) թողարկողի պետական գրանցման վկայականի պատճենը.
- գ) արժեթղթերի թողարկման մասին որոշման արձանագրության բնօրինակը կամ դրա պատճենը.
- դ) թողարկողի արժեթղթերով նախատեսված պարտավորությունները կամ դրանց մի մասը երաշխավորող անձի (ամկայության դեպքում) կողմից տրված երաշխավորագրի բնօրինակը կամ դրա պատճենը.
- ե) արժեթղթերի տեղաբաշխումն իրականացնող անձի հետ (ամկայության դեպքում) կնքված պայմանագրի բնօրինակը կամ դրա պատճենը.
- զ) աուդիտի եզրակացության պատճենը.
- է) թողարկողի գուծունեության համար անհրաժեշտ հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) պատճենները (ամկայության դեպքում).

ը) այն պայմանագրերի (իրամանների, որոշումների) բնօրինակները կամ պատճենները, որոնց համաձայն՝ անձինք հանդիսանում են կառավարմանը մասնակցող անձ (տնօրենների (դիտորդ), խորհրդի անդամներ, գործադիր և վերստուգող մարմինների անդամներ, գլխավոր հաշվապահ կամ նման պարտականություն իրականացնող անձ, ինչպես նաև ցանկացած այլ անձ, որն ընդգրկված է թողարկողի գործունեության մեջ և ղեկավարում է վերջինիս գործունեությանը վերաբերող որևէ նախագիծ, ծրագիր մասնաճյուղ կամ ներկայացուցչություն).

թ) այն պայմանագրերի բնօրինակները կամ դրանց պատճենները, որոնք թողարկողը կնքել է արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձի (այդ թվում՝ Կենտրոնական ղեկավարության) հետ.

5.5.2. հաշվետու թողարկող չհանդիսացող փոխկապակցված անձանց գրավոր համաձայնությունն իրենց մասին տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելու մասին.

5.5.3. արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման ծախսերի նախահաշիվը (թողարկվող արժեթղթերի համար).

5.5.4. հայտարարագրում օգտագործվող կամ այդ նպատակով ստացած որևէ անձի (հաշվապահի, գնահատողի, խորհրդատուի կամ այլ փորձագետի) ստորագրված մասնագիտական կարծիքը և այդ կարծիքն օգտագործելու մասին գրավոր համաձայնությունը:

5.6. Հայտարարագրում ներառվող որևէ տեղեկության (այդ թվում՝ գաղտնիք հանդիսացող տեղեկության), համաձայնության կամ ստորագրության բացակայությունը պետք է պատշաճ հիմնավորվի, եթե կանոններով այլ բան նախատեսված չէ:

5.7. Ֆիզիկական անձինք հայտարարագրում տեղեկությունները ներառում են իրավաբանական անձանց համար սահմանված պահանջներին համապատասխան՝ ելնելով դրանց համարժեքության և կիրառելիության սկզբունքից (օրինակ՝ իրավաբանական անձանց անվանման փոխարեն ֆիզիկական անձինք պետք է ներկայացնեն անուն, ազգանունը), եթե կանոններով այլ բան նախատեսված չէ:

Գ Լ ՈՒ Խ 6

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 9.1-2.)

6.1. Հայտարարագիրը Կենտրոնական բանկ է ներկայացվում.

6.1.1. երեք օրինակից՝ թղթային ձևով, և

6.1.2. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ստացման մասին հետագայք ծանուցման ռեժիմով, բացառությամբ սույն կանոնագրքի 5.5 կետով սահմանված փաստաթղթերի: Էլեկտրոնային փոստով ներկայացվող հայտարարագիրը կազմվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան: Էլեկտրոնային հաղորդակցման միջոցի խափանման դեպքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացման ենթակա հայտարարագիրը ներկայացվում է մազնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Հայտարարագիրը էլեկտրոնային փոստով, մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են հետևյալ ձևով՝ XXXX-XXX.xxx, որտեղ XXXX-ը Կենտրոնական բանկի կողմից թողարկողին շնորհված կոդն է, XXX-ը Կանոնագրքի այն բաժնի համարն է, որի համաձայն ներկայացվում է հայտարարագիրը, իսկ xxx-ը ֆայլի տեսակն է: Կենտրոնական բանկի կողմից թողարկողին կողավորում շնորհված չլինելու դեպքում

Էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացման ենթակա հայտարարագիրը ներկայացվում է բացառապես մագնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կողավորված Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանման հետ համաձայնեցված ձևով:

6.2. Հայտարարագրի տիտղոսաթերթը պետք է ներառի սույն կանոնագրքի 5.2 կետով սահմանված տեղեկությունները և կազմված լինի 9.1-1 ձևին համապատասխան:

6.3. Հայտարարագիրը՝ ներառող բոլոր փաստաթղթերով հանդերձ (այսուհետ՝ Հայտարարագիր), պետք է ներկայացվի համաձայն հետևյալ պահանջների՝

6.3.1. հայտարարագիրը պետք է լինի դյուրընթեռելի, գրական հայերենով և լրացված տպագրական եղանակով.

6.3.2. հայտարարագրի առնվազն մեկ թղթային ձևով օրինակը պետք է դարձված և վավերացված լինի թողարկողի կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ անձի կնիքով.

6.3.3. հայտարարագրի թերթերը պետք է համարակալված լինեն.

6.3.4. եթե անհնար է հայտարարագրում ներառվող որևէ փաստաթղթի ներկայացումը սույն կանոնագրքի 6.3.1 կետի դրույթներին համապատասխան, անհրաժեշտ է հայտարարագրում ներառել դրա վերաշարադրված տարբերակը՝ «Իսկականի հետ ճիշտ է» նշագրումով և այդ փաստաթղթի պատճենը:

6.4. Որպես լրացում ներկայացվող հայտարարագրերը (լրացումները) պետք է.

6.4.1. ներկայացվեն գրանցման հայտարարագրի ձևին, կառուցվածքին և ներկայացման պահանջներին համապատասխան.

6.4.2. պարունակեն գրանցման հայտարարագրում ներառման ենթակա բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը (բացառությամբ՝ հայտարարագրով նախկինում պատշաճ ներկայացված կից փաստաթղթերի):

## Գ Լ ՈՒ Խ 7

### ԱՉՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՈՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 10.1-1.)

7.1. Ազդագրի տիտղոսաթերթը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

7.1.1. փաստաթղթի անվանումը՝ «Արժեթղթերի ազդագիր».

7.1.2. թողարկողի ֆիրմային անվանումը և կազմակերպական-իրավական ձևը.

7.1.3. տեղաբաշխվող արժեթղթերի դասը (տեսակը), ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային), քանակը և առկայության դեպքում՝ նաև տեղաբաշխվող արժեթղթերի անվանական արժեքը.

7.1.4. թավյալ, մեծատառ և աչքի ընկնող տառատեսակով արտահայտված դրույթ՝

ա) «ՍՈՒՅՆ ԱՉՐԱԳՐԻՆ ՆԵՐԱՈՂ ԱՐԺԵԹՐԹԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻՆ ԳՐԱՆՑՎԱԾ ՉԷ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ: ԱՉՐԱԳՐՈՎ ԱՐԺԵԹՐԹԵՐԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ԸՆԴՈՒՄԻՆ ՎԵՐԻ ՈՒՐԵՆԱԼ ՄԻԱՅՆ ՎԵՐՈՂԻՑՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒՄ ԵՎ ԱՉՐԱԳՐԻՆ ԳՆՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՄ ՀԵՏՈ»:

Այս դրույթը պարտադիր է, եթե ազդագիրը ներառող գրանցման հայտարարագիրը գրանցված չէ,

բ) «ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊՏԱՍՍԱԿԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱՉՐԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ».

7.1.5. տեղաբաշխողի (երաշխավորի) և (կամ) երկու և ավելի անձանց միջև տեղաբաշխման նպատակով կնքված համաձայնության առկայության դեպքում՝ տիտղոսաթերթի ստորին ծախ անկյունում նշվում են անվանումը՝ իրավաբանական անձանց համար և (կամ) անուն, ազգանունը՝ ֆիզիկական անձանց համար.

7.1.6. այն դեպքում, երբ արժեթղթերն առաջարկվում են դրամական վճարման պայմանով, ապա ներկայացվում են տեղեկություններ հանրությանն առաջարկվող գնի (կամ դրա որոշման կարգի), թողարկողի հասույթների, ինչպես նաև բաժնային արժեթղթերի այն սեփականատերերին պատկանող արժեթղթերի և դրանց վաճառքից ստացվող հասույթների մասին, որոնք առաջարկում են իրենց պատկանող արժեթղթերի վաճառքը: Սույն տեղեկությունը կարող է ներկայացվել արյունակի կամ այլ նպատակահարմար ձևով.

7.1.7. ազդագրում ներառված տեղեկությունների ցանկը.

7.1.8. ազդագիրը ներառող արժեթղթի գրանցման հայտարարագիրը գրանցելուց հետո թողարկողը՝

ա) պարտավոր է հանել սույն կանոնագրքի 7.1.4 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթը.

բ) կարող է ազատ շարադրել սույն կանոնագրքի 7.1.5 կետի դրույթները և հայտարարագրի գրանցման ամսաթիվը:

7.2. Ազդագրի «Տեղեկությունների ամփոփ նկարագիր» բաժինը պետք է ազդագիրն օգտագործող անձանց համար հնարավորություն ընձեռի ամփոփ պատկերացում կազմել ազդագրի հրապարակման նպատակների, ինչպես նաև թողարկողի և նրա գործունեության (այդ թվում՝ ֆինանսական) վերաբերյալ:

7.3. Ազդագրի «Ռիսկային գործոններ» բաժնում ներկայացվում են այն հիմնական գործոնները, որոնցով պայմանավորված են այս առաջարկի ընդունման հնարավոր բացասական հետևանքները և դրանց առաջացմանը նպաստող հնարավոր գործոնները (այդ թվում՝ թողարկողի կողմից իրականացված գործունեության, վերջին շրջանում կատարված շահութաբեր գործառնությունների, ֆինանսական դրության, իրականացվող կամ իրականացվելիք գործունեության, բաժնային արժեթղթերի և դրանց փոխարկվող արժեթղթերի շուկային վերաբերող և այլ ռիսկային գործոնները), ինչպես նաև այդ ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը:

7.4. Ազդագրի «Թողարկողի մասին ընդհանուր տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 8-րդ գլխի:

7.5. Ազդագրի «Թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց մասին տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 9-րդ գլխի:

7.6. Ազդագրի «Թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի մասին տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 10-րդ գլխի:

7.7. Ազդագրի «Թողարկողի հետ փոխկապակցված անձանց մասին տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 8-րդ գլխի:

7.8. Ազդագրի «Թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 12-րդ գլխի:

7.9. Ազդագրի «Թողարկողի ֆինանսական վիճակի մասին տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 13-րդ գլխի:

7.10. Ազդագրի «Թողարկողի գործունեության վերաբերյալ տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 14-րդ գլխի:

7.11. Ազդագրի «Թողարկողի նախատեսվող գործունեության մասին տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 15-րդ գլխի:

7.12. Ազդագրի «Թողարկվող արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ» բաժինը ներկայացվում է համաձայն սույն կանոնագրքի 16-րդ գլխի:

7.13. Բացի սույն գլխով սահմանված տեղեկություններից, տեղեկություններ ներկայացնող անձը (այդ թվում՝ թողարկողը) կարող է ընդգրկել նաև այլ տեղեկություններ, քարտեզներ, սխեմաներ, լուսանկարներ և այլն, որոնք, իր կարծիքով, ավելի ամբողջական կդարձնեն թողարկողի մասին տեղեկությունների բացահայտումը:

## Գ Լ ՈՒ Խ 8

### ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 10.1ա-1.)

- 8.1. Ներկայացնել թողարկողի ֆիրմային անվանումը, դրա հապավումը կամ կրճատ ձևը, եթե այդպիսիք կան: Եթե թողարկողի կանոնադրության մեջ տրված են թողարկողի ֆիրմային անվանման տարբերակներ այլ լեզուներով, ապա նշվում են նաև դրանք: Եթե թողարկողի ֆիրմային անվանումը նման է այլ կազմակերպության անվանմանը, ապա պետք է տրվեն անհրաժեշտ բացատրություններ՝ հավանական թյուրմատչություններից խուսափելու համար:
- 8.2. Ներկայացնել թողարկողի ստեղծման կազմակերպական-իրավական ձևը և ամսաթիվը: Եթե թողարկողի գործունեության ընթացքում փոփոխվել է նրա անվանումը կամ թողարկողը վերակազմակերպվել է, ապա նշվում են նաև նրա բոլոր անվանումները, կազմակերպական-իրավական ձևերը, դրանց փոփոխման պատճառները, ինչպես նաև դրանք փոփոխելու ամսաթիվերը:
- 8.3. Ներկայացնել թողարկողի առաջին և վերջին (առկայության դեպքում) պետական գրանցման ամսաթիվերը և գրանցման համարը՝ ըստ վկայականի կամ թողարկողի պետական գրանցումը հաստատող այլ փաստաթղթի:
- 8.4. Ներկայացնել տեղեկություններ թողարկողի գործունեության իրականացման հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) վերաբերյալ՝ նշելով գործունեության համապատասխան տեսակները, հատուկ թույլտվությունների (լիցենզիաների) համարները, տրման ամսաթիվերը, գործողությունների ժամկետները, ինչպես նաև լիցենզավորող մարմնի անվանումը:
- 8.5. Նշել թողարկողին հարկային մարմինների կողմից հատկացված հարկատու անձի հաշվառման համարը:
- 8.6. Ներկայացնել այն բանկերի անվանումները, որտեղ թողարկողի համար բացված են հաշվարկային և այլ հաշիվներ:
- 8.7. Ներկայացնել թողարկողի բոլոր մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների անվանումները, դրանց ստեղծման ամսաթիվերը, գտնվելու վայրերը, ինչպես դրանք նշված են թողարկողի կանոնադրությունում, թողարկողի բոլոր մասնաճյուղերի ու ներկայացուցչությունների ղեկավար անձանց ազգանունները, անունները, ինչպես նաև թողարկողի կողմից նրանց տրված լիազորությունների գործողության ժամկետները:
- 8.8. Ներկայացնել այն (անձի) անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր է՝ նշելով անձի ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը և փոստային հասցեն, թողարկողին պատկանող բաժնային արժեթղթերի քանակը և մասնակցության չափը:
- 8.9. Ժամանակագրական կարգով ներկայացնել այն անձանց անվանումները (անուն, ազգանունները), գտնվելու վայրերը և կապի միջոցները, որոնք վերջին երեք տարիների ընթացքում.
- 8.9.1. իրականացրել են թողարկողի աուդիտը.
- 8.9.2. հանդիսացել են թողարկողի փորձագետը կամ խորհրդատու, և որոնց կարծիքն օգտագործվել է հայտարարագրում (առկայության դեպքում):
- 8.10. Ներկայացնել այն արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերի, հոլդինգների, կոնցեռնների և միությունների անվանումները և գտնվելու վայրերը, որտեղ թողարկողը մասնակցություն ունի: Նկարագրել նշված կազմակերպություններում թողարկողի հիմնական իրավունքներն ու պարտականությունները:
- 8.11. Ներկայացնել թողարկողի աշխատակիցների ընդհանուր քանակը՝ առանձին նշելով վարչական ապարատում ընդգրկված անձանց՝ եթե այդպիսիք կան, ինչպես նաև հարկադիր պարապուրդում գտնվող անձանց քանակը:
- 8.12. Ներկայացնել թողարկողի կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի չափը, մասնակիցների կողմից իրենց բաժնային արժեթղթերի դիմաց վճարման պարտավորությունների կատարման աստիճանը (տոկոսներով):
- 8.13. Ներկայացնել թողարկողի բաժնային արժեթղթերի սեփականատերերի քանակը՝ ըստ նրանց պատկանող արժեթղթերի տեսակների և դասերի:
- 8.14. Նկարագրել ընկերության գույքը (շենքերի, շինությունների, հողատարածքի, տեխնիկայի և այլն)՝ շեշտը դնելով արտադրության (ծառայության) մեջ ներգրավված գույքի (կարևոր սարքավորումների, հոսքագծերի և այլն) հնարավորությունների և պիտանիության (այդ թվում՝ մաշվածքի) վրա, ինչպես նաև դրանց գտնվելու վայրերը: Եթե որևէ գույք ընկերությանը սեփականության իրավունքով չի պատկանում, կամ նրա նկատմամբ սեփականության իրավունքը սահմանափակված է, ապա համառոտ ներկայացվում են այդ գույքի օգտագործման պայմանները և (կամ) սահմանափակումների բնույթը:
- 8.15. Եթե թողարկողը զբաղվում է բնական ռեսուրսների արդյունահանմամբ կամ վերամշակմամբ, ապա անհրաժեշտ է ներկայացնել բնական ռեսուրսի տեսակը, պաշարների կանխատեսվող չափը, գտնվելու վայրը, ինչպես նաև դրա օգտագործման իրավունքի ժամկետները և արդյունահանման կամ վերամշակման պայմանների համառոտ նկարագրությունը:

## **Գ Լ ՈՒ Խ 9**

### ***ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԻՆԸ (ԿԱՆՈՆ 10.1ա-2.)***

- 9.1. Ներկայացնել թողարկողի կառավարման մարմինների կառուցվածքի, դրանց իրավասությունների և պարտականությունների ամբողջական նկարագրությունը՝ թողարկողի կանոնադրությանը համապատասխան:
- 9.2. Ներկայացնել թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի անունը, ազգանունը, բնակության վայրը (գտնվելու վայրը), փոստային հասցեն, անձնագրի սերիան և համարը (պետական գրանցման համարը), ծննդյան (ստեղծման) տարեթիվը, քաղաքացիությունը (գրանցող երկրի անվանումը), մասնակցությունը (գործունեության ոլորտը), վերջին 3 տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները (իրականացվող գործունեությունը), այդ թվում՝ համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով այն կազմակերպությունների անվանումները, որտեղ այդ անձը պաշտոն է զբաղեցրել (զբաղեցնում), թողարկողի կողմից տվյալ անձին հայտարարագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող երեք ավարտված ֆինանսական տարիների ընթացքում տրված վարձատրությունները (առանձին նշելով տարիները, վճարման հիմքերը և գումարները), տվյալ անձին պատկանող թողարկողի արժեթղթերի քանակը, տվյալ անձի նշանակալից մասնակցությունն այլ անձանց (ոչ ռեզիդենտների համար՝ ՀՀ-ում գրանցված կամ գործող թողարկողների) կապիտալում (առանձին նշելով արժեթղթերի տեսակները, դրանք թողարկողների անվանումները և արժեթղթերի քանակները): Համառոտ նկարագրել բոլոր պայմանագրերը (համաձայնագրերը) կամ որոշումները, որոնց համաձայն՝ տվյալ անձը հանդիսանում է թողարկողի կառավարմանը մասնակցող անձ, նրա գործողությունների լիազորության ժամկետները:
- 9.3. Նկարագրել վերջին երեք տարիների ընթացքում կառավարմանը մասնակցող անձի դեմ (կամ այն կազմակերպության դեմ, որտեղ այդ անձը նշված ժամանակաշրջանում կառավարմանը մասնակցող անձ է կամ եղել է) կամ իր կողմից սնանկացման (անվճարունակության) միջնորդությունների ներկայացման, ինչպես նաև դատարանի որոշման (դատավճճի) հիման վրա կամ պետական որևէ մարմնի կողմից նրա (կամ այն կազմակերպության դեմ, որտեղ այդ անձը նշված ժամանակաշրջանում կառավարմանը մասնակցող անձ է կամ եղել է) նկատմամբ պատասխանատվության միջոցի կիրառման հիմքերը (պատճառները) և հետևանքները:
- 9.4. Նկարագրել կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապի բնույթը (ընտանիքի անդամներ, անձի կամ նրա ամուսնու հայր, մայր, քույր, եղբայր կամ նրանց ամուսիններ):
- 9.5. Ներկայացնել թողարկողի ներկա կամ ապագա գործունեության վրա էական ազդեցություն ունեցող, սակայն կառավարման մարմինների կազմում չընդգրկված, աշխատակիցների (օրինակ՝ արտադրության պետի, գիտահետազոտական աշխատանքներով զբաղվող աշխատակցի, հաշվապահի և այլն) մասին տեղեկություններն ըստ սույն կանոնագրի 9.2 կետի:

## **Գ Լ ՈՒ Խ 10**

### ***ԹՈՂԱՐԿՈՂԻ ԲԱԺՆԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՆՇԱՆԿԱԿԼԻՑ, ԲԱՅՑ ՈՉ ԽՈՇՈՐ ՍԵՓԱԿԱՆՑԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ***

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 10.1ա-3.)**

10.1. Ներկայացնել թողարկողի նշանակալից սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, անձնագրի սերիան և համարը, վերջին 3 տարիների ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոնները, այդ թվում՝ համատեղությամբ, ժամանակագրական կարգով՝ նշելով գործունեության ոլորտը, այդ անձին պատկանող թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը:

10.2. Ներկայացնել թողարկողի նշանակալից սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման համարը, տվյալ իրավաբանական անձի գործադիր (կոլեգիալ) մարմնի և տնօրենների խորհրդի (դիրտորդ խորհրդի) այն անդամների անունները, ազգանունները, որոնք վերջին 3 տարիների ընթացքում թողարկողի կառավարման մարմիններում պաշտոն են զբաղեցրել (զբաղեցնում են) կամ թողարկողի բաժնային արժեթղթերում մասնակցություն են ունեցել (ունեն)՝ ժամանակագրական կարգով նշելով զբաղեցրած բոլոր պաշտոնները և այդ անձանց պատկանող թողարկողի և(կամ) տվյալ իրավաբանական անձի բաժնային արժեթղթերի քանակները:

**Գ Լ ՈՒ Խ 11**

**ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԵՏ ՓՈԽԿԱԴՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 10.1ա-4.)**

11.1. Սույն գլխում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

11.1.1. թողարկողի հետ փոխկապակցված է ցանկացած անձը (անձինք), եթե՝

ա) նրանցից որևէ մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի (մյուսների)՝ ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի 20 և ավելի տոկոսին.

բ) նրանցից որևէ մեկի տնօրենների խորհրդի անդամների կեսից ավելին, տնօրենը կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձը միաժամանակ հանդիսանում է մյուսի (մյուսների) տնօրենների խորհրդի անդամ, տնօրեն կամ նման իրավասություն ունեցող այլ պաշտոնատար անձ.

գ) նրանցից որևէ մեկը մյուսի որոշումների վրա էականորեն ազդելու փաստացի կամ պայմանագրով ամրագրված հնարավորություն ունի, նրանցից մեկը հսկում է մյուսին, կամ նրանք ընդհանուր հսկողության տակ են գտնվում.

դ) նրանք միևնույն ընտանիքի անդամներ են կամ տվյալ դեպքում գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

11.2. Ազդագրում ներառվում են հետևյալ տեղեկությունները՝

11.2.1. եթե անձը փոխկապակցված անձ է դարձել սույն կանոնագրի 11.1.1 կետի «ա» ենթակետի համաձայն, ապա նշվում են տվյալ անձի վերաբերյալ սույն կանոնագրի 10-րդ գլխով պահանջվող տեղեկությունները.

11.2.2. եթե անձը փոխկապակցված անձ է դարձել սույն կանոնագրի 11.1.1 կետի «բ» ենթակետի համաձայն, ապա նշվում են տվյալ անձի վերաբերյալ սույն կանոնագրի 10-րդ գլխով պահանջվող տեղեկությունները, և փոխկապակցված անձի կառավարմանը մասնակցող անձանց միջև ազգակցական կապերի բնույթը՝ սույն կանոնագրի 9.4 կետի համաձայն.

11.2.3. եթե անձը փոխկապակցված անձ է դարձել սույն կանոնագրի 11.1.1 կետի «գ» կամ «դ» ենթակետերի համաձայն, ապա նշվում են տվյալ անձի վերաբերյալ սույն կանոնագրի 10-րդ գլխով պահանջվող տեղեկությունները, ինչպես նաև համառոտ նկարագրվում են փոխկապակցված անձի կողմից թողարկողի որոշումները կանխորոշելու փաստացի հնարավորությունները, պայմանագրի այն կետերը, որոնք հնարավորություն են տալիս կանխորոշելու նման որոշումները կամ ընդհանուր տնտեսական շահերի բացատրությունը, որի համաձայն գործում է տվյալ անձը:

**Գ Լ ՈՒ Խ 12**

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԿԱՆՈՆ 10.1բ-1.)**

12.1. Թողարկված արժեթղթերի մասին տեղեկությունները ներառում են.

12.1.1. արժեթղթի դասը (տեսակը) և ձևը (փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային).

12.1.2. յուրաքանչյուր ձևի, դասի (տեսակի) արժեթղթերի գրանցման համարները, տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում) և դրա շտրիհման ամսաթիվը.

12.1.3. յուրաքանչյուր թողարկման արժեթղթերի գրանցումն իրականացնող մարմնի անվանումը.

12.1.4. արժեթղթերի յուրաքանչյուր տեղաբաշխման սկզբի և ավարտի ամսաթվերը.

12.1.5. արժեթղթերի մարման ժամկետները (առկայության դեպքում).

12.1.6. յուրաքանչյուր թողարկման (վաճառքի հանված արժեթղթերի) ընդհանուր ծավալը (արժեթղթերի քանակը).

12.1.7. տեղաբաշխված (վաճառված) արժեթղթերի քանակը յուրաքանչյուր թողարկման դեպքում.

12.1.8. մեկ արժեթղթի անվանական արժեքը՝ առկայության դեպքում.

12.1.9. տվյալ դասի (տեսակի) և ձևի արժեթղթերի սեփականատերերի հիմնական իրավունքները և պարտականությունները.

12.1.10. գրանցվող (գրանցված) արժեթղթերի յուրաքանչյուր դասի (տեսակի) համար եկամուտների (շահաբաժինների) վճարման պայմանները և չափը՝ ավարտված վերջին երեք ֆինանսական տարիների համար կամ յուրաքանչյուր ավարտված ֆինանսական տարվա համար ստեղծման պահից ի վեր, եթե այդ ժամկետը երեք տարուց պակաս է: Մանրամասն նկարագրել այն դեպքերը, երբ արժեթղթերի դիմաց վճարումները սահմանափակվել են կամ կարող են սահմանափակվել: Առանձին նշել.

ա) շահույթի առկայության պարագայում եկամուտների (շահաբաժինների) չվճարման դեպքերը և չվճարման պատճառները.

բ) միջանկյալ եկամուտների չափը, եթե ընթացիկ տարում թողարկողը միջանկյալ վճարումներ է իրականացրել:

12.1.11. Արժեթղթերի մասին շուկայական տեղեկություններ.

ա) եթե թողարկողի արժեթղթերի վաճառքը կատարվում է ֆոնդային բորսայում, ապա նշվում են թողարկողին հայտնի՝ դրանց վաճառքի ամենաբարձր և ամենացածր գները՝ վերջին երկու ֆինանսական տարիների համար.

բ) եթե տվյալ արժեթղթերը չեն վաճառվում բորսայում, ապա անհրաժեշտ է անդրադառնալ թողարկողին հայտնի արժեթղթերի արտաբորսայական ամենաբարձր և ամենացածր գների (տվյալները ներկայացվում են ավարտված վերջին ֆինանսական տարվա և ընթացիկ տարվա վերջին եռամսյակի դրությամբ):

12.2. Համառոտ նկարագրել թողարկված արժեթղթերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետգնման և (կամ) մարման դեպքերն ու պատճառները, ժամկետները, ինչպես նաև դրանց արդյունքները:

**Գ Լ ՈՒ Խ 13**

**ԹՈՂԱՐԿՈՂԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 10.1գ-1.)**

13.1. Ազդագրում ներառվում են թողարկողի (բացառությամբ՝ բանկերի) ֆինանսական հաշվետվությունները՝ կազմված Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին, Հայաստանի Հանրապետության ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարի 2000 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված «Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանին», Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 1999 թվականի դեկտեմբերի 20-

ի թիվ 433 հրամանով հաստատված տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին, այդ ձևերը լրացնելու հրահանգին և սույն գլխին համապատասխան: Բանկերի ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերին, այդ ձևերը լրացնելու հրահանգներին և սույն գլխին համապատասխան:

13.2. Սույն կանոնագրքի 13.1 կետում նշված ֆինանսական հաշվետվություններում թողարկողը կարող է չներառել այն հոդվածները (տողերը), որոնցում տեղեկություններ կամ մնացորդներ չկան՝ պահպանելով հոդվածների (տողերի) սահմանված հերթականությունը և համարակալումը:

13.3. Թողարկողները սույն կանոնագրքի 13.1 կետում նշված ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հետևյալ կարգով՝

13.3.1. թողարկողները հայտարարագրերում ներառում են հայտարարագրի ներկայացման պահին նախորդող վերջին 3 տարիների տարեկան (անկախ աուդիտորական եզրակացությամբ) և ընթացիկ տարվա եռամսյակային այն ֆինանսական հաշվետվությունները, որոնց ներկայացման ժամկետը լրացել է՝ համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգի, բացառությամբ, եթե որոշակի խմբի թողարկողների համար օրենքով և դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերով ներկայացման ավելի վաղ ժամկետ սահմանված չէ:

13.3.2. հայտարարագրի ներկայացման պահին նախորդող տարվա տարեկան ֆինանսական հաշվետվության ներկայացման ժամկետը լրացած չլինելու դեպքում, ներկայացվում են այդ տարվա եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

13.3.3. այն թողարկողները, որոնց գործունեության ժամանակահատվածը հայտարարագրի ներկայացման պահի դրությամբ պակաս է սույն կանոնագրքի 13.3.1 կետով սահմանված հաշվետու ժամանակահատվածից, ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են՝ ելնելով տվյալ կետի դրույթներն առավելագույնս պահպանելու սկզբունքից:

13.4. Հայտարարագրի այս մասում ներառվում են հետևյալ տեղեկությունները, եթե դրանք բացակայում են սույն կանոնագրքի 13.1 կետում նշված ֆինանսական հաշվետվություններին կամ ազդագրում՝

13.4.1. թողարկողի կառավարմանը մասնակցող առնվազն երկու անձի վերլուծությունները թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների մասին, որոնք ներկայացվում են սույն կանոնագրքի 13.5 կետով սահմանված պահանջներին համապատասխան:

13.4.2. աուդիտորների հետ հաշվապահական հաշվառման և ֆինանսական տեղեկատվության բացահայտման հետ կապված փոփոխություններն ու անհամաձայնությունները, որոնք ներկայացվում են սույն կանոնագրքի 13.6 կետով սահմանված պահանջներին համապատասխան:

13.5. Թողարկողի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների մասին թողարկողի կառավարմանը մասնակցող առնվազն երկու անձի վերլուծությունները վերաբերում են.

13.5.1. ֆինանսական տարվա արդյունքներին՝ ներկայացնելով տեղեկատվություն թողարկողի ակտիվների իրացվելիության (լիկվիդայնության), կապիտալ բնույթի ծախսումների և գործունեության արդյունքների վերաբերյալ՝ ա) ներկայացնել թողարկողի հիմնական միջոցների և շրջանառու ակտիվների (այդ թվում՝ դեբիտորական պարտքերի) կառուցվածքի համառոտ նկարագիրը, դրանց առաջացման հիմքերը և տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվների կառուցվածքում: Ներկայացնել նաև դրանց հաշվեկշռային և հնարավոր առաջարկի և պահանջարկի հիման վրա ձևավորվող շուկայական արժեքների միջև եղած տարբերությունը:

բ) ընթացիկ ակտիվների իրացվելիությունը՝ ներկայացնելով ցանկացած միտում, պատճառ, իրադարձություն, պայմանավորվածություն, որոնք կարող էին պատճառ հանդիսանալ ընթացիկ ակտիվների աճի կամ նվազման համար: Եթե առկա է Եական նվազման պատճառ, ապա պետք է ներկայացնել թողարկողի այն գործողությունները, որոնք նա իրականացրել է կամ առաջարկում է իրականացնել ակտիվների նվազումը կանխելու համար: Անհրաժեշտ է ներկայացնել նաև իրացվելի ակտիվների սեփական կամ փոխառու լինելը:

գ) ներկայացվում են թողարկողի պարտավորությունների կառուցվածքի (այդ թվում՝ կրեդիտորական պարտքերի) համառոտ նկարագիրը, դրանց առաջացման հիմքերը, տեսակարար կշիռն ընդհանուր կրեդիտորական պարտքերի կառուցվածքում և կատարման հնարավորության աստիճանը:

դ) նկարագրել գրանցման տարվա համար թողարկողի կողմից պլանավորված կապիտալ ծրագրերը և դրանց իրագործման համար անհրաժեշտ ծախսումներն ու ֆինանսավորման աղբյուրները: Ներկայացնել նաև սեփական կապիտալի աճի կամ նվազման հայտնի և Եական միտումները: Այս առնչությամբ հաշվի առնել սեփական կապիտալի և պարտավորությունների միջև տեղի ունեցած կամ տեղի ունենալիք փոփոխությունները:

ե) գործունեության արդյունքները՝ նկարագրելով թողարկողի բնական գործունեության շրջանակներից դուրս այն իրադարձությունները, գործարքները, կարևոր տնտեսական փոփոխությունները, որոնք Եականորեն ազդել են ներկայացված (ստացված) եկամտի վրա:

զ) եթե ֆինանսական հաշվետվությունները բացահայտում են եկամտի Եական աճ կամ նվազում, ապա համառոտ ներկայացնել, թե նման աճը (նվազումը) ինչ չափով է պայմանավորված գների աճով կամ նվազմամբ, վաճառված ապրանքների կամ ծառայությունների ծավալով կամ քանակով, նոր ծառայությունների մատուցմամբ կամ նոր ապրանքների վաճառքով:

է) ներկայացնել այն ազդեցությունը, որ ունեցել են սղաճը և գների փոփոխությունը թողարկողի հասույթի ու եկամտի վրա նրա գործունեության վերջին երեք տարիների ընթացքում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, եթե թողարկողը գործում է երեք տարուց պակաս:

13.5.2. Եթե թողարկողը ներկայացնում է ֆինանսական հաշվետվություններ միջանկյալ ժամանակահատվածների համար, ապա ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների մասին վերլուծությունը պետք է ներառի սույն կանոնագրքի 13.5.1 կետում նշված տեղեկություններին Եական փոփոխությունների վերաբերյալ տվյալներ, բացառությամբ՝ սղաճի և գների փոփոխության մասին տվյալների:

13.6. Հաշվապահական հաշվառման և ֆինանսական տեղեկատվության բացահայտման հետ կապված փոփոխություններն ու անհամաձայնությունները աուդիտորների հետ ներկայացվում են հետևյալ դեպքերում՝

13.6.1. Եթե թողարկողի վերջին երկու հաշվետու տարիների ընթացքում կամ հաջորդող միջանկյալ որևէ ժամանակահատվածում որևէ անկախ աուդիտոր (որը նախկինում եղել է թողարկողի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մեջ ներգրավված հիմնական աուդիտոր, կամ որը նախկինում ներգրավված է եղել թողարկողի դուստր ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մեջ, և հիմնական աուդիտորը (գլխավոր հաշվապահը) իր հաշվետվության մեջ հիմնվել է նրա եզրակացության վրա) հրաժարվել է աուդիտից (կամ տվյալ աուդիտի ավարտից հետո չի մասնակցելու հետագա վերլուծությանը) կամ հեռացվել է աուդիտի աշխատանքներից, ապա թողարկողը պետք է նշի՝

ա) աուդիտորի հրաժարման, վերլուծությանը չմասնակցելու կամ աուդիտորական աշխատանքներից հեռացվելու մասին՝ ներկայացնելով համապատասխան ամսաթիվը:

բ) վերջին երկու տարիների համար ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացված հիմնական աուդիտորի եզրակացության մեջ ոչ բարենպաստ, հրաժարման կամ որևէ անորոշության, աուդիտի խորության կամ հաշվապահական հաշվառման սկզբունքների խախտման մասին կարծիքի առկայությունը և դրա Եությունը:

գ) աուդիտորին փոխելու մասին որոշումը ներկայացնող և հաստատող մարմնի անվանումը (օրինակ՝ որևէ աուդիտորի, թողարկողի աուդիտորական հանձնաժողովի կամ ընկերության խորհրդի կողմից):

դ) աուդիտորի հրաժարանի, հեռացման կամ վերլուծությանը չմասնակցելու որոշմանը նախորդող հաշվետու երկու տարիների և դրան հաջորդող միջանկյալ ժամանակահատվածների ընթացքում հաշվապահական հաշվառման սկզբունքների կամ վարման, ֆինանսական հաշվետվությունների բացահայտման կամ աուդիտի խորության կամ գործընթացների վերաբերյալ աուդիտորի հետ անհամաձայնության առկայությունը՝ նկարագրելով անհամաձայնության Եությունը:

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԳՈՐԾՈՒԼԵՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԿԱՆՈՆ 10.1դ-1.)**

14.1. Թողարկողի գործունեության նկարագրությունը.

14.1.1. Ներկայացնել թողարկողի գործունեության ամբողջական նկարագիրը՝ հակիրճ արտացոլելով նաև թողարկողի համար առավել կարևոր գործունեության ոլորտների արդի վիճակները և դրանց զարգացման ընդհանուր միտումները: Ներկայացնել համեմատական տվյալներ, որոնք արտացոլում են գործունեության տվյալ ոլորտում թողարկողի գրաված դիրքը:

14.1.2. Ներկայացնել թողարկողի արտադրանքների սպառման (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) շուկաների ընդհանուր բնութագիրը, դրանց զարգացման ներկայիս միտումները, ներմուծվող և տեղական արտադրանքի տոկոսային հարաբերակցությունը ներքին շուկայում, արտահանման հիմնական շուկաները, հիմնական սպառողների և մրցակիցների ընդհանուր բնութագիրը, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք թողարկողի տեսակետից էական նշանակություն ունեն թողարկողի գործունեության շուկան բնութագրելու համար:

14.1.3. Ներկայացնել արտադրանքների սպառման (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման) հնարավոր նոր շուկաներում թողարկողի մասնակցության հնարավորությունների ուսումնասիրությունը, նոր արտադրանքների (ծառայությունների, աշխատանքների) ներդրման կամ ժամանակակից մոդելների նախագծման հնարավորությունների ուսումնասիրությունը, դրանց շուկաների ընդհանուր բնութագիրը:

14.1.4. Համառոտ նկարագրել արտադրանքի (ծառայությունների, աշխատանքների) այն տեսակները և դրանց սպառման ծավալները (դրամական արտահայտությամբ), որոնք արժեթղթերը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 3 ֆինանսական տարիներից յուրաքանչյուրի ընթացքում ապահովել են թողարկողի եկամտի 10 տոկոսից ավելին: Ժամանակագրական նույն կարգով ներկայացնել նաև արտահանվող արտադրանքի (ծառայությունների, աշխատանքների) բոլոր տեսակները և դրանց սպառման ծավալները: Նշել թողարկողի սեզոնային բնույթ ունեցող գործունեության տեսակները և դրանցից ստացվող եկամտի բաժինն ընդհանուր եկամուտներում: Նշել թողարկողի համար գերիշխող կամ առաջնային նշանակություն ունեցող գործունեության տեսակները, եթե թողարկողի գործունեությունից ստացված եկամտի հիմնական մասը ձևակերպել է երկրորդային նշանակություն ունեցող գործունեության տեսակներից՝ նկարագրելով դրա պատճառները:

14.1.5. Ներկայացնել թողարկողի արտադրանքի իրացման հիմնական մեթոդները և ուղիները, միջնորդ կազմակերպություններին (առկայության դեպքում) և նրանց բաժինը իրացման ընդհանուր ծավալում: Նկարագրել թողարկողի արտադրանքի (ծառայությունների, աշխատանքների) արտահանման հիմնական տրանսպորտային (կոմունիկացիոն) սխեմաները (առկայության դեպքում):

14.1.6. Տալ թողարկողի արտադրանքը (ծառայությունները, աշխատանքները) սպառողների հիմնական բնութագրերը (ֆիզիկական անձանց դեպքում՝ նկարագրելով նրանց սոցիալական այս կամ այն խմբին պատկանելությունը, տարիքային դասակարգումը, տարեկան եկամուտները, սպառողական նախասիրությունները և այլն): Նշել այն սպառողների անվանումները, որոնց բաժին է ընկնում թողարկողի արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) իրացումից ստացված տարեկան ընդհանուր հասույթի 10 տոկոսից ավելին, նրանց բաժիններն իրացման ընդհանուր ծավալում և այս ցուցանիշի զարգացման միտումները վերջին 3 տարիների ընթացքում:

14.1.7. Նշել թողարկողի հիմնական մրցակիցների անվանումները, նրանց բաժինը շուկայում ըստ գործունեության առանձին տեսակների (տեղեկության առկայության դեպքում): Նկարագրել տվյալ թողարկողի և նրա մրցակիցների կողմից կիրառվող մրցակցության հիմնական մեթոդները (գին, սպասարկում, երաշխիք, որակ և այլն):

14.1.8. Նշվում են թողարկողի այն մատակարարների անվանումները, որոնց բաժին է ընկնում ապրանքանյութական արժեքների (դրամական արտահայտությամբ) բոլոր մատակարարումների 10 տոկոսից ավելին, ինչպես նաև նրանց բաժինը մատակարարումների ընդհանուր ծավալում: Առանձին նշվում է, թե թողարկողի մատակարարումների որ մասն է կազմում ներմուծումը: Տրվում են ապագայում այդ աղբյուրների մատչելիությանն առնչվող կանխատեսումներ:

14.1.9. Նկարագրել գործունեության տեսակը, որտեղ պետությունը կարող է էական ազդեցություն ունենալ (պայմանագրերի կնքում, փոփոխություն, չեղադրում, վարկային քաղաքականության փոփոխություն և այլն):

14.1.10. Արժեթղթերի գրանցման հայտարարագիրը գրանցման ներկայացնելու պահին նախորդող 3 ֆինանսական տարիներից յուրաքանչյուրի համար թողարկողի կողմից հարկային պարտավորությունների դիմաց վճարված (հաշվարկված) ընդհանուր գումարը՝ առանձին նշելով յուրաքանչյուր հարկատեսակի բաժինը:

14.1.11. Համառոտ նկարագրել նաև օրենքներով և (կամ) այլ իրավական ակտերով վերապահված հարկային արտոնությունները, որոնցից օգտվում է թողարկողը, կամ որոնք սահմանվել են հատուկ տվյալ թողարկողի համար:

14.2. Տեղեկություններ արժեթղթերը գրանցման ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում թողարկողի նկատմամբ դատարանի, պետական իշխանության լիազորություններ իրականացնող մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցների (վարչական, քաղաքացիաիրավական, քրեական և այլ) մասին: Նշվում են պատասխանատվության կոնկրետ միջոցի կիրառման ամսաթիվը, պատասխանատվության ենթարկող մարմինը, թողարկողին պատասխանատվության ենթարկելու հիմքերը (պատճառները), տեսակն ու չափը, ինչպես նաև արժեթղթերի գրանցման հայտարարագրի ներկայացման պահի դրությամբ դրա կատարման աստիճանը: Նշվում է նաև արժեթղթերը գրանցման ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում թողարկողի՝ դատավարություններին մասնակցության մասին, այդ թվում՝ շարունակվող բոլոր այն դատավարություններին թողարկողի մասնակցության հիմքերի (պատճառների) և դրանց արդյունքում թողարկողի հնարավոր պարտավորությունների առաջացման մասին, որոնք կարող են ազդել վերջինիս գործունեության վրա (օրինակ՝ նշվում է թողարկողի և այլ անձի միջև կնքված պայմանագրով նախատեսված տույժի գումարի մասին, որը թողարկողը կպարտավորվի վճարել դատարանի կողմից համապատասխան վճիռ կայացնելու դեպքում):

14.3. Ներկայացնել տեղեկություններ շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև օրենքով սահմանված նորմերի պահպանման ազդեցությունը թողարկողի կապիտալ ներդրումների, ստացվող շահույթի և մրցակցության վրա:

14.4. Այն գործարքների նկարագիրը (գործարքի առարկան, կատարման ամսաթիվը, գործարքի արժեքը, կողմերի անվանումը (անուն, ազգանունը)), որոնց միջոցով կատարվել է (նախատեսվում է) ակտիվների ձեռքբերում, վաճառք կամ օգտագործման իրավունքի փոխանցում, երբ կողմերից մեկը՝

14.4.1. թողարկողի կառավարմանը մասնակցող անձն է կամ նրա ընտանիքի անդամը.

14.4.2. բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատեր է.

14.4.3. թողարկողի հետ փոխկապակցված անձ է:

14.5. Յուրաքանչյուր գործարքի նկարագրությունը, որը պետք է իրականացվի կամ կատարվի արժեթղթերի գրանցման ներկայացնելուց հետո առնվազն մեկ տարվա ընթացքում, երբ այդ գործարքի գումարը գերազանցում է թողարկողի ակտիվների արժեքի 10 տոկոսը:

14.6. Այն պատվերների ծավալների նշումը, որոնք չեն կարող կատարվել արժեթղթերի գրանցման ներկայացնելուց հետո առնվազն մեկ տարվա ընթացքում՝ նշելով դրանց պատճառները:

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒԼԵՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԿԱՆՈՆ 10.1դ-2.)**

15.1. Թողարկողի ապագա գործունեության ծրագրերի վերաբերյալ տեղեկությունները ներառում են.

15.1.1. թողարկողի ապագա գործունեության և նախատեսվող եկամուտների աղբյուրների առնչությամբ թողարկողի ծրագրերի հակիրճ նկարագրությունը, դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների չափը և նկարագիրը, ներառյալ՝ նոր արտադրության կազմակերպման, արտադրության ընդլայնման կամ կրճատման, նոր արտադրատեսակների մշակման, հիմնական միջոցների արդիականացման և վերակառուցման, գործունեության ուղղվածության հնարավոր փոփոխության հետ կապված ծրագրերը.

15.1.2. այն հնարավոր բացասական գործոնների նկարագիրը, որոնք կարող են ազդել թողարկողի կողմից իր արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) իրացման վրա:

15.2. Նկարագրել թողարկողի ապագայում հնարավոր այն պարտավորությունները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ թողարկողի գործունեության վրա:

15.3. Նկարագրել թողարկողի գործունեության մրցակցային պայմանները՝ նշելով այն շուկաները, որոնց ուղղությամբ թողարկողն իրականացնում է կամ մտադիր է իրականացնել գործունեություն: Նկարագրել նաև թողարկողի ենթադրյալ հիմնական մրցակիցներին:

15.4. Նկարագրել նախատեսվող գիտահետազոտական և փորձարարական-կոնստրուկտորական աշխատանքները, նոր ապրանքների, ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման ու կատարելագործման հետ կապված աշխատանքները:

## Գ Լ ՈՒ Խ 16

### ՌՈՂԱՐԿՎՈՂ (ԱՌԱՋԱՐԿՎՈՂ) ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 10.1Ե-1.)

16.1. Արժեթղթերի թողարկման (տեղաբաշխման) մասին տեղեկությունները ներառում են՝

16.1.1. արժեթղթերի դասը (տեսակը) և ձևը.

16.1.2. արժեթղթերի պահպանման և հաշվառման կարգը.

16.1.3. թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը.

16.1.4. տեղաբաշխվող (վաճառվող) արժեթղթերի քանակը.

16.1.5. արժեթղթի անվանական արժեքը (առկայության դեպքում).

16.1.6. արժեթղթերով հավաստվող իրավունքները, որոնք սահմանվում են թողարկողի կանոնադրությամբ և (կամ) թողարկման մասին որոշմամբ: Նախատեսված այլ իրավունքներ, ինչպես նաև իրավունքն իրականացնելու կարգի մասին անհրաժեշտ պարզաբանումներ.

16.1.7. փոխարկելի արժեթղթերի տեղաբաշխման դեպքում նշվում են այն արժեթղթերը և դրանց սեփականատերերի իրավունքները, որոնց պետք է փոխարկվեն թողարկվող արժեթղթերը, ինչպես նաև փոխարկման կարգն ու պայմանները.

16.1.8. արժեթղթերի մարման ժամկետները, պայմանները և կարգը (մարման ենթակա արժեթղթերի համար).

16.1.9. տվյալներ արժեթղթերի թողարկման մասին (առկայության դեպքում)՝

ա) արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը.

բ) արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունող մարմնի անվանումը, իսկ եթե արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշումն ընդունող թողարկողի մարմինը այլ է, ապա նաև վերջինիս անվանումը.

գ) արժեթղթերի թողարկման այն սահմանափակումները, որոնք սահմանված են թողարկողի կանոնադրությամբ կամ արժեթղթերի թողարկման մասին որոշմամբ, ինչպես նաև արժեթղթերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանված սահմանափակումները.

16.1.10. այն կազմակերպությունների կազմակերպական-իրավական ձևը, ֆիրմային անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն և կապի այլ միջոցները, որոնք իրականացնում են արժեթղթերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումը.

16.1.11. արժեթղթերի տեղաբաշխման սկիզբը կամ դրա որոշման կարգը.

16.1.12. արժեթղթերի տեղաբաշխման ավարտը կամ դրա որոշման կարգը.

16.1.13. արժեթղթերով նախատեսված պարտավորությունների կատարման ապահովող միջոցները (առկայության դեպքում) (օրինակ՝ նշվում են գրավով կամ այլ միջոցով ապահովման մասին համաձայնության պայմանները, իսկ եթե ապահովումը սահմանված է երրորդ անձի կողմից, նշվում է նաև այդ անձի անվանումը (անուն, ազգանունը), գտնվելու (բնակության) վայրը և փոստային հասցեն).

16.1.14. տեղեկություններ արժեթղթերի արժեքային և հաշվարկային հետևյալ պայմանների վերաբերյալ՝

ա) արժեթղթի տեղաբաշխման գինը (գները) ըստ արժեթղթերի տեսակների կամ դրա (դրանց) որոշման ընդհանուր պայմանները.

բ) ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի (այդ թվում՝ բաժնետոմսերի) և դրանց փոխարկվող արժեթղթերի դիմաց դրամական վճարմամբ բաց բաժնևորդագրության միջոցով տեղաբաշխման դեպքում նշվում է նաև գինը, որով դրանք տեղաբաշխվում են ձայնի իրավունք տվող բաժնային արժեթղթերի (այդ թվում՝ բաժնետոմսերի) սեփականատեր այն անձանց միջև, որոնք օգտվում են դրանց ձեռքբերման առաջնային կամ նախապատվության իրավունքից (եթե միայն բաժնետերերի ընդհանուր ժողովն այդ իրավունքի չկիրառման վերաբերյալ որոշում չի ընդունել).

գ) արժեթղթերի դիմաց վճարման պայմանները և կարգը (այդ թվում՝ վճարումների չափը և պարբերականությունը, վճարումների և հաշվարկների ձևը, այն հաշիվները և բանկի անվանումը, որտեղ պետք է փոխանցվեն և (կամ) կուտակվեն արժեթղթերի դիմաց վճարվող միջոցները և այլն): Եթե նախատեսվում է արժեթղթերի դիմաց կատարել վճարում ոչ դրամական ձևով, ապա նշվում են նաև գույքի գնահատման կարգը, պայմանները, ինչպես նաև գույքի ընդունման վայրը.

16.1.15. տեղեկություններ արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ՝

ա) թողարկողի կողմից վաճառվող արժեթղթերի քանակը, գինը և այլ էական պայմանները.

բ) պայմանագրի (լիազորագրի) հիման վրա թողարկողի արժեթղթերը տեղաբաշխողի (անդերոայթերի) կազմակերպական-իրավական ձևերը, ֆիրմային անվանումները (անուն, ազգանուն), գտնվելու (բնակության) վայրը, փոստային հասցեները և կապի միջոցները, տեղաբաշխման եղանակները, թողարկողի ու այդ անձանց միջև կնքված պայմանագրի էական պայմաններն ու նրանց պարզաբանումն այնպիսի պայմանները, ինչպես նաև նրանց կողմից առաջարկվող արժեթղթերի քանակը և գինը.

գ) բաժնային արժեթղթերի կամ նախապատվության իրավունք տվող արժեթղթերի սեփականատերերի (այդ թվում՝ օպցիոնների կամ այլ իրավունքի սեփականատերերի) կողմից բաժնևորդագրված արժեթղթերի քանակը, ձեռք բերվող արժեթղթերի գինը և այլ էական պայմաններ, որոնք կարող են ազդել առաջարկվող արժեթղթերի գնի վրա.

16.1.16. տեղեկություններ թողարկողի բաժնային արժեթղթերի այն նշանակալից սեփականատերերի, փոխկապակցված անձանց և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ, որոնք սույն ազդագրի օգտագործմամբ պատրաստվում են գնել կամ վաճառել թողարկողի արժեթղթերը: Այդ դեպքում նշել՝

ա) անունը, ազգանունը (անվանումը).

բ) հայտարարագիրը գրանցման ներկայացնելու պահի դրությամբ անձին պատկանող բաժնային արժեթղթերի քանակը և մասնակցության չափը թողարկողի կանոնադրական կապիտալում.

գ) նրանց կողմից նախատեսված գնվող կամ վաճառվող արժեթղթերի քանակը.

դ) տեղաբաշխման ավարտից հետո անձի հնարավոր մասնակցության չափը թողարկողի կանոնադրական

կապիտալում և արժեթղթերի քանակը.

16.1.17. արժեթղթերի տեղաբաշխումից ստացվող եկամտի չափը՝ հանած արժեթղթերի թողարկմանն առնչվող ծախսերի չափը, նպատակները, որոնց համար ենթադրվում է օգտագործել արժեթղթերի տեղաբաշխումից ստացված միջոցները, ինչպես նաև յուրաքանչյուր նպատակի համար նախատեսված կոնկրետ գումարները.

16.1.18. արժեթղթերի սեփականատերերին արժեթղթերի դիմաց վճարվող եկամտի չափը կամ դրա որոշման կարգը և վճարման պայմանները (օրինակ՝ արտոնյալ բաժնետոմսերի ամրագրված շահաբաժինների չափը, պարտատոմսերից ստացվող եկամուտների բոլոր ձևերը (տոկոսները, դիվիդենդները), դրանց չափը և վճարման պարբերականությունը, ինչպես նաև այն վայրերն ու կազմակերպությունների անվանումները, որտեղ արժեթղթերի սեփականատերերը կարող են ստանալ իրենց հասանելիք եկամուտներն ու մարել արժեթղթերը, այդ թվում՝ ունեցվածքային համարժեքի ստացման եղանակով և այլն).

16.1.19. տեղաբաշխված (տեղաբաշխվող) արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը.

16.1.20. արժեթղթերի երկրորդային շուկայում արժեթղթերի շրջանառության սահմանափակումների ամբողջական և մանրամասն նկարագիրը.

16.1.21. արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման կարգը.

16.1.22. տվյալ արժեթղթերով կատարվող գործառնությունների և դրանց հետևանքների առանձնահատկություններն օտարերկրյա ներդրողների համար.

16.1.23. թավշյա, մեծատառ և աչքի ընկնող տառատեսակով արտահայտված դրույթ (միայն ազդագրում ներառման համար).

**«ՆԵՐՂՈՐԸ, ԾԱՆՈԹԱՆԱԼՈՎ ՍՈՒՅՆ ԱՉՊԱԳՐԻՆ, ՊԵՏՔ Ե ԻՆՎԵՍՏԻՑԻՆ ԳՆԱՀԱՏԻ ՏՎՅԱԼ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐՂՐՄԱՆ ՌԻՍԿԸ՝ ՄԻՆՉԵՎ ՁԵՈՔԲԵՐՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ»:**

**Բ Ա Ժ Ի Լ 3**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐՂՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Գ Լ ՈՒ Խ 17**

**ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐՂՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԿԱՆՈՆ 18.3-1.)**

17.1. Հաշվետվությունում պետք է ներառվեն.

17.1.1. հաշվետվության անվանումը՝ «Ընթացիկ հաշվետվություն».

17.1.2. թողարկողի ֆիրմային անվանումը.

17.1.3. կազմակերպական-իրավական ձևը.

17.1.4. թողարկողի գտնվելու վայրը, կապի միջոցները, փոստային հասցեն.

17.1.5. արժեթղթերի դասը (տեսակը).

17.1.6. հաշվետու ժամանակաշրջանի սկզբի և ավարտի ամսաթիվը.

17.1.7. հաշվետու ժամանակաշրջանում վաճառված արժեթղթերի քանակը՝ ըստ դրանց դիմաց վճարումների ձևերի (ՀՀ արժույթով, արտարժույթով, գույքով՝ այդ թվում՝ արժեթղթերով) և ժամկետների (միանվագ, տարածամկետ), գումարի չափը, հրապարակային տեղաբաշխման գինը, արժեթղթերի վաճառքի միջին գինը, արժույթը.

17.1.8. հաշվետվությունը ստորագրող անձի անունը, ազգանունը.

17.1.9. հաշվետվությունը ներկայացնելու ամսաթիվը:

17.2. Հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացվում մեկ օրինակից, որը պետք է լինի կնքված (առկայության դեպքում) և ստորագրված թողարկողի կամ նրա լիազորված անձի կողմից:

17.3. Հաշվետվությունը ներկայացվում է սույն կանոնագրքի 18.3-1 ձևին համապատասխան:

**Գ Լ ՈՒ Խ 18**

**ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԱՐՂՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ԿԱՆՈՆ 18.3-2.)**

18.1. Հաշվետվությունում պետք է ներառվեն.

18.1.1. հաշվետվության անվանումը՝ «Ամփոփ հաշվետվություն».

18.1.2. թողարկողի ֆիրմային անվանումը.

18.1.3. կազմակերպական-իրավական ձևը.

18.1.4. թողարկողի գտնվելու վայրը, կապի միջոցները, փոստային հասցեն.

18.1.5. արժեթղթերի դասը (տեսակը).

18.1.6. տեղաբաշխման ժամկետները՝ սկզբի և ավարտի ամսաթիվը.

18.1.7. վաճառված արժեթղթերի քանակը՝ ըստ դրանց դիմաց վճարումների ձևերի (ՀՀ արժույթով, արտարժույթով, գույքով՝ այդ թվում արժեթղթերով) և ժամկետների (միանվագ, տարածամկետ), գումարը, հրապարակային տեղաբաշխման գինը, արժեթղթերի վաճառքի միջին գինը, արժույթը.

18.1.8. հաշվետվությունը ստորագրող անձի անունը, ազգանունը.

18.1.9. հաշվետվությունը ներկայացնելու ամսաթիվը:

18.2. Հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացվում մեկ օրինակից, որը պետք է լինի կնքված (առկայության դեպքում) և ստորագրված թողարկողի կամ նրա լիազորված անձի կողմից:

18.3. Հաշվետվությունը ներկայացվում է սույն կանոնագրքի 18.3-2 ձևին համապատասխան:

**Բ Ա Ժ Ի Լ 4**

**ՖՈՂԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՊՈԻՄ ԱՐԺԵԹՂԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ**

**Գ Լ ՈՒ Խ 19**

**ՖՈՂԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՊՈԻՄ ԱՐԺԵԹՂԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ (ԿԱՆՈՆ 20.1-1.)**

19.1. Ֆոնդային բորսային առձեռն եղանակով արժեթղթի գրանցման հայտարարագրի ներկայացման օրը թողարկողը պարտավոր է դրա մեկ օրինակը միաժամանակ ներկայացնել Կենտրոնական բանկ: Արժեթղթի գրանցման հայտարարագիրը պետք է Կենտրոնական բանկին ներկայացվի կից գրույթամբ, որը պետք է նշում պարունակի այն մասին, որ հայտարարագիրն ընդունվել է բորսայի կողմից:

19.2. Ֆոնդային բորսային փոստի միջոցով արժեթղթի գրանցման հայտարարագրի ներկայացման օրը թողարկողը

պարտավոր է դրա մեկ օրինակը միաժամանակ ներկայացնել Կենտրոնական բանկ:

19.3. Սույն կանոնագրքի 19.1 և 19.2 կետերով սահմանված կարգով արժեթղթի գրանցման հայտարարագիր ներկայացնելիս, թողարկողը պարտավոր է այն Կենտրոնական բանկին ներկայացնել կից գրույթամբ, որում պետք է նշված լինի հայտարարագիրը բորսային ներկայացնելու ամսաթիվը:

19.4. Որպես լրացում ներկայացվող հայտարարագիր (լրացում) ներկայացնելու դեպքում թողարկողը պարտավոր է լրացման մեկ օրինակը սույն կանոնագրքի 19.1 կամ 19.2 կետով սահմանված ձևով ներկայացնել Կենտրոնական բանկ:

19.5. Սույն կանոնագրքի 19.1 և 19.2 կետերով սահմանված հայտարարագրերը Կենտրոնական բանկ ներկայացնելիս կիրառվում են սույն կանոնագրքի 6.1.2-րդ կետով սահմանված պահանջները:

19.6. Սույն կանոնագրքի 19.1-19.5 կետերով սահմանված պահանջները չեն կիրառվում, եթե թողարկողը ֆոնդային բորսա գրանցման է ներկայացնում Կենտրոնական բանկում արդեն իսկ գրանցված արժեթուղթ:

## **Բ Ա Ժ Ի Լ 5**

### **ԱՐԺԵԹՐԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ**

#### **Գ Լ ՈՒ Խ 20**

##### ***ԱՐԺԵԹՐԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 20.2-1.)***

20.1. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի կազմակերպական հարցերի և գործունեության տեսակի վերաբերյալ» բաժինը ներառում է սույն կանոնագրքի 8-րդ, 14-րդ և 15-րդ գլուխներով սահմանված տեղեկությունները:

20.2. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի հետ փոխկապակցված անձանց կազմակերպական հարցերի և գործունեության տեսակի վերաբերյալ» բաժինը ներառում է սույն կանոնագրքի 11-րդ գլխով սահմանված տեղեկությունները:

20.3. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի արժեթղթով նախատեսված պարտավորությունները կամ դրանց մի մասը երաշխավորած անձանց կազմակերպական հարցերի և գործունեության տեսակի վերաբերյալ» բաժինը ներառում է սույն կանոնագրքի 11.2.3 կետով սահմանված տեղեկությունները:

20.4. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի՝ նախկինում թողարկված արժեթղթերի վերաբերյալ» բաժինը ներառում է սույն կանոնագրքի 12-րդ գլխով սահմանված տեղեկությունները:

20.5. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկվող արժեթղթերի վերաբերյալ» բաժինը ներառում է սույն կանոնագրքի 16-րդ գլխով սահմանված տեղեկությունները:

20.6. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի կառավարմանը մասնակցող անձանց, տեղաբաշխողների, բաժնային արժեթղթերի նշանակալից սեփականատերերի մասին» բաժինը ներառում է սույն կանոնագրքի 9-րդ, 10-րդ գլուխներով և սույն կանոնագրքի 16.1.15 կետի «բ» ենթակետով սահմանված տեղեկությունները:

20.7. Հայտարարագրի «Տեղեկություններ այն անձանց մասին, որոնց՝ թողարկողի կողմից սահմանված տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը» բաժինը ներառում է տեղեկություններ այն անձանց մասին, որոնց՝ հայտարարագրի ներկայացման պահին նախորդող վերջին երեք ավարտված ֆինանսական տարիների ընթացքում, թողարկողի կողմից սահմանված տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը: Նշվում են այդ անձանց անունը, ազգանունը (անվանումը), պաշտոնը, վճարված աշխատավարձի, պարգևատրումների, ինչպես նաև այլ վճարումների չափը (առանձին նշելով կոնկրետ վճարման գծով գումարի չափը) և ընդհանուր գումարը: Տեղեկությունները կարող են ներկայացվել աղյուսակի տեսքով:

20.8. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի կողմից սահմանված պարզավճարների, շահույթի բաշխման համաձայնությունների վերաբերյալ» բաժինը ներառում է տեղեկություններ հայտարարագրի ներկայացման պահին նախորդող վերջին երեք ավարտված ֆինանսական տարիների ընթացքում թողարկողի կողմից սահմանված պարզավճարների, շահույթի բաշխման համաձայնությունների վերաբերյալ: Նշվում են այդ անձանց անունը, ազգանունը (անվանումը), պարզավճարների և շահույթի բաշխման համաձայնության չափը (առանձին նշվում է կոնկրետ վճարման գծով գումարի չափը) և ընդհանուր գումարը: Տեղեկությունները կարող են ներկայացվել աղյուսակի տեսքով:

20.9. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի կնքած այն պայմանագրերի վերաբերյալ, որոնց գինը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը» բաժինը ներառում է տեղեկություններ գործողության մեջ գտնվող, ինչպես նաև հայտարարագրի ներկայացման պահին նախորդող վերջին երեք տարիների ընթացքում թողարկողի կնքած այն պայմանագրերի վերաբերյալ, որոնց գինը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը: Նշվում են այն անձանց անվանումը (անունը, ազգանունը), ում հետ կնքվել է պայմանագիրը, պայմանագրի առարկան, գինը, գործողության ժամկետը: Տեղեկությունները կարող են ներկայացվել աղյուսակի տեսքով:

20.10. Հայտարարագրի «Տեղեկություններ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ» բաժինը ներառում է տեղեկություններ թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ: Նշվում են պայմանագրի (օպցիոնի) կողմերի անվանումը (անունը, ազգանունը), պայմանագրի կնքման ամսաթիվը, մարման ամսաթիվը, առարկան (արժեթղթերի տեսակը), պայմանագրի գինը: Տեղեկությունները կարող են ներկայացվել աղյուսակի տեսքով:

20.11. Հայտարարագրի «Թողարկողի ֆինանսական վիճակի վերաբերող տեղեկություններ» բաժինը ներառում է թողարկողի արժեթղթի գրանցման տարվան նախորդող երեք ֆինանսական տարիների (անկախ աուդիտորի եզրակացության առկայությամբ) և գրանցման տարվա եռամսյակային հաշվապահական հաշվեկշիռները, ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ինչպես նաև սույն կանոնագրքի 13.4 կետով սահմանված տեղեկությունները:

#### **Գ Լ ՈՒ Խ 21**

##### ***ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻՆ ԵՎ ԴՐԱՆ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՐԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 20.3-1.)***

21.1. Հայտարարագիրը պետք է կազմված լինի սույն կանոնագրքի 5-րդ գլխի (բացառությամբ՝ 5.4 կետի) պահանջներին համապատասխան: Ի լրումն սույն կանոնագրքի 5.2 կետի պահանջների, ֆոնդային բորսայի կանոններով կարող են սահմանվել նաև այլ պահանջներ:

21.2. Տեղեկությունները հայտարարագրում ներառվում են սույն կանոնագրքի 20-րդ գլխին և դրանով սահմանված հերթականությանը համապատասխան:

21.3. Հայտարարագիրը ներկայացվում է սույն կանոնագրքի 6-րդ գլխի պահանջների համաձայն, բացառությամբ սույն կանոնագրքի 6.1.1 կետով սահմանված պահանջի: Այս դեպքում հայտարարագիրը և կից փաստաթղթերը թղթային ձևով Կենտրոնական բանկ և ֆոնդային բորսա ներկայացվում են մեկական օրինակից: Հայտարարագրին կից ներկայացվող փաստաթղթերի վրա չեն տարածվում սույն կանոնագրքի 6.1.2 կետով սահմանված պահանջները: Եթե սույն կանոնագրքի 21.1 կետին համապատասխան սահմանված են նաև այլ պահանջներ, ապա հայտարարագրի տիտղոսաթերթը ֆոնդային բորսա ներկայացվում է ֆոնդային բորսայի կանոններով սահմանված ձևին

**Բ Ա Ժ Ի Լ 6**

**ՖՈՆՆԱՅԻՆ ԲՈՐՄԱՅԻ ԿՈՐՄԻՑ ԱՐԺԵԹՐԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՑՈՒՑԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

**Գ Լ ՈՒ Խ 22**

**ՖՈՆՆԱՅԻՆ ԲՈՐՄԱՅԻ ԿՈՐՄԻՑ ԱՐԺԵԹՐԹԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՑՈՒՑԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԶԵՎ (ԿԱՆՈՆ 21.1-1.)**

- 22.1. Ֆոնդային բորսայում արժեթղթի գրանցման դեպքում արժեթղթի գրանցման մասին որոշում կայացնելու դեպքում բորսան գրավոր տեղեկացնում է այդ մասին Կենտրոնական բանկին՝ սույն կանոններով սահմանված տեղեկությունները ներառող ձևին (այսուհետ՝ ձև) համապատասխան:
- 22.2. Կենտրոնական բանկին ներկայացվող ձևը պետք է ներառի՝
  - 22.2.1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին» նշումը՝ փաստաթղթի վերևի աջ անկյունում,
  - 22.2.2. Ֆոնդային բորսայի (այսուհետ՝ բորսա) անվանումը, գտնվելու վայրը և կապի միջոցները,
  - 22.2.3. Կենտրոնական բանկին արժեթղթի գրանցման և հետագա ցուցակման մասին տեղեկացման համարը և ամսաթիվը,
  - 22.2.4. գրանցման (ցուցակման) ենթակա արժեթղթի դասը (տեսակը),
  - 22.2.5. թողարկողի անվանումը, որի թողարկած արժեթուղթը ենթակա է գրանցման,
  - 22.2.6. գրանցման ենթակա արժեթղթի քանակը,
  - 22.2.7. գրանցման ենթակա արժեթղթի անվանական արժեքը (առկայության դեպքում),
  - 22.2.8. արժեթղթի գրանցման համարը,
  - 22.2.9. արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը,
  - 22.2.10. արժեթղթի գրանցման հայտարարագրի՝ բորսային ներկայացման ամսաթիվը,
  - 22.2.11. արժեթղթի գրանցման հայտարարագրի լրացումների՝ բորսային ներկայացման ամսաթիվը,
  - 22.2.12. արժեթղթի գրանցման մասին բորսայի կառավարման իրավասու մարմնի կողմից ընդունված որոշման ընդունման ամսաթիվը և համարը,
  - 22.2.13. արժեթղթի գրանցման մասին բորսայի կառավարման իրավասու մարմնի կողմից ընդունված որոշման եզրափակիչ մասը,
  - 22.2.14. բորսայի իրավասու մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը և ստորագրությունը:
- 22.3. Ձևը պետք է ստորագրված լինի բորսայի իրավասու մարմնի ղեկավարի կողմից և կնքված լինի բորսայի կնիքով:
- 22.4. Ձևը ներկայացվում է 21.1-1 ձևին համապատասխան:
- 22.5. Կենտրոնական բանկը չի առարկում ֆոնդային բորսայում տվյալ թողարկողի այն արժեթղթի գրանցմանը, որն արդեն իսկ գրանցված է Կենտրոնական բանկում: Սույն դրույթի ուժով արժեթուղթը գրանցված է համարվում ֆոնդային բորսայում՝ տվյալ արժեթուղթը գրանցման և հետագա ցուցակման ընդունելու մասին ֆոնդային բորսայի տեղեկացումը Կենտրոնական բանկի կողմից ստանալու օրը:

**Բ Ա Ժ Ի Լ 7**

**ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԱՐԺԵԹՐԹԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ**

**Գ Լ ՈՒ Խ 23**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԱՐԺԵԹՐԹԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ (ԿԱՆՈՆ 23.2-1.)**

- 23.1. Արժեթղթերի գրանցման ընթացակարգը ներառում է հետևյալ փուլերը՝
  - 23.1.1. գրանցման համար սահմանված փաստաթղթերի ներկայացումը Կենտրոնական բանկ.
  - 23.1.2. Կենտրոնական բանկ ներկայացված փաստաթղթերի քննարկումը.
  - 23.1.3. արժեթղթերի գրանցումը կամ գրանցման մերժումը:
- 23.2. Թողարկողներն արժեթղթերի գրանցման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն կանոնագրքի 5-րդ բաժնի դրույթներով սահմանված գրանցման հայտարարագիր:
- 23.3. Այն արժեթղթերի գրանցման համար, որոնք ազդագիրը ներառող գրանցման հայտարարագիրը գրանցված է, գրանցումը կասեցված կամ դադարեցված չէ, թողարկողը Կենտրոնական բանկ է ներկայացնում.
  - 23.3.1. դիմում՝ արժեթղթերի գրանցման համար, նշելով թողարկողի անվանումը, արժեթղթերի տեսակը, քանակը, անվանական արժեքը (առկայության դեպքում), սեփականատերերի թիվը և զուտ ակտիվների չափը գրանցման մասին որոշում ընդունելու պահի դրությամբ.
  - 23.3.2. դիմումում ներկայացվող տվյալների վաղեմության ժամկետը պետք է մեկ ամսից ավելի չլինի.
  - 23.3.3. արժեթղթեր թողարկողի կառավարման իրավասու մարմնի որոշումն արժեթղթերի գրանցման մասին,
  - 23.3.4. հրապարակված ազդագրի տպագիր տարբերակը.
  - 23.3.5. քաղվածք արժեթղթերի սեփականատերերի ռեեստրից՝ գրանցված սեփականատերերի քանակի վերաբերյալ.
  - 23.3.6. արժեթղթի գրանցման հայտարարագրում ներառված տեղեկությունների այն փոփոխությունները, որոնք դիմումի ներկայացման օրվա դրությամբ Կենտրոնական բանկ չեն ներկայացվել.
  - 23.3.7. այն բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը, որոնք պահանջվում են 20-րդ գլխով և որոնք ներառված չեն ազդագրում.
  - 23.3.8. պետական տուրքի վճարման անդորրագիրը.
  - 23.3.9. Կենտրոնական բանկ ներկայացվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն սույն կանոնագրքի 6.3 կետի պահանջներին համապատասխան:
- 23.4. Սույն կանոնագրքի 23.3.4, 23.3.6 և 23.3.7 կետերով սահմանված տեղեկությունների ներկայացման վրա տարածվում են սույն կանոնագրքի 6.1.2 կետով սահմանված պահանջները:

**Բ Ա Ժ Ի Լ 8**

**ՌԵՏՄՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՆ**

**Գ Լ ՈՒ Խ 24**

**ՌԵՏՄՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ (ԿԱՆՈՆ 27-1.)**

- 24.1. Հաշվետու թողարկողը (այսուհետ՝ Թողարկող) պարտավոր է մինչև արժեթղթի գրանցման հայտարարագրի

ներկայացումը Կենտրոնական բանկ կամ ֆոնդային բորսա տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնել Կենտրոնական դեպոզիտարիային:

24.2. Ռեեստրի վարումը Կենտրոնական դեպոզիտարիային հանձնված է համարվում ռեեստրի վարման պայմանագրի կնքման պահից: Կենտրոնական դեպոզիտարիան Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումն սկսում է ռեեստրի վարման պայմանագրի կնքմանը հաջորդող աշխատանքային օրը:

#### Գ Լ ՈՒ Խ 25

##### **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (ԿԱՆՈՆ 27-2.)**

25.1. Թողարկողը, ի լրումն սույն կանոնադրքի 118.4 կետով սահմանված փաստաթղթերի, ինչպես նաև սույն կանոնադրքի 119-րդ և 120-րդ գլուխներով սահմանված տեղեկությունների, պարտավոր է Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցել հետևյալ փաստաթղթերը.

25.1.1. եթե Թողարկողի մոտ Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայի տեսչության 1999 թվականի հունիսի 9-ի թիվ 127 հրամանով հաստատված «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրների համախմբման/կոնսոլիդացման կարգին» համապատասխան իրականացվել է անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի համախմբում, ապա՝

ա) ռեեստրի համախմբման արդյունքներով կազմված արժեթղթերի սեփականատերերի ցուցակը՝ նշելով նրանց պատկանող արժեթղթերի քանակը.

բ) ռեեստրի համախմբման աշխատանքների ավարտից հետո սույն կետի «ա» ենթակետում նշված ցուցակում կատարված փոփոխությունների համար հիմք հանդիսացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հունիսի 31-ի թիվ 351 որոշմամբ սահմանված փաստաթղթերը.

25.1.2. եթե Թողարկողի մոտ ռեեստրի համախմբման աշխատանքներ չեն իրականացվել, ապա՝

ա) մասնավորեցմանը մասնակցած անձանց ցուցակը՝ ըստ արժեթղթերի քանակի, գումարի և մասնավորեցման առանձին ձևերի, այդ թվում՝ մասնակի անհատույց սեփականաշնորհման, փակ և բաց բաժանորդագրության արդյունքներով (մասնավորեցման արդյունքում ստեղծված բաժնետիրական ընկերությունների համար).

բ) արժեթղթերի գրանցման համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն կամ Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայի տեսչություն ներկայացված՝ արժեթղթերի սեփականատերերի ցուցակը (առկայության դեպքում), եթե արժեթղթերը գրանցվել են Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունում կամ Հայաստանի Հանրապետության արժեթղթերի շուկայի տեսչությունում.

գ) ռեեստրում գրանցումների կատարման համար հիմք հանդիսացած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հունիսի 31-ի «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման կարգի հաստատման մասին» թիվ 351 որոշմամբ սահմանված փաստաթղթերը:

25.2. Սույն կանոնադրքի 25.1 կետում նշված փաստաթղթերը և տեղեկությունները Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցվում են ընդունման-հանձնման ակտով, որը ստորագրվում է Կենտրոնական դեպոզիտարիայի և Թողարկողի լիազորված ներկայացուցիչների կողմից: Ընդունման-հանձնման ակտը կազմվում է 2 օրինակից, որոնցից մեկը տրվում է Թողարկողին, իսկ մյուսը մնում է Կենտրոնական դեպոզիտարիայում:

#### Գ Լ ՈՒ Խ 26

##### **ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒՄ (ԿԱՆՈՆ 27-3.)**

26.1. Կենտրոնական դեպոզիտարիան սույն կանոնադրքի 25-րդ գլխով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում դրանք տրամադրում է սույն կանոնադրքի 26.2 կետին համապատասխան ստեղծված ռեեստրների ուսումնասիրող խմբին:

26.2. Կենտրոնական բանկը Թողարկողների գրանցման ենթակա արժեթղթերի սեփականատերերի ռեեստրների վարման օրինակառության ուսումնասիրության աշխատանքների իրականացման համար Կենտրոնական բանկի և Կենտրոնական դեպոզիտարիայի աշխատակիցներից կազմավորում է ռեեստրների ստուգման խումբ (այսուհետ՝ խումբ), որի աշխատանքներին ընդգրկվում է նաև համապատասխան Թողարկողի ռեեստրի վարման համար պատասխանատու անձը:

26.3. Խումբը սույն կանոնադրքի 26.1 կետով սահմանված փաստաթղթերը և տեղեկությունները ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է.

26.3.1. ռեեստրի վարման և պահպանման համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և բացահայտում է խախտումներն ու բացթողումները.

26.3.2. ռեեստրի գրանցամատյաններում նշված տվյալների ամբողջականությունը, հավաստիությունը և արձանագրում անհամապատասխանությունները:

26.4. Ուսումնասիրության արդյունքում խախտումների և անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում խմբի կողմից կազմվում է արձանագրություն երկու օրինակից, որի մեկ օրինակը տրվում է Թողարկողին:

26.5. Սույն կանոնադրքի 26.4 կետում նշված արձանագրությունը ստորագրվում է տվյալ ռեեստրի ուսումնասիրմանը մասնակցած խմբի անդամների և Թողարկողի պաշտոնատար անձի՝ տնօրենների խորհրդի (կամ նման իրավասություն ունեցող այլ մարմնի) նախագահի (գործադիր տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի) կողմից: Արձանագրության մեկ օրինակը ստանալիս Թողարկողի համապատասխան պաշտոնատար անձը արձանագրության մյուս օրինակի վրա նշում է կատարում արձանագրության մեկ օրինակը ստանալու վերաբերյալ և ստորագրում է:

26.6. Խումբը լրացնում կամ ճշգրտում է ռեեստրի թերի կամ սխալ տեղեկությունները, մասնավորապես՝ ռեեստրի տվյալների համաձայն արժեթղթերի սեփականատերերին պատկանող արժեթղթերի քանակը, ինչպես նաև արժեթղթերի սեփականատերերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

26.6.1. անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալները, բնակության վայրը և փոստային հասցեն (ֆիզիկական անձանց համար).

26.6.2. անվանումը, պետական գրանցման համարը, գրանցման ամսաթիվը և գտնվելու վայրը (իրավաբանական անձանց համար):

26.7. Արժեթղթերի սեփականատերերի բնակության վայրի (գտնվելու վայրի) փոփոխության դեպքում նշվում է բնակության (գտնվելու) նոր վայրը, այդ թվում՝ վարչական միավորի, քաղաքի, գյուղի կամ այլ բնակավայրի և փողոցի նոր պաշտոնական անվանումները:

26.8. Ռեեստրի լրացված կամ ճշգրտված տեղեկությունների հիման վրա խմբի կողմից կազմվում է Թողարկողի տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի ցուցակ՝ երկու օրինակից, որոնք ստորագրվում են տվյալ ռեեստրի ուսումնասիրմանը մասնակցած խմբի անդամների, Թողարկողի տնօրենների խորհրդի (կամ նման իրավասություն ունեցող այլ մարմնի) նախագահի, գործադիր տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի), ինչպես նաև ռեեստրի վարման համար պատասխանատու անձի կողմից և վավերացվում Թողարկողի կնիքով:

26.9. Խումբը սույն կանոնադրքի 26.8 կետում նշված ցուցակի մեկ օրինակը տալիս է Թողարկողին, իսկ մյուսը փոխանցում է Կենտրոնական դեպոզիտարիային, որից հետո Կենտրոնական դեպոզիտարիան Թողարկողի հետ կնքում է ռեեստրի վարման պայմանագիր:

**ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Գ Լ ՈՒ Խ 27**

**ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆ 31.1ա-1.)**

- 27.1. Հաշվետու թողարկողները Կենտրոնական բանկին են ներկայացնում հաշվետվություններ սույն կանոնագրքի 27.10 կետում նկարագրվող դեպքերի ի հայտ գալուց հետո՝ 10 օրվա ընթացքում:
- 27.2. Եթե սույն կանոնագրքի 27.10 կետում նկարագրվող դեպքերից ոչ մեկը տեղի չի ունեցել, սույն գլխի համաձայն հաշվետվության ներկայացումը պարտադիր չէ:
- 27.3. Հաշվետվությունում բացի այն դեպքերի վերաբերյալ տեղեկություններից, որոնցով պայմանավորված է հաշվետվության ներկայացումը, այլ տեղեկությունների ներառումը պարտադիր չէ:
- 27.4. Հաշվետու թողարկողները ներկայացվող հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում՝
  - 27.4.1. մեկ օրինակից թղթային ձևով, և
  - 27.4.2. էլեկտրոնային փոստի միջոցով՝ այն ուղարկելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով: Էլեկտրոնային փոստով ներկայացվող հաշվետվությունը կազմվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան: Էլեկտրոնային հաղորդակցման միջոցի խափանման դեպքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացման ենթակա հաշվետվությունը ներկայացվում է մազնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Հաշվետվությունը էլեկտրոնային փոստով, մազնիսական կամ էլեկտրոնային կրիչով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են հետևյալ ձևով՝ XXXXX-XXX.xxx, որտեղ XXXXX-ը Կենտրոնական բանկի կողմից թողարկողին շնորհված կոդն է, XXX-ը հաշվետվության համարն է, իսկ xxx-ը ֆայլի տեսակն է:
- 27.5. Հաշվետվության առնվազն մեկ օրինակ պետք է ստորագրված լինի հաշվետու թողարկողի լիազորված պաշտոնատար անձի, գլխավոր հաշվապահի կամ նման պարտականություններ իրականացնող անձի կողմից:
- 27.6. Եթե հաշվետվության ներկայացման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այն ներկայացվում է դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
- 27.7. Սույն գլխի համաձայն ներկայացվող հաշվետվությունը կազմվում է սույն կանոնագրքի 6.3.1, 6.3.2 և 6.3.3 կետերի պահանջներին համապատասխան:
- 27.8. Եթե հաշվետու թողարկողը հրապարակել է որևէ փաստաթուղթ, որը պարունակել է սույն կանոնագրքի 27.10 կետում նկարագրվող դեպքերի կամ դրանց մի մասի վերաբերյալ տեղեկություններ, ապա տեղեկությունները կարող են ներկայացվել՝ հղում կատարելով այդ փաստաթղթերին՝ դրանց պատճենները կցելով ներկայացվող հաշվետվությանը՝ որպես հավելված:
- 27.9. Ընթացիկ հաշվետվությունների տիտղոսաթերթը պետք է ներառի.
  - 27.9.1. հաշվետվության անվանումը՝ «Ընթացիկ հաշվետվություն».
  - 27.9.2. հաշվետու թողարկողի լրիվ և կրճատ ֆիրմային անվանումը.
  - 27.9.3. կազմակերպական-իրավական ձևը.
  - 27.9.4. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).
  - 27.9.5. պետական գրանցման ամսաթիվը.
  - 27.9.6. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության համարն ու ամսաթիվը.
  - 27.9.7. հաշվետվությունը ստորագրող անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, ստորագրությունները և յուրաքանչյուր ստորագրության ամսաթիվը.
  - 27.9.8. դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Մենք հավաստիացնում ենք, որ սույն հաշվետվությունում ներառված տեղեկությունները ստույգ են, և լիակատար գիտակցում ենք, որ նրանում որևէ էական փաստի խեղաթյուրում կամ բացթողում կարող է հանգեցնել ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը»:
- 27.10. Հաշվետվություններում պետք է ներառվեն արժեթղթի գրանցման ժամանակ ներկայացված հետևյալ տեղեկություններում փոփոխությունները (եթե կան).
  - 27.10.1. հաշվետու թողարկողի անվան վերաբերյալ, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 8.1 կետով պահանջվող տեղեկությունները.
  - 27.10.2. այն անձանց անվանացանկը, որտեղ թողարկողը բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր է, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 8.8 կետով պահանջվող տեղեկությունները.
  - 27.10.3. հաշվետու թողարկողի աուդիտն իրականացնող անձի վերաբերյալ, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 8.9.1 և 13.4.2 կետերով պահանջվող տեղեկությունները.
  - 27.10.4. հաշվետու թողարկողի կառավարման մարմինների և կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 9.1, 9.2, 9.3 և 9.4 կետերով պահանջվող տեղեկությունները.
  - 27.10.5. հաշվետու թողարկողի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի վերաբերյալ, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 8.12 կետով պահանջվող տեղեկությունները.
  - 27.10.6. հաշվետու թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 10-րդ գլխով պահանջվող տեղեկությունները.
  - 27.10.7. հաշվետու թողարկողի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 11-րդ գլխով պահանջվող տեղեկությունները.
  - 27.10.8. հաշվետու թողարկողն իր հայեցողությամբ կարող է ներկայացնել նաև այլ տեղեկություններ, որոնք չեն պահանջվում սույն կետի մյուս ենթակետերով, սակայն թողարկողի կարծիքով՝ սույն հաշվետվության շրջանակներում դրանց ներկայացումն անհրաժեշտ է:

**Գ Լ ՈՒ Խ 28**

**ԵՌԱՄՍՅԱԿԱՑԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆ 31.1ա-2.)**

- 28.1. Հաշվետու թողարկողները Կենտրոնական բանկին են ներկայացնում հաշվետվություններ ֆինանսական տարվա յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 45 օրվա ընթացքում:
- 28.2. Հաշվետվություններ ներկայացվում են ֆինանսական տարվա առաջին երեք եռամսյակների համար, չորրորդ եռամսյակի համար հաշվետվություն չի պահանջվում:
- 28.3. Հաշվետու թողարկողները եռամսյակային հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն կանոնագրքի 27.4 կետով սահմանված ձևով:
- 28.4. Սույն գլխի համաձայն հաշվետվություն ներկայացնելիս հիմք են ընդունվում սույն կանոնագրքի 6.3.1, 6.3.2 և 6.3.3 կետերի պահանջները:
- 28.5. Եթե թողարկողը հաշվետու ժամանակաշրջանում իր բաժնային արժեթղթերի սեփականատերերին է տրամադրել կամ հրապարակել է որոշակի տվյալներ պարունակող որևէ փաստաթուղթ, ապա այդ փաստաթղթին կարող է հղում կատարվել, պայմանով, որ այդ փաստաթուղթը կցվի եռամսյակային հաշվետվությանը որպես

հավելված:

- 28.6. Հաշվետվության առնվազն մեկ օրինակ պետք է ստորագրված լինի թողարկողի լիազորված պաշտոնատար անձի, գլխավոր հաշվապահի կամ նման պարտականություններ իրականացնող անձի կողմից:
- 28.7. Եռամսյակային հաշվետվությունների տիտղոսաթերթը պետք է ներառի.
- 28.7.1. հաշվետվության անվանումը՝ «Եռամսյակային հաշվետվություն».
- 28.7.2. հաշվետու թողարկողի լրիվ և կրճատ ֆիրմային անվանումը.
- 28.7.3. կազմակերպական-իրավական ձևը.
- 28.7.4. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).
- 28.7.5. նախկին անվանումն ու գտնվելու վայրը (վայրերը), փոստային հասցեն (հասցեները), եթե դրանք փոփոխվել են վերջին հաշվետվությունից հետո.
- 28.7.6. պետական գրանցման ամսաթիվը.
- 28.7.7. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության համարն ու ամսաթիվը.
- 28.7.8. եթե վերջին հինգ տարիների ընթացքում թողարկողը սնանկ է ճանաչվել, ապա նշել՝ թողարկողը դատարանի որոշմամբ հաստատված ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված բոլոր հաշվետվությունները ներկայացրել է, թե ոչ.
- 28.7.9. նշել վերջին հնարավոր ամսաթվի դրությամբ տեղաբաշխված բաժնային արժեթղթերի քանակը.
- 28.7.10. նշել սույն հաշվետվության բովանդակությունը և այն փաստաթղթերի ցանկը, որոնց հղում է կատարված.
- 28.7.11. հաշվետվությունը ստորագրող անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, ստորագրությունները և յուրաքանչյուր ստորագրության ամսաթիվը.
- 28.7.12. դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Մենք հավաստիացնում ենք, որ սույն հաշվետվությունում ներառված տեղեկությունները ստույգ են, և լիակատար գիտակցում ենք, որ նրանում որևէ էական փաստի խեղաթյուրում կամ բացթողում կարող է հանգեցնել ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը»:
- 28.8. Հաշվետվություններում պետք է ներառվեն արժեթղթի գրանցման ժամանակ ներկայացված հետևյալ տեղեկություններում փոփոխությունները (եթե կան).
- 28.8.1. հաշվետու թողարկողի հատուկ թույլտվության (լիցենզիայի) վերաբերյալ (նորի ստացում, գործողության ժամանակավոր դադարեցում, չեղյալ համարում և այլն), որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 8.4 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.2. հաշվետու թողարկողի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 8.7 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.3. հաշվետու թողարկողի՝ արդյունաբերական, բանկային, ֆինանսական խմբերին, հողինգներին, կոնցեռններին և այլ միություններին մասնակցության վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 8.10 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.4. հաշվետու թողարկողի աշխատակիցների (այդ թվում՝ վարչական ապարատում ընդգրկվածների) քանակի վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 8.11 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.5. հաշվետու թողարկողի բաժնային արժեթղթերի սեփականատերերի (ըստ արժեթղթերի տեսակների և դասերի) վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 8.13 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.6. հաշվետու թողարկողի արժեթղթերի սեփականատերերի հիմնական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 12.1.9 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.7. հաշվետու թողարկողի յուրաքանչյուր դասի և տեսակի համար եկամուտների (շահաբաժինների) վճարման պայմանների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 12.1.10 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.8. հաշվետու թողարկողի արժեթղթերի մասին շուկայական տեղեկությունների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 12.1.11 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.9. հաշվետու թողարկողի նկատմամբ դատարանի, պետական իշխանության լիազորություններ իրականացնող մարմինների կողմից կիրառված պատասխանատվության միջոցների և թողարկողի՝ քաղաքացիական դատավարությանը որպես պատասխանող մասնակցության վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 14.2 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.10. շրջակա միջավայրի աղտոտման հետ կապված խնդիրների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 14.3 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.11. այն գործարքների վերաբերյալ, որոնց միջոցով կատարվել է (նախատեսվում է) ակտիվների ձեռքբերում կամ վաճառք, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 14.4 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.12. հաշվետու թողարկողի ակտիվների 10 տոկոսը գերազանցող գործարքների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրի 14.5 կետով պահանջվող տեղեկությունները.
- 28.8.13. ներկայացնել եռամսյակային (միջանկյալ) ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնագրի 30.2 կետի.
- 28.8.14. հաշվետու թողարկողը իր հայեցողությամբ կարող է ներկայացնել նաև այլ տեղեկություններ, որոնք չեն պահանջվում սույն կանոնագրի 28.8.1-28.8.13 կետերով, սակայն թողարկողի կարծիքով՝ սույն հաշվետվության շրջանակներում դրանց ներկայացումն անհրաժեշտ է:
- 28.9. Թողարկողը սույն կանոնագրի 28.1 կետով սահմանված ժամկետում սույն գլխով նախատեսված հաշվետվությունները ներկայացնում է.
- 28.9.1. եթե հաշվետվություններն Օրենքով և սույն կանոնագրով սահմանված պահանջներին համապատասխան պետք է ներկայացվեն գրանցված և գործող ազդագիրը ներառող արժեթղթերի գրանցման հայտարարագրում ներառված տեղեկությունների արդիականությունը պահպանելու համար.
- 28.9.2. եթե թողարկողի արժեթղթերը գրանցված են ֆոնդային բորսայում և վերջինիս կանոններով սահմանված կարգով ցուցակված են այնպիսի հարթակում, որով պահանջվում է թողարկողի կողմից եռամսյակային հաշվետվությունների պահանջ.
- 28.9.3. եթե սույն գլխով նախատեսված հաշվետվությունում պահանջվող որևէ տեղեկության հրապարակումը պարտադիր է Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում կամ այդ տեղեկության հրապարակումը (ներկայացումը) կատարվում է թողարկողի ցանկությամբ:
- 28.10. Բացառությամբ սույն կանոնագրի 28.9 կետով սահմանված դեպքերի, հաշվետու թողարկողը ներկայացնում է առաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների հաշվետվությունները՝ տարվա յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 45 օրվա ընթացքում:

29.1. Հաշվետու թողարկողները Կենտրոնական բանկին են ներկայացնում հաշվետվություններ ֆինանսական տարվա ավարտից հետո 120 օրվա ընթացքում:

29.2. Ներկայացվող հաշվետվությունը կազմվում է՝ հիմնվելով սույն կանոնագրքի 6.3.1, 6.3.2 և 6.3.3 կետերի պահանջների վրա:

29.3. Հաշվետու թողարկողները տարեկան հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն կանոնագրքի 27.4 կետով սահմանված ձևով:

29.4. Հաշվետվության առնվազն մեկ օրինակ պետք է ստորագրված լինի հաշվետու թողարկողի լիազորված պաշտոնատար անձի, գլխավոր հաշվապահի կամ նման պարտականություններ իրականացնող անձի կողմից:

29.5. Հաշվետվություն ներկայացնելիս, թողարկողի հայեցողությամբ, կարող են հղումներ կատարվել թողարկողի կողմից մինչ այդ հրապարակված այլ փաստաթղթերին՝ նշելով այդ փաստաթղթերը և դրանց համապատասխան մասը:

29.6. Թողարկողի հայեցողությամբ, կարող են ներկայացվել լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնք կօժանդակեն տեղեկատվության համակարգված ու ամբողջական ներկայացմանը:

29.7. Տարեկան հաշվետվությունների տիտղոսաթերթը պետք է ներառի.

29.7.1. հաշվետվության անվանումը՝ «Տարեկան հաշվետվություն».

29.7.2. հաշվետու թողարկողի լրիվ և կրճատ ֆիրմային անվանումը.

29.7.3. կազմակերպական-իրավական ձևը.

29.7.4. պետական գրանցման ամսաթիվը.

29.7.5. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

29.7.6. Նախկին անվանումն ու գտնվելու վայրը (վայրերը), փոստային հասցեն (հասցեները), եթե դրանք փոփոխվել են վերջին հաշվետվությունից հետո.

29.7.7. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվության համարն ու ամսաթիվը.

29.7.8. եթե վերջին հինգ տարիների ընթացքում թողարկողը սնանկ է ճանաչվել, ապա նշել՝ թողարկողը դատարանի կողմից հաստատված ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված արժեթղթերի տեղաբաշխման հետ կապված բոլոր հաշվետվությունները ներկայացրել է, թե ոչ.

29.7.9. նշել վերջին հնարավոր ամսաթվի դրությամբ տեղաբաշխված արժեթղթերի քանակն ըստ տեսակների.

29.7.10. հաշվետվությունը ստորագրող անձանց անունները, ազգանունները, պաշտոնները, ստորագրությունները և յուրաքանչյուր ստորագրության ամսաթիվը.

29.7.11. նշել սույն հաշվետվության բովանդակությունը և այն փաստաթղթերի ցանկը, որոնց հղում է կատարված.

29.7.12. դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Մենք հավաստիացնում ենք, որ սույն հաշվետվությունում ներառված տեղեկությունները ստույգ են, և լիակատար գիտակցում ենք, որ նրանում որևէ էական փաստի խեղաթյուրում կամ բացթողում կարող է հանգեցնել ՀՀ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը»:

29.8. Հաշվետվություններում պետք է ներառվեն արժեթղթի գրանցման ժամանակ ներկայացված հետևյալ տեղեկություններում փոփոխությունները (եթե կան).

29.8.1. չորրորդ եռամսյակի համար ներկայացնել սույն կանոնագրքի 28-րդ և 30-րդ գլխով պահանջվող տեղեկությունները.

29.8.2. հաշվետու թողարկողի գույքի վերաբերյալ, որը ներկայացվում է՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 8.14 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.3. հաշվետու թողարկողի բնական ռեսուրսների արդյունահանման կամ վերամշակման գործունեության վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 8.15 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.4. հաշվետու թողարկողի վրա էական ազդեցություն ունեցող, սակայն կառավարման մարմիններում չընդգրկված աշխատակիցների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 9.5 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.5. հաշվետու թողարկողի գործունեության վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 14.1 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.6. հաշվետու թողարկողի նախատեսվող գործունեության վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 15-րդ գլխով պահանջվող տեղեկությունները.

29.8.7. այն անձանց վերաբերյալ, որոնք թողարկողի կողմից սահմանված տարեկան վարձատրությունը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 20.7 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.8. թողարկողի կողմից սահմանված պարգևավճարների, շահույթի բաշխման համաձայնությունների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 20.8 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.9. թողարկողի կնքած պայմանագրերի (որոնց գինը գերազանցում է նվազագույն աշխատավարձի տասնհազարապատիկը) վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 20.9 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.10. թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի նկատմամբ առկա օպցիոնների վերաբերյալ, որոնք ներկայացվում են՝ հիմք ընդունելով սույն կանոնագրքի 20.10 կետով պահանջվող տեղեկությունները.

29.8.11. ներկայացնել տարեկան ֆինանսական հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնագրքի 30-րդ գլխի.

29.8.12. ներկայացվող հաշվետվությանը կից անհրաժեշտ է ներկայացնել նաև այլ փաստաթղթեր, այդ թվում՝ ընկերության համար էական նշանակություն ունեցող գրավոր գործարքները (պայմանագրերը), վերակազմավորման, առանձնացման, միացման (այլ անձի՝ իրեն միանալու դեպքում), լուծարման ընթացակարգի վերաբերյալ կամ համանման այլ փաստաթղթեր, որոնք վերաբերում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվետու թողարկողի գործունեությանը և կօժանդակեն ներկայացված տեղեկատվության մատչելիությանն ու ամբողջականությանը:

## Գ Լ ՈՒ Խ 30

### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆ 31.1բ.)**

30.1. Հաշվետու թողարկողները, բացառությամբ հաշվետու թողարկող հանդիսացող բանկերի, ինչպես նաև Օրենքով և Կենտրոնական բանկի որոշմամբ ինստիտուցիոնալ ներդրող համարվող կազմակերպությունների, ներկայացնում են ֆինանսական հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների հիման վրա հաշվետու ժամանակաշրջանի համար սահմանված տարեկան և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների ձևերի, այդ ձևերը լրացնելու հրահանգի և սույն գլխի պահանջներին համապատասխան:

30.2. Հաշվետու թողարկող հանդիսացող բանկերը, ինչպես նաև Օրենքով և Կենտրոնական բանկի որոշմամբ ինստիտուցիոնալ ներդրող համարվող կազմակերպությունները, ֆինանսական հաշվետվությունները, ներկայացնում են համապատասխան լիազորված պետական մարմնի կողմից սահմանված և հրապարակման ենթակա ֆինանսական հաշվետվությունների ձևերի, այդ ձևերը լրացնելու հրահանգների և սույն գլխի պահանջներին համապատասխան:

30.3. Ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվությունները պետք է վավերացված լինեն աուդիտորի կնիքով ու ստորագրությամբ, որոնց կից պետք է ներկայացվեն նաև սույն կանոնագրքի 13.4 կետով սահմանված տեղեկությունները:

30.4. Հաշվետու թողարկողները սույն գլխով սահմանված ֆինանսական հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացնում սույն կանոնագրի 27.4 կետով սահմանված ձևով:

**Գ Լ ՈՒ Խ 30<sup>1</sup>**

**ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՏՐԱԳՐԵՐԻ, ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 31.1-4.)**

30<sup>1</sup>. Կենտրոնական բանկը (Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումը) իրավունք ունի հաշվետու թողարկողից կամ նրա պաշտոնատար անձանցից պահանջել հաշվետու թողարկողի վերաբերյալ բացատրագիր, տեղեկանք և/կամ փաստաթուղթ, որն անհրաժեշտ է Կենտրոնական բանկի կողմից վերահսկողություն իրականացնելու նպատակով:

30<sup>2</sup>. Հաշվետու թողարկողը կամ նրա համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է գրավոր ձևով Կենտրոնական բանկ ներկայացնել պահանջվող բացատրագիրը, տեղեկանքը և/կամ փաստաթուղթը սույն կանոնագրի 30<sup>1</sup> կետում նշված պահանջը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի (Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանման) կողմից ներկայացման ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

**Բ Ա Ժ Ի Լ 10**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ**

**Գ Լ ՈՒ Խ 31**

**ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԶԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻՐԸ (ԿԱՆՈՆ 35-1.)**

31.1. Նշանակալից ձեռքբերումների հայտարարագիրը պետք է ներառի՝  
ա) արժեթղթեր ձեռք բերող անձի և նրա հետ համատեղ գործող անձանց անունը, ազգանունը, հայրանունը, եթե վերջինս օգտագործվում է, կապի միջոցները, բնակության և գտնվելու վայրը, քաղաքացիությունը, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի համարը և սերիան, այն պաշտոնը, որն անձը զբաղեցնում է որևէ կազմակերպությունում, այդ թվում՝ թողարկողի մոտ, տվյալ կազմակերպության անվանումը, բնակության և գտնվելու վայրը, կամ այն գործունեությունը, որը նա իրականացնում է՝ ֆիզիկական անձի դեպքում կամ լրիվ անվանումը, բնակության և գտնվելու վայրը, կապի միջոցները, գրանցման երկիրը և անձի հիմնական գործունեության տեսակները ըստ կանոնադրության՝ իրավաբանական անձի դեպքում:

բ) ամիսն ու ամսաթիվը, երբ անձը և իր հետ համատեղ գործող անձինք դարձել են նշանակալից սեփականատեր. գ) թողարկողի անվանումը, հայտարարագրվող արժեթղթերի դասը և քանակը, անվանական արժեքը (առկայության դեպքում), ինչպես նաև հայտարարագրողին և նրա հետ համագործակցող անձանց պատկանող՝ տվյալ արժեթղթերի նկատմամբ սեփականության ձևը (միանձնյա, ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային):

դ) վերջին 12 ամիսների ընթացքում հայտարարագրվող արժեթղթերի ձեռքբերման համար օգտագործված (օգտագործվող) միջոցների կազմը (դրամ կամ գույք), մեծությունը և նշում դրանց սեփական կամ փոխառու լինելու մասին:

ե) արժեթղթերի ձեռքբերման նպատակը, ինչպես սահմանված է «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետով:

զ) տվյալ թողարկողի նույն դասի այն արժեթղթերի քանակը, որոնք հայտարարագրողը և նրա հետ համագործակցող անձինք պայմանագրի (այդ թվում՝ գրավի կամ այլ պայմանագրի, փոխարկելի կամ ձեռքբերման իրավունք տվող այլ դասի արժեթղթի տիրապետման) ուժով ձեռք բերելու իրավունք ունեն:

է) այն պայմանագրի, պայմանավորվածության, համաձայնության կամ պարտավորվածության եղությունը (ձեռքբերում, օտարում, կառավարում և այլն), դրա կնքման և կատարման ամիսը, ամսաթիվը, պարտավորության (պայմանագրի) գինը՝ դրամական արտահայտությամբ (առկայության դեպքում), եթե այդ պայմանագրի, պայմանավորվածության, համաձայնության կամ պարտավորվածության կողմ են ձեռք բերող անձը և նրա հետ համատեղ գործող անձինք, և եթե այդ պայմանագիրը, պայմանավորվածությունը, համաձայնությունը կամ պարտավորվածությունը վերաբերում են տվյալ թողարկողի որևէ արժեթղթին (բացառությամբ՝ «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի համաձայն բացառություն կազմող արժեթղթերի)՝ նշելով նաև տվյալ արժեթղթերի դասը, քանակը, անվանական արժեքը (առկայության դեպքում):

ը) հայտարարագրի ներկայացման ամսաթիվը, հայտարարագրողի ստորագրությունը՝ սույն կանոնագրի 32-րդ գլխի համաձայն:

31.2. Բացի սույն գլխով սահմանված տեղեկություններից, հայտարարագրողն իրավունք ունի ներառել նաև լրացուցիչ տեղեկություններ, որոնք, իր կարծիքով, ապահովում են այդ անձի կամ գործարքի մասին տեղեկությունների առավել բացահայտում: Լրացուցիչ տեղեկություններ ներկայացնելը չի հանգեցնում տեղեկությունների բացթողման կամ խեղաթյուրման:

**Գ Լ ՈՒ Խ 32**

**ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԶԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԶԵՎԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ (ԿԱՆՈՆ 35-2.)**

32.1. Նշանակալից ձեռքբերումների հայտարարագիրը ներկայացվում է ըստ ձև 35-2(Ա)-ի՝ ֆիզիկական անձանց և ձև 35-2(Բ)-ի՝ իրավաբանական անձանց համար:

32.2. Հայտարարագիրը պետք է լինի դյուրընթեռնելի, և դրա յուրաքանչյուր էջ պետք է ստորագրվի նշանակալից ձեռքբերողի կողմից: Հայտարարագիրը կարող են ստորագրել նաև արժեթղթերը ձեռք բերելու, տիրապետելու կամ օտարելու նպատակով համատեղ գործելու համաձայնությամբ (գրավոր կամ բանավոր) հանդես եկող անձինք, որի դեպքում նրանց մասին ներկայացվող տեղեկությունները պետք է լինեն լիարժեք և նրանց կողմից առանձին հայտարարագիր ներկայացնելը պարտադիր չէ: Ստորագրելով հայտարարագիրը՝ հայտարարագրողը և/կամ նրա հետ համագործակցող անձինք հավաստում են, որ հայտարարագրով ներկայացված տեղեկությունները հավաստի են:

32.3. Հայտարարագիրը ստորագրում է ֆիզիկական անձը, իսկ եթե հայտարարագրողն իրավաբանական անձն է, ապա հայտարարագիրը նաև պետք է կնքվի վերջինիս կողմից՝ ստորագրված իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ նման իրավասություններ կամ լիազորություն ունեցող այլ անձի կողմից՝ պաշտոնի նշամբ:

**Գ Լ ՈՒ Խ 33**

**ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԲԱԺՆԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԶԵՌՔԵՐՄԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 35-3.)**

33.1. Հաշվետու թողարկողի կողմից իր թողարկած բաժնային արժեթղթերը գնելու (ձեռք բերելու, հետ գնելու, փոխարկելու կամ փոխանակելու) դեպքում, սույն կանոնագրի 31-րդ գլխում նշված տեղեկություններից բացի, թողարկողը պարտավոր է հայտարարագրում լրացուցիչ բացահայտել նաև տեղեկություններ արժեթղթերի գնման

մասին որոշում ընդունած մարմնի, վերջինիս՝ օրենսդրությամբ, իր կանոնադրությամբ կամ այլ ներքին փաստաթղթով վերապահված նման իրավասության, արժեթղթերի համար վճարման ժամկետների վերաբերյալ:

33.2. Հաշվետու թողարկողը պարտավոր է հայտարարագրին կից ներկայացնել նաև արժեթղթերը գնելու վերաբերյալ իր իրավասու մարմնի որոշումը՝ իրավասու մարմնի նիստի, ժողովի, համագումարի, հեռակա քվեարկության արդյունքների ամփոփման կամ որոշումների ընդունման նման այլ ընթացակարգի արձանագրությունը՝ վավերացված թողարկողի կնիքով և իրավասու մարմնի ղեկավարի, իսկ եթե իրավասու մարմինը խորհուրդն է, վարչությունը կամ նման իրավասություններ ունեցող այլ կոլեգիալ մարմինը, բացառությամբ թողարկողի մասնակիցների ընդհանուր ժողովի, ապա նաև այդ որոշման ընդունմանը մասնակցած կամ կողմ քվեարկած անդամների, մասնակիցների կամ պաշտոնատար անձանց ստորագրությամբ:

33.3. Բացի սույն գլխով սահմանված տեղեկություններից, հայտարարագրի ներկայացնող անձը կարող է ներառել նաև տեղեկություններ, որոնք, իր կարծիքով, ապահովում են այդ անձի մասին տեղեկությունների առավել բացահայտում:

33.4. Հայտարարագրի ներկայացվում է սույն կանոնագրի ձև 35-2(Ա)-ի՝ ֆիզիկական անձանց և ձև 35-2(Բ)-ի՝ իրավաբանական անձանց համար:

#### **Գ Լ ՈՒ Խ 34**

##### ***ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԴԵՎՎԱՐՆԵՐԻ ԵՎ ԽՈՇՈՐ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ (ԿԱՆՈՆ 36-1.)***

34.1. Խոշոր սեփականատիրոջ կողմից ներկայացվող հայտարարագրի պետք է ներառի սույն կանոնագրի 31-րդ գլխով սահմանված տեղեկությունները և համապատասխանի սույն կանոնագրի 35-2(Ա) ձևին:

34.2. Հաշվետու թողարկողի ղեկավարի հայտարարագրի պետք է ներառի՝

ա) ղեկավարի անունը, ազգանունը, հայրանունը, եթե վերջինս օգտագործվում է, կապի միջոցները, բնակության և գտնվելու վայրը, քաղաքացիությունը, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի համարը և սերիան, այն պաշտոնը, որն անձը զբաղեցնում է տվյալ հաշվետու թողարկողի մոտ, ինչպես նաև որևէ այլ կազմակերպությունում՝ բացահայտելով գործատուի անվանումը, գտնվելու և բնակության վայրը, պաշտոնի հակիրճ նկարագրությունը՝ ֆիզիկական անձի դեպքում կամ անվանումը, բնակությունը և գտնվելու վայրը, կապի միջոցները, գրանցման երկիրը և անձի հիմնական գործունեության տեսակներն ըստ կանոնադրության՝ իրավաբանական անձի դեպքում:

բ) թողարկողի անվանումը, ղեկավարին սեփականության իրավունքով պատկանող տվյալ թողարկողի բաժնային արժեթղթերի քանակը, դասը, անվանական արժեքը (առկայության դեպքում):

34.3. Բացի սույն գլխով սահմանված տեղեկություններից, հաշվետու թողարկողի ղեկավարն իրավունք ունի ներառել նաև լրացուցիչ տեղեկություններ, որոնք, իր կարծիքով, ապահովում են իր մասին տեղեկությունների առավել բացահայտում: Լրացուցիչ տեղեկություններ չներկայացնելը չի հանգեցնում տեղեկությունների բացթողման կամ խեղաթյուրման:

34.4. Հայտարարագրի ներկայացվում է ըստ սույն կանոնագրի ձև 35-2(Ա)-ի՝ ֆիզիկական անձանց և ձև 35-2(Բ)-ի՝ իրավաբանական անձանց համար:

#### **Գ Լ ՈՒ Խ 35**

##### ***ԲԱԺՆԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ (ԿԱՆՈՆ 37-1.)***

35.1. Բաժնային արժեթղթերի սեփականության ընդհանուր հայտարարագրի պետք է ներառի՝

ա) սեփականատիրոջ և նրա հետ համագործակցող անձանց անունը, ազգանունը, հայրանունը, եթե վերջինս օգտագործվում է, կապի միջոցները, բնակության և գտնվելու վայրը, քաղաքացիությունը, անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի համարը և սերիան՝ ֆիզիկական անձի դեպքում կամ անվանումը, բնակության և գտնվելու վայրը, կապի միջոցները, գրանցման երկիրը՝ իրավաբանական անձի դեպքում:

բ) ամիսն ու ամսաթիվը, երբ անձը և իր հետ համատեղ գործող անձինք դարձել են նշանակալից սեփականատեր:

գ) թողարկողի անվանումը, հայտարարագրվող արժեթղթերի դասը, քանակը և անվանական արժեքը (առկայության դեպքում):

35.2. Բացի սույն գլխով սահմանված տեղեկություններից, հայտարարագրող անձն իրավունք ունի ներառել նաև լրացուցիչ տեղեկություններ, որոնք, իր կարծիքով, ապահովում են հայտարարագրողի և գործարքի մասին տեղեկությունների առավել բացահայտում: Լրացուցիչ տեղեկություններ չներկայացնելը չի հանգեցնում տեղեկությունների բացթողման կամ խեղաթյուրման:

35.3. Սույն գլխով սահմանված հայտարարագրի և դրանում ներառված տեղեկությունների փոփոխությունները Կենտրոնական բանկ և թողարկողին են ներկայացվում նշանակալից սեփականատեր դառնալու պահից (հայտարարագրվող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը կենտրոնական դեպոզիտարիայում կամ պահառուի մոտ գրանցվելու պահից) 30 օրվա ընթացքում:

35.4. Սույն գլխով սահմանված հայտարարագրի պետք է համապատասխանի սույն կանոնագրի ձև 35-2(Ա)-ին՝ ֆիզիկական անձանց և ձև 35-2(Բ)-ին՝ իրավաբանական անձանց համար:

#### **Գ Լ ՈՒ Խ 36**

##### ***ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԱՆՀԱՐԿԻ ԿԴԿՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ (ԿԱՆՈՆ 38-3.)***

36.1. Սույն կանոնագրի 35-2(Ա) և 35-2(Բ) ձևերին համապատասխան ներկայացված հայտարարագրում ներառված տեղեկությունների փոփոխությունները ներկայացվում են նույն ձևերով՝ բացահայտելով նախկին հայտարարագրի ներկայացման ամիսը, ամսաթիվն ու տարեթիվը, ինչպես նաև նշելով, որ նոր հայտարարագրի ներկայացվում է որպես նախկինում ներկայացված հայտարարագրի լրացում:

36.2. Եթե ֆիզիկական անձը ներկայացրել է սույն կանոնագրի ձև 35-2(Ա)-ին կամ իրավաբանական անձը՝ սույն կանոնագրի ձև 35-2(Բ)-ին համապատասխանող հայտարարագրի, որպես նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատեր, և հայտարարագրի ներկայացումից հետո փոփոխվել է՝

36.2.1. հայտարարագրողի անունը, հայրանունը կամ ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը), կապի միջոցները, քաղաքացիությունը, հայտարարագրողի պաշտոնը տվյալ հաշվետու թողարկողի կամ դրա հետ փոխկապված անձի կազմում, կամ հայտարարագրողը ձեռք է բերել պաշտոն տվյալ թողարկողի մոտ կամ այնպիսի կազմակերպությունում, որը տվյալ հաշվետու թողարկողի հետ փոխկապված է համարվում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն (բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարագրողը պաշտոն է զբաղեցրել հաշվետու թողարկողի հետ փոխկապված կազմակերպությունում, և միաժամանակ դադարեցվել են նրա պաշտոնեական պարտականությունները (նա ազատվել է աշխատանքից կամ չի վերընտրվել ղեկավար անձանց կազմում) տվյալ թողարկողի մոտ), հայտարարագրողի և նրա հետ համագործակցող անձանց «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետով սահմանված և հայտարարագրողի կողմից հայտարարագրված մտադրությունը կամ հայտարարագրումից հետո ոչ ավելի, քան 12 ամսվա ընթացքում ձեռք է բերել (օտարել) կամ նախատեսում է ձեռք բերել (օտարել), այդ թվում՝ գրավոր կամ բանավոր պայմանավորվածությամբ կամ տվյալ դասի արժեթղթերի ձեռքբերման կամ փոխարկման իրավունք տվող

արժեթղթերի տիրապետմամբ, տվյալ թողարկողի հայտարարագրվող արժեթղթերի 2 %-ից ավելին (բացառությամբ այն դեպքի, երբ հայտարարագրվող արժեթղթերի ձեռքբերումը կատարվել է կամ նախատեսվում է կատարել հայտարարագրվող արժեթղթերի դասին պատկանող արժեթղթերի ազդագիրը ներառող հայտարարագրի հիման վրա), ապա հայտարարագրողը պարտավոր է նախկինում ներկայացված հայտարարագիրը լրացնել սույն կանոնագրի 36.1 կետին համապատասխան կամ ներկայացնել նոր հայտարարագիր՝ փոփոխության պահից 10 օրվա ընթացքում:

36.2.2. հայտարարագրված արժեթղթերի քանակը, որի արդյունքում նշանակալից սեփականատերը դարձել է խոշոր սեփականատեր, ապա հայտարարագրողը պարտավոր է նախկինում ներկայացված հայտարարագիրը լրացնել սույն կանոնագրի 36.1 կետին համապատասխան՝ 10 օրվա ընթացքում, ինչպես նաև դրանից հետո կատարվող փոփոխությունները ներկայացնել սույն կանոնագրի 36.3 կետին համապատասխան:

36.3. Եթե ֆիզիկական անձը ներկայացրել է սույն կանոնագրի ձև 35-2(Ա)-ին, իսկ իրավաբանական անձը՝ ձև 35-2(Բ)-ին համապատասխանող հայտարարագիր՝ որպես խոշոր սեփականատեր և հայտարարագրի ներկայացումից հետո փոփոխվել է՝

36.3.1. հայտարարագրողի անունը, հայրանունը կամ ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը), կապի միջոցները, քաղաքացիությունը (գրանցման երկիրը), հայտարարագրողի պաշտոնը տվյալ հաշվետու թողարկողի կամ դրա հետ փոխկապված անձի կազմում, կամ հայտարարագրողը ձեռք է բերել պաշտոն տվյալ թողարկողի մոտ կամ այնպիսի կազմակերպությունում, որը տվյալ հաշվետու թողարկողի հետ փոխկապված է համարվում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն կամ հայտարարագրված արժեթղթերի քանակը (բացառությամբ այն դեպքի, երբ խոշոր սեփականատերը դարձել է նշանակալից սեփականատեր), ապա հայտարարագրողը պարտավոր է ներկայացված հայտարարագիրը լրացնել սույն կանոնագրի 36.1 կետին համապատասխան կամ ներկայացնել նոր հայտարարագիր՝ յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա մինչև 16-ը:

36.3.2. Հայտարարագրված արժեթղթերի քանակը, ըստ որի՝ հայտարարագրողը և իր հետ համագործակցող անձինք դարձել են նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատեր, ապա հայտարարագրողը պարտավոր է ներկայացնել նոր հայտարարագիր՝ որպես նշանակալից սեփականատեր՝ նշանակալից սեփականատեր դառնալու պահից 10-օրյա ժամկետում:

36.4. Եթե ֆիզիկական անձը ներկայացրել է սույն կանոնագրի ձև 35-2(Ա)-ին, իսկ իրավաբանական անձը՝ ձև 35-2(Բ)-ին համապատասխանող հայտարարագիր՝ որպես հաշվետու թողարկողի ղեկավար, և հայտարարագրի ներկայացումից հետո փոփոխվել է՝

36.4.1. հայտարարագրողի անունը, հայրանունը կամ ազգանունը (անվանումը), բնակության վայրը (գտնվելու վայրը), կապի միջոցները, քաղաքացիությունը (գրանցման երկիրը), հայտարարագրողի պաշտոնը տվյալ հաշվետու թողարկողի կամ դրա հետ փոխկապված անձի կազմում, կամ հայտարարագրողը ձեռք է բերել նաև նոր պաշտոն տվյալ թողարկողի մոտ կամ այնպիսի կազմակերպությունում, որը տվյալ հաշվետու թողարկողի հետ փոխկապված է համարվում «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն (բացառությամբ այն դեպքերի, երբ հայտարարագրողի պաշտոնավարումը դադարեցվել է նրա մահվան (գործունեությունն առանց իրավահաջորդի դադարման) արդյունքում), ինչպես նաև հայտարարագրված արժեթղթերի քանակը (բացառությամբ սույն կանոնագրի

36.4.2 կետով նախատեսված դեպքի), ապա հայտարարագրողը պարտավոր է նախկինում ներկայացված հայտարարագիրը լրացնել սույն կանոնագրի 36.1 կետին համապատասխան կամ ներկայացնել նոր հայտարարագիր՝ մինչև փոփոխության պահին հաջորդող ամսվա 16-ը:

36.4.2. հայտարարագրված արժեթղթերի քանակը, ըստ որի՝ հայտարարագրողը և իր հետ համագործակցող անձինք դարձել են նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատեր, ապա հայտարարագրողը պարտավոր է ներկայացնել նոր հայտարարագիր՝ որպես նշանակալից սեփականատեր՝ նշանակալից սեփականատեր դառնալու պահից 10-օրյա ժամկետում:

36.5. Եթե որևէ նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատեր միաժամանակ ղեկավար է, ապա այդ անձը ներկայացնում է միայն սույն կանոնագրի ձև 35-2(Ա)՝ ֆիզիկական անձանց և ձև 35-2(Բ)՝ իրավաբանական անձանց համար սահմանված հայտարարագիրը, իսկ դրանում ներառված տեղեկությունների փոփոխությունները՝ սույն կանոնագրի 36.2 կետի համաձայն:

36.6. Եթե հաշվետու թողարկողի կողմից «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9, 20 կամ 23-րդ հոդվածների համաձայն ներկայացված հայտարարագրում ներառված է սույն կանոնագրի 35-2(Ա) կամ 35-2(Բ) ձևերին համապատասխանող հայտարարագիրը, ապա տվյալ թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից ձեռքբերողը, ղեկավարը կամ խոշոր սեփականատերը կարող է չներկայացնել հայտարարագիր, եթե ներկայացված հայտարարագիրը համապատասխանում է սույն կանոնագրի 36.4 կետին: Սույն կետով նախատեսված կարգով ներկայացված հայտարարագրի տեղեկությունների փոփոխությունները ներկայացվում են լրացումներով՝ սույն կամ սույն կանոնագրի 36.1 կետով սահմանված կարգով:

36.7. Կենտրոնական ղեկավարության կամ որևէ պահառու, որի մոտ գրանցվում է հաշվետու թողարկողի բաժնային արժեթղթի սեփականության իրավունքը, պարտավոր է սեփականատիրոջ կողմից տվյալ թողարկողի բաժնային արժեթղթի միևնույն դասի նշանակալից կամ խոշոր սեփականատեր դառնալու՝ սեփականության իրավունքը գրանցելու պահից եռօրյա ժամկետում սեփականատիրոջը տրամադրվող քաղվածքում ներառել կամ այլ գրավոր ձևով նրան տեղեկացնել արժեթղթերի հայտարարագրի սահմանված ժամկետում ներկայացման պահանջի մասին:

## **Բ Ա Տ Ի Ն 11**

### **ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՐՇԵԹՂԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄ**

#### **Գ Լ ՈՒ Խ 37**

#### **ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՐՇԵԹՂԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 42.1-1.)**

37.1. Հայաստանի Հանրապետության տարածքում արգելվում է.

37.1.1. փաստաթղթային արժեթուղթ թողարկել կամ թողարկման նպատակով այն առաքել, փաստաթղթային արժեթղթի թողարկման կամ թողարկման շրջանակներում վաճառքի առաջարկություն անել, թողարկումը կամ առաջարկը գովազդել կամ այլ կերպ տարածել ու հրապարակել, նման արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցել, ինչպես նաև փաստաթղթային արժեթուղթ վաճառել կամ վաճառքի նպատակով այն առաքել, վաճառելու կամ գնելու առաջարկ անել, նման առաջարկություն գովազդել կամ այլ կերպ տարածել կամ հրապարակել նման առաջարկը, կամ նման արժեթուղթ գնելու առաջարկի հրավեր անել, նման արժեթղթերի տեղաբաշխմանը մասնակցել՝ բացառությամբ սույն կանոնագրի 38-րդ գլխով նախատեսված արժեթղթերի,

37.1.2. ֆոնդային բորսայում որևէ փաստաթղթային արժեթուղթ գրանցել և ցուցակել կամ այլ կերպ թույլատրել տվյալ ֆոնդային բորսայի միջոցների օգտագործմամբ նման արժեթղթերով գործարքներ իրականացնել, ինչպես նաև նման գործարք գրանցել,

37.1.3. Կենտրոնական ղեկավարության կողմից փաստաթղթային արժեթղթի տիրապետող գրանցել, պահել, նման արժեթղթերի ռեեստր վարել կամ նման արժեթղթերով հաշվարկներ իրականացնել:

**ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿԵՐԸ (ԿԱՆՈՆ 42.1-2.)**

38.1. Սույն կանոնագրքի 37.1.1 կետի սահմանափակումները չեն տարածվում փաստաթղթային այն արժեթղթերի վրա, որոնք հրապարակայնորեն վաճառվող չեն համարվում Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

38.2. Սույն կանոնագրքի 37.1.3 կետի սահմանափակումը չի տարածվում այն արժեթղթերի վրա, որոնք հրապարակայնորեն վաճառվող չեն համարվում Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

**Մ Ա Ս III**

**ԱՐԺԵԹՂԹԵՐԸ: ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ**

**Բ Ա Ժ Ի Լ 12**

**ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ**

Գ Լ ՈՒ Խ 39

**ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ (ԿԱՆՈՆ 47.4-1.)**

39.1. Բրոքերային (դիլերային) ընկերությունը ֆոնդային բորսայում ցուցակված կամ չցուցակված վաճառքի արտոնության հիման վրա վաճառվող արժեթղթերով ֆոնդային բորսայից դուրս որևէ գործարք (ֆոնդային բորսայից դուրս կատարած գործարք) կատարելիս պարտավոր է գործարքի կնքումից հետո, ֆոնդային բորսայի կողմից սահմանված ժամկետում, տեղեկատվություն ներկայացնել ֆոնդային բորսա:

39.2. Ֆոնդային բորսայից դուրս կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներառի.

39.2.1. թողարկողի անվանումը.

39.2.2. արժեթղթի դասը.

39.2.3. գործարքի տեսակը (առք, վաճառք).

39.2.4. գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր գումարը.

39.2.5. գործարքի կնքման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի):

39.3. Սույն կանոնագրքի 39.2 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնագրքի 47.4-1(բ) ձևի, եթե հաշվետվության այլ ձև ֆոնդային բորսայի կողմից չի սահմանված:

39.4. Սույն գլխի համապատասխան ֆոնդային բորսա ներկայացվող տեղեկատվությունը պետք է.

39.4.1. ներառի տեղեկատվության ներկայացման ամսաթիվը.

39.4.2. բրոքերային (դիլերային) ընկերության անվանումը և կազմակերպական-իրավական ձևը.

39.4.3. դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույնով ես հայտնում եմ ֆոնդային բորսայում ցուցակված կամ չցուցակված վաճառքի արտոնության հիման վրա վաճառվող արժեթղթերով ֆոնդային բորսայից դուրս կատարած գործարքների մասին և հավաստիացնում եմ, որ սույն ներկայացվող տեղեկատվությունը ստույգ է, և լիակատար գիտակցում եմ, որ որևէ էական փաստի խեղաթյուրումը կամ բացթողումը կարող է հանգեցնել պատասխանատվության միջոցների կիրառմանը»:

39.4.4. ներկայացված լինի բրոքերի/դիլերի ստորագրությամբ (ստորագրությունը՝ կապույտ գույնով գրող գրչով):

**Բ Ա Ժ Ի Լ 13**

**ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅՈՒՄ ՄԵԿ ԿԱՍ ԱՎԵԼԻ ԱՆՁԱՆՅՈՎ ԱՐԺԵԹՈՒՐԹ ԳՆԵԼՈՒ ԵՎ (ԿԱՍ) ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԻ ՇԱՐՔ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ**

Գ Լ ՈՒ Խ 40

**ԿԱՆՈՆ 48.2-1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 48.2-1.)**

40.1. Սույն բաժնում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

40.1.1. «**Առևտրային Նստաշրջան**». աշխատանքային օրվա ժամանակահատված, որի ընթացքում ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով կազմակերպվում է արժեթղթերի հրապարակային առևտուր.

40.1.2. «**Առևտրային համակարգ**». Էլեկտրոնային եղանակով ֆոնդային բորսայի կողմից հրապարակային առևտրի կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման համար ֆոնդային բորսայում օգտագործվող տեխնիկական, ծրագրային և այլ միջոցների համախումբ.

40.1.3. «**Շուկա ստեղծող**». ֆոնդային բորսայի անդամ, որը ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում գրանցված որևէ դասի արժեթղթերի գինը պահպանելու, սահմանելու կամ կայունացնելու նպատակով իր անունից և իր հաշվին կնքում է տվյալ դասի արժեթղթերով գործարքներ.

40.1.4. «**Հայտ**». առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգում ներկայացված՝ արժեթղթերի գնման կամ վաճառքի առաջարկ, որտեղ նշված են այդ առաջարկի բավարարման համար անհրաժեշտ բոլոր պայմանները.

40.1.5. «**Գնանշում**». արժեթղթերով գործարքներ կնքելու նպատակով առևտրային համակարգում արժեթղթի գնման և/կամ վաճառքի գնի հայտարարումը.

40.1.6. «**Երկկողմանի գնանշում**». առևտրային համակարգում Շուկա ստեղծողի կողմից տվյալ դասի արժեթղթերի առևձագն մեկ գնման և մեկ վաճառքի գնի միաժամանակյա հայտարարումը.

40.1.7. «**Գնանշման ծավալ**». հայտում նշված գնման կամ վաճառքի ենթակա արժեթղթի քանակ.

40.1.8. «**Սպրեդ**». Շուկա ստեղծողի կողմից առևտրային համակարգում ներկայացված համապատասխան դասի արժեթղթերի գնման հայտերում նշված ամենաբարձր և վաճառքի հայտերում նշված ամենացածր գների տարբերությունը.

40.1.9. «**Լրիվ նախնական դեպոնացմամբ առևտուր**». ֆոնդային բորսայի կողմից արժեթղթերով կազմակերպվող հրապարակային առևտրի ձև, որի ընթացքում ֆոնդային բորսայի անդամը գործարքներ կարող է կնքել նախապես դեպոնացված արժեթղթերի և դրամական միջոցների սահմաններում:

Գ Լ ՈՒ Խ 41

**ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԱՀԱՆՋՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 48.2-2.)**

41.1. Ֆոնդային բորսայում գրանցված որևէ դասի արժեթղթերի գները պահպանելու, սահմանելու կամ կայունացնելու նպատակով ֆոնդային բորսան, սույն բաժնի կանոններին համապատասխան, պետք է սահմանի

Շուկա ստեղծողի գործունեությունը կանոնակարգող կանոն (այսուհետ նաև՝ Շուկա ստեղծողի կանոն):

41.2. Շուկա ստեղծողի կանոնը պետք է սահմանի.

ա) Շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհման, դրա կասեցման և դադարեցման կարգը, այդ թվում՝ Շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհման մերժման, կասեցման և դադարեցման հիմքերը.

բ) Շուկա ստեղծողին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ Շուկա ստեղծողի զուտ կապիտալի նվազագույն չափը և դրա հաշվարկման կարգը.

գ) Շուկա ստեղծողի գործունեությանը ներկայացվող պահանջները, այդ թվում՝ սպրեդի չափը և հաշվարկման կարգը, ինչպես նաև նվազագույն գնանշման ծավալը.

դ) Շուկա ստեղծողի գործունեության սահմանափակումները և արտոնությունները.

ե) Շուկա ստեղծողի և նրա գործունեության նկատմամբ սահմանված պահանջների պահպանման վերահսկման կարգը.

զ) Շուկա ստեղծողի պատասխանատվությունը՝ Շուկա ստեղծողի և նրա գործունեության նկատմամբ սահմանված պահանջների խախտման համար.

է) սույն բաժնի կանոններով սահմանված այլ ընթացակարգեր և պահանջներ:

41.3. Ֆոնդային բորսայի անդամին Շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհումը պետք է իրականացվի առանձին՝ ըստ արժեթղթերի յուրաքանչյուր դասի:

#### **Գ Լ ՈՒ Խ 42**

##### ***ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 48.2-3.)***

42.1. Ֆոնդային բորսայում Շուկա ստեղծողի կարգավիճակ կարող է շնորհվել միայն տվյալ ֆոնդային բորսայի անդամին:

42.2. Շուկա ստեղծողի կարգավիճակի շնորհման և Շուկա ստեղծողի գործունեության ընթացքում ֆոնդային բորսայի անդամը պետք է բավարարի Շուկա ստեղծողի կանոնով սահմանված կարգով հաշվարկված զուտ կապիտալի նվազագույն չափին և Շուկա ստեղծողի կանոնով սահմանված այլ պահանջներին:

42.3. Սույն կանոնագրքի 42.2 կետով սահմանված՝ զուտ կապիտալի նվազագույն չափի պահանջը չի տարածվում ֆոնդային բորսայում լրիվ նախնական դեպոզիտային առևտրի ընթացքում Շուկա ստեղծողի կարգավիճակի և նրա գործունեության վրա:

#### **Գ Լ ՈՒ Խ 43**

##### ***ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 48.2-4.)***

43.1. Շուկա ստեղծողը պարտավոր է.

43.1.1. անընդհատ ապահովել երկկողմանի գնանշում.

43.1.2. երկկողմանի գնանշման ընթացքում գնման և/կամ վաճառքի հայտի բավարարման դեպքում Շուկա ստեղծողի կանոնով սահմանված ժամկետում, բայց ոչ ավելի, քան երեք ռոպեում, ապահովել նոր երկկողմանի գնանշում.

43.1.3. երկկողմանի գնանշման ընթացքում ապահովել Շուկա ստեղծողի կանոնով սահմանված նվազագույն գնանշման ծավալ՝ մասնակի բավարարման պայմանով.

43.1.4. երկկողմանի գնանշումը կատարել Շուկա ստեղծողի կանոնով սահմանված սպրեդի սահմաններում:

43.2. Շուկա ստեղծողն իրավունք ունի.

43.2.1. փոփոխել երկկողմանի գնանշումը Շուկա ստեղծողի կանոնով սահմանված սպրեդի սահմաններում.

43.2.2. իրաժարվել երկկողմանի գնանշման պարտավորության կատարումից, եթե իր անուկից և իր հաշվին կնքված գործարքների ընդհանուր ծավալը գերազանցում է Շուկա ստեղծողի կանոնով սահմանված նվազագույն չափից, կամ առկա է Շուկա ստեղծողի կանոններով սահմանված այլ հիմք:

#### **Գ Լ ՈՒ Խ 44**

##### ***ՇՈՒԿԱ ՍՏԵՂԾՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 48.2-5.)***

44.1. Շուկա ստեղծողին արգելվում է արժեթղթի գնման լավագույն գնի իջեցման կամ վաճառքի լավագույն գնի բարձրացման նպատակով փոփոխել երկկողմանի գնանշումը:

44.2. Շուկա ստեղծողին արգելվում է առևտրային համակարգում կնքել գործարք, որի արդյունքում գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում տեղի չի ունենում:

#### **Բ Ա Ժ Ի Ն 14**

##### **ԱՐԺԵԹԹԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՑՈՒՑԱԿՈՒՄ**

#### **Գ Լ ՈՒ Խ 45**

##### ***ՊԱՐՏԱԴԻՐ ՑՈՒՑԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋ (ԿԱՆՈՆ 51-1.)***

45.1. Ֆոնդային բորսայում պարտադիր ցուցակման է ենթակա (այսուհետ նաև՝ պարտադիր ցուցակման ենթակա)՝

45.1.1. որևէ թողարկողի այն արժեթուղթը, որը գրանցված է Օրենքի II և/կամ III գլխին համապատասխան, և որոնց գրանցված սեփականատերի թիվը հարյուր և ավելի է, բացի սույն կանոնագրքի 45.1.2 կետով նախատեսված թողարկողների արժեթղթերի, ինչպես նաև մասնավորեցման նպատակով Օրենքի II գլխի համաձայն գրանցված արժեթղթերի: Ընդ որում, տվյալ արժեթղթի գրանցված սեփականատեր է համարվում նաև նման արժեթղթում մասնակցություն ունեցող անձը, իսկ տվյալ արժեթղթի ֆրակցիան (մասը) համարվում է տվյալ արժեթղթի դասի արժեթուղթ:

45.1.2. որևէ բանկի, ապահովագրական ընկերության կամ ներդրումային հիմնադրամի այն արժեթուղթը, որը գրանցված է Օրենքի II և/կամ III գլխին համապատասխան:

45.2. Պարտադիր ցուցակման ենթակա արժեթղթի թողարկողը պարտավոր է այդ արժեթուղթը ֆոնդային բորսայում ցուցակելու համար ձեռնարկել տվյալ ֆոնդային բորսայի կանոններով սահմանված բոլոր անհրաժեշտ միջոցները, իսկ ֆոնդային բորսան պարտավոր է ցուցակել տվյալ արժեթուղթը՝ տվյալ արժեթուղթը պարտադիր ցուցակման ենթակա դառնալու օրվանից սկսած 20 օրվա ընթացքում՝ անկախ այդ ժամկետի ընթացքում տվյալ արժեթղթի գրանցված սեփականատերերի թվի փոփոխման հանգամանքից:

#### **Գ Լ ՈՒ Խ 46**

##### ***ՊԱՐՏԱԴԻՐ ՑՈՒՑԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 51-2.)***

46.1. Սույն կանոնագրքի 45.1.1 կետի հիմքով ֆոնդային բորսայում ցուցակված արժեթուղթը սույն կանոնագրքի 46.2 - 46.4 կետերով սահմանված կարգով դադարում է պարտադիր ցուցակման ենթակա լինելուց և կարող է տվյալ ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով դադարեցնել ցուցակումը (այսուհետ նաև՝ ապացուցակվել), եթե ֆոնդային բորսայում ցուցակվելուց հետո որևէ օրից սկսած մինչև սույն կանոնագրքի 46.4 կետի համաձայն պարտադիր ցուցակման պահանջը դադարեցնելու մասին դիմումը ներկայացնելու օրը առնվազն 183 օր տևողությամբ անընդհատ ժամանակահատվածի ընթացքում սույն կանոնագրքի 45.1.1 կետով սահմանված արժեթղթի գրանցված սեփականատերերի թիվը շարունակ պակաս է եղել հարյուրից:

46.2. Թողարկողը, որը ցանկանում է իր կողմից թողարկված արժեթուղթը ապացուցակել սույն կանոնագրքի 46.1 կետի հիմքով, պարտավոր է այդ մասին դիմում ներկայացնել Կենտրոնական բանկ և այն ֆոնդային բորսա, որտեղ տվյալ արժեթուղթը ցուցակված է: Կենտրոնական բանկի կողմից դիմումը ստանալու քառասուներորդ օրվանից թողարկողի տվյալ արժեթուղթը դադարում է պարտադիր ցուցակման ենթակա լինելուց և կարող է ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ապացուցակվել, եթե մինչև այդ օրը Կենտրոնական բանկը նախնական ծանուցմամբ և լսման հնարավորության ընձեռմամբ չի մերժում տվյալ դիմումը:

46.3. Կենտրոնական բանկը մերժում է սույն կանոնագրքի 46.4 կետին համապատասխան ստացված դիմումը.

ա) եթե պարզում է, որ խախտվել է սույն կանոնագրքի 46.1 կետով սահմանված պահանջը.

բ) եթե սույն կանոնագրքի 45.1.1 կետով սահմանված նույն դասի արժեթղթերի գրանցված սեփականատերերի թիվը դիմումը ներկայացնելու օրվանից մինչև 35-րդ օրը ընկած ժամանակահատվածում թեկուզև մեկ օր ավելի է եղել հարյուրից:

46.4. Դիմումը սույն կանոնագրքի 46.2 կետի իմաստով ստացված է համարվում, եթե այն ներկայացվել է սույն կանոնագրքի 51-2 ձևին («Պարտադիր ցուցակման պահանջը դադարեցնելու դիմում») համապատասխան և դրան կից ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված տեղեկանքը, որով հաստատվում է սույն կանոնագրքի 46.1 կետով նախատեսված դեպքի առկայությունը:

46.5. Թողարկողը, որը ներկայացրել է իր արժեթղթի պարտադիր ցուցակման պահանջը դադարեցնելու դիմումը, իրավունք ունի սույն կանոնագրքի 46.2 կետով սահմանված ժամկետում հետ կանչել Կենտրոնական բանկ և ֆոնդային բորսա ներկայացված դիմումները: Այս դեպքում տվյալ արժեթուղթը շարունակում է համարվել պարտադիր ցուցակման ենթակա արժեթուղթ:

## Մ Ա Ս IV

### ՄԱՍՆԱԳԻՏԱԳՎԱԾ ԱՆՁԻՆԸ

#### Բ Ա Ժ Ի Լ 15

### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

#### Գ Լ ՈՒ Խ 47

### ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 58.1-1.)

47.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

47.1.1. «**Քննություն անցկացնող անձ**». Կենտրոնական բանկ կամ ինքնակարգավորվող կազմակերպություն, որին պատվիրակվել է մասնագիտական որակավորման քննությունների կազմակերպման, անցկացման և որակավորման շնորհման իրավասությունը.

47.1.2. «**Քննության դիմում**». մասնագիտական որակավորման քննությանը մասնակցելու համար ֆիզիկական անձի կողմից քննություն անցկացնող անձին ներկայացվող հայտ.

47.1.3. «**Դիմորդ**». մասնագիտական որակավորում ստանալու նպատակով քննության դիմում ներկայացրած անձ.

47.1.4. «**Քննության պատասխանատու անձ**». մասնագիտական որակավորման քննության նախապատրաստման և անցկացման համար Կենտրոնական բանկի որոշմամբ նշանակված պատասխանատու անձ.

47.1.5. «**Դիտորդ**». մասնագիտական որակավորման քննության ընթացքի օրինականությանը հետևելու համար Կենտրոնական բանկի որոշմամբ նշանակված անձ:

#### Գ Լ ՈՒ Խ 48

### ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 58.1-2.)

48.1. Քննություն անցկացնող անձը մասնագիտական որակավորման քննության (այսուհետ՝ քննություն) անցկացման միջոցով ֆիզիկական անձին կարող է շնորհել մասնագիտական որակավորման հետևյալ տեսակները.

48.1.1. ընդհանուր մասնագիտական որակավորում.

48.1.2. բրոքերի (դիլերի) որակավորում.

48.1.3. հավատարմագրային կառավարչի որակավորում.

48.1.4. պահառուի մասնագետի որակավորում:

48.2. Ֆիզիկական անձին արգելվում է.

48.2.1. առանց ընդհանուր մասնագիտական որակավորում ունենալու հանդես գալ որպես՝  
ա) մասնագիտացված անձի գործադիր տնօրեն կամ նման պարտականություններ կատարող անձ.

բ) ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի անդամ (այդ թվում՝ նախագահ), վարչության անդամ կամ գործադիր տնօրեն, վերահսկիչ ծառայության ղեկավար, անդամ կամ աշխատակից.

48.2.2. առանց բրոքերի (դիլերի) որակավորում ունենալու հանդես գալ որպես բրոքեր (դիլեր) կամ բրոքերային (դիլերային) ընկերության ներքին վերահսկող ծառայության ղեկավար, անդամ կամ աշխատակից.

48.2.3. առանց հավատարմագրային կառավարչի որակավորում ունենալու հանդես գալ որպես արժեթղթերի հավատարմագրային կառավարման որևէ գործառույթ իրականացնող աշխատակից կամ հավատարմագրային կառավարչի ներքին վերահսկող ծառայության ղեկավար, անդամ կամ աշխատակից.

48.2.4. առանց պահառուի մասնագետի որակավորում ունենալու հանդես գալ որպես արժեթղթերի պահառության որևէ ծառայություն մատուցող աշխատակից կամ պահառուի ներքին վերահսկող ծառայության ղեկավար, անդամ կամ աշխատակից:

48.3. Ընդհանուր մասնագիտական որակավորում ունեցող ֆիզիկական անձն իրավունք ունի իրականացնել սույն կանոնագրքի 48.1.2, 48.1.3 և 48.1.4 կետերով սահմանված որևէ տեսակի մասնագիտական որակավորում պահանջող համապատասխան մասնագիտացված գործունեություն կամ գործառույթ:

#### Գ Լ ՈՒ Խ 49

### ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ (ԿԱՆՈՆ 58.1-3.)

49.1. Քննության դիմումը քննություն անցկացնող անձին է ներկայացվում սույն կանոնագրքի 58.1-3(ա) ձևին համապատասխան և պետք է ներառի.

- 49.1.1. դիմումի անվանումը՝ «Մասնագիտական որակավորման քննության դիմում».
- 49.1.2. դրույթ հետևյալ բովանդակությամբ՝ «Խնդրում եմ թույլատրել մասնակցելու մասնագիտական որակավորման քննությանը».
- 49.1.3. դիմորդի կողմից հայցվող մասնագիտական որակավորման տեսակը.
- 49.1.4. դիմորդի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները.
- 49.1.5. դրույթ հետևյալ բովանդակությամբ՝ «Ես հավաստիացնում եմ, որ սույն դիմումում պարունակվող տեղեկությունները ստույգ են, և լիակատար գիտակցում եմ, որ նրանում որևէ էական փաստի խեղաթյուրումը կամ բացթողումը կարող է հանգեցնել դիմումի մերժմանը կամ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը».
- 49.1.6. դիմումի ներկայացման ամսաթիվը:
- 49.2. Քննության դիմումը պետք է վավերացված լինի դիմորդի ստորագրությամբ (ստորագրությունը կապույտ գույնով գրող գրիչով) և լրացված լինի Ա4 չափսի սպիտակ թղթի վրա, հայերեն լեզվով, «Թայմս Արմենիան» համակարգչային սև գույնի տառատեսակով, հիմնական տեքստը՝ 8-10 չափով:
- 49.3. Դիմորդը քննության դիմումին կից ներկայացնում է քննությանը մասնակցելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը: Հայցվող յուրաքանչյուր տեսակի մասնագիտական որակավորման համար դիմորդը պետք է ներկայացնի օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող առանձին անդորրագիր:
- 49.4. Քննության դիմումը (հետագա լրացումները) ներկայացված է համարվում քննություն անցկացնող անձի կողմից այն ստանալու պահից, սակայն պետական անդորրագիրը (անդորրագրերը) ստանալու օրվանից ոչ շուտ: Եթե քննության դիմումի որևէ լրացում է ներկայացվում քննություն անցկացնող անձին, ապա քննության դիմումը ներկայացված է համարվում այդ լրացումը քննություն անցկացնող անձի կողմից ստանալու օրվանից:
- 49.5. Եթե ներկայացված քննության դիմումում ներառված տեղեկությունները լիարժեք չեն, կամ էական փաստ է խեղաթյուրվել (բաց թողնվել), կամ քննության դիմումը չի համապատասխանում սույն կանոնագրի 49.1 կամ 49.2 կետերով սահմանված որևէ պահանջին, ապա քննություն անցկացնող անձը քննության դիմումի ներկայացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է դիմորդին:
- 49.6. Քննության դիմումը համարվում է թերության հիմքով մերժված, եթե սույն կանոնագրի 49.5 կետով սահմանված ծանուցումը քննություն անցկացնող անձի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում դիմորդը չի ներկայացնում համապատասխան լրացում, կամ վերջինիս ներկայացմամբ չեն վերանում ծանուցված թերությունները:
- 49.7. Եթե ներկայացված քննության դիմումը համապատասխանում է սույն կանոնագրի 49.1 և 49.2 կետերով սահմանված պահանջներին, ապա քննություն անցկացնող անձը քննության դիմումի ներկայացման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմորդին պատշաճ ծանուցում է քննության անցկացման օրվա, ժամի և տեղի մասին:

#### Գ Լ ՈՒ Խ 50

#### **ՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄ (ԿԱՆՈՆ 58.1-4.)**

- 50.1. Քննություն անցկացնող անձը ներկայացված դիմումի (դիմումների) հիման վրա կազմում է հերթական քննության մասնակիցների ցուցակը: Քննության մասնակիցների ցուցակում ընդգրկվում են այն դիմորդները, որոնք քննություն անցկացնող անձի կողմից քննության անցկացման պահից առնվազն 7 օր առաջ սույն կանոնագրի 49.7 կետի համաձայն պատշաճ ծանուցվել են: Նման դիմորդների բացակայության դեպքում քննության մասնակիցների ցուցակ չի կազմվում: Քննության մասնակիցների ցուցակը վավերացվում է քննության պատասխանատու անձի ստորագրությամբ:
- 50.2. Քննություններն անց են կացվում յուրաքանչյուր ամսվա առաջին չորեքշաբթի օրը՝ բացառությամբ այն դեպքի, երբ քննության մասնակիցների ցուցակ չի կազմվել: Եթե քննության անցկացման օրը ոչ աշխատանքային է, ապա քննությունն անցկացվում է նշված ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրը: Քննության սկիզբը ժամը 10.00-ն է:
- 50.3. Քննությանը իրավունք ունի մասնակցել այն դիմորդը, որն ընգրկվել է տվյալ քննության մասնակցիների ցուցակում: Քննության մասնակիցների ցուցակում ընդգրկված դիմորդը քննության է ներկայանում անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: Առանց անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի ներկայացած դիմորդը համարվում է քննությանը չներկայացած:
- 50.4. Տվյալ քննությանը չներկայացած դիմորդն ընդգրկվում է հաջորդ քննության մասնակիցների ցուցակում: Քննությանը երեք անգամ չներկայացած դիմորդը հանվում է քննության մասնակիցների ցուցակից և հետագայում քննությանը կարող է մասնակցել ընդհանուր հիմունքներով:
- 50.5. Քննությունն անց է կացվում թեստային եղանակով՝ համակարգչի միջոցով: Մինչև քննության սկսվելը, քննության պատասխանատու անձը դիմորդին ծանուցանում է քննության հանձնման ընդհանուր կանոններին: Դիմորդը քննության ընթացքում կարող է օգտվել միայն հաշվիչից:
- 50.6. Քննության պատասխանատու անձը և դիմորդները հետևում են որակավորման քննության ընթացքին և անհրաժեշտության դեպքում ձեռնարկում համապատասխան միջոցառումներ՝ քննության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով: Այն իրավիճակներում, երբ հնարավոր չէ ապահովել քննության բնականոն ընթացքը, քննության պատասխանատու անձի կողմից դադարեցվում է քննությունը, և կազմվում է համապատասխան արձանագրություն, որում նշվում են քննության դադարեցման պատճառները և քննության վերսկսման հնարավոր ժամկետները:
- 50.7. Քննությունը համարվում է չկայացած, եթե.
- 50.7.1. քննությանը չի ներկայացել քննության պատասխանատու անձը.
- 50.7.2. քննությանը չի ներկայացել դիմորդներից ոչ մեկը.
- 50.7.3. քննության պատասխանատու անձի կողմից սույն կանոնագրի 50.6 կետով սահմանված դեպքում քննությունը դադարեցվելու և քննությունը տվյալ օրվա ընթացքում չվերսկսելու դեպքում:
- 50.8. Չկայացած քննության դեպքում ներկայացած, սակայն քննության չմասնակցած դիմորդները ընդգրկվում են հերթական քննության ցուցակում և չեն համարվում չներկայացած:

#### Գ Լ ՈՒ Խ 51

#### **ՀԱՐԳԱԶԱՐ ԵՎ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՍԹԵՐ (ԿԱՆՈՆ 58.1-5.)**

- 51.1. Քննական հարցերը պարունակող հարցաշարը (այսուհետ՝ Հարցաշար) կազմվում և հաստատվում է Կենտրոնական բանկի կողմից: Հարցաշարը Կենտրոնական բանկի կողմից ենթակա է հրապարակման:
- 51.2. Հարցաշարում ընդգրկվում են հարցեր արժեթղթերի շուկայի տեսությունից և Նորմատիվ իրավական ակտերից, ինչպես նաև ինդիքներ: Հարցաշարում ինդիքները ներկայացվում են ըստ տեսակների կազմված տիպային օրինակների:
- 51.3. Քննություն անցկացնող անձը ցանկացած ֆիզիկական անձի, նրա առաջին իսկ պահանջով, տրամադրում է Հարցաշարը և անհրաժեշտ գրականության ցանկը՝ տվյալ անձի կողմից տրված էլեկտրոնային կրիչի միջոցով:
- 51.4. Քննության ընթացքում դիմորդին առաջադրվող քննական թեստերում ընդգրկվող հարցերը համակարգչի

վիճեցողը ընտրվում են Հարցաշարից՝ ըստ դիմորդի կողմից հայցվող մասնագիտական որակավորման տեսակի: Քննական թեսթերը բաղկացած են՝

- 51.4.1. ընդհանուր մասնագիտական որակավորման համար՝ 80 հարցից:
- 51.4.2. բրոքերի (դիլերի) որակավորման համար՝ 50 հարցից:
- 51.4.3. հավատարմագրային կառավարչի որակավորման համար՝ 50 հարցից:
- 51.4.4. պահառուի մասնագետի որակավորման համար՝ 50 հարցից:
- 51.5. Դիմորդին քննական թեսթը պատասխանելու համար տրվում է՝
- 51.5.1. ընդհանուր մասնագիտական որակավորման համար՝ 120 րոպե ժամանակ:
- 51.5.2. բրոքերի (դիլերի) որակավորման համար՝ 75 րոպե ժամանակ:
- 51.5.3. հավատարմագրային կառավարչի որակավորման համար՝ 75 րոպե ժամանակ:
- 51.5.4. պահառուի մասնագետի որակավորման համար՝ 75 րոպե ժամանակ:

**Գ Լ ՈՒ Խ 52**

***ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՈՒՄ (ԿԱՆՈՆ 58.1-6.)***

52.1. Դիմորդի ներկայությամբ քննության պատասխանատու անձը տպող սարքի միջոցով տպում է քննության արդյունքների մասին հաշվետվությունը՝ երկու օրինակից, որոնք ստորագրվում են քննության պատասխանատու անձի և դիմորդի կողմից: Քննության արդյունքների մասին հաշվետվության մեկ օրինակը տրվում է դիմորդին:

52.2. Դիմորդը քննության արդյունքներով համարվում է բավարար գնահատված, եթե ճիշտ է պատասխանել քննական տեստում ընդգրկված հարցերի ընդհանուր քանակի առնվազն 70 %-ին, մասնավորապես.

- 52.2.1. ընդհանուր մասնագիտական որակավորման համար՝ առնվազն 56 հարցի:
- 52.2.2. բրոքերի (դիլերի) որակավորման համար՝ առնվազն 35 հարցի:
- 52.2.3. հավատարմագրային կառավարչի համար՝ առնվազն 35 հարցի:
- 52.2.4. պահառուի մասնագետի որակավորման համար՝ առնվազն 35 հարցի:

52.3. Քննության արդյունքների մասին հաշվետվությունների հիման վրա քննության պատասխանատու անձը քննությանը ներկա դիմորդների հետ համատեղ կազմում է քննության արդյունքների մասին արձանագրություն: Քննության արդյունքների մասին արձանագրություն է կազմվում նաև մասնագիտական որակավորման քննության չկայացման դեպքում, որտեղ արձանագրվում են քննության չկայացման հիմքերը:

52.4. Քննության արդյունքների մասին արձանագրությունը ստորագրվում է քննության պատասխանատու անձի և ներկա դիմորդների կողմից: Եթե դիմորդն արձանագրությունը ստորագրելուց հրաժարվում է, ապա արձանագրությանը կից ներկայացնում է արձանագրության հետ համաձայն չլինելու վերաբերյալ իր գրավոր առարկությունները: Առարկություններով կից արձանագրությունը ներկայացվում է Կենտրոնական բանկ՝ սույն կանոնագրի 53-րդ գլխով սահմանված կարգով:

52.5. Քննության արդյունքների մասին արձանագրության հիման վրա քննություն անցկացնող անձի կողմից (եթե վերջինս ինքնակարգավորվող կազմակերպություն է, ապա նրա դիմորդ խորհրդի կողմից) քննությանը բավարար գնահատված դիմորդին շնորհվում է համապատասխան տեսակի մասնագիտական որակավորում:

52.6. Քննության արդյունքներով անբավարար գնահատված դիմորդը կարող է ընդհանուր հիմունքներով մասնակցել հետագա կազմակերպվող քննություններին:

**Գ Լ ՈՒ Խ 53**

***ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ (ԿԱՆՈՆ 58.1-7.)***

53.1. Քննության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում դիմորդն իրավունք ունի մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 13.00-ն Կենտրոնական բանկ ներկայացնել քննության արդյունքների վերաբերյալ գրավոր դիմում-բողոք: Ներկայացված դիմում-բողոքում դիմորդի կողմից պետք է մանրամասն նշվեն բողոքարկման հիմքերը:

53.2. Քննության արդյունքների վերաբերյալ ներկայացված դիմում-բողոքը քննարկվում է լսումների միջոցով: Լսումների միջոցով դիմում-բողոքի քննարկումը կազմակերպում է Կենտրոնական բանկը կամ Կենտրոնական բանկի որոշմամբ լիազորված անձինք:

53.3. Դիմում-բողոքը սույն կանոնագրի 53.2 կետով սահմանված կարգով բավարարվելու արդյունքում քննություն անցկացնող անձի կողմից դիմորդին շնորհվում է համապատասխան մասնագիտական որակավորում, եթե դիմորդը դառնում է սույն կանոնագրի 52.2 կետի համաձայն քննության արդյունքներով բավարար գնահատված:

**Գ Լ ՈՒ Խ 54**

***ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ (ԿԱՆՈՆ 58.1-8.)***

54.1. Մասնագիտական որակավորում շնորհված անձին քննություն անցկացնող անձի կողմից տրվում է մասնագիտական որակավորման հավաստագիր (այսուհետ՝ հավաստագիր): Յուրաքանչյուր տեսակի մասնագիտական որակավորման համար տրվում է համապատասխան տեսակի առանձին հավաստագիր:

54.2. Հավաստագիրը պատրաստվում է համակարգչի միջոցով և տպագրվում ջրանիշ պարունակող Ա4 չափսի թղթի վրա: Հավաստագիրը պետք է ներառի հետևյալ պարտադիր վավերապայմանները.

- 54.2.1. քննություն անցկացնող անձի լրիվ անվանումը:
- 54.2.2. «Մասնագիտական որակավորման հավաստագիր» արտահայտությունը:
- 54.2.3. մասնագիտական որակավորման տեսակը:
- 54.2.4. մասնագիտական որակավորում ստացած անձի անունը, ազգանունը:
- 54.2.5. հավաստագրի սերիան և համարը:
- 54.2.6. տրման ամսաթիվը:
- 54.2.7. հատուկ նշում այն մասին, որ հավաստագիրը ենթակա չէ փոխանցման կամ այլ ձևով այլ անձանց օտարման:

54.3. Հավաստագիրը վավերացվում է քննություն անցկացնող անձի ղեկավարի ստորագրությամբ և կնքվում քննություն անցկացնող անձի կնիքով: Հավաստագիրը տրվում է մասնագիտական որակավորում ստացած անձին մասնագիտական որակավորման շնորհումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

54.4. Քննություն անցկացնող անձը վարում է հավաստագրերի գրանցամատյան, որում ներառվում են որակավորում ստացած անձի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, հավաստագրի տրման ամսաթիվը, սերիան և համարը:

54.5. Հավաստագիրը կորցնելու դեպքում այն վերականգնվում է նույն վավերապայմաններով: Հավաստագրի կորուստն այլ հետևանքներ չի առաջացնում:

Գ Լ ՈՒ Խ 55

**ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԱՎԵՐԱԴԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԱԹՈՐՈՐԸ (ԿԱՆՈՆ 61.5-1.)**

- 55.1. Մասնագիտացված գործունեության լիցենզիան պարունակում է հետևյալ վավերապայմանները.
  - 55.1.1. լիցենզիայի կենտրոնական հատվածի վերևի մասում՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» բառերը.
  - 55.1.2. լիցենզիայի կենտրոնական հատվածում՝ «Լիցենզիա» բառը.
  - 55.1.3. լիցենզիայի սերիան (հանդիսանում է մասնագիտացված գործունեության տեսակի առաջին տառերից կազմված հապավում) և հերթական համարը.
  - 55.1.4. լիցենզիայով հավաստվող մասնագիտացված գործունեության տեսակը.
  - 55.1.5. մասնագիտացված անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը.
  - 55.1.6. լիցենզիայի տրման ամսաթիվը.
  - 55.1.7. լիցենզավորվող անձին ներկայացվող հատուկ պահանջները (անհրաժեշտության դեպքում):
- 55.2. Մասնագիտացված գործունեության լիցենզիան վավերացվում է Կենտրոնական բանկի նախագահի ստորագրությամբ և Կենտրոնական բանկի կնիքով:
- 55.3. Մասնագիտացված գործունեության լիցենզիան պատրաստվում է ջրանիշ պարունակող, «A4» չափսի թղթի վրա՝ համակարգչային տպիչ սարքով տպագրման եղանակով:

**Բ Ա Ժ Ի Ն 17**

**ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԴԻՄՈՒՄ**

Գ Լ ՈՒ Խ 56

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 62.1-1.)**

- 56.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝
  - 56.1.1. «**Տնօրենների խորհուրդ (նման այլ մարմին)**». ըստ կազմակերպական-իրավական ձևի առանձնահատկության՝ դիմորդի կանոնադրությամբ նախատեսված կառավարման իրավասու մարմինը (օրինակ՝ լիակատար ընկերակցության համար՝ մասնակիցների ժողով կամ խորհուրդ, վստահության վրա հիմնված ընկերակցության համար՝ լիակատար ընկերների ժողով կամ խորհուրդ, կոոպերատիվների համար՝ դիտորդ խորհուրդ և այլն).
  - 56.1.2. «**Դիմորդի ղեկավար**». դիմորդի տնօրենների խորհրդի (նման այլ մարմնի) անդամ, գործադիր տնօրեն (գործադիր մարմնի անդամ), վերստուգիչ մարմնի անդամ, ներքին վերահսկող ծառայության անդամ, այլ ղեկավար անձ (ստորաբաժանման ղեկավար).
  - 56.1.3. «**Այլ ղեկավար անձ (ստորաբաժանման ղեկավար)**». դիմորդի ներքին կանոններով հաստատված գործառնություններն իրականացնող կառուցվածքային միավորի ղեկավար (օրինակ՝ բաժնի պետ, վարչության պետ և այլն).
  - 56.1.4. «**խորհրդատու**». անձ, որի կողմից բանավոր կամ գրավոր ձևով տրված փորձագիտական կարծիքը հաշվի է առնվում դիմորդի կողմից՝ հիմնական գործունեության մասով որոշումներ կայացնելիս.
  - 56.1.5. «**Արժեթուղթն ուղղակի կամ անուղղակի պատկանում է տվյալ անձին**». նշանակում է՝ տվյալ անձն արժեթղթերի սեփականատերն է կամ որևէ գործարքի կամ համաձայնության (գրավոր կամ բանավոր, բացահայտ կամ թաքնված) ուժով իրավունք ունի տվյալ արժեթուղթը տիրապետել, օգտագործել կամ տնօրինել, բացառությամբ այն մասնագիտացված անձի, որն իր հաճախորդին ծառայություններ մատուցելու նպատակով տվյալ արժեթուղթը պահում է հաճախորդի առանձնացված հաշվում:

Գ Լ ՈՒ Խ 57

**ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԵՐԸ (ԿԱՆՈՆ 62.1-2.)**

- 57.1. Մասնագիտացված գործունեության լիցենզիայի դիմումը բաղկացած է սույն բաժնի կանոններով սահմանված տեղեկությունները ներառող դիմումի տիտղոսաթերթից և ձևերից:
- 57.2. Լիցենզիայի դիմումը և դրան կից ներկայացվող փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում 7 օրինակից (1 բնօրինակ, 6 պատճեն): Կենտրոնական բանկ ներկայացվող դիմումի բնօրինակի յուրաքանչյուր եջը պետք է.
  - 57.2.1. ներառի դիմումի ներկայացման ամսաթիվը.
  - 57.2.2. վավերացված լինի դիմորդի լիազորված անձի ստորագրությամբ (ստորագրությունը կապույտ գույնով գրող գրիչով) և դիմորդի կնիքով.
  - 57.2.3. լինի համարակալված (էջերը կարված և կնքված այնպես, որ ապահովվի ընթեռնելիությունը).
  - 57.2.4. լրացված լինի «A4» չափսի սպիտակ թղթի վրա, հայերեն լեզվով, «Թայմս Արմենիան» համակարգչային սև գույնի տառատեսակով, հիմնական տեքստը՝ 10-12 չափով:
- 57.3. Դիմումի տիտղոսաթերթը պետք է ներառի.
  - 57.3.1. տիտղոսաթերթի անվանումը՝ «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության լիցենզիայի դիմում».
  - 57.3.2. դիմորդի լրիվ անվանումը.
  - 57.3.3. հայցվող մասնագիտացված գործունեության տեսակը.
  - 57.3.4. դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.
  - 57.3.5. դիմորդի լիազորված անձի անունը, ազգանունը, պաշտոնը.
  - 57.3.6. դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ես հավաստիացնում եմ, որ սույն դիմումում պարունակվող տեղեկությունները ստույգ են, և լիակատար գիտակցում եմ, որ նրանում որևէ էական փաստի խեղաթյուրումը կամ բացթողումը կարող է հանգեցնել դիմումի մերժմանը կամ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը»:
- 57.4. Սույն կանոնագրքի 57.3 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 62.1-2(գ) ձևին համապատասխան:

Գ Լ ՈՒ Խ 58

**ԴԻՄՈՐԴԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՎ ՔՏՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ (ԿԱՆՈՆ 62.1ա-1.)**

- 58.1. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկությունները դիմորդի ինքնության և գտնվելու վայրի վերաբերյալ.
  - 58.1.1. դիմորդի անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).

58.1.2. դիմորդին պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը:

58.1.3. դիմորդի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն):

58.1.4. դիմորդի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, բաժնային արժեթղթերի սեփականատերերի թիվը և արժեթղթերի դասը:

58.2. Սույն կանոնադրքի 58.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են 62.1ա-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 59**

##### ***ԴԻՄՈՐԴԻ ԴԵՎՈՎՈՐՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 62.1բ-1.)***

59.1. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկությունները դիմորդի տնօրենների խորհրդի (նման այլ մարմնի) անդամների, գործադիր տնօրենի (գործադիր մարմնի անդամների), վերստուգիչ մարմնի անդամների, ներքին վերահսկող ծառայության անդամների, այլ ղեկավար անձանց (ստորաբաժանման ղեկավար) վերաբերյալ:

59.1.1. 3 x 4 չափի լուսանկար:

59.1.2. անունը, ազգանունը, հայրանունը, եթե վերջինս օգտագործվում է:

59.1.3. սեռը:

59.1.4. ծննդյան ամսաթիվը՝ թվերով:

59.1.5. ծննդավայրը՝ նշելով երկիրը, մարզը (շրջան, նահանգ կամ այլ), քաղաքը (ավան կամ գյուղ):

59.1.6. քաղաքացիությունը՝ երկրի անվանմամբ:

59.1.7. անձնագրի (օտարերկրյա անձանց համար՝ անձը հաստատող այլ փաստաթղթի, անձնագրի բացակայության դեպքում) սերիան և համարը:

59.1.8. ընտանեկան դրությունը տվյալ պահին՝ նշելով ամուսնու և չափահաս երեխաների (կամ խնամարկյալների), եթե այդպիսիք կան, անունն ու ազգանունը, անձնագրի (օտարերկրյա անձանց համար՝ անձը հաստատող այլ փաստաթղթի, անձնագրի բացակայության դեպքում) սերիան և համարը:

59.1.9. բնակության վայրը (մշտական և բնակության՝ տվյալ պահին), փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն):

59.1.10. դիմորդի կազմում զբաղեցրած պաշտոնը, իրավասությունների և պարտականությունների մանրամասն նկարագիրը:

59.1.11. կրթությունը՝ նշելով ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը (երկիր, քաղաք), ուսման ժամկետը (տարեթվերով) և ուսման արդյունքում ստացված որակավորումը, կոչումը և դրանք հավաստող փաստաթղթերի անվանումը, տրման ամսաթիվը, համարը և սերիան:

59.1.12. տվյալ անձի մասնագիտական որակավորումը (առկայության դեպքում), մասնագիտական որակավորման հավաստագրի համարը և տրման ամսաթիվը:

59.1.13. աշխատանքային փորձը (այդ թվում՝ ընտրովի պաշտոններում) վերջին 3 (երեք) տարիների ընթացքում՝ նշելով կազմակերպության և ստորաբաժանման անվանումը, գտնվելու վայրը, զբաղեցրած պաշտոնը և պարտականությունների համառոտ նկարագիրը, աշխատանքի ժամկետները (ամիս/տարի), աշխատանքից ազատվելու պատճառները (առկայության դեպքում):

59.1.14. դիմավորությամբ կատարված հանցագործության կամ անզգուշությամբ կատարված տնտեսական հանցագործության համար դատապարտվածության մասին (առկայության դեպքում):

59.1.15. դիմավորությամբ կատարված հանցագործության կամ անզգուշությամբ կատարված տնտեսական հանցագործության համար դատապարտվելու հետևանքով մասնագիտական որակավորումից զրկվելու մասին (առկայության դեպքում):

59.1.16. ֆոնդային բորսայի կամ ինքնակարգավորվող այլ կազմակերպության կողմից մասնագիտացված անձի կազմում կամ նրա անունից ֆոնդային բորսայում գործարքներ կատարելու իրավունքից կամ տվյալ ինքնակարգավորվող կազմակերպության անդամությունից զրկվելու հետևանքով մասնագիտական որակավորումից զրկվելու վերաբերյալ (առկայության դեպքում):

59.1.17. Օրենքի և դրան համապատասխան ընդունված որոշումների պահանջները պարբերաբար կամ ակնհայտ չարամտությամբ խախտելու կամ խախտելը շարունակելու հետևանքով մասնագիտական որակավորումից զրկվելու վերաբերյալ (առկայության դեպքում):

59.1.18. հարուցված որևէ քրեական գործի, ինչպես նաև Օրենքի, արժեթղթերի շուկան կարգավորող այլ օրենքների և դրանց համապատասխան ընդունված որոշումների (տրմատիվ իրավական ակտերի) խախտման համար հարուցված վարչական գործի վերաբերյալ (առկայության դեպքում):

59.1.19. տվյալ անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ դիմորդի բաժնային արժեթղթի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ):

59.1.20. եթե տվյալ անձը հանդիսանում է որևէ հաշվետու թողարկողի (պետական գրանցման երկրի օրենսդրության համապատասխան), բանկի կամ ապահովագրական ընկերության բաժնային արժեթղթերի 10 և ավելի տոկոսի սեփականատեր, ապա տվյալ հաշվետու թողարկողի, բանկի կամ ապահովագրական ընկերության անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք), գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն), պետական գրանցման երկիրը, տվյալ անձին պատկանող բաժնային արժեթղթի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ):

59.1.21. եթե տվյալ անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է որևէ մասնագիտացված անձի (պետական գրանցման երկրի օրենսդրության համապատասխան) բաժնային արժեթուղթ, ապա տվյալ մասնագիտացված անձի անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք), գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն), պետական գրանցման երկիրը, տվյալ անձին պատկանող բաժնային արժեթղթի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ):

59.2. Սույն կանոնադրքի 59.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են 62.1բ-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 60**

##### ***ԴԻՄՈՐԴԻ ԲԱԺՆԱՅԻՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓՎՎԱՆԱՏԵՐԸ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 62.1բ-2.)***

60.1. Դիմումում ներառվում են սույն կանոնադրքի 59.1 կետով սահմանված տեղեկությունները, սույն կանոնադրքի 62.1բ-1 ձևին համապատասխան, այն ֆիզիկական անձանց վերաբերյալ, որոնց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է դիմորդի որևէ դասի բաժնային արժեթղթերի 5-ից ավելի տոկոսը, կամ որոնք հանդիսանում են դիմորդի խորհրդատու: Սույն կետի համաձայն՝ սույն կանոնադրքի 62.1բ-1 ձևի (10) կետում ներկայացվում է դիմորդի բաժնային արժեթղթերի սեփականատերերի կամ խորհրդատուների իրավասությունների և պարտականությունների մանրամասն նկարագիրը:

60.2. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկություններն այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց

ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է դիմորդի որևէ դասի բաժնային արժեթղթերի 5-ից ավելի տոկոսը, և/կամ որոնք հանդիսանում են դիմորդի խորհրդատու.

60.2.1. տվյալ անձի անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).

60.2.2. տվյալ անձի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (այդ թվում՝ էլեկտրոնային, մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

60.2.3. պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը.

60.2.4. տվյալ անձի գործունեության տեսակները՝ տալով դրանց նկարագիրը.

60.2.5. տվյալ անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը և բաժնային արժեթղթերի սեփականատերերի թիվը.

60.2.6. տվյալ անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ դիմորդի բաժնային արժեթղթի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ):

60.3. Սույն կանոնագրքի 60.2 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 62.1բ-2 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 61**

##### ***ԴԻՄՈՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՑԼ ԱՆՁԱՆՑ ԿԱԴԻՏԱԼՈՒՄ (ԿԱՆՈՆ 62.1գ-1.)***

61.1. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկություններն այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնց որևէ դասի բաժնային արժեթղթեր ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է դիմորդին.

61.1.1. տվյալ անձի անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).

61.1.2. տվյալ անձի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

61.1.3. պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը.

61.1.4. տվյալ անձի գործունեության տեսակները՝ տալով դրանց նկարագիրը.

61.1.5. տվյալ անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը.

61.1.6. դիմորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ տվյալ անձի բաժնային արժեթղթի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ):

61.2. Սույն կանոնագրքի 61.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 62.1գ-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 62**

##### ***ՄԱՍՆԱԿԻՏԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆԸ (ԿԱՆՈՆ 62.1դ -1.)***

62.1. Դիմումում ներառվում են 59.1 կետով սահմանված տեղեկություններն այն անձանց վերաբերյալ, որոնք դիմորդի կազմում կամ նրա անունից, մասնագիտական որակավորման հիման վրա, մասնագիտացված գործունեություն են իրականացնելու:

62.2. Սույն կանոնագրքի 62.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 62.1բ-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 63**

##### ***ԴԻՄՈՐԴԻ ԿԱԴԻՏԱԼ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 62.1ե-1.)***

63.1. Դիմումում ներառվում են դիմորդի կապիտալի և ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

63.1.1. ակտիվների վերաբերյալ.

ա) հիմնական միջոցների մեծություն (I բաժին, տող 010).

բ) ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մեծություն (I բաժին, տող 020).

գ) ոչ նյութական ակտիվների (ներառյալ գույվիլը) մեծություն (I բաժին, տող 040).

դ) ոչ ընթացիկ ակտիվների մեծություն (I բաժնի հանրագումար, տող 120).

ե) ընթացիկ ֆինանսական ներդրումների մեծություն (II բաժին, տող 230).

զ) դրամական միջոցների մեծություն (II բաժին, տող 240).

է) դրամական միջոցների համարժեքների մեծություն (II բաժին, տող 250).

ը) ընթացիկ ակտիվների մեծություն (II բաժնի հանրագումար, տող 270).

63.1.2. պասիվների վերաբերյալ.

ա) կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը (III բաժին, տող 290).

բ) սեփական կապիտալի չափը (III բաժնի հանրագումար, տող 350).

գ) երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների մեծություն (IV բաժին, տող 360).

դ) ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունների մեծություն (IV բաժին, տող 370).

ե) ոչ ընթացիկ պարտավորությունների մեծություն (IV բաժնի հանրագումար, տող 400).

զ) կարճաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների մեծություն (V բաժին, տող 410).

է) երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մասի մեծություն (V բաժին, տող 420).

ը) հիմնադիրներին կարճաժամկետ կրեդիտորական պարտքի մեծություն (V բաժին, տող 500).

թ) նպատակային ֆինանսավորումների և մուտքերի մեծություն (պասիվների 3-րդ բաժնի 2-րդ և 3-րդ

ենթաբաժինների հանրագումար, տող 510).

ժ) ընթացիկ պարտավորությունների մեծություն (V բաժնի հանրագումար, տող 540):

63.2. Սույն կանոնագրքի 63.1 կետով սահմանված տեղեկությունները պետք է դիմումում բացահայտվեն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (<<<<Ս), Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2000 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 319 հրամանով հաստատված հաշվային պլանին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 1999 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 433 հրամանով հաստատված ֆինանսական հաշվետվությունների ձևերին համապատասխան:

63.3. Սույն կանոնագրքի 63.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 62.1ե-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 64**

**ԴԻՄՈՐԴԻ ԳՈՐԾՈՒԼԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ (ԿԱՆՈՆ 62.1գ-1.)**

64.1. Դիմումում ներառվում են դիմորդի գործունեության համար նախատեսված տարածքի, դրա պայմանների և հազվագյուտության վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

64.1.1. այն վայրը (վայրերը), որտեղ դիմորդն իրականացնելու է իր գործունեությունը, աշխատանքային տարածքի նկարագրությունը (մակերեսը).

64.1.2. աշխատանքային տարածքն այլ անձի սեփականությունը հանդիսանալու դեպքում՝ աշխատանքային տարածքի օգտագործման ժամկետը և դրա դադարեցման պայմանները.

64.1.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ներքին հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների անվտանգ պահպանության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օգտագործվող սարքավորումների (համակարգիչներ, ազդանշանային և հակահրդեհային միջոցներ, չիրկիզվող պահարաններ և այլն) և համակարգչային ծրագրերի առկայությունը:

64.2. Սույն կանոնագրի 64.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրի 62.1գ-1 ձևին համապատասխան:

**Բ Ա Ժ Ի Լ 18**

**ՄԱՍՆԱԳԻՏԱԳՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍՎՈՐՈՒԹՅՈՒՆ**

**Գ Լ ՈՒ Խ 65**

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 65.1Ա-1.)**

65.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

65.1.1. «**Ներքին վերահսկողություն**». մասնագիտացված անձի, նրա կազմում կամ անուկից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց կողմից իրականացվող մասնագիտացված գործունեության համապատասխանությունն Օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, ինքնակարգավորվող կազմակերպության կանոններին, որի անդամ է մասնագիտացված անձը (այսուհետ՝ ԻԿԿ), ինչպես նաև մասնագիտացված անձի կանոններին պարզելու նպատակով վերահսկող ծառայության կողմից իրականացվող գործառնությունների (մոնիտորինգ, ստուգում, ծառայողական քննություն, համալիր ստուգում) համախումբ:

65.1.2. «**Մոնիտորինգ**». վերահսկող ծառայության կողմից իրականացվող ընթացիկ անընդհատ գործառնույթ.

65.1.3. «**Ստուգում**». վերահսկող ծառայության կողմից իրականացվող պարբերական գործառնույթ՝ մասնագիտացված անձի ներքին վերահսկողության կանոններով սահմանված պարբերականությամբ և ժամանակացույցին համապատասխան.

65.1.4. «**Ծառայողական քննություն**». մասնագիտացված անձի, նրա կազմում կամ անուկից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց կողմից իրականացվող մասնագիտացված գործունեության շրջանակներում Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի կանոնների խախտում, հավանական խախտում կամ դրա մանրամասներ բացահայտելու կասկածանքով, ինչպես նաև հնարավոր խախտման որևէ փաստի տեղեկանալու հետևանքով վերահսկող ծառայության կողմից հարուցվող և վարվող գործընթաց.

65.1.5. «**Համալիր ստուգում**». յուրաքանչյուր եռամսյակի համար վերահսկող ծառայության կողմից իրականացվող գործառնույթ՝ մասնագիտացված անձի, նրա կազմում կամ անուկից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց կողմից իրականացվող մասնագիտական համալիր ստուգում համապատասխանությունն Օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի կանոններին պարզելու նպատակով.

65.1.6. «**Ներքին հաշվառում**». մասնագիտացված անձի կողմից իրականացվող գործարքների (այդ թվում՝ հաճախորդների հանձնարարականների), մասնագիտացված անձի և նրա հաճախորդների դրամական միջոցների և արժեթղթերի հաշվառում Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան.

65.1.7. «**Եռամսյակ**». օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Մասնագիտացված գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին եռամսյակ է համարվում մասնագիտացված գործունեության լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ եռամսյակի վերջն ընկած ժամանակաշրջանը.

65.1.8. «**Իրավասու մարմին**». մասնագիտացված անձի մասնակիցների ընդհանուր ժողով կամ տնօրենների խորհուրդ:

**Գ Լ ՈՒ Խ 66**

**ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 65.1Ա-2.)**

66.1. Մասնագիտացված անձը պարտավոր է ունենալ սույն գլխի պահանջներին համապատասխան ներքին վերահսկողության կանոններ, որոնք պետք է ապահովեն մասնագիտացված անձի գործունեության ներքին վերահսկողության անընդհատությունն ու լիարժեքությունը և սահմանեն.

66.1.1. վերահսկող ծառայության իրավասությունները, նրա գործառնությունները, վերահսկող ծառայության անդամների իրավունքները և պարտականությունները.

66.1.2. մասնագիտացված գործունեության վերաբերյալ ստացված բողոքների քննարկումների կարգն ու ժամկետները.

66.1.3. մասնագիտացված անձի իրավասու մարմին, Կենտրոնական բանկին և ԻԿԿ-ին հաշվետվությունների ներկայացման ժամկետը և խախտումների հայտնաբերման մասին տեղեկատվության ներկայացման կարգը.

66.1.4. ստուգման անցկացման պարբերականությունը և ժամանակացույցը.

66.1.5. վերահսկող ծառայության գործունեության ընթացքում վերահսկող ծառայության կողմից թույլ տրված խախտումների համար վերջինիս նկատմամբ մասնագիտացված անձի իրավասու մարմնի կողմից կիրառվող կարգապահական կամ այլ պատասխանատվության միջոցները:

66.2. Մասնագիտացված անձը մասնագիտացված գործունեության լիցենզիա ստանալուց հետո 15-օրյա ժամկետում պարտավոր է իրավասու մարմնի կողմից հաստատված ներքին վերահսկողության կանոնները՝ յոթ օրինակից, ներկայացնել Կենտրոնական բանկ:

66.3. Մասնագիտացված անձի ներքին վերահսկողության կանոններում կատարված փոփոխությունները և լրացումները դրանց հաստատվելուց հետո 15-օրյա ժամկետում ներկայացվում են Կենտրոնական բանկ:

66.4. Մասնագիտացված անձի ներքին վերահսկող ծառայությանը արգելվում է գործել մասնագիտացված անձի ներքին վերահսկողության կանոնների խախտմամբ:

**Գ Լ ՈՒ Խ 67**

**ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 65.1Ա-3.)**

67.1. Ներքին վերահսկողության նպատակն է ներքին վերահսկողության հիմնական ուղղությունների շրջանակներում՝

67.1.1. ապահովել մասնագիտացված անձի կողմից մասնագիտացված գործունեության իրականացման ընթացքում Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի կանոններով սահմանված պահանջների պահպանումը,

67.1.2. ապահովել մասնագիտացված անձի հաճախորդների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

67.2. Ներքին վերահսկողության իրականացման խնդիրը ներքին վերահսկողության հիմնական ուղղությունների շրջանակներում մասնագիտացված անձի կողմից մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում թույլ տրված Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի կանոնների, ինչպես նաև իր հաճախորդների իրավունքների և օրինական շահերի խախտումների բացահայտումն է:

67.3. Ներքին վերահսկողության հիմնական ուղղություններն են՝

67.3.1. մասնագիտացված անձի ներքին հաշվառմանը ներկայացվող պահանջների վերահսկողություն,

67.3.2. ծառայողական տեղեկատվության պահպանմանը և տրամադրմանը ներկայացվող պահանջների վերահսկողություն,

67.3.3. ֆիդուցիար պարտականությունների վերահսկողություն,

67.3.4. շահերի բախմանը ներկայացվող պահանջների վերահսկողություն,

67.3.5. արժեթղթերի հրապարակային առևտրի ներկայացվող պահանջների վերահսկողություն,

67.3.6. մասնագիտացված որակավորման պահանջների վերահսկողությունը,

67.3.7. մասնագիտացված գործունեությունը կարգավորող, այդ թվում՝ ներքին կանոնների պահպանման վերահսկողություն,

67.3.8. ԻԿԿ գրանցված կանոնների պահանջների վերահսկողությունը,

67.3.9. մասնագիտացված անձի ներքին վերահսկողության կանոններով սահմանված այլ պահանջների վերահսկողություն:

**Գ Լ ՈՒ Խ 68**

**ՎԵՐԱՀՍՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 65.1Ա-4.)**

68.1. Ներքին վերահսկողության իրականացման համար պատասխանատու է մասնագիտացված անձի վերահսկող ծառայությունը, որի անդամները նշանակվում են մասնագիտացված անձի իրավասու մարմնի կողմից:

Մասնագիտացված անձի վերահսկող ծառայությունը կարող է ներառել մեկ կամ ավելի անձ:

68.2. Մասնագիտացված անձի վերահսկող ծառայությունն անկախ է իր իրավասություններն իրականացնելիս և հաշվետու է մասնագիտացված անձի իրավասու մարմնին, ԻԿԿ-ին և Կենտրոնական բանկին:

68.3. Այն անձը կամ անձինք, որոնք ընդգրկված են վերահսկող ծառայության կազմում, պետք է ունենան արժեթղթերի շուկայում գործունեության համապատասխան մասնագիտական որակավորում:

68.4. Վերահսկող ծառայության անդամները չեն կարող ազատվել իրենց զբաղեցրած պաշտոններից, բացառությամբ այն դեպքերի, երբ.

68.4.1. մասնագիտացված անձի իրավասու մարմինը գրավոր հիմնավորմամբ համարում է, որ վերահսկող ծառայության տվյալ անդամը թերացել է իր պաշտոնական պարտականությունների կատարման հարցում.

68.4.2. առկա է պաշտոնից ազատվելու մասին վերահսկող ծառայության անդամի դիմումը.

68.4.3. լրացել է վերահսկող ծառայության անդամի հետ կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը:

68.5. Վերահսկող ծառայության անդամին զբաղեցրած պաշտոնից ազատելու դեպքում, մասնագիտացված անձի իրավասու մարմնի ղեկավարը (նախագահը) պարտավոր է ազատման որոշումը կայացնելու օրվանից 15 օրվա ընթացքում այդ մասին սահմանված կարգով ծանուցել ԻԿԿ-ի վերահսկիչ ծառայությանն ու Կենտրոնական բանկին՝ ծանուցմանը կցելով իրավասու մարմնի որոշման կամ արձանագրության (եթե երկուսն էլ առկա են, ապա դրանց երկուսի) պատճենը, ուր անհրաժեշտ մանրամասնությամբ նկարագրվում են ազատման հիմքերը, ինչպես նաև պաշտոնից ազատվող անդամի առարկություններն ու բացատրությունները (բացառությամբ՝ վերահսկող ծառայության անդամի դիմումի կամ նրա հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետի ավարտի հետևանքով ազատման դեպքերի):

68.6. Վերահսկող ծառայության անդամն իր գործառնություններն իրականացնելիս պարտավոր է գործել բարեխղճորեն և բացահայտել տվյալ մասնագիտացված անձի, նրա կառավարման մարմիններում ընդգրկված անձանց և մասնագիտացված անձի կազմում կամ անունից մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց կողմից Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի կանոնների պահանջների խախտումները:

**Գ Լ ՈՒ Խ 69**

**ՎԵՐԱՀՍՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 65.1Ա-5.)**

69.1. Վերահսկող ծառայությունը պարտավոր է իրականացնել սույն կանոնագրի 69.3.-69.13 կետերով սահմանված գործառնությունները, իսկ մասնագիտացված անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձինք ու աշխատակիցները պարտավոր են աջակցել դրան և վերահսկող ծառայությանը տրամադրել այն բոլոր փաստերը, տեղեկություններն ու փաստաթղթերը (անկախ կրիչի ձևից), որոնք անհրաժեշտ են սույն գլխով սահմանված գործառնությունները լիարժեք իրականացնելու համար: Վերահսկող ծառայության գործառնություններն իրականացվում են՝ ելնելով ներքին վերահսկողության նպատակներից ու խնդիրներից՝ դրանց իրագործման նպատակով:

69.2. Վերահսկող ծառայությանը պետք է մատչելի լինեն մասնագիտացված գործունեությանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող բոլոր նյութերը (անկախ կրիչի ձևից): Համակարգչային, հեռակապի կամ այլ էլեկտրոնային համակարգերի կամ ցանցերի կիրառման դեպքում վերահսկող ծառայությունը պետք է անսահմանափակ մուտք ունենա նման համակարգում տեղադրված մասնագիտացված գործունեության հետ կապված ցանկացած տեղեկությանը կամ նման համակարգի միջոցով իրականացվող ցանկացած գործարքի բոլոր հասանելի մանրամասներին:

69.3. Վերահսկող ծառայությունը մասնագիտացված անձի, նրա կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց մասնագիտացված գործունեության մոնիտորինգի նպատակով կարող է կիրառել հնարավոր խախտումները հայտնաբերելու օրենքով չարգելվող ցանկացած միջոց կամ համակարգ:

69.4. Վերահսկող ծառայությունը մասնագիտացված անձի, նրա կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց մասնագիտացված գործունեության ստուգման կամ բնակարանային քննության մասին կարող է նախապես չտեղեկացնել մասնագիտացված անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց և այլ աշխատակիցներին:

69.5. Ծառայողական քննության ընթացքում վերահսկող ծառայությունն իրավասու է մասնագիտացված անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանցից կամ աշխատակիցներից քննության համար անհրաժեշտ

ցանկացած փաստաթուղթ (անկախ կրիչի ձևից), տեղեկություն կամ բանավոր (արձանագրելով դրանք) կամ գրավոր բացատրություն պահանջել և ստանալ:

69.6. Ծառայողական քննության հարուցման մասին վերահսկող ծառայությունը պարտավոր է գրավոր ծանուցել ԻԿԿ-ին ու Կենտրոնական բանկին՝ հարուցման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում: Նման ծանուցման մեջ նկարագրվում է.

69.6.1. ծառայողական քննության հարուցման ամսաթիվը.

69.6.2. հարուցվող գործի նկարագիրը և այն անձանց անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը, որոնց նկատմամբ հարուցվում է քննությունը.

69.6.3. ծառայողական քննության հարուցման համար հիմք հանդիսացած փաստերն ու հանգամանքները.

69.6.4. վերահսկող ծառայությունը կողմից սահմանված այլ տեղեկություններ:

69.7. Սույն կանոնագրի 69.6 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են սույն կանոնագրի 65.1Ա-5(գ) ձևին համապատասխան:

69.8. Վերահսկող ծառայությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը անցկացնում է համալիր ստուգում:

69.9. Վերահսկող ծառայությունը պարզում է մասնագիտացված անձի կողմից իր հաճախորդներին, ԻԿԿ-ին և/կամ Կենտրոնական բանկին ներկայացված հաշվետվությունների ժամկետների համապատասխանությունը Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի կանոնների պահանջներին և տարեկան մեկ անգամ այդ մասին համառոտ կարծիք է տալիս իրավասու մարմնին:

69.10. Վերահսկող ծառայությունը ներքին վերահսկողության ուղղությունների շրջանակներում իրականացնում է մասնագիտացված անձի, նրա կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց գործունեության՝ Օրենքին, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերին, ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի ներքին կանոններին համապատասխանության ստուգում:

69.11. Վերահսկող ծառայությունն ինքնուրույն կամ մասնագիտացված անձի կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների և պաշտոնատար անձանց հետ համատեղ, 10 աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է մասնագիտացված անձի գործունեության վերաբերյալ ստացված բողոքները և առարկությունները՝ հետևելով դրանց լուծմանը: Նշված պարագայում վերահսկող ծառայությունը կարող է ծառայողական քննություն հարուցել և վարել:

69.12. Ստուգման, ծառայողական քննության կամ համալիր ստուգման արդյունքներով ստուգմանը, ծառայողական քննությանը կամ համալիր ստուգմանը մասնակցած վերահսկող ծառայության անդամների (անդամի) կողմից երկու օրինակից կազմվում է տեղեկանք, խախտումներ և թերություններ հայտնաբերելու դեպքում՝ ակտ: Տեղեկանքում նշվում են այն կազմելու ամսաթիվը և տեղը, վերահսկող ծառայության կողմից ուսումնասիրված նյութերը (փաստաթղթերը), ստուգման, ծառայողական քննության և համալիր ստուգման իրականացման նպատակը և ժամկետները, դրան մասնակցած ծառայության անդամների կազմը, այն անձի անունը (անվանումը), որի գործունեության նկատմամբ իրականացվել է ստուգումը, ծառայողական քննությունը կամ համալիր ստուգումը և արդյունքները, ակտի դեպքում՝ նաև տվյալ անձի (ներկայացուցչի) բացատրությունները, օրինակների քանակը և հերթական համարը: Ակտում պետք է արձանագրվեն հայտնի դարձած խախտումները, Օրենքի, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, ԻԿԿ-ի, ինչպես նաև մասնագիտացված անձի կանոնների այն դրույթները, որոնց պահանջները չեն կատարվել և խախտման կատարման կոնկրետ ժամանակը: Կազմված ակտը ստորագրվում է ստուգմանը, ծառայողական քննությանը կամ համալիր ստուգմանը մասնակցած վերահսկող ծառայության անդամների (անդամի) և մասնագիտացված անձի գործադիր տնօրենի, այն ստորաբաժանման ղեկավարի կամ այն անձի կողմից, որի գործունեության նկատմամբ իրականացվել է ստուգումը կամ հարուցվել և վարվել է ծառայողական քննությունը (համալիր ստուգման վերաբերյալ ակտը ստորագրվում է մասնագիտացված անձի գործադիր տնօրենի կողմից): Կազմված ակտը ստորագրելուց հրաժարվելու դեպքում տվյալ անձը ակտին կից ներկայացնում է ակտի հետ համաձայն չլինելու վերաբերյալ իր ունեցած առարկությունները: Ակտի մեկ օրինակը տրվում է ակտը ստորագրող անձին:

69.13. Ներքին վերահսկողության ընթացքում բացահայտված ցանկացած խախտման մասին վերահսկող ծառայությունը պարտավոր է բացահայտման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել ԻԿԿ-ին ու Կենտրոնական բանկին: Նման ծանուցման մեջ նկարագրվում է.

69.13.1. խախտման բնույթը.

69.13.2. խախտումը կատարելու ամսաթիվը կամ ժամանակահատվածը.

69.13.3. խախտումը կատարած կամ դրանում կասկածվող անձանց անունը, ազգանունը և զբաղեցրած պաշտոնը.

69.13.4. խախտման կապակցությամբ ձեռնարկված միջոցները, այդ թվում նաև՝ կիրառված պատժամիջոցները (եթե կիրառվել են).

69.13.5. խախտման մանրամասն փաստերն ու հանգամանքները.

69.13.6. վերահսկող ծառայության կողմից սահմանված այլ տեղեկություններ:

69.14. Սույն կանոնագրի 69.13 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են սույն կանոնագրի 65.1Ա-5(ժգ) ձևին համապատասխան:

## Գ Լ ՈՒ Խ 70

### **ՍՏՈՒԳՄԱՆ, ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՍ ՀԱՍՏԱՆԻՐ ՍՏՈՒԳՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 65.1Ա-6.)**

70.1. Վերահսկող ծառայությունը ստուգման, ծառայողական քննության կամ համալիր ստուգման ավարտից հետո, 10 աշխատանքային օրվա ընթացքում, կամ մասնագիտացված անձի ներքին վերահսկողության կանոններով սահմանված ավելի կարճ ժամկետում սույն կանոնագրի 69.12 կետի համաձայն կազմված ակտի կամ տեղեկանքի հիման վրա գրավոր հաշվետվություն է ներկայացնում իրավասու մարմնին:

70.2. Ստուգման, ծառայողական քննության կամ համալիր ստուգման արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ներառի.

70.2.1. վերահսկող ծառայության կողմից ստուգման, ծառայողական քննության կամ համալիր ստուգման իրականացման ժամկետը.

70.2.2. ստուգված ժամանակահատվածը՝ ամսաթվերով.

70.2.3. ստուգմանը, ծառայողական քննությանը կամ համալիր ստուգմանը մասնակցած վերահսկող ծառայության անդամների անունները, ազգանունները և զբաղեցրած պաշտոնները.

70.2.4. ստուգման, ծառայողական քննության կամ համալիր ստուգման ընթացքում ուսումնասիրված (ստուգված) փաստաթղթերի ցանկը.

70.2.5. Օրենքի, Կենտրոնական բանկի որոշումների, ինչպես նաև ԻԿԿ-ի և մասնագիտացված անձի կանոնների խախտման դեպքում՝ խախտումների իրավական հիմքերի և բնույթի մանրամասն նկարագրությունը.

70.2.6. նախորդ ստուգման արդյունքում արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների նկարագրությունը.

70.2.7.8. մասնագիտացված անձի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց և աշխատակիցների կողմից ծառայողական և ներքին տեղեկությունների անօրինական օգտագործման դեպքում ծառայողական և/կամ ներքին տեղեկություններն օգտագործած անձանց և տեղեկությունների օգտագործման բնույթի նկարագրությունը.

70.2.9. արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման ընթացքում մասնագիտացված անձի և նրա

հաճախորդների միջև առաջացած շահերի բախման դեպքերի և դրանց կանխմանն ուղղված միջոցառումների նկարագրությունը:

70.3. Սույն կանոնագրքի 70.2 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են սույն կանոնագրքի 65.1Ա-6(բ) ձևին համապատասխան:

70.4. Հաշվետվությունը կարող է ներառել նաև այլ տեղեկություններ, այդ թվում՝ մասնագիտացված անձի կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների ձեռնարկման, ինչպես նաև ներքին վերահսկողությունը բարելավելու առաջարկություններ:

70.5. Հաշվետվության մեկական օրինակ տրամադրվում է մասնագիտացված անձի իրավասու մարմնի բոլոր անդամներին, սույն կանոնագրքի 70.1 կետով սահմանված ժամկետում՝ Կենտրոնական բանկին և ԻԿԿ-ին, իսկ մեկ օրինակը մնում է վերահսկող ծառայությունում:

#### Գ Լ ՈՒ Խ 71

##### **ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆ 65.1Ա-7.)**

71.1. Ներքին վերահսկողության կանոններով պետք է նախատեսվի նախորդ ֆինանսական տարվա ընթացքում վերահսկող ծառայության կողմից իրականացված գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության ներկայացում: Տարեկան հաշվետվության ներկայացման նկատմամբ կիրառվում են սույն կանոնագրքի 70.5 կետի պահանջները:

71.2. Տարեկան հաշվետվության մեջ ներառվում են ընդհանրացված տեղեկություններ.

71.2.1. իրավական ակտերով սահմանված պահանջների խախտումների հայտնաբերման մասին՝ նշելով դրանց բնույթը և քանակը.

71.2.2. նշված խախտումների կապակցությամբ ձեռնարկված միջոցների արդյունավետության մասին.

71.2.3. մասնագիտացված անձի կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձանց որակավորման բարձրացմանն ուղղությամբ անցկացված միջոցառումների արդյունավետության մասին:

71.3. Տարեկան հաշվետվությունը կարող է ներառել նաև մասնագիտացված անձի աշխատանքների բարելավման մասին առաջարկություններ:

#### Բ Ա Ճ Ի Ն 19

##### **ՄԱՍՆԱԳԻՏԱԳՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### Գ Լ ՈՒ Խ 72

##### **ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 66.3-1.)**

72.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

72.1.1. «**Հաշվետու տարի**». հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

Մասնագիտացված գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին հաշվետու տարի է համարվում մասնագիտացված գործունեության լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը.

72.1.2. «**Հաշվետու եռամսյակ**». հաշվետու տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Մասնագիտացված գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին հաշվետու եռամսյակ է համարվում մասնագիտացված գործունեության լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջն ընկած ժամանակաշրջանը.

72.1.3. «**Հաշվետու ամիս**». հաշվետու տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Մասնագիտացված գործունեության լիցենզիա ստացած իրավաբանական անձանց համար (տվյալ լիցենզիայի մասով) առաջին հաշվետու ամիս է համարվում մասնագիտացված գործունեության լիցենզիան ստանալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջն ընկած ժամանակաշրջանը.

72.1.4. «**Հաշվետու ժամանակաշրջան**». հաշվետու ամիս, հաշվետու եռամսյակ կամ հաշվետու տարի.

72.1.4. «**Ընթացիկ հաշվետվություն**». սույն բաժնի 75-րդ գլխով սահմանված ձևերից կազմված և պահանջվող տեղեկությունները ներառող փաստաթղթերի համախումբ.

72.1.5. «**Ֆինանսական հաշվետվություն**». հաշվետու եռամսյակի և տարվա համար սույն բաժնի 76-րդ գլխով սահմանված ձևերից կազմված և պահանջվող տեղեկությունները ներառող փաստաթղթերի համախումբ.

72.1.6. «**Ռեզիդենտ**»/«**ոչ ռեզիդենտ**». ըստ Կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հունվարի 14-ի թիվ 01 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկով» սահմանված նշանակության.

72.1.7. «**Արժեթուղթն ուղղակի կամ անուղղակի պատկանում է տվյալ անձին**». նշանակում է՝ տվյալ անձն արժեթղթերի սեփականատերն է կամ որևէ համաձայնության (պայմանագրի, համաձայնագրի կամ համաձայնեցված գործողության) ուժով իրավունք ունի տվյալ արժեթուղթը տիրապետել, օգտագործել կամ տնօրինել, բացառությամբ այն մասնագիտացված անձի, որն իր հաճախորդին ծառայություններ մատուցելու նպատակով տվյալ արժեթուղթը պահում է հաճախորդի առանձնացված հաշվում.

72.1.8. «**Դետական արժեթղթեր**». Օրենքի 6-րդ հոդվածի «ա» և «բ» կետերով սահմանված արժեթղթեր:

#### Գ Լ ՈՒ Խ 73

##### **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՀԱՆՁՆԵՐ (ԿԱՆՈՆ 66.3-2.)**

73.1. Մասնագիտացված անձի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների փաթեթը (այսուհետ՝ հաշվետվություն) բաղկացած է սույն բաժնի կանոններով սահմանված տեղեկությունները ներառող հաշվետվության տիտղոսաթերթից, ընթացիկ և/կամ ֆինանսական հաշվետվության ձևերից:

73.2. Մասնագիտացված անձը հաշվետվությունը Կենտրոնական բանկ և ներկայացնում բացառապես էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրված պաշտպանված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան, բացառությամբ սույն կանոնագրքի 73.3 և 73.4 կետերով սահմանված դեպքերի: Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունը ներկայացվում է սույն կանոնագրքի 73.3 կետով սահմանված ձևով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված: Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:

73.3. Սի-Բի-Էյ-Նեթ համակարգին միացված չլինելու դեպքում մասնագիտացված անձը հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում.

73.3.1. թղթային ձևով, և

73.3.2. էլեկտրոնային փոստի միջոցով այն ուղարկելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային

փոստի հասցեին՝ ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով: Էլեկտրոնային փոստով ներկայացվող հաշվետվությունը կազմվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված պաշտպանված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան: Էլեկտրոնային հաղորդակցման միջոցի խափանման դեպքում Էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացման ենթակա հաշվետվությունը ներկայացվում է մազնիսական կամ Էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

73.4. Հաշվետվությունը Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով, Էլեկտրոնային փոստով, մազնիսական կամ Էլեկտրոնային կրիչով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են հետևյալ ձևով՝ XXXXX-66.3.xls, որտեղ XXXXX-ը Կենտրոնական բանկի կողմից մասնագիտացված անձին շնորհված կոդն է:

73.5. Թղթային ձևով ներկայացվող հաշվետվության յուրաքանչյուր էջ (բացառությամբ՝ ֆինանսական հաշվետվության ձևերի) պետք է.

73.5.1. վավերացված լինի մասնագիտացված անձի գործադիր մարմնի ղեկավարի և գլխավոր հաշվապահի (նման իրավասություն ունեցող անձի) ստորագրություններով (բացառությամբ այն ձևերի, որտեղ գլխավոր հաշվապահի ստորագրությունը չի պահանջվում) և մասնագիտացված անձի կնիքով (ստորագրությունները կապույտ գույնով գրող գրչով) և ներառի սույն կետում նշված անձանց կողմից ստորագրման ամսաթվերը:

73.5.2. նշում պարունակի հաշվետվության մեջ տվյալ էջի հերթական համարի վերաբերյալ և լրացված լինի «Ա4» չափսի սպիտակ թղթի վրա:

73.5.3. լրացված լինի հայերեն, «Թայմս Արմենիան» համակարգչային սև գույնի տառատեսակով, հիմնական տեքստը՝ 8-10 չափով:

73.6. Սույն կանոնագրքի 73.5.3 կետով սահմանված պահանջները տարածվում են նաև Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով, Էլեկտրոնային փոստով, մազնիսական կամ Էլեկտրոնային կրիչով ներկայացվող հաշվետվությունների վրա:

73.7. Հաշվետվությունը համարվում է Կենտրոնական բանկ ներկայացված սույն բաժնի կանոններով սահմանված ձևով, կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկում դրանց ստացման պահից:

73.8. Եթե մասնագիտացված անձն իրականացնում է արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության մեկից ավելի տեսակներ, ապա այդ մասնագիտացված անձը հաշվետվության կրկնվող ձևերը Կենտրոնական բանկ է ներկայացնում մեկ օրինակից:

73.9. Եթե արդեն իսկ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվության մեջ մասնագիտացված անձը հայտնաբերում է անճշտություն և/կամ բացթողում, ապա մասնագիտացված անձը կարող է Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան ճշգրտված ձևը՝ հաշվետվության լրացում ներկայացնելու միջոցով: Հաշվետվության լրացման վերաբերյալ պետք է նշված լինի հաշվետվության տիտղոսաթերթում և համապատասխան ձևի վերևի աջ անկյունում:

73.10. Հաշվետվության մեջ սույն բաժնի կանոններին համապատասխան ներառվելիք տեղեկությունները պետք է լինեն ստույգ՝ առանց որևէ փաստի խեղաթյուրման և/կամ բացթողման:

#### Գ Լ ՈՒ Խ 74

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՐՏՐՈՍԱԹԵՐԹԸ (ԿԱՆՈՆ 66.3-3.)

74.1. Հաշվետվության տիտղոսաթերթը Կենտրոնական բանկ է ներկայացվում 66.4-1ՄԱ ձևին համապատասխան և պետք է ներառի.

74.1.1. մասնագիտացված անձի լրիվ հայերեն անվանումը:

74.1.2. նշում մասնագիտացված գործունեության լիցենզիայի տեսակի վերաբերյալ:

74.1.3. նշում կանոնի վերաբերյալ, որի համաձայն ներկայացվում են հաշվետվությունները կամ համապատասխան տեղեկությունները:

74.1.4. տեղեկություններ ներկայացվող ընթացիկ և/կամ ֆինանսական հաշվետվության յուրաքանչյուր ձևի և էջերի քանակի վերաբերյալ:

74.1.5. մասնագիտացված անձի գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը և պաշտոնը:

#### Գ Լ ՈՒ Խ 75

### ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 66.3-4.)

75.1. Մասնագիտացված անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ընթացիկ հաշվետվություն՝ սույն կանոնագրքի 66.4-2ՄԱ, 66.4-3ՄԱ, 66.4-4ՄԱ և/կամ 66.4-5ՄԱ ձևերին համապատասխան, եթե այդ ձևերով պահանջվող տեղեկությունները փոփոխվել են նախկինում մասնագիտացված անձի կողմից ներկայացված տեղեկությունների համեմատ, կամ առկա են այդ ձևերով պահանջվող նոր տեղեկություններ՝ այդ մասին տեղեկանալուց հետո 15 օրվա ընթացքում:

75.2. Բրոքերային ընկերությունը, ի լրումն սույն կանոնագրքի 75.1 կետում սահմանված ձևերի, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև ընթացիկ հաշվետվություն՝ սույն կանոնագրքի 66.4-1ԲԳ, 66.4-1ԴԳ, 66.4-1ԲԳ/ԴԳ/ՀԿԳ, 66.4-1 ԲԳ/ԴԳ և 66.4-2 ԲԳ/ԴԳ ձևերին համապատասխան:

75.3. Դիլերային ընկերությունը, ի լրումն սույն կանոնագրքի 75.1 կետում սահմանված ձևերի, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև ընթացիկ հաշվետվություն՝ սույն կանոնագրքի 66.4-1ԴԳ, 66.4-1ԲԳ/ԴԳ/ՀԿԳ, 66.4-1 ԲԳ/ԴԳ և 66.4-2ԲԳ/ԴԳ ձևերին համապատասխան:

75.4. Արժեթղթերի հավատարմագրային կառավարիչը, ի լրումն սույն կանոնագրքի 75.1 կետում սահմանված ձևերի, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև ընթացիկ հաշվետվություն՝ սույն կանոնագրքի 66.4-1ԲԳ/ԴԳ/ՀԿԳ, 66.4-1ՀԿԳ և 66.4-2ՀԿԳ ձևերին համապատասխան:

75.5. Արժեթղթերի պահառուն, ի լրումն սույն կանոնագրքի 75.1 կետում սահմանված ձևերի, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև ընթացիկ հաշվետվություն՝ սույն կանոնագրքի 66.4-1ԴԳ ձևին համապատասխան:

75.6. Մասնագիտացված անձը սույն կանոնագրքի 75.2, 75.3, 75.4 և 75.5 կետերով սահմանված ընթացիկ հաշվետվությունները Կենտրոնական բանկ է ներկայացնում յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար՝ մինչև համապատասխան հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

#### Գ Լ ՈՒ Խ 76

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 66.3-5.)

76.1. Մասնագիտացված անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ՝ հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմնի կողմից հաստատված ֆինանսական հաշվետվությունների N 1, 2, 3, 4 և 5 ձևերին համապատասխան: Մասնագիտացված անձանց ֆինանսական հաշվետվության ձևերում պարունակվող տեղեկությունները պետք է բացահայտվեն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ) համաձայն:

76.2. Մասնագիտացված անձը ֆինանսական հաշվետվության N 5 ձևի 5.3.4 կետի («ֆինանսական արդյունքների հաշվետվությանը կից ծանոթագրություններ») «ֆինանսական արդյունքների հաշվետվությանը կից

ծանոթագրությունների այլ բացահայտումներ» բաժնում պետք է ներառի սույն կանոնագրի ֆԱ-1 աղյուսակով պահանջվող տեղեկությունները:

76.3. Ֆինանսական հաշվետվության ձևերը կազմվում են հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմնի կողմից հաստատված համապատասխան հրահանգի համաձայն:

76.4. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է նաև թղթային ձևով, որը պետք է վավերացված լինի աուդիտորի կնիքով և ստորագրությամբ: Թղթային ձևով ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվություններին կցվում է անկախ աուդիտորի եզրակացության պատճենը:

76.5. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա տարածվում են սույն կանոնագրի 73.2 և 73.3 կետերով սահմանված պահանջները:

76.6. Եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացվում մինչև համապատասխան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

76.7. Տարեկան ֆինանսական հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացվում մինչև համապատասխան հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներառյալ:

#### **Գ Լ ՈՒ Խ 77**

##### ***ՄԱՍՆԱԳԻՏԱԾՎԱԾ ԱՆՃԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՏՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 66.3-6.)***

77.1. Կենտրոնական բանկը (Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումը) իրավունք ունի մասնագիտացված անձից կամ նրա պաշտոնատար անձանցից պահանջել մասնագիտացված անձի, նրա կազմում կամ անունից մասնագիտական որակավորման հիման վրա գործող անձի գործունեության վերաբերյալ բացատրագիր, տեղեկանք և/կամ փաստաթուղթ:

77.2. Մասնագիտացված անձը կամ նրա համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է գրավոր ձևով Կենտրոնական բանկ ներկայացնել պահանջվող բացատրագիրը, տեղեկանքը և/կամ փաստաթուղթը սույն կանոնագրի 77.1 կետում նշված պահանջը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի (Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումն) կողմից ներկայացման ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

#### **Բ Ա Ժ Ի Ն 20**

##### **ԲՐՈՋԵՐԱՅԻՆ (ԴԻԼԵՐԱՅԻՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

#### **Գ Լ ՈՒ Խ 78**

##### ***ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 75.5-1.)***

78.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

78.1.1. «**Արժուքային դիլեր**». իրավաբանական անձ, որը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով ստացել է արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիա:

#### **Գ Լ ՈՒ Խ 79**

##### ***ԱՐԺՈՒԹՅԱՆ ԴԻԼԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (ԿԱՆՈՆ 75.5-2.)***

79.1. Բրոքերային (դիլերային) ընկերությունները կարող են իրականացնել արժուքային դիլերի գործունեություն՝ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիայի առկայության դեպքում:

79.2. Բրոքերային (դիլերային) ընկերությունն արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիա ստանալուց հետո 15 օրվա ընթացքում լիցենզիայի պատճենը ներկայացնում է Կենտրոնական բանկ:

79.3. Այն դեպքում, երբ բրոքերային (դիլերային) գործունեության լիցենզիա ստանալու համար Կենտրոնական բանկ է դիմում արժուքային դիլերը, ապա արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության լիցենզիայի դիմումի հետ մեկտեղ, Կենտրոնական բանկ է ներկայացվում նաև արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիայի պատճենը:

79.4. Բրոքերային (դիլերային) ընկերության արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելու լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում բրոքերային (դիլերային) ընկերությունը տեղեկացնում է Կենտրոնական բանկին այդ մասին տեղեկանալու օրվանից 15 օրվա ընթացքում:

#### **Բ Ա Ժ Ի Ն 21**

##### **ԲՐՈՋԵՐԱՅԻՆ (ԴԻԼԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ**

#### **Գ Լ ՈՒ Խ 80**

##### ***ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 76.2Ա-1.)***

80.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

80.1.1. «**Հաճախորդ**»՝ ըստ սույն պայմանագրի 80.1.1 կետի:

80.1.2. «**Հանձնարարական**». հաճախորդի կողմից բրոքերային ընկերությանը տրվող՝ հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով բրոքերային ընկերության կողմից գործարքների կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ:

80.1.3. «**Պատվեր**». հանձնարարականում նշվող տեղեկությունների համախումբ, որը ներառում է հանձնարարականի հիման վրա գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները.

80.1.4. «**Գործառնական բաժին**». բրոքերային (դիլերային) ընկերության ստորաբաժանում, որն իրականացնում է գործարքների, հաճախորդների հանձնարարականների, գործարքների վավերագրերի, ինչպես նաև հաճախորդների արժեթղթերի և/կամ դրամական միջոցների հաշվառում.

80.1.5. «**Գործարքի վավերագիր**». գործարքը կնքող բրոքերի (դիլերի) կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և գործառնական բաժին ներկայացվող փաստաթուղթ:

80.1.6. «**Բորսայական գործարք**». ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում կնքված գործարք.

80.1.7. «**Արտաբորսայական գործարք**». ֆոնդային բորսայից դուրս կատարված գործարք:

**Գ Լ ՈՒ Խ 81**

**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ (ՂԻԼԵՐԱՅԻՆ) ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՁՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 76.2Ա-2.)**

81.1. Բրոքերային (ղիլերային) ընկերությունը պարտավոր է ունենալ գործարքները կարգավորող կանոններ, որոնք պետք է սահմանեն.

81.1.1. իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակներում՝ հաճախորդի կողմից ներդրումային ռիսկերը կրելու ցանկության և կարողության աստիճանը պարզելու նպատակով բրոքերային ընկերության կողմից հաճախորդից պահանջվող տեղեկատվության կազմը և դրա ներկայացման ձևը.

81.1.2. հանձնարարականի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները (այդ թվում՝ պատվերների տեսակները) հանձնարարականի ներկայացման, ինչպես նաև հանձնարարականում փոփոխությունների կատարման կարգը.

81.1.3. գործարքների կնքման և կատարման կարգը.

81.1.4. գործարքի վավերագրի ձևը, դրանում ներառվող տեղեկությունները և գործառնական բաժին դրա ներկայացման կարգը.

81.1.5. ֆոնդային բորսայում ցուցակված կամ չցուցակված վաճառքի արտոնության հիման վրա վաճառվող արժեթղթերով արտաբորսայական գործարքների վերաբերյալ ֆոնդային բորսային տեղեկությունների ներկայացման կարգը.

81.1.6. հաճախորդին հանձնարարականի կատարման արդյունքների և հաճախորդի արժեթղթերի ու դրամական միջոցների մասին տեղեկությունների ներկայացման կարգը և ձևը:

81.2. Ղիլերային գործարքները կարգավորող կանոններով պետք է սահմանվեն սույն կանոնագրի 81.1.3, 81.1.4, 81.1.5 կետերով նախատեսված ձևերը, տեղեկությունները և կարգերը:

81.3. Բրոքերային (ղիլերային) ընկերությունը պետք է սահմանի գործառնական բաժնի, ինչպես նաև գործարքների կնքման և կատարման հետ առնչվող այլ ստորաբաժանումների, դրանց ղեկավարների և աշխատակիցների գործառնականները և դրանց իրականացման կարգը:

81.4. Բրոքերային (ղիլերային) ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված գործարքները կարգավորող կանոնները (1 բնօրինակ և 6 պատճեն) ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ սույն բաժնի կանոններն ուժի մեջ մտնելու պահից 30-օրյա ժամկետում:

81.5. Բրոքերային (ղիլերային) ընկերության գործարքները կարգավորող կանոններում կատարված փոփոխությունները և լրացումները ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ իրավասու մարմնի կողմից հաստատվելուց հետո 15-օրյա ժամկետում:

81.6. Բրոքերային (ղիլերային) ընկերության իրավասու մարմնի կողմից հաստատված գործարքները կարգավորող կանոնները (1 բնօրինակ և 6 պատճեն) ներկայացվում են Կենտրոնական բանկ՝ բրոքերային (ղիլերային) գործունեության լիցենզիա ստանալուց հետո 30-օրյա ժամկետում:

**Գ Լ ՈՒ Խ 82**

**ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԱՎԵՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 76.2Ա-3.)**

82.1. Հանձնարարականը պետք է ներառի.

82.1.1. հանձնարարականի համարը՝ ըստ հանձնարարականների գրանցամատյանի.

82.1.2. հանձնարարականի տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).

82.1.3. հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը.

82.1.4. թողարկողի անվանումը.

82.1.5. արժեթղթերի դասը.

82.1.6. գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական).

82.1.7. գործարքի տեսակը (առք, վաճառք).

82.1.8. պատվերի տեսակը.

82.1.9. հաճախորդի ստորագրությունը.

82.1.10. հանձնարարականն ընդունող գործառնական բաժնի համապատասխան աշխատակցի ստորագրությունը.

82.1.11. պայմանագրով նախատեսված այլ տեղեկություններ՝ սահմանված բրոքերային ընկերության և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:

82.2. Գործարքը կնքող բրոքերի կողմից հանձնարարականի համաձայն կնքված գործարքի վավերագիրը պետք է ներառի.

82.2.1. վավերագրի հերթական (անհատական) համարը.

82.2.2. վավերագրի լրացման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).

82.2.3. համապատասխան հանձնարարականի համարը.

82.2.4. թողարկողի անվանումը.

82.2.5. արժեթղթի դասը.

82.2.6. գործարքի կնքման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).

82.2.7. գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական).

82.2.8. գործարքի տեսակը (առք, վաճառք).

82.2.9. գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր գումարը.

82.2.10. արտաբորսայական գործարքների դեպքում՝ գործարքի հանդիպակաց կողմ հանդիսացող՝ (I) բրոքերային (ղիլերային) ընկերության անվանումը, (II) այլ անձի հետ կնքված գործարքի համար հիմք հանդիսացած փաստաթղթի համարը և ամսաթիվը.

82.2.11. գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.

82.2.12. գործարքը կնքող բրոքերի (ղիլերի) անունը, ազգանունը և ստորագրությունը:

82.3. Ղիլերային գործունեության դեպքում՝ Ղիլերի կողմից լրացված գործարքի վավերագիրը ներառում է սույն կանոնագրի 82.2 կետով պահանջվող տեղեկությունները՝ բացառությամբ սույն կանոնագրի 82.2.3 կետի:

**Բ Ա Ժ Ի Լ 22**

**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ԿԱՆՈՆ 76.6-1.)**

**Գ Լ ՈՒ Խ 83**

**ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՅԻՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ (ԿԱՆՈՆ 76.6-1.)**

83.1. Բրոքերային (ղիլերային) ընկերությունները պարտավոր են արժեթղթերի շուկայում բրոքերային (ղիլերային) գործունեության լիցենզիա ստանալուց հետո, 30-օրյա ժամկետում, անդամակցել Օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկում գրանցված որևէ ֆոնդային բորսայի և Կենտրոնական դեպոզիտարիային՝ համապատասխան ինքնակարգավորվող կազմակերպության կանոններով սահմանված կարգով:

**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

**Գ Լ ՈՒ Խ 84**

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 78.1-1.)**

84.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

84.1.1. «**Հաճախորդ**»՝ ըստ սույն պայմանագրի 80.1.1 կետի:

84.1.2. «**Հանձնարարական**». հաճախորդի կողմից բրոքերային ընկերությանը տրվող՝ հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով բրոքերային ընկերության կողմից գործարքների կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ.

84.1.3. «**Պատվեր**». հանձնարարականում նշվող տեղեկությունների համախումբ, որը ներառում է հանձնարարականի հիման վրա գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները.

84.1.4. «**Արժույթային դիվեր**»՝ ըստ սույն կանոնագրի 78.1.1 կետի:

**Գ Լ ՈՒ Խ 85**

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ (ԿԱՆՈՆ 78.1-2.)**

85.1. Բրոքերային ընկերությունը հանձնարարականների կատարման արդյունավետության և լիարժեքության ապահովման նպատակով մինչև հաճախորդի հետ պայմանագրի կնքումը պարտավոր է գրավոր ձևով նշված անձին տեղեկացնել պատվերների տեսակների և դրանց առանձնահատկությունների մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված տեղեկատվությունը ներառվում է պայմանագրում:

85.2. Պայմանագիրը, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտադիր վավերապայմաններից, մասնավորապես, պետք է ներառի նաև.

85.2.1. արժեթղթերի հաշվառման և փոխանցման կարգը, ինչպես նաև արժեթղթերի դիմաց վճարման ժամկետները և կարգը.

85.2.2. հանձնարարականների ներկայացման կարգը.

85.2.3. գործարքի կատարման համար գանձվող միջնորդավճարի հաշվարկման և վճարման կարգը.

85.2.4. կողմերի միջև կապի իրականացման կարգը.

85.2.5. հաճախորդներին սույն կանոնագրի 87, 89, 90-րդ գլուխների համաձայն հաշվետվությունների ներկայացման կարգը.

85.2.6. դրույթ այն մասին, որ բրոքերային ընկերությունը պարտավոր է առնվազն 5 տարվա ընթացքում պահպանել պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները՝ վավերացված բրոքերային ընկերության կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ:

85.3. Այն դեպքում, երբ նախատեսվում է հաճախորդի արժեթղթերը և/կամ դրամական միջոցները փոխառությամբ տրամադրել բրոքերային ընկերությանը, և եթե փոխառության վերաբերյալ պայմանագրի կնքում չի նախատեսվում, ապա բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիրը պետք է ներառի հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով փոխառության տրամադրման կարգը, ժամկետները և փոխառության հետ կապված կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

85.4. Բրոքերային ընկերությանը հաճախորդի կողմից փոխառությամբ տրամադրված արժեթղթերը և/կամ դրամական միջոցները բրոքերային ընկերության կողմից կարող են օգտագործվել բացառապես.

85.4.1. բրոքերային ընկերության կողմից իր անունից իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման համար,

85.4.2. բրոքերային ընկերության հաճախորդներին տվյալ բրոքերային ընկերության միջոցով արժեթղթերով գործարքների կատարման նպատակով փոխառությունների տրամադրման համար,

85.4.3. բրոքերային ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արժույթային դիվերի գործառույթներ իրականացնելու համար:

**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ**

**Գ Լ ՈՒ Խ 86**

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 79.1-1.)**

86.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

86.1.1. «**Հաճախորդ**»՝ ըստ սույն պայմանագրի 80.1.1 կետի:

**Գ Լ ՈՒ Խ 87**

**ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ (ԿԱՆՈՆ 79.1-2.)**

87.1. Պայմանագիր կնքելու նպատակով բրոքերային ընկերությանը դիմող ցանկացած անձի առաջին իսկ պահանջով բրոքերային ընկերությունը պարտավոր է այդ անձին բրոքերային ընկերության կողմից սահմանված կարգով տրամադրել անկախ աուդիտորի կողմից հաստատված իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

87.2. Բրոքերային ընկերությունը պարտավոր է անկախ աուդիտորի կողմից հաստատված իր տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատճենը՝ վավերացված բրոքերային ընկերության կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ, անկախ աուդիտորի կողմից հաստատվելուց հետո, 60 աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրել (առաքել փոստով, հանձնել, փոխանցել առձեռն) իր հաճախորդներին՝ վերջիններիս հետ կնքված պայմանագրերով նախատեսված կարգով:

**ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎՆԵՐԻ ԾԱՐԺՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Գ Լ ՈՒ Խ 88**

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 79.2-1.)**

- 88.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
- 88.1.1. «**Հաճախորդ**»՝ ըստ սույն պայմանագրի 80.1.1 կետի:
- 88.1.2. «**Հանձնարարական**»՝ հաճախորդի կողմից բրոքերային ընկերությանը տրվող՝ հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով բրոքերային ընկերության կողմից գործարքների կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ.
- 88.1.3. «**Բորսայական գործարք**»՝ ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում կնքված գործարք.
- 88.1.4. «**Արտաբորսայական գործարք**»՝ ֆոնդային բորսայից դուրս կատարված գործարք:

#### **Գ Լ ՈՒ Խ 89**

##### **ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 79.2-2.)**

- 89.1. Հանձնարարականի հիման վրա արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո բրոքերային ընկերությունը պարտավոր է մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, պայմանագրով նախատեսված կարգով, գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել հաճախորդին (ընթացիկ հաշվետվություն):
- 89.2. Գործարքի կնքման վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը պետք է ներառի.
- 89.2.1. գործարքի կնքման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի) և գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական).
- 89.2.2. համապատասխան հանձնարարականի համարը և տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).
- 89.2.3. գործարքի տեսակը (առք, վաճառք).
- 89.2.4. թողարկողի անվանումը.
- 89.2.5. արժեթղթերի դասը.
- 89.2.6. գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր գումարը.
- 89.2.7. գանձվող միջնորդավճարի մեծությունը.
- 89.2.8. գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.
- 89.2.9. բրոքերային ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:
- 89.3. Սույն կանոնագրի 89.2 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնագրի 79.2-2(բ) ձևի, եթե հաշվետվության այլ ձև բրոքերային ընկերության կողմից չի սահմանված:

#### **Գ Լ ՈՒ Խ 90**

##### **ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԾԱՐԺԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՐԲԵՐՎԱԿԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 79.2-3.)**

- 90.1. Բրոքերային ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 15-ը, պայմանագրով նախատեսված կարգով, իր հաճախորդին տրամադրել վերջինիս հանձնարարականների հիման վրա կատարված գործարքների և արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ հաշվետվություններ (պարբերական հաշվետվություններ):
- 90.2. Հաճախորդի հանձնարարականների հիման վրա կատարված գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի.
- 90.2.1. գործարքի տեսակը (առք, վաճառք).
- 90.2.2. թողարկողի անվանումը.
- 90.2.3. արժեթղթերի դասը.
- 90.2.4. գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը, մեկ արժեթղթի գինը և գործարքի ընդհանուր գումարը.
- 90.2.5. գործարքի կնքման ամսաթիվը.
- 90.2.6. գործարքի կատարման (վերջնահաշվարկի) պայմանները.
- 90.2.7. գանձվող միջնորդավճարի մեծությունը.
- 90.2.8. բրոքերային ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:
- 90.3. Սույն կանոնագրի 90.2 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնագրի 79.2-3(բ) ձևի, եթե հաշվետվության այլ ձև բրոքերային ընկերության կողմից չի սահմանված:
- 90.4. Հաճախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ պարբերական հաշվետվությունը՝ ըստ կնքված յուրաքանչյուր գործարքի, պետք է ներառի.
- 90.4.1. հաճախորդի հաշվի տեսակը (արժեթղթերի, դրամական միջոցների) և համարը.
- 90.4.2. ամսաթիվը.
- 90.4.3. գործարքի, որի հիման վրա կատարվել է արժեթղթերի և/կամ դրամական միջոցների շարժը, հերթական համարը գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունում.
- 90.4.4. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը.
- 90.4.5. հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը.
- 90.4.6. հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը.
- 90.4.7. բրոքերային ընկերության կողմից սահմանված այլ տեղեկություններ:
- 90.5. Սույն կանոնագրի 90.4 կետով սահմանված տեղեկությունները ներկայացվում են համաձայն սույն կանոնագրի 79.2-3(դ) ձևի, եթե հաշվետվության այլ ձև բրոքերային ընկերության կողմից չի սահմանված:

#### **Գ Լ ՈՒ Խ 91**

##### **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ (ԿԱՆՈՆ 79.2-4.)**

- 91.1. Սույն բաժնի 89-րդ և 90-րդ գլուխների համաձայն հաճախորդին ներկայացվող հաշվետվությունը պետք է.
- 91.1.1. ներառի հաշվետվության ներկայացման ամսաթիվը.
- 91.1.2. վավերացված լինի բրոքերային ընկերության գործադիր տնօրենի ստորագրությամբ և բրոքերային ընկերության կնիքով:
- 91.2. Սույն կանոնագրի 89.3, 90.3 և 90.5 կետերով սահմանված հաշվետվությունների ձևերը պետք է պարզ և ընկալելի լինեն մասնագիտական որակավորում չունեցող անձանց համար:

#### **Բ Ա Ժ Ի Ն 26**

##### **ԿԵՆՏՐՈՆԱԿԱԼ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԵՆԹԱԴԱՀԱՌՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԲԱՑԱՌՈՒՄԸ**

#### **Գ Լ ՈՒ Խ 92**

##### **ԿԵՆՏՐՈՆԱԿԱԼ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԵՆԹԱԴԱՀԱՌՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԲԱՑԱՌՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 84.3-1.)**

92.1. Յուրաքանչյուր անձ, որն իրականացնելու է բացառապես Հայաստանի Հանրապետության կողմից օրենքով սահմանված կարգով թողարկվող (թողարկված) արժեթղթերի պահառության գործունեություն, չի համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի ենթապահառու:

**Բ Ա Ժ Ի Լ 27**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՀԱՄԱԿՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ**

**Գ Լ ՈՒ Խ 93**

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 86.3բ-1.)**

93.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝  
93.1.1. «**Գործակալ**». ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունիսի 3-ի N 1103-Ն որոշմամբ սահմանված նշանակության՝ բացառությամբ բանկերի:  
93.1.2. «**Դիլեր**». ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի N 1103-Ն որոշմամբ սահմանված նշանակության՝ բացառությամբ բանկերի:

**Գ Լ ՈՒ Խ 94**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՆ ՀԱՄԱԿՑՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 86.3բ-2.)**

94.1. Յուրաքանչյուր անձ պարտավոր է պահառության գործունեության լիցենզիայի համար Կենտրոնական բանկին դիմելիս լիցենզիայի դիմումին կից Կենտրոնական բանկ ներկայացնել իր կողմից օգտագործվող միջոցների՝ Կենտրոնական դեպոզիտարիայի միջոցների հետ համակցման հիմնավորում և Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագիրը, բացառությամբ եթե տվյալ անձը.  
94.1.1. իրականացնելու է բացառապես Հայաստանի Հանրապետության կողմից օրենքով սահմանված կարգով թողարկվող (թողարկված) արժեթղթերի պահառության գործունեություն, և 94.1.2. պահառության գործունեության լիցենզիայի դիմումին կից Կենտրոնական բանկ է ներկայացրել Հայաստանի Հանրապետության կողմից օրենքով սահմանված կարգով թողարկվող (թողարկված) արժեթղթերով պահառության գործունեության իրականացնելու մասին հայտարարություն և պետական պարտատոմսերի շուկայի Գործակալի կամ Դիլերի կարգավիճակ ստանալու վերաբերյալ փաստաթուղթ:  
94.2. Հայաստանի Հանրապետության կողմից օրենքով սահմանված կարգով թողարկվող (թողարկված) արժեթղթերի պահառություն իրականացնելու համար արժեթղթերի պահառության գործունեության լիցենզիա ստացած անձը կարող է նաև իրականացնել այլ արժեթղթերի պահառություն, եթե Կենտրոնական բանկ է ներկայացրել իր կողմից օգտագործվող միջոցների՝ Կենտրոնական դեպոզիտարիայի միջոցների հետ համակցման հիմնավորումը, Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքված պայմանագիրը, և դրանց ներկայացման պահից Կենտրոնական բանկը 10-օրյա ժամկետում չի առարկում Կենտրոնական դեպոզիտարիայի միջոցների հետ համակցման հիմնավորումը:

**Մ Ա Ս Վ**

**ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Բ Ա Ժ Ի Լ 28**

**ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ**

**Գ Լ ՈՒ Խ 95**

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 97.1-1.)**

95.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝  
95.1.1. «**Այլ պաշտոնատար անձ**». դիմորդի ներքին կանոններով հաստատված գործառույթներն իրականացնող կառուցվածքային միավորի ղեկավար (օրինակ՝ վարչության պետ, բաժնի պետ և այլն).  
95.1.2. «**Արժեթուղթն ուղղակի կամ անուղղակի պատկանում է տվյալ անձին**». նշանակում է՝ տվյալ անձն արժեթղթերի սեփականատերն է, կամ որևէ գործարքի կամ համաձայնության (գրավոր կամ բանավոր, բացառապես կամ թաքցված) ուժով իրավունք ունի տվյալ արժեթուղթը տիրապետել, օգտագործել կամ տնօրինել, բացառությամբ այն մասնագիտացված անձի, որն իր հաճախորդին ծառայություններ մատուցելու նպատակով տվյալ արժեթուղթը պահում է հաճախորդի առանձնացված հաշվում:

**Գ Լ ՈՒ Խ 96**

**ԳՐԱՆՑՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԶԵՎԸ ԵՎ ՏԻՏՐՈՍԱԹԵՐԹԵՐԸ (ԿԱՆՈՆ 97.1-2.)**

96.1. Ինքնակարգավորվող կազմակերպության գրանցման դիմումը բաղկացած է սույն բաժնի կանոններով սահմանված տեղեկությունները ներառող դիմումի տիտղոսաթերթից և ձևերից:  
96.2. Ինքնակարգավորվող կազմակերպության գրանցման դիմումը Կենտրոնական բանկ է ներկայացվում 8 օրինակից (2 բնօրինակ, 6 պատճեն): Կենտրոնական բանկ ներկայացվող դիմումի բնօրինակի յուրաքանչյուր էջը պետք է.  
96.2.1. ներառի դիմումի ներկայացման ամսաթիվը.  
96.2.2. վավերացված լինի դիմորդի լիազորված անձի ստորագրությամբ (ստորագրությունը կապույտ գույնով գրող գրիչով) և դիմորդի կնիքով.  
96.2.3. լինի համարակալված (եջերը կարված և կնքված այնպես, որ ապահովվի ընթեռնելիությունը).  
96.2.4. լրացված լինի «A4» չափսի սպիտակ թղթի վրա, հայերեն լեզվով, «Թայմս Արմեսիան» համակարգչային սև գույնի տառատեսակով, հիմնական տեքստը՝ 10-12 չափով:  
96.3. Դիմումի տիտղոսաթերթը պետք է ներառի.  
96.3.1. տիտղոսաթերթի անվանումը՝ «Ինքնակարգավորվող կազմակերպության գրանցման դիմում».  
96.3.2. դիմորդի լրիվ անվանումը.  
96.3.3. ինքնակարգավորվող կազմակերպության գործունեության տեսակը.  
96.3.4. դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.  
96.3.5. դիմորդի լիազորված անձի անունը, ազգանունը և պաշտոնը.  
96.3.6. դրույթ՝ հետևյալ բովանդակությամբ. «Ես հավաստիացնում եմ, որ սույն դիմումում պարունակվող

տեղեկությունները ստույգ են, և լիակատար գիտակցում եմ, որ դրանում որևէ էական փաստի խեղաթյուրումը կամ բացթողումը կարող է հանգեցնել դիմումի մերժմանը կամ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառմանը»:

96.4. Սույն կանոնագրքի 96.3 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 97.1-2(գ) ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 97**

##### ***ԴԻՄՈՐԴԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ (ԿԱՆՈՆ 97.1ա-1.)***

97.1. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկությունները դիմորդի ինքնության և գտնվելու վայրի վերաբերյալ.

97.1.1. դիմորդի անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով անվանումներ, ապա նաև դրանք).

97.1.2. դիմորդի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

97.1.3. դիմորդին պետական գրանցում չընդհանրված երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը:

97.2. Սույն կանոնագրքի 97.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 97.1ա-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 98**

##### ***ԴԻՄՈՐԴԻ ԱՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ (ԿԱՆՈՆ 97.1բ-1.)***

98.1. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկությունները դիմորդի անդամների վերաբերյալ.

98.1.1. անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).

98.1.2. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

98.1.3. պետական գրանցում չընդհանրված երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը.

98.1.4. գործունեության լիցենզիայի համարը և տրման ամսաթիվը (օր/ ամիս/տարի).

98.1.5. կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը, բաժնային արժեթղթերի դասը և սեփականատերերի թիվը.

98.1.6. դիմորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ տվյալ անձի բաժնային արժեթղթերի դասը և քանակը:

98.2. Սույն կանոնագրքի 98.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 97.1բ-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 99**

##### ***ԴԻՄՈՐԴԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 97.1բ-2.)***

99.1. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկությունները դիմորդի դիտորդ խորհրդի անդամների և նախագահի, գործադիր տնօրենի (գործադիր մարմնի անդամների), վերահսկիչ ծառայության ղեկավարի, անդամների կամ այլ պաշտոնատար անձանց վերաբերյալ.

99.1.1. 3 x 4 չափի գունավոր լուսանկար.

99.1.2. անունը, ազգանունը, հայրանունը.

99.1.3. սեռը.

99.1.4. ծննդյան ամսաթիվը՝ թվերով.

99.1.5. ծննդավայրը՝ նշելով երկիրը, մարզը (շրջան, նահանգ կամ այլ), քաղաքը (ավան կամ գյուղ).

99.1.6. քաղաքացիությունը.

99.1.7. անձնագրի (օտարերկրյա անձանց համար՝ անձը հաստատող այլ փաստաթղթի, անձնագրի բացակայության դեպքում) սերիան և համարը.

99.1.8. ընտանեկան դրությունը տվյալ պահին՝ նշելով ամուսնու և չափահաս երեխաների (կամ խնամարկյալների) անունը, ազգանունը, անձնագրի (օտարերկրյա անձանց համար՝ անձը հաստատող այլ փաստաթղթի, անձնագրի բացակայության դեպքում) սերիան և համարը.

99.1.9. բնակության վայրը (մշտական և բնակության՝ տվյալ պահին), փոստային հասցեն և կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

99.1.10. դիմորդի կազմում զբաղեցրած պաշտոնը, իրավասությունների և պարտականությունների մանրամասն նկարագիրը.

99.1.11. կրթությունը՝ նշելով ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը (երկիր, քաղաք), ուսման ժամկետը (տարեթվերով) և ուսման արդյունքում ստացված մասնագիտությունը (որակավորումը), կոչումը և դրանք հավաստող փաստաթղթերի անվանումը, տրման ամսաթիվը, համարը և սերիան.

99.1.12. մասնագիտական որակավորումը (առկայության դեպքում), մասնագիտական որակավորման հավաստագրի սերիան, համարը և տրման ամսաթիվը.

99.1.13. աշխատանքային փորձը (այդ թվում՝ ընտրովի պաշտոններում) վերջին 3 (երեք) տարիների ընթացքում՝ նշելով կազմակերպության և ստորաբաժանման անվանումը, գտնվելու վայրը (երկիր, քաղաք), զբաղեցրած պաշտոնը և պարտականությունների համառոտ նկարագրությունը, աշխատանքի ժամկետները (ամիս/տարի), աշխատանքից ազատվելու պատճառները.

99.1.14. դիտավորությամբ կատարված հանցագործության կամ անզգուշությամբ կատարված տնտեսական հանցագործության համար դատապարտվածության վերաբերյալ (առկայության դեպքում).

99.1.15. դիտավորությամբ կատարված հանցագործության կամ անզգուշությամբ կատարված տնտեսական հանցագործության համար դատապարտվելու հետևանքով մասնագիտական որակավորումից զրկվելու վերաբերյալ (առկայության դեպքում).

99.1.16. ֆոնդային բորսայի կամ ինքնակարգավորվող այլ կազմակերպության կողմից մասնագիտացված անձի կազմում կամ նրա անունից ֆոնդային բորսայում գործարքներ կատարելու իրավունքից կամ տվյալ ինքնակարգավորվող կազմակերպության անդամությունից զրկվելու հետևանքով մասնագիտական որակավորումից զրկվելու վերաբերյալ (առկայության դեպքում).

99.1.17. Օրենքի և դրան համապատասխան ընդունված որոշումների պահանջները պարբերաբար կամ ակնհայտ չարամտությամբ խախտելու կամ խախտելը շարունակելու հետևանքով մասնագիտական որակավորումից զրկվելու վերաբերյալ (առկայության դեպքում).

99.1.18. հարուցված որևէ քրեական գործի, ինչպես նաև Օրենքի, արժեթղթերի շուկան կարգավորող այլ օրենքների և դրանց համապատասխան ընդունված որոշումների (Նորմատիվ իրավական ակտերի) խախտման համար

հարուցված վարչական գործի վերաբերյալ (անկայության դեպքում)։

99.1.19. դիմորդի այն արժեթղթերի դասը և քանակը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են տվյալ անձին։

99.1.20. եթե տվյալ անձը հանդիսանում է որևէ հաշվետու թողարկողի (պետական գրանցման երկրի օրենսդրության համապատասխան), բանկի կամ ապահովագրական ընկերության բաժնային արժեթղթերի 10 և ավելի տոկոսի սեփականատեր, ապա տվյալ հաշվետու թողարկողի, բանկի կամ ապահովագրական ընկերության անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք), գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն), պետական գրանցման երկիրը, տվյալ անձին պատկանող բաժնային արժեթղթի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ)։

99.1.21. եթե տվյալ անձին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է որևէ մասնագիտացված անձի (պետական գրանցման երկրի օրենսդրության համապատասխան) բաժնային արժեթուղթ, ապա տվյալ մասնագիտացված անձի անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք), գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն), պետական գրանցման երկիրը, տվյալ անձին պատկանող բաժնային արժեթղթի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ)։

99.2. Սույն կանոնագրքի 99.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են 97.1բ-2 ձևին համապատասխան։

#### Գ Լ ՈՒ Խ 100

##### **ԴԻՄՈՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ ԿԱԴԻՏԱԼՈՒՄ (ԿԱՆՈՆ 97.1գ-1.)**

100.1. Դիմումում ներառվում են հետևյալ տեղեկություններն այն իրավաբանական անձանց վերաբերյալ, որոնցում դիմորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է որևէ դասի բաժնային արժեթուղթ կամ որևէ այլ մասնակցություն։

100.1.1. տվյալ անձի անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք)։

100.1.2. տվյալ անձի գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն)։

100.1.3. պետական գրանցում շնորհիվ երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը։

100.1.4. տվյալ անձի գործունեության տեսակները՝ տալով դրանց նկարագիրը։

100.1.5. տվյալ անձի կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի չափը։

100.1.6. դիմորդին ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող՝ տվյալ անձի բաժնային արժեթղթերի դասը և քանակը (տոկոսային արտահայտությամբ)։

100.2. Սույն կանոնագրքի 100.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են 97.1գ-1 ձևին համապատասխան։

#### Գ Լ ՈՒ Խ 101

##### **ԴԻՄՈՐԴԻ ԿԱԴԻՏԱԿԱՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 97.1դ-1.)**

101.1. Դիմումում ներառվում են դիմորդի կապիտալի և ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները։

101.1.1. ակտիվների վերաբերյալ։

ա) հիմնական միջոցների մեծություն (I բաժին, տող 010)։

բ) ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցների մեծություն (I բաժին, տող 020)։

գ) ոչ նյութական ակտիվների (ներառյալ՝ գույքիլը) մեծություն (I բաժին, տող 040)։

դ) ոչ ընթացիկ ակտիվների մեծություն (I բաժնի հանրագումար, տող 120)։

ե) ընթացիկ ֆինանսական ներդրումների մեծություն (II բաժին, տող 230)։

զ) դրամական միջոցների մեծություն (II բաժին, տող 240)։

է) դրամական միջոցների համարժեքների մեծություն (II բաժին, տող 250)։

ը) ընթացիկ ակտիվների մեծություն (II բաժնի հանրագումար, տող 270)։

101.1.2. պասիվների վերաբերյալ։

ա) կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի մեծություն (III բաժին, տող 289)։

բ) սեփական կապիտալի մեծություն (III բաժնի հանրագումար, տող 350)։

գ) երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների մեծություն (IV բաժին, տող 360)։

դ) ֆինանսական վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորությունների մեծություն (IV բաժին, տող 370)։

ե) ոչ ընթացիկ պարտավորությունների մեծություն (IV բաժնի հանրագումար, տող 400)։

զ) կարճաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների մեծություն (V բաժին, տող 410)։

է) երկարաժամկետ բանկային վարկերի և փոխառությունների կարճաժամկետ մասի մեծություն (V բաժին, տող 420)։

ը) հիմնադիրներին կարճաժամկետ կրեդիտորական պարտքի մեծություն (V բաժին, տող 500)։

թ) նպատակային ֆինանսավորումների և մուտքերի մեծություն (պասիվների 3-րդ բաժնի 2-րդ և 3-րդ ենթաբաժինների հանրագումար, տող 510)։

ժ) ընթացիկ պարտավորությունների մեծություն (V բաժնի հանրագումար, տող 540)։

101.2. Սույն կանոնագրքի 101.1 կետով սահմանված տեղեկությունները պետք է դիմումում բացահայտվեն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին (<<ՀՀՀՄ), Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 319 հրամանով հաստատված հաշվային պլանին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 1999 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 433 հրամանով հաստատված ֆինանսական հաշվետվությունների ձևերին համապատասխան։

101.3. Սույն կանոնագրքի 101.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 97.1դ-1 ձևին համապատասխան։

#### Գ Լ ՈՒ Խ 102

##### **ԴԻՄՈՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ (ԿԱՆՈՆ 97.1ե-1.)**

102.1. Դիմումում ներառվում են դիմորդի գործունեության համար նախատեսված տարածքի, դրա պայմանների և հագեցվածության վերաբերյալ հետևյալ տեղեկությունները։

102.1.1. այն վայրը (վայրերը), որտեղ դիմորդն իրականացնելու է իր գործունեությունը, տարածքի

նկարագրությունը (մակերեսը).

102.1.2. տարածքը այլ անձի սեփականությունը հանդիսանալու դեպքում՝ տարածքի օգտագործման ժամկետը և դրա դադարեցման պայմանները.

102.1.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ներքին հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների անվտանգ պահպանության ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օգտագործվող սարքավորումների (համակարգիչներ, ազդանշանային և հակահրդեհային միջոցներ, չիրկիզվող պահարաններ և այլն) և համակարգչային ծրագրերի առկայությունը:

102.2. Սույն կանոնագրքի 102.1 կետով սահմանված տեղեկությունները դիմումում ներառվում են սույն կանոնագրքի 97.1ե-1 ձևին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 103**

##### **ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ (ԿԱՆՈՆ 97.1գ-1.)**

103.1. Ֆոնդային բորսա կամ Կենտրոնական դեպոզիտարիա գրանցվելու համար Կենտրոնական բանկ է ներկայացվում նաև.

103.1.1. Ֆոնդային բորսա գրանցվելու համար՝ դիմորդի կողմից հաստատված կանոնները՝ Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին կետի, 48-րդ հոդվածի 2-րդ կետի և 110-րդ հոդվածի 1-ին կետի և դրանց հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված որոշումներին համապատասխան.

103.1.2. Կենտրոնական դեպոզիտարիա գրանցվելու համար՝ դիմորդի կողմից հաստատված կանոնները՝ Օրենքի 112-րդ հոդվածի և դրա հիման վրա Կենտրոնական բանկի կողմից ընդունված որոշումներին համապատասխան:

103.2. Օրենքով և սույն կանոնագրքի 103.1 կետով սահմանված, ինչպես նաև այլ կանոնները Կենտրոնական բանկ են ներկայացվում ութ օրինակից, որոնցից երկուսը պետք է բնօրինակներ լինեն: Բնօրինակներից մեկը Կենտրոնական բանկում գրանցվելուց հետո վերադարձվում է դիմորդին:

#### **Գ Լ ՈՒ Խ 104**

##### **ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԴԻՍՈՒՄՈՒՄ (ԿԱՆՈՆ 98.4-1.)**

104.1. Գրանցման դիմումը բավարարելուց հետո դրանում ներառված տեղեկությունների փոփոխման դեպքում ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է այդ մասին տեղեկանալու օրվանից 15 օրվա ընթացքում դիմումում լրացում կատարելու նպատակով Կենտրոնական բանկ ներկայացնել սույն բաժնի կանոններով սահմանված այն ձևը, որը փոփոխված տեղեկություններ է ներառում: Ձևի վերևի աջ անկյունում տպագրական եղանակով նշվում է «Լրացում» բառն ու այն օրը, երբ ինքնակարգավորվող կազմակերպությունը տեղեկացել է լրացման հիմք հանդիսացող փոփոխությանը:

104.2. Գրանցման դիմումում ներառված տեղեկությունների փոփոխման դեպքում սույն կանոնագրքի 104.1 կետով սահմանված կարգով սույն կանոնագրքի 97.1-2(գ) և 97.1դ-1 ձևերը չեն ներկայացվում:

#### **Բ Ա Ժ Ի Ն 29**

##### **ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՑԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### **Գ Լ ՈՒ Խ 105**

##### **ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 102.2-1.)**

105.1. Սույն բաժնի կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

105.1.1. «**Ինքնակարգավորվող կազմակերպության մարմին**». ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհուրդ, վերահսկիչ ծառայություն, գործադիր մարմին, ինչպես նաև ինքնակարգավորվող կազմակերպության կանոններով սահմանված կարգով որոշում կայացնելու իրավասություն ունեցող ինքնակարգավորվող կազմակերպության այլ մարմին (հանձնաժողով, վարչություն, ծառայություն և այլն).

105.1.2. «**Որոշում**». ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի կամ ինքնակարգավորվող կազմակերպության որևէ մարմնի, ինչպես նաև ինքնակարգավորվող կազմակերպության որևէ պաշտոնատար անձի կողմից ընդունված ցանկացած որոշում կամ որևէ այլ ակտ, որը ձևակերպվել է գրավոր ձևով և ինքնակարգավորվող կազմակերպության անդամի (անդամների) կամ երրորդ անձի (անձանց) համար առաջացնում է որոշակի իրավական հետևանքներ.

105.1.3. «**Գործողություն**». ինքնակազմավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի կամ ինքնակարգավորվող կազմակերպության որևէ մարմնի, ինչպես նաև ինքնակարգավորվող կազմակերպության որևէ պաշտոնատար անձի կողմից կատարված ցանկացած գործողություն, որը ձևակերպված չէ որոշմամբ, սակայն ինքնակարգավորվող կազմակերպության անդամի (անդամների) կամ երրորդ անձի (անձանց) համար առաջացնում է որոշակի իրավական հետևանքներ:

#### **Գ Լ ՈՒ Խ 106**

##### **ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 102.2-2.)**

106.1. Ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել այն որոշման պատճենը (գործողության վերաբերյալ տեղեկանքը), որով կամ որի վերաբերյալ (որի արդյունքում)՝

106.1.1. մերժվել է ինքնակարգավորվող կազմակերպությանը անդամակցությունը.

106.1.2. կասեցվել կամ չեղյալ է հայտարարվել ինքնակարգավորվող կազմակերպության անդամի անդամությունը.

106.1.3. ինքնակարգավորվող կազմակերպության կանոններով սահմանված կարգով ներկայացված որևէ հարց որևէ հիմքով չի ներառվել ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի նիստի օրակարգում.

106.1.4. փոխկապակցվածության հիմքով միավորվել են ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ծայները՝ նրանց վերապահելով միայն մեկ ծայնի իրավունքը.

106.1.5. առկա է ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի կամ ինքնակարգավորվող կազմակերպության մարմնի կողմից սույն որոշման ընդունման վերաբերյալ քվեարկելու իրավունք ունեցող անձանցից որևէ մեկի գրավոր հատուկ կարծիքը (եթե հատուկ կարծիքը ներառված չէ որոշման մեջ, ապա կից ներկայացվում է նաև հատուկ կարծիքը).

106.1.6. վաղաժամկետ դադարեցվել են ինքնակարգավորվող կազմակերպության մարմնի ղեկավարի և/կամ անդամի լիազորությունները.

106.1.7. նախատեսվել է վերակազմակերպել կամ լուծարել ինքնակարգավորվող կազմակերպությունը:

106.2. Ֆոնդային բորսան, ի լրումն սույն կանոնագրքի 109.1 կետով սահմանված որոշումների և

գործողությունների, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև այն որոշման պատճենը (գործողության վերաբերյալ տեղեկանքը), որով (որի արդյունքում)

106.2.1. մերժվել է արժեթղթերի գրանցումը.

106.2.2. մերժվել է արժեթղթերի ցուցակումը.

106.2.3. կասեցվել կամ դադարեցվել է որևէ արժեթղթի բորսայական առևտուրը:

106.3. Կենտրոնական դեպոզիտարիան, ի լրումն սույն կանոնագրի 106.1 կետով սահմանված որոշումների և գործողությունների, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև այն որոշման պատճենը (գործողության վերաբերյալ տեղեկանքը), որով (որի արդյունքում)

106.3.1. մերժվել է թողարկողի հետ ռեեստրի վարման պայմանագրի կնքումը՝ ներկայացնելով մերժման գրավոր հիմնավորումը և մերժման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում).

106.3.2. համապատասխան հանձնարարականի հիման վրա մերժվել է ռեեստրում գրառում կատարելը՝ ներկայացնելով մերժման գրավոր հիմնավորումը և մերժման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում).

106.3.3. դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի որոշման հիման վրա իրականացվել է մասնագիտացված անձին պատկանող (նրա անվամբ գրանցված) արժեթղթերի արգելադրում կամ փոխանցում այլ անձի՝ կից ներկայացնելով գործողության կատարման համար հիմք հանդիսացած փաստաթղթի պատճենը.

106.3.4. գրանցվել է Կենտրոնական դեպոզիտարիայում ռեեստր վարող թողարկողի որևէ դասի արժեթղթի 50-րդ սեփականատիրոջը՝ տեղեկանքում նշելով գրանցման ամսաթիվը, արժեթղթի դասը, թողարկողի լրիվ անվանումը, գտնվելու վայրը և կապի միջոցը.

106.3.5. սահմանված կարգով ռեեստրում կատարվել է գրառում, որի արդյունքում անձը դարձել է թողարկողի բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր՝ տեղեկանքում նշելով գրանցման ամսաթիվը, արժեթղթի դասը, թողարկողի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, ինչպես նաև նշված անձի. լրիվ անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը և ազգանունը), գտնվելու (ֆիզիկական անձի համար՝ բնակության) վայրը, կապի միջոցը (առկայության դեպքում):

106.4. Եթե սույն կանոնագրի 106.1, 106.2, 106.3 կետերում նշված որևէ որոշում ներառվում է ինքնակարգավորվող կազմակերպության համապատասխան կանոնում, ապա նշված որոշման պատճենը Կենտրոնական բանկ չի ներկայացվում:

106.5. Ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկանքը պետք է ներառի համապատասխան գործողության ամփոփ նկարագրությունը, նշված գործողության կատարման համար հիմք հանդիսացած փաստաթղթերի (առկայության դեպքում)՝ ինքնակարգավորվող կազմակերպություն մուտքագրման, համապատասխան գործողության կատարման և տեղեկանքը Կենտրոնական բանկ ներկայացնելու ամսաթվերը, ինչպես նաև պետք է ստորագրված լինի ինքնակարգավորվող կազմակերպության գործադիր մարմնի կողմից և վավերացված ինքնակարգավորվող կազմակերպության կնիքով:

106.6. Եթե ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի կողմից ընտրվել կամ նշանակվել է ինքնակարգավորվող կազմակերպության որևէ մարմնի անդամ (այդ թվում՝ ղեկավար), ապա ինքնակարգավորվող կազմակերպությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում դիտորդ խորհրդի նախագահի կողմից ստորագրված և ինքնակարգավորվող կազմակերպության կնիքով վավերացված տեղեկանք՝ որանում ներառելով հետևյալ տեղեկությունները.

106.6.1. ինքնակարգավորվող կազմակերպության մարմնի անվանումը.

106.6.2. ընտրության անցկացման կամ պաշտոնին նշանակման ամսաթիվը.

106.6.3. պաշտոնը (պաշտոնները), որի (որոնց) համար անցկացվել է ընտրություն կամ կատարվել է նշանակում.

106.6.4. թեկնածուի (թեկնածուների) անունը և ազգանունը.

106.6.5. յուրաքանչյուր քվեարկող անձի անունը, ազգանունը, ինչպես նաև ինքնակարգավորվող կազմակերպության այն անդամի անվանումը, որի ներկայացուցիչն է քվեարկող անձը.

106.6.6. ընտրված (նշանակված) անձի (անձանց) անունը և ազգանունը, ինչպես նաև նրա (նրանց) ստացած ձայների քանակը:

106.7. Եթե սույն կանոնագրի 106.6 կետում պահանջվող տեղեկությունները ներառվում են ինքնակարգավորվող կազմակերպության անդամների ընդհանուր ժողովի կամ դիտորդ խորհրդի նիստի արձանագրության մեջ, ապա ինքնակարգավորվող կազմակերպությունը կարող է տեղեկանքի փոխարեն Կենտրոնական բանկ ներկայացնել դիտորդ խորհրդի նախագահի կողմից ստորագրված և ինքնակարգավորվող կազմակերպության կնիքով վավերացված համապատասխան արձանագրությունը:

## **Գ Լ ՈՒ Խ 107**

### ***ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱԳՅՈՒՄ ԿԱՐԳԸ (ԿԱՆՈՆ 102.2-3.)***

107.1. Կենտրոնական բանկ ներկայացման ենթակա՝ սույն կանոնագրի 106-րդ գլխով սահմանված փաստաթուղթը ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կենտրոնական բանկ է ներկայացվում սույն կանոնագրի 102.2-3(ա) ձևին կից:

107.2. Ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է սույն կանոնագրի 107.1 կետում նշված փաստաթղթերը համապատասխան որոշման ընդունման կամ գործողության կատարման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կենտրոնական բանկ, բացառությամբ սույն կանոնագրի 106.2.3 կետով սահմանված դեպքի, որի վերաբերյալ նշված կանոնով պահանջվող փաստաթուղթը Կենտրոնական բանկ է ներկայացվում համապատասխան որոշման ընդունման կամ գործողության կատարման աշխատանքային օրվա ընթացքում:

## **Բ Ա Ժ Ի Ն 30**

### **ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

## **Գ Լ ՈՒ Խ 108**

### ***ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 104.2-1.)***

108.1. Սույն բաժնի կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

108.1.1. «Հաշվետու տարի»՝ ըստ՝ սույն կանոնագրի 72.1.1 կետի: Ինքնակարգավորվող կազմակերպության համար առաջին հաշվետու տարի է համարվում Կենտրոնական բանկում գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը.

108.1.2. «Հաշվետու եռամսյակ»՝ ըստ սույն կանոնագրի 72.1.2 կետի: Ինքնակարգավորվող կազմակերպության համար առաջին հաշվետու եռամսյակ է համարվում Կենտրոնական բանկում գրանցման օրվանից մինչև հաշվետու տարվա տվյալ եռամսյակի վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը.

108.1.3. «Հաշվետու ամիս»՝ ըստ սույն կանոնագրի 72.1.3 կետի: Ինքնակարգավորվող կազմակերպության համար առաջին հաշվետու ամիս է համարվում Կենտրոնական բանկում գրանցման օրվանից մինչև հաշվետու տարվա տվյալ ամսվա վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը.

108.1.4. «Առևտրային օր»՝ աշխատանքային օր, որի ընթացքում ֆոնդային բորսայում իրականացվում է

արժեթղթերի առևտուր.

108.1.5. «Հաշվետու ժամանակաշրջան». հաշվետու տարի, հաշվետու եռամսյակ կամ հաշվետու ամիս, ինչպես նաև առևտրային կամ աշխատանքային օր.

108.1.6. «Ընթացիկ հաշվետվություն». համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար սույն բաժնի 111-րդ գլխով սահմանված ձևերից կազմված և պահանջվող տեղեկությունները ներառող փաստաթղթերի համախումբ.

108.1.7. «Ֆինանսական հաշվետվություն». համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի համար սույն բաժնի 114-րդ գլխով սահմանված ձևերից կազմված և պահանջվող տեղեկությունները ներառող փաստաթղթերի համախումբ:

#### **Գ Լ ՈՒ Խ 109**

##### ***ԸՆԴՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԳՄԱԿԵՐԱԿՈՒՄՆԵՐ (ԿԱՆՈՆ 104.2-2.)***

109.1. Ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների փաթեթը (այսուհետ՝ հաշվետվություն) բաղկացած է սույն բաժնի կանոններով սահմանված տեղեկությունները ներառող հաշվետվության տիտղոսաթերթից, ընթացիկ և/կամ ֆինանսական հաշվետվության ձևերից: Հաշվետվության յուրաքանչյուր էջը (բացառությամբ՝ ֆինանսական հաշվետվության ձևերի) պետք է.

109.1.1. վավերացված լինի ինքնակարգավորվող կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ (ստորագրությունը կապույտ գույնով գրող գրչով) և ինքնակարգավորվող կազմակերպության կնիքով.

109.1.2. ներառի սույն կանոնագրի 109.1 կետում նշված անձի կողմից ստորագրման ամսաթիվը.

109.1.3. նշում պարունակի հաշվետվության մեջ տվյալ էջի հերթական համարի վերաբերյալ.

109.1.4. լրացված լինի Ա4 չափսի սպիտակ թղթի վրա, հայերեն, «Թայմս Արմենիան» համակարգչային սև գույնի տառատեսակով, հիմնական տեքստը՝ 8-10 չափով:

109.2. Ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում բացառապես էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով, Կենտրոնական բանկի կողմից տրամադրված պաշտպանված օրինակելի նմուշին (Ֆայլին) համապատասխան, բացառությամբ սույն կանոնագրի 109.3 կետով սահմանված դեպքի: Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունը ներկայացվում է սույն կանոնագրի 109.3 կետով սահմանված ձևով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Այլ կերպ ներկայացված հաշվետվությունը համարվում է չընդունված: Սույն կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ Կենտրոնական բանկի կողմից ընդունված հաշվետվությունները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածով սահմանված գրավոր ապացույցներ:

109.3. Սի-Բի-Էյ-Նեթ համակարգին միացված չլինելու դեպքում ինքնակարգավորվող կազմակերպությունը հաշվետվությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում.

109.3.1. թղթային ձևով, և

109.3.2. էլեկտրոնային փոստի միջոցով՝ այն ուղարկելով Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային փոստի հասցեին՝ ստացման մասին հետադարձ ծանուցման ռեժիմով: Էլեկտրոնային փոստով ներկայացվող հաշվետվությունը կազմվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված օրինակելի նմուշին (Ֆայլին) համապատասխան: Էլեկտրոնային հաղորդակցման միջոցի խափանման դեպքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացման ենթակա հաշվետվությունը ներկայացվում է մազնիսական կամ էլեկտրոնային կրիչով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

109.4. Հաշվետվությունը Սի-Բի-Էյ-Նեթ համակարգի միջոցով, էլեկտրոնային փոստով, մազնիսական կամ էլեկտրոնային կրիչով ներկայացնելիս ֆայլերը կոդավորվում են հետևյալ ձևով՝ XXXX-104.2.xls, որտեղ XXXX-ը Կենտրոնական բանկի կողմից ԻԿԿ-ին շնորհված կոդն է:

109.5. Հաշվետվությունը համարվում է Կենտրոնական բանկ ներկայացված սույն բաժնի կանոններով սահմանված ձևով, կարգով և ժամկետներում Կենտրոնական բանկում դրա ստացման պահից:

109.6. Ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է հաշվետվության թղթային ձևով բնօրինակը պահպանել Կենտրոնական բանկի կողմից դրա ստացման պահից 3 տարի ժամկետով, որից հետո այն կարող է ոչնչացվել օրենքով սահմանված կարգով:

109.7. Հաշվետվության մեջ սույն բաժնի կանոններին համապատասխան ներառվելիք տեղեկությունները պետք է լինեն ստույգ՝ առանց որևէ փաստի խեղաթյուրման և/կամ բացթողման:

109.8. Եթե արդեն իսկ Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվության մեջ ինքնակարգավորվող կազմակերպությունը հայտնաբերում է անճշտություն և/կամ բացթողում, ապա նշված ինքնակարգավորվող կազմակերպությունը կարող է կից գրությամբ Կենտրոնական բանկ ներկայացնել համապատասխան ճշգրտված ձևը, որի վերևի աջ անկյունում համակարգչային եղանակով պետք է տպագրված լինի «Լրացում» բառը:

#### **Գ Լ ՈՒ Խ 110**

##### ***ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՒՏՂՈՍԱԹԵՐԹԸ (ԿԱՆՈՆ 104.2-3.)***

110.1. Հաշվետվության տիտղոսաթերթը Կենտրոնական բանկ է ներկայացվում սույն կանոնագրի 104.2-1/ԻԿԿ ձևին համապատասխան և պետք է ներառի.

110.1.1. ինքնակարգավորվող կազմակերպության լրիվ հայերեն անվանումը.

110.1.2. կանոնը, որի համաձայն ներկայացվում են ընթացիկ և/կամ ֆինանսական հաշվետվության ձևերը.

110.1.3. տեղեկություններ ընթացիկ և/կամ ֆինանսական հաշվետվության ներկայացվող յուրաքանչյուր ձևի, դրա էջերի քանակի և համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ.

110.1.4. տեղեկություններ ընթացիկ հաշվետվության չներկայացվող յուրաքանչյուր ձևի և համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերաբերյալ.

110.1.5. ինքնակարգավորվող կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը:

#### **Գ Լ ՈՒ Խ 111**

##### ***ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ (ԿԱՆՈՆ 104.2-4.)***

111.1. Ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել ընթացիկ հաշվետվության սույն կանոնագրի 104.2-2/ԻԿԿ և 104.2-3/ԻԿԿ ձևերը:

111.2. Ֆոնդային բորսան, ի լրումն սույն կանոնագրի 111.1 կետում սահմանված ձևերի, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև ընթացիկ հաշվետվության սույն կանոնագրի 104.2-1/ՖԲ, 104.2-2/ՖԲ, 104.2-3/ՖԲ, 104.2-4/ՖԲ, 104.2-5/ՖԲ և 104.2-6/ՖԲ ձևերը:

111.3. Կենտրոնական դեպոզիտարիան, ի լրումն սույն կանոնագրի 111.1 կետում սահմանված ձևերի, պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել նաև ընթացիկ հաշվետվության սույն կանոնագրի 104.2-1/ԿԴ, 104.2-2/ԿԴ, 104.2-3/ԿԴ, 104.2-4/ԿԴ, 104.2-5/ԿԴ և 104.2-6 ԿԴ ձևերը:

111.4. Ընթացիկ հաշվետվության ձևերում պահանջվող տեղեկությունները ներառվում են համապատասխան

հաշվետու ամբողջ ժամանակաշրջանի համար, բացառությամբ սույն կանոնագրքի 104.2-3/ԻԿԿ և 104.2-6/ԿԴ ձևերի, որոնք կազմվում են, համապատասխանաբար, հաշվետու ամսվա և հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ:

111.5. Ինքնակարգավորվող կազմակերպությունը կարող է հաշվետու ժամանակաշրջանի համար Կենտրոնական բանկ չներկայացնել ընթացիկ հաշվետվության որևէ ձև (բացառությամբ՝ սույն կանոնագրքի 104.2-2/ՖԲ և 104.2-2/ԿԴ ձևերի):

111.5.1. Եթե այդ ձևում ներառվելիք տեղեկությունները չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ կամ պահանջվող տեղեկությունները հաշվետու ժամանակաշրջանի համար բացակայում են, և 111.5.2. Եթե սույն կանոնագրքի 111.5.1 կետի հիմքով համապատասխան նշում է կատարել հաշվետվության տիտղոսաթերթում:

#### **Գ Լ ՈՒ Խ 112**

##### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ (ԿԱՆՈՆ 104.2-5.)**

112.1. Ինքնակարգավորվող կազմակերպությունը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմնի կողմից հաստատված ֆինանսական հաշվետվությունների N 1, N 2, N 3, N 4 և N 5 ձևերը: Ինքնակարգավորվող կազմակերպության կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող ֆինանսական հաշվետվության ձևերում պարունակվող տեղեկությունները պետք է բացահայտվեն Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՀՀՀՀՍ) համաձայն:

112.2. Ինքնակարգավորվող կազմակերպությունը ֆինանսական հաշվետվության N 5 ձևում նշված ձևի 5.3.4 կետի («Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ») «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ» բաժնում պետք է ներառի սույն կանոնագրքի 24.1/ԻԿԿ և 24.2/ԻԿԿ աղյուսակներով պահանջվող տեղեկությունները:

112.3. Ֆոնդային բորսան, ի լրումն սույն կանոնագրքի 112.2 կետում նշված տեղեկությունների, ֆինանսական հաշվետվության N 5 ձևում նշված ձևի 5.3.2 կետի («Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրություններ») «Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրություններ» բաժնում պետք է ներառի սույն կանոնագրքի 17.1/ՖԲ աղյուսակով, իսկ սույն կանոնագրքի 5.3.4 կետի («Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ») «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ» բաժնում՝ սույն կանոնագրքի 24.3/ՖԲ աղյուսակով պահանջվող տեղեկությունները:

112.4. Կենտրոնական դեպոզիտարիան, ի լրումն սույն կանոնագրքի 112.2 կետում նշված տեղեկությունների, ֆինանսական հաշվետվության N 5 ձևում նշված ձևի 5.3.2 կետի («Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրություններ») «Հաշվապահական հաշվեկշռին կից ծանոթագրությունների այլ բացահայտումներ» բաժնում պետք է ներառի թիվ 17.1/ԿԴ աղյուսակով, իսկ 5.3.4 կետի («Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից ծանոթագրություններ») «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը կից բացահայտումներ» բաժնում՝ թիվ 24.3/ԿԴ աղյուսակով պահանջվող տեղեկությունները:

112.5. Ֆինանսական հաշվետվության ձևերը կազմվում են հաշվապահական հաշվառման կարգավորումն իրականացնող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմնի կողմից հաստատված համապատասխան հրահանգի համաձայն:

112.6. Ինքնակարգավորվող կազմակերպության տարեկան ֆինանսական հաշվետվությունը Կենտրոնական բանկ են ներկայացվում անկախ աուդիտորի եզրակացությամբ:

#### **Գ Լ ՈՒ Խ 113**

##### **ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 104.2-6.)**

113.1. Ընթացիկ հաշվետվության սույն կանոնագրքի 104.2-2/ԻԿԿ, 104.2-3/ՖԲ, 104.2-4/ՖԲ, 104.2-5/ՖԲ, 104.2-6/ՖԲ, 104.2-3/ԿԴ, 104.2-4/ԿԴ և 104.2-5/ԿԴ ձևերը Կենտրոնական բանկ են ներկայացվում մինչև համապատասխան հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ, իսկ 104.2-6/ԿԴ ձևը՝ մինչև համապատասխան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ:

113.2. Ընթացիկ հաշվետվության սույն կանոնագրքի 104.2-1/ՖԲ, 104.2-2/ՖԲ և 104.2-1/ԿԴ ձևերը Կենտրոնական բանկ են ներկայացվում մինչև համապատասխան հաշվետու առևտրային օրվան, իսկ 104.2-2/ԿԴ ձևը՝ մինչև համապատասխան հաշվետու աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ը:

113.3. Տարեկան ֆինանսական հաշվետվության ձևերը Կենտրոնական բանկ են ներկայացվում մինչև համապատասխան հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներառյալ:

113.4. Եռամսյակային ֆինանսական հաշվետվության ձևերը Կենտրոնական բանկ են ներկայացվում մինչև համապատասխան հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ, ընդ որում, ֆինանսական հաշվետվության ձևերը հաշվետու տարվա չորրորդ եռամսյակի համար կարող են չներկայացվել:

113.5. Եթե սույն կանոնագրքի 113.1, 113.2, 113.3 և 113.4 կետերում սահմանված որևէ օր ոչ աշխատանքային է, ապա հաշվետվությունների ներկայացման վերջին օր է համարվում նշված ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

#### **Գ Լ ՈՒ Խ 114**

##### **ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԱՑԱՏՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱԼՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 104.2-7.)**

114.1. Կենտրոնական բանկը (Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանումը) իրավունք ունի ինքնակարգավորվող կազմակերպությունից կամ նրա պաշտոնատար անձանցից պահանջել ինքնակարգավորվող կազմակերպության և/կամ դրա անդամների գործունեության վերաբերյալ բացատրագիր, տեղեկանք և/կամ փաստաթուղթ:

114.2. Ինքնակարգավորվող կազմակերպությունը կամ նրա համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է գրավոր ձևով Կենտրոնական բանկ ներկայացնել պահանջվող բացատրագիրը, տեղեկանքը և/կամ փաստաթուղթը սույն կանոնագրքի 114.1 կետում նշված պահանջը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի (Կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանման) կողմից ներկայացման ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

#### **Բ Ա Ժ Ի Ն 31**

##### **ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԹՐԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՏԵՐԵՐԻ ՌԵՏՍՐԻ ՎԱՐՈՒՄ**

#### **Գ Լ ՈՒ Խ 115**

**ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿՄՆՈՆ 112.1բ-1.)**

115.1. Սույն բաժնի կանոններում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

115.1.1. «**Անձնական հաշիվ**». գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ), նրան պատկանող (նրա անվամբ գրանցված) արժեթղթերի և դրանցով կատարված գործառնությունների մասին ռեեստրում առկա տեղեկությունների ամբողջությունը.

115.1.2. «**Արգելադրման հանձնարարագիր**». գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ սույն բաժնի կանոններով սահմանված այլ անձի կարգադրություն, որը որոշակի ժամանակահատվածում կամ մինչև որոշակի փաստի կամ իրադարձության տեղի ունենալն արգելում է արգելադրման հանձնարարագրում նշված արժեթղթերի փոխանցումն այլ անձանց.

115.1.3. «**Արգելադրման դադարեցման հանձնարարագիր**». գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ սույն բաժնի կանոններով սահմանված այլ անձի կարգադրություն, որն ուղղված է արժեթղթերն արգելադրումից հանելուն.

115.1.4. «**Արժեթղթերի արգելադրում**». Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող գործառնություն, որի արդյունքում տվյալ արժեթղթերի փոխանցումն արգելվում է որոշակի ժամանակահատվածում կամ մինչև որոշակի փաստի կամ իրադարձության տեղի ունենալը.

115.1.5. «**Արժեթղթերի արգելադրման դադարեցում**». Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող գործառնություն, որի արդյունքում արգելադրված արժեթղթերը հանվում են արգելադրումից և կարող են փոխանցվել այլ անձանց.

115.1.6. «**Արժեթղթի հավաստագիր**». փաստաթղթային արժեթղթի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ձևի և պարտադիր վավերապայմանների պահպանմամբ թղթային կրիչը.

115.1.7. «**Արժեթղթի հավաստագրի չեղյալ համարում**». Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրականացվող գործողություն, որն ապահովում է տվյալ հավաստագրի հետագա օգտագործման անհնարինությունը.

115.1.8. «**Արժեթղթերի բաժանում**». թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումը նույն դասի ավելի մեծ քանակի արժեթղթերի՝ առանց դրանց ընդհանուր անվանական արժեքի փոփոխման.

115.1.9. «**Արժեթղթերի կոնսոլիդացիա**». թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկումը նույն դասի ավելի փոքր քանակի արժեթղթերի՝ առանց դրանց ընդհանուր անվանական արժեքի փոփոխման.

115.1.10. «**Արժեթղթերի փոխարկում**». թողարկողի տվյալ դասի արժեթղթերի շրջանառությունից հանումը և չեղյալ համարումը նույն թողարկողի կամ այլ թողարկողի արժեթղթերով փոխանակելու միջոցով.

115.1.11. «**Գործառնություն**». Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից սույն բաժնի կանոններով սահմանված գործողությունների իրականացում, որի արդյունքում տեղի է ունենում անձնական հաշվի բացում, անձնական հաշվում առկա տեղեկությունների փոփոխությունն և՛ս(կամ) ռեեստրից տեղեկությունների տրամադրում.

115.1.12. «**Թողարկողի թողարկման հաշիվ**». թողարկվող (դեռևս չտեղաբաշխված) արժեթղթերի հաշվառման համար ռեեստրում բացված հաշիվ.

115.1.13. «**Թողարկողի անձնական հաշիվ**». թողարկողի կողմից հետ գնված կամ ձեռք բերված արժեթղթերի վերաբերյալ ռեեստրում առկա տեղեկությունների ամբողջությունը.

115.1.14. «**Ինքնությունը չպարզված անձի արժեթղթերի հաշիվ**». անձնական հաշիվ, որի սեփականատերը չի կարող միանշանակորեն նույնացվել, չնայած ռեեստրում իր ազգանվան և անվան (անվանման) մասին տեղեկությունների առկայությանը.

115.1.15. «**Կորպորատիվ գործողություն**». թողարկողի որոշմամբ տվյալ թողարկողի որևէ դասի արժեթղթերի փոխարկում, այդ թվում՝ թողարկողի տվյալ դասի արժեթղթերի բաժանման, կոնսոլիդացիայի կամ թողարկողի վերակազմակերպման արդյունքում.

115.1.16. «**Հանձնարարագիր**». ռեեստրում գործառնություններ, բացառությամբ ռեեստրից տեղեկությունների տրամադրման գործառնության, կատարելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ.

115.1.17. «**Հաշվառման ամսաթիվ**». ամսաթիվ, որի դրությամբ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անունը և ազգանունը (անվանումը) պետք է թողարկողի ռեեստրում նշված լինի իրեն պատկանող (իր անվամբ գրանցված) արժեթղթերով հավաստված իրավունքներն իրականացնելու համար.

115.1.18. «**Հարցում**». ռեեստրից տեղեկությունների տրամադրման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, ինչպես նաև այլ փաստաթղթեր, որոնք չեն կարող որակվել որպես հանձնարարագիր.

115.1.19. «**Պատկանելությունը չպարզված արժեթղթերի հաշիվ**». անձնական հաշիվ, որտեղ արտացոլվում են այն արժեթղթերը, որոնց սեփականատերերը հայտնի չեն.

115.1.20. «**Ռեեստր**». թողարկողի անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի), արժեթղթերի և դրանցով հավաստված իրավունքների վերաբերյալ տվյալների միասնական համակարգ, որն ապահովում է արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի), նրանց լիազորված ներկայացուցիչների, գրանցված սեփականատերերին (անվանատերերին) պատկանող (անվանատերերի անվամբ գրանցված) արժեթղթերի քանակի և դասի, ինչպես նաև դրանց վերաբերյալ սույն բաժնի կանոններով սահմանված այլ տեղեկությունների նույնացումը.

115.1.21. «**Ռեեստրից քաղվածք**». Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրվող փաստաթուղթ, որը հավաստում է, որ դրանում նշված անձը թողարկողի որոշակի դասի և որոշակի քանակությամբ արժեթղթերի գրանցված սեփականատեր (անվանատեր) է՝ որոշակի ամսաթվի դրությամբ.

115.1.22. «**Վճարման ամսաթիվ**». հայտարարված շահութաբաժնի կամ տոկոսի (դրամական, արժեթղթի կամ այլ տեսքով) վճարման ամսաթիվը.

115.1.23. «**Փաստաթղթային արժեթուղթ**». արժեթուղթ, որի սեփականատիրոջ իրավունքները հավաստվում են այդ արժեթղթի հավաստագրով.

115.1.24. «**Փոխանցող գործակալ**». մասնագիտացված անձ կամ բանկ, որը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրի համաձայն իրականացնում է սույն բաժնի կանոններին համապատասխան գործառնություններ.

115.1.25. «**Փոխանցման հանձնարարագիր**». գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ սույն բաժնի կանոններով սահմանված այլ անձի կարգադրություն՝ արժեթղթերը մեկ անձից մեկ այլ անձի (անձանց) փոխանցելու մասին.

115.1.26. «**Փոխարկման հանձնարարագիր**». գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ), ինչպես նաև թողարկողի կարգադրություն՝ իրեն պատկանող (իր անվամբ գրանցված), ինչպես նաև իր կողմից թողարկված որոշակի դասի արժեթղթերը մեկ այլ դասի արժեթղթերով փոխանակելու մասին, եթե այդ իրավունքը նախատեսված է թողարկողի որոշմամբ.

115.1.27. «**Օգտագործման համար ոչ պիտանի դարձած հավաստագիր**». հավաստագիր, որի ֆիզիկական մաշվածության կամ այլ պատճառով անհրաժեշտություն է առաջացել նոր հավաստագրով դրա փոխարինման համար:

**Գ Լ ՈՒ Խ 116**

**ՌԵԵՍՏՐԻ ՎՈՐՈՒՄ (ԿՄՆՈՆ 112.1բ-2.)**

116.1. Ռեեստրի վարումը թողարկողի արժեթղթերի և գրանցված սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ընթացիկ և բավարար տեղեկատվության հաշվառման և պահպանման միջոցով իրականացվող արժեթղթերի հաշվառման գործունեություն է, որի նպատակն է արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի (արժեթղթերով հավաստված իրավունքներն իրականացնելու), արժեթղթերի ամբողջական ու հավաստի հաշվառումը: Ռեեստրի վարումը ներառում է նաև թողարկողի և գրանցված սեփականատերերի (անվանատերերի) մասին

տեղեկությունների օրինական փոփոխությունների և լրացումների, ինչպես նաև արժեթղթերի թողարկման, փոխանցման, արգելադրման, արգելադրման դադարեցման կամ թողարկողի կորպորատիվ գործողությունների հետ կապված ռեեստրում առկա տեղեկությունների բոլոր փոփոխությունների և լրացումների ժամանակագրական կարգով գրանցումը և դրանց վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

116.2. Այն թողարկողները, որոնք օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան պարտավոր են իրենց կողմից թողարկված արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնել Կենտրոնական դեպոզիտարիային, ռեեստրի վարումը Կենտրոնական դեպոզիտարիային են հանձնում սույն կանոնագրքի 8-րդ բաժնի կանոններով սահմանված կարգով:

116.3. Ռեեստրի վարման առնչությամբ թողարկողի և Կենտրոնական դեպոզիտարիայի հարաբերությունները կարգավորվում են սույն բաժնի կանոններով և ռեեստրի վարման մասին նրանց միջև կնքված պայմանագրով:

116.4. Ռեեստրի վարման համար Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.

116.4.1. թողարկողի պետական գրանցման վկայականի պատճենը.

116.4.2. արժեթղթի թողարկման մասին թողարկողի որոշումը (որոշումները)՝ առկայության դեպքում.

116.4.3. ռեեստրի թղթային գրանցամատյանները կամ էլեկտրոնային գրանցամատյանների թղթային կրկնօրինակները՝ կարված և կնքված թողարկողի կնիքով.

116.4.4. ռեեստրի վարման համար պատասխանատու անձի նշանակման մասին թողարկողի իրավասու մարմնի հրամանի կամ որոշման պատճենը՝ առկայության դեպքում:

116.5. Սույն կանոնագրքի 116.4 կետում սահմանված փաստաթղթերի բացակայության դեպքում թողարկողը ներկայացնում է հանձնման պահի դրությամբ անվանական արժեթղթերի սեփականատերերի ցուցակ (նշելով տվյալ դասի արժեթղթերի ընդհանուր քանակը, անվանական արժեքը, ինչպես նաև յուրաքանչյուր սեփականատիրոջը պատկանող տվյալ դասի արժեթղթերի քանակը), որը պետք է վավերացված լինի թողարկողի կնիքով և ստորագրված՝ գործադիր մարմնի կողմից:

116.6. Հրապարակային տեղաբաշխվող արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման համար պահանջվում են սույն կանոնագրքի 116.4.1 և 116.4.2 կետերով սահմանված փաստաթղթերը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կենտրոնական դեպոզիտարիայում առկա են նշված փաստաթղթերը, ինչպես նաև տվյալ արժեթղթի թողարկման որոշումը և ազդագիրը ներառող արժեթղթերի գրանցման հայտարարագիրը գրանցելու վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշման պատճենը:

116.7. Ռեեստրը ներառում է տեղեկություններ.

116.7.1. թողարկողի մասին.

116.7.2. թողարկողի արժեթղթերի մասին (արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ առանձին).

116.7.3. գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և նրանց անձնական հաշիվներում հաշվառված՝ նրանց պատկանող (նրանց անվամբ գրանցված) արժեթղթերի մասին.

116.7.4. գրանցված սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներով կատարվող գործառնությունների մասին.

116.7.5. արժեթղթերի հավաստագրերի մասին (թողարկողի արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ առանձին):

116.8. Ռեեստրի վարման համար օգտագործվում են հետևյալ մատյանները.

116.8.1. փաստաթղթերի հաշվառման մատյանը.

116.8.2. գործառնությունների գրանցամատյանը.

116.8.3. արժեթղթերի հավաստագրերի հաշվառման մատյանը (փաստաթղթային արժեթղթերի համար):

116.9. Թղթային գրառումները և փաստաթղթերը դրանց ստեղծման կամ ձեռքբերման պահին կարող են փոխանցվել միկրոֆիլմի, միկրոֆիլմի կամ նման այլ պահպանման միջոցի վրա: Նշված փաստաթղթերի և գրառումների բնօրինակները ենթակա են պահպանման հետևյալ ժամկետներում.

116.9.1. փոխանցման հանձնարարագրերը և արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոփոխությանը վերաբերող այլ փաստաթղթերը կամ գրառումները՝ դրանց ստացման կամ ստեղծման պահից ոչ պակաս, քան 10 տարի.

116.9.2. ռեեստրի վարման հետ կապված այլ փաստաթղթերը և գրառումները՝ դրանց ստացման կամ ստեղծման պահից ոչ պակաս, քան 3 տարի:

116.10. Այն դեպքում, երբ սույն կանոնագրքի 116.9 կետում նշված փաստաթղթերը և գրառումները փոխանցված են միկրոֆիլմի, միկրոֆիլմի կամ նման այլ պահպանման միջոցի վրա, փաստաթղթերի և գրառումների բնօրինակները պետք է պահպանվեն ոչ պակաս, քան 1 տարի, իսկ միկրոֆիլմը, միկրոֆիլմը կամ նման այլ պահպանման միջոցը՝ ոչ պակաս, քան 10 տարի:

116.11. Էլեկտրոնային կամ այլ կրիչներում տեղեկությունները պետք է պահպանվեն այնպիսի եղանակով, որն ապահովում է 1 աշխատանքային օրվա ընթացքում դրանց վերածումը թղթային ընթեռնելի գրառման:

116.12. Օրացուցային տարվա վերջին Կենտրոնական դեպոզիտարիան կարող է արխիվացնել և ռեեստրից հանել այն տեղեկությունները, որոնց պահպանման համար սույն կանոնագրքի 116.9 կետում սահմանված ժամկետը լրացել է:

116.13. Սույն կանոնագրքի 116.9 և 116.10 կետերում նշված փաստաթղթերի և գրառումների պահպանման համար սահմանված ժամկետը լրանալու հիմքով դրանց ոչնչացման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան կազմում է ոչնչացման մասին ակտ:

## **Գ Լ ՈՒ Խ 117**

### ***ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ (ԿԱՆՈՆ 112.1բ-3.)***

117.1. Ռեեստրը ներառում է թողարկողի մասին հետևյալ տեղեկությունները.

117.1.1. անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).

117.1.2. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

117.1.3. պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը.

117.1.4. թողարկողի լիազորված ներկայացուցիչների անունը, ազգանունը և պաշտոնը.

117.1.5. սպասարկող բանկի անվանումը և բանկային հաշվի համարը.

117.1.6. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

117.2. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է ունենալ թողարկողի լիազորված ներկայացուցիչների ստորագրությունների նմուշներ:

## **Գ Լ ՈՒ Խ 118**

### ***ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ (ԿԱՆՈՆ 112.1բ-4.)***

118.1. Ռեեստրը ներառում է թողարկողի արժեթղթերի յուրաքանչյուր դասի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

- 118.1.1. թողարկողի անվանումը և արժեթղթերի դասը.
- 118.1.2. արժեթղթերի գրանցման համարը և տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում).
- 118.1.3. արժեթղթերի թողարկման ձևը՝ փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային.
- 118.1.4. արժեթղթերի սեփականատերերին արժեթղթերի հավաստագրեր տրամադրված լինելու կամ չլինելու մասին.
- 118.1.5. տվյալ դասի մեկ արժեթղթի անվանական արժեքը (առկայության դեպքում).
- 118.1.6. թողարկվող և նախկինում թողարկված արժեթղթերի քանակը.
- 118.1.7. շրջանառության մեջ գտնվող արժեթղթերի քանակը.
- 118.1.8. թողարկողի կողմից հետ գնված (ծեռք բերված) արժեթղթերի քանակը.
- 118.1.9. կորպորատիվ գործողությունների, այդ թվում՝ այն բանաձևերի (գործակիցների) մասին, որոնց համապատասխան իրականացվում են կորպորատիվ գործողությունները.
- 118.1.10. թողարկողի վերականգնակերպումների հետ կապված գործառնությունների մասին.
- 118.1.11. արժեթղթերի և արժեթղթերի հավաստագրերի չեղյալ համարման գործառնությունների մասին.
- 118.1.12. արժեթղթերով հավաստված իրավունքների (արտոնությունների) մասին.
- 118.1.13. արժեթղթերի ձեռքբերման և փոխանցման սահմանափակումների մասին:

**Գ Լ ՈՒ Խ 119**

**ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎՎԵՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-5.)**

- 119.1. Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի սեփականատիրոջ (անվանատիրոջ) համար սույն կանոնագրի 130-րդ գլխով սահմանված կարգով բացում է անձնական հաշիվ: Արժեթղթերի յուրաքանչյուր սեփականատիրոջ համար բացվում է միայն մեկ անձնական հաշիվ: Եթե նույն անձը միաժամանակ արժեթղթերի գրանցված սեփականատեր և գրանցված անվանատեր է, ապա այդ անձի համար բացվում է երկու անձնական հաշիվ. մեկը՝ սեփականատիրոջ, մյուսը՝ անվանատիրոջ:
- 119.2. Յուրաքանչյուր անձնական հաշվին տրվում է անհատական տարբերակիչ համար:
- 119.3. Անձնական հաշիվը ներառում է հետևյալ տեղեկությունները.
  - 119.3.1. անձնական հաշվի համարը.
  - 119.3.2. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) քարտում ներառված տեղեկությունները.
  - 119.3.3. լիազորված ներկայացուցչի քարտում ներառված տեղեկությունները՝ լիազորված ներկայացուցչի առկայության դեպքում.
  - 119.3.4. անձնական հաշվում հաշվառված արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար.
    - ա) թողարկողի անվանումը և արժեթղթերի դասը.
    - բ) արժեթղթերի գրանցման համարը և տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում).
    - գ) տվյալ դասի մեկ արժեթղթի անվանական արժեքը (առկայության դեպքում).
    - դ) արժեթղթերի քանակը.
    - ե) արգելադրված արժեթղթերի քանակը (առկայության դեպքում).
    - զ) արժեթղթերի հավաստագրերով հավաստված արժեթղթերի քանակը (առկայության դեպքում).
  - 119.3.5. տվյալ անձնական հաշվին առնչվող բոլոր այն գործառնությունների մասին, որոնք ներառված են գործառնությունների գրանցամատյանում.
  - 119.3.6. գրանցված սեփականատիրոջը (անվանատիրոջը) տրամադրված արժեթղթերի հավաստագրերի մասին:

**Գ Լ ՈՒ Խ 120**

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱՆ (ԿԱՆՈՆ 112.1բ-6.)**

- 120.1. Կենտրոնական դեպոզիտարիան պետք է ունենա ռեեստրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու և ռեեստրից տեղեկություններ տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերի հաշվառման և պահպանման համակարգ:
- 120.2. Ռեեստրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու և ռեեստրից տեղեկություններ տրամադրելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը հաշվառվում են «Փաստաթղթերի հաշվառման մատյանում», որը ներառում է հետևյալ տեղեկությունները.
  - 120.2.1. ուղարկողի կարգավիճակի մասին նշումներ (գրանցված սեփականատեր, անվանատեր, լիազորված ներկայացուցիչ, թողարկող և այլն).
  - 120.2.2. ուղարկողի կողմից փաստաթղթին տրված հերթական համարը (առկայության դեպքում).
  - 120.2.3. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից փաստաթղթին տրված մուտքագրման տարբերակիչ համարը.
  - 120.2.4. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից փաստաթղթի ստացման ամսաթիվը.
  - 120.2.5. ուղարկողի անունը (անվանումը) և փոստային հասցեն (առկայության դեպքում).
  - 120.2.6. թողարկողի անվանումը, գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անունը, ազգանունը (անվանումը), անձնական հաշվի համարը.
  - 120.2.7. նշում փաստաթղթի տեսակի մասին (հանձնարարագիր կամ հարցում).
  - 120.2.8. գործառնությունների կատարման, դրանց կատարումը մերժելու կամ հարցման պատասխանի ուղարկման ամսաթիվը.
  - 120.2.9. հարցման պատասխանի ելքի տարբերակիչ համարը.
  - 120.2.10. հարցման պատասխանը ստորագրող անձի անունը և ազգանունը.
  - 120.2.11. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:
- 120.3. Փաստաթղթերը պետք է պահպանվեն յուրաքանչյուր անձնական հաշվի համար առանձին՝ ըստ թողարկողի արժեթղթերի առանձին դասերի:

**Գ Լ ՈՒ Խ 121**

**ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ (ԿԱՆՈՆ 112.1բ-7.)**

- 121.1. Գործառնությունների գրանցամատյանը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից անձնական հաշիվների բացման և անձնական հաշվի տեղեկությունների փոփոխության գործառնությունների (բացառությամբ՝ արժեթղթերի հավաստագրերով կատարվող գործառնությունների, որոնց մասին գրառումները կատարվում են արժեթղթերի հավաստագրերի հաշվառման մատյանում) մասին ժամանակագրական կարգով կատարվող գրառումների ամբողջություն է:
- 121.2. Գործառնությունների գրանցամատյանը ներառում է հետևյալ տեղեկությունները.
  - 121.2.1. գործառնության տարբերակիչ համարը.
  - 121.2.2. գործառնության հետ կապված փաստաթղթերի մուտքագրման տարբերակիչ համարը.
  - 121.2.3. գործառնության կատարման ամսաթիվը.
  - 121.2.4. գործառնության տեսակը՝ նշելով դրանում արժեթղթերի հավաստագրերի մասնակցությունը (հավաստագրերի առկայության դեպքում).

121.2.5. այն գրանցված սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվների համարները, որոնց վրա տարածվում է գործառնությունը.

121.2.6. այն արժեթղթերի քանակը, թողարկողի անվանումը, դասը և տարբերակիչ ծածկագիրը (տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում), որոնց վրա տարածվում է գործառնությունը.

121.2.7. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

#### **Գ Լ ՈՒ Խ 122**

##### ***ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՏՅԱԼ (ԿԱՆՈՆ 112.1բ-8.)***

122.1. Արժեթղթերի հավաստագրերի հաշվառման մատյանը ներառում է հետևյալ տեղեկությունները.

122.1.1. արժեթղթերի հավաստագրի մասին.

ա) արժեթղթերի հավաստագրով հավաստված արժեթղթերի թողարկողի անվանումը, դասը և տարբերակիչ ծածկագիրը (տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում).

բ) արժեթղթերի հավաստագրի սերիան և համարը.

122.1.2. արժեթղթի հավաստագրի տրման դեպքում, ի լրումն սույն կանոնագրի 122.1 կետում նշված տեղեկությունների՝

ա) տրման ամսաթիվը.

բ) այն գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշվի համարը, որին տրված է արժեթղթի հավաստագիրը.

գ) արժեթղթի հավաստագրով հավաստված արժեթղթերի քանակը.

դ) համապատասխան գործառնության տարբերակիչ համարը.

122.1.3. արժեթղթի հավաստագիրը չեղյալ համարելու դեպքում, ի լրումն սույն կանոնագրի 122.1 և/կամ 122.2 կետում նշված տեղեկությունների.

ա) չեղյալ համարելու ամսաթիվը.

բ) չեղյալ համարելու հիմքերը (օտարում, հետզնում, օգտագործման համար ոչ պիտանի դառնալը և այլն).

գ) համապատասխան գործառնության տարբերակիչ համարը.

122.1.4. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

#### **Գ Լ ՈՒ Խ 123**

##### ***ԳՐԱՆՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ (ԱՆՎԱՆԱՏԻՐՈՋ) ԶԱՐԿԵՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-9.)***

123.1. Գրանցված սեփականատերերը (անվանատերերը) և նրանց լիազորված ներկայացուցիչները լրացնում են սույն գլխի համապատասխանաբար սույն կանոնագրի 123.2, 123.3, 123.4 և 123.5 կետերով սահմանված տեղեկությունները ներառող քարտերը, որոնց ձևերը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով:

123.2. Ֆիզիկական անձ հանդիսացող գրանցված սեփականատիրոջ քարտը պետք է ներառի տվյալ անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

123.2.1. անունը, ազգանունը, հայրանունը, եթե վերջինս օգտագործվում է.

123.2.2. ծննդյան ամսաթիվը՝ թվերով.

123.2.3. քաղաքացիությունը.

123.2.4. անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը.

123.2.5. բնակության վայրը (մշտական և բնակության՝ տվյալ պահին).

123.2.6. կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

123.2.7. բանկային հաշվի համարը և սպասարկող բանկի վավերապայմանները (առկայության դեպքում).

123.2.8. նշում լիազորված ներկայացուցչի առկայության մասին (առկայության դեպքում կցվում է լիազորված ներկայացուցչի լրացված քարտը).

123.2.9. գրանցված սեփականատիրոջ ստորագրության նմուշը.

123.2.10. նշում գրանցված սեփականատիրոջ ստորագրությունը վավերացնողի մասին, բացառությամբ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ստորագրության վավերացման դեպքի.

123.2.11. քարտի լրացման ամսաթիվը.

123.2.12. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

123.3. Ֆիզիկական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի քարտը պետք է ներառի տվյալ անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

123.3.1. անունը, ազգանունը, հայրանունը, եթե վերջինս օգտագործվում է.

123.3.2. ծննդյան ամսաթիվը՝ թվերով, քաղաքացիությունը՝ երկրի անվանմամբ.

123.3.3. անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը.

123.3.4. բնակության վայրը (մշտական և բնակության՝ տվյալ պահին).

123.3.5. կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

123.3.6. այն գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անունը, ազգանունը (անվանումը) և անձնական հաշվի համարը, որի անունից գործում է լիազորված ներկայացուցիչը.

123.3.7. լիազորությունների շրջանակը և ժամկետը (բացառությամբ՝ սույն կանոնագրի 123.3.9 կետում նշված դեպքի).

123.3.8. զբաղեցրած պաշտոնը (եթե տվյալ անձը իրավաբանական անձի լիազորված ներկայացուցիչն է դրա հիմնադիր փաստաթղթերի համաձայն և իրավունք ունի գործել տվյալ իրավաբանական անձի անունից առանց լիազորագրի).

123.3.9. լիազորված ներկայացուցչի ստորագրության նմուշը.

123.3.10. վավերացում՝ գրանցված սեփականատիրոջ ստորագրությամբ կամ իրավաբանական անձ հանդիսացող գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ և իրավաբանական անձի կնիքով.

123.3.11. քարտի լրացման ամսաթիվը.

123.3.12. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

123.4. Իրավաբանական անձ հանդիսացող գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) քարտը պետք է ներառի տվյալ անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

123.4.1. անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).

123.4.2. նշում կարգավիճակի մասին (սեփականատեր, անվանատեր).

123.4.3. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես՝ հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).

123.4.4. պետական գրանցում շնորհիվ երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը.

123.4.5. մասնագիտացված գործունեության լիցենզիայի համարը և տրման ամսաթիվը (անվանատիրոջ համար).

123.4.6. այն անձանց անունը, ազգանունը, պաշտոնը, անձնագրի սերիան և համարը, որոնց գրանցված սեփականատերը (անվանատերը) լիազորում է հանդես գալու իր անունից.

- 123.4.7. բանկային հաշվի համարը և սպասարկող բանկի վավերապայմանները.
- 123.4.8. վավերացում՝ իրավաբանական անձի լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ և իրավաբանական անձի կնիքով.
- 123.4.9. քարտի լրացման ամսաթիվը.
- 123.4.10. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:
- 123.5. Իրավաբանական անձ հանդիսացող լիազորված ներկայացուցչի քարտը պետք է ներառի տվյալ անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.
- 123.5.1. անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).
- 123.5.2. գտնվելու վայրը, փոստային հասցեն, կապի միջոցները (մասնավորապես, հեռախոս, ֆաքս, էլեկտրոնային փոստ և այլն).
- 123.5.3. պետական գրանցում շնորհիվ երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը.
- 123.5.4. մասնագիտացված գործունեության լիցենզիայի համարը և տրման ամսաթիվը (առկայության դեպքում).
- 123.5.5. այն գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անունը, ազգանունը (անվանումը) և անձնական հաշվի համարը, որի անունից գործում է լիազորված ներկայացուցիչը.
- 123.5.6. լիազորությունների շրջանակը և ժամկետը.
- 123.5.7. մեկ կամ մի քանի անձանց անունը, ազգանունը, անձնագրի սերիան և համարը, պաշտոնը, որոնք լիազորված են գործելու տվյալ իրավաբանական անձի անունից.
- 123.5.8. տվյալ իրավաբանական անձի լիազորված ներկայացուցչի ստորագրության և իրավաբանական անձի կնիքի դրոշմի նմուշը.
- 123.5.9. վավերացում՝ գրանցված սեփականատիրոջ ստորագրությամբ կամ իրավաբանական անձ հանդիսացող գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ և իրավաբանական անձի կնիքով.
- 123.5.10. քարտի լրացման ամսաթիվը.
- 123.5.11. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:
- 123.6. Եթե արժեթղթերի սեփականատեր է Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքները, ապա նրանց անունից հանդես եկող սեփականատիրոջ (անվանատիրոջ) և նրա լիազորված ներկայացուցչի քարտերի բոլոր անհրաժեշտ տվյալները լրացված են, և քարտերը ստորագրված են, համապատասխանաբար, գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից:
- 123.8. Եթե արժեթուղթը սեփականության իրավունքով պատկանում է երկու կամ ավելի անձանց, ապա նրանց ազգանունները և անունները (անվանումները), ինչպես նաև այդ անձանց ինքնությունը հաստատող այլ տեղեկությունները, ներառյալ նրանց ստորագրությունների նմուշները, ներառվում են քարտի մեջ՝ որպես հավելված, ինչպես նաև քարտի մեջ նշվում է նրանց ընդհանուր լիազորված ներկայացուցիչը, որը կարող է լինել համասեփականատերերից մեկը կամ այլ անձ:

## Գ Լ ՈՒ Խ 124

### **ՌԵՆՏՐԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱՂՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-10)**

- 124.1. Ռենտորից տեղեկություններ ստանալու իրավունք ունեն.
- 124.1.1. թողարկողը.
- 124.1.2. գրանցված սեփականատերը (անվանատերը) և նրա լիազորված ներկայացուցիչը.
- 124.1.3. Նոտարները՝ սույն կանոնագրքի 124.11 կետով սահմանված կարգով,
- 124.1.4. Կենտրոնական բանկը և պետական մարմինները՝ սույն կանոնագրքի 124.6 կետով սահմանված կարգով.
- 124.1.5. օրենքով և Կենտրոնական բանկի որոշմամբ նախատեսված այլ անձինք:
- 124.1.1 Նոտարը օրենքով նախատեսված դեպքերում ռենտորից տեղեկություններ է ստանում իր իրավասության շրջանակներում տրված հարցմանը համապատասխան ծավալով:
- 124.2. Թողարկողն իրավունք ունի սույն բաժնի կանոններին համապատասխան տեղեկություններ ստանալ ռենտորից իր իրավասության շրջանակներում տրված հարցմանը համապատասխան ծավալով:
- 124.3. Գրանցված սեփականատերը (անվանատերը) և նրա լիազորված ներկայացուցիչն իր իրավասության շրջանակներում տրված հարցմանը համապատասխան իրավունք ունի ռենտորից ստանալ.
- 124.3.1. իր անձնական հաշվում հաշվառված արժեթղթերի մասին տեղեկություններ, ինչպես նաև համապատասխան քաղվածքներ.
- 124.3.2. իր անձնական հաշվում (հաշիվներում) կատարված բոլոր գրառումների մասին տեղեկություններ, ինչպես նաև իր անձնական հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ համապատասխան տեղեկանքներ.
- 124.3.3. արժեթղթերի դասի և թողարկողի մասին տեղեկություններ.
- 124.3.4. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ նաև այլ տեղեկություններ:
- 124.4. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է անհապաղ և պատշաճ մակարդակով ուսումնասիրել սույն կանոնագրքի 124.11 և 124.2 կետով սահմանված հարցումները և 3 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել դրանց:
- 124.5. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է անհապաղ և պատշաճ մակարդակով ուսումնասիրել սույն կանոնագրքի 124.3 կետով սահմանված հարցումները և 1 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել դրանց:
- 124.6. Կենտրոնական բանկը և պետական մարմինները ռենտորից տեղեկություններ կարող են ստանալ միայն իրենց իրավասության շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կենտրոնական դեպոզիտարիան տեղեկությունները տրամադրում է պատվիրված նամակով (կամ համապատասխան պետական մարմնի լիազորված ներկայացուցչին՝ առձեռն) միայն համապատասխան մարմնի կողմից պատշաճ կերպով ներկայացված գրավոր հարցումը ստանալու դեպքում: Հարցման մեջ պետք է նշված լինեն պահանջվող տեղեկությունների ցանկը, ինչպես նաև դրանք ստանալու իրավական հիմքերը: Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է համապատասխան մարմիններին ռենտորից տեղեկություններ տրամադրել սույն կետի պահանջներին համապատասխանող գրավոր հարցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի կողմից բանձին ղեկավարի համար այլ ժամկետ սահմանված չէ: Սույն կետի պահանջները չեն տարածվում Կենտրոնական բանկին օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով հաշվետվությունների և այլ փաստաթղթերի ներկայացման, ինչպես նաև սույն կանոնագրքի 124.7 կետով նախատեսված դեպքի վրա:
- 124.7. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով կարող է սահմանվել սույն կանոնագրքի 125.6 կետում նշված փաստաթղթերի ներկայացման և տրամադրման էլեկտրոնային կարգ և ձև, որն ըստ Կենտրոնական բանկի՝

կապահովի այդ փաստաթղթերի ներկայացման և տրամադրման հուսալիությունը:

**Գ Լ ՈՒ Խ 125**

***ՌԵԵՍՏՐԻ ԿՈՐՈՒՄՍ (ԿԱՆՈՆ 112.1բ-11.)***

125.1. Ռեեստրի ամբողջական կամ մասնակի կորստի և այն անհապաղ վերականգնելու անհնարինության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան, առանց ընդհատելու իր գործունեությունը, պարտավոր է.

125.1.1. այդ մասին գրավոր տեղեկացնել թողարկողին և Կենտրոնական բանկին 1 աշխատանքային օրվա ընթացքում.

125.1.2. պարզել գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և այլ անձանց մոտ իրենց վերաբերյալ գրառումները ռեեստրում վերականգնելու համար բավարար հիմք հանդիսացող օրինական փաստաթղթերի առկայությունը և անհապաղ, բայց ոչ ուշ, քան կորստի պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում, վերականգնել կորած տեղեկությունները.

125.1.3. չդադարեցնել ռեեստրում գրառումների կատարման աշխատանքները:

**Գ Լ ՈՒ Խ 126**

***ՌԵԵՍՏՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-12.)***

126.1. Կենտրոնական դեպոզիտարիան ռեեստրում իրականացնում է գործառնությունների հետևյալ տեսակները.

126.1.1. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) և սույն բաժնի կանոններով սահմանված այլ անձանց

հանձնարարագրերով իրականացվող ընթացիկ գործառնություններ, այդ թվում

- ա) անձնական հաշվի բացում.
- բ) անձնական հաշվի տեղեկությունների փոփոխություն.
- գ) արժեթղթերի փոխանցում.
- դ) արժեթղթերի արգելադրում.
- ե) արժեթղթերի արգելադրման դադարեցում.
- զ) արժեթղթերի հավաստագրերով կատարվող գործառնություններ (փաստաթղթային արժեթղթերի դեպքում).
- է) ռեեստրից քաղվածքների և գործառնությունների մասին տեղեկանքների տրամադրում.

126.1.2. թողարկողի հանձնարարագրով իրականացվող պարբերական գործառնություններ, այդ թվում.

- ա) արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնություններ.
- բ) թողարկողի կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնություններ.
- գ) արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակի տրամադրում:

**Գ Լ ՈՒ Խ 127**

***ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-13.)***

127.1. Անձնական հաշվի բացումը պետք է իրականացվի մինչև այդ հաշվին արժեթղթերի հաշվեգրումը:

127.2. Կենտրոնական դեպոզիտարիան փոխանցման հանձնարարագիրը չի ընդունում առանց անձնական հաշվի բացման համար սույն գլխով սահմանված փաստաթղթերի ներկայացման, եթե արժեթղթեր ձեռք բերող անձի համար նախկինում անձնական հաշիվ բացված չի եղել:

127.3. Ֆիզիկական անձի անձնական հաշվի բացման համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը՝ բացառությամբ սույն կանոնագրի 127.3.4 կետում նշվածի.

127.3.1. անձնական հաշվի բացման հանձնարարագիրը, որը ներառում է սույն կանոնագրի 127.4 կետով սահմանված տեղեկությունները.

127.3.2. գրանցված սեփականատիրոջ լրացված քարտը.

127.3.3. գրանցված սեփականատիրոջ լիազորված ներկայացուցչի լրացված քարտը (լիազորված ներկայացուցչի առկայության դեպքում).

127.3.4. տվյալ ֆիզիկական անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը (ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիա), եթե անձնական հաշվի բացման հանձնարարագրի ստորագրությունը վավերացնում է Կենտրոնական դեպոզիտարիան:

127.4. Ֆիզիկական անձի անձնական հաշվի բացման համար Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացվող անձնական հաշվի բացման հանձնարարագրի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի տվյալ անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

- 127.4.1. անունը, ազգանունը, հայրանունը, եթե վերջինս օգտագործվում է.
- 127.4.2. անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը.
- 127.4.3. նշում հանձնարարագրին կից ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ.
- 127.4.4. վավերացում՝ տվյալ անձի կամ նրա լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ.

127.4.5. նշում ստորագրությունը վավերացնողի մասին, բացառությամբ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ստորագրության վավերացման դեպքի.

127.4.6. հանձնարարագրի ստորագրման ամսաթիվը.

127.4.7. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

127.5. Գրանցված սեփականատիրոջ և նրա լիազորված ներկայացուցչի քարտերում ֆիզիկական անձանց ստորագրությունները վավերացվում են սույն կանոնագրի 133-րդ գլխով սահմանված կարգով:

127.6. Իրավաբանական անձի անձնական հաշվի բացման համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը.

127.6.1. անձնական հաշվի բացման հանձնարարագիրը, որը ներառում է սույն կանոնագրի 127.7 կետով սահմանված տեղեկությունները.

127.6.2. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) լրացված քարտը.

127.6.3. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) լիազորված ներկայացուցչի լրացված քարտը.

127.6.4. պետական գրանցման վկայականի պատճենը.

127.6.5. արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը (անվանատիրոջ համար).

127.6.6. առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթուղթ:

127.7. Իրավաբանական անձի անձնական հաշվի բացման համար Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացվող անձնական հաշվի բացման հանձնարարագրի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի տվյալ անձի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

127.7.1. անվանումը, ֆիրմային անվանումը (եթե հիմնադիր փաստաթղթի մեջ տրված են հայերենից բացի այլ լեզուներով ֆիրմային անվանումներ, ապա նաև դրանք).

127.7.2. պետական գրանցում շնորհած երկիրը, պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը.

127.7.3. կշում հանձնարարագրին կից ներկայացվող փաստաթղթերի վերաբերյալ.

127.7.4. վավերացում՝ իրավաբանական անձի լիազորված ներկայացուցչի ստորագրությամբ և իրավաբանական անձի կնիքով.

127.7.5. հանձնարարագրի ստորագրման ամսաթիվը.

127.7.6. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

127.8. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան պարզում է, որ գրանցված սեփականատերերի (անվանատերերի) հաշիվների վրա հաշվառված արժեթղթերի քանակն ավելի քիչ է, քան թողարկողի տվյալ դասի թողարկված և տեղաբաշխված արժեթղթերի ընդհանուր քանակը, ապա Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է բացել «պատկանելությունը չպարզված արժեթղթեր» հաշիվը: Այդ հաշվից արժեթղթերի դուրսգրումն իրականացվում է տվյալ արժեթղթերի նկատմամբ իրավունքները հավաստող փաստաթղթերի հիման վրա:

127.9. Այն դեպքում, երբ անհնար է միանշանակ նույնացնել գրանցված սեփականատիրոջը (անվանատիրոջը), նրա անձնական հաշվին շնորհվում է «ինքնուրույնը չպարզված անձի արժեթղթեր» կարգավիճակը: Նման կարգավիճակի տրման հիմք են.

127.9.1. Ֆիզիկական անձանց անձնական հաշիվների համար՝ ռեեստրում գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձը հաստատող փաստաթղթի մասին տեղեկությունների բացակայությունը կամ անլիարժեքությունը (Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարված սխալների բացակայության դեպքում).

127.9.2. իրավաբանական անձանց անձնական հաշիվների համար՝ իրավաբանական անձի անվանման, պետական գրանցման համարի, ամսաթվի կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի մասին տեղեկությունների բացակայությունը կամ անլիարժեքությունը (Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կատարված սխալների բացակայության դեպքում):

127.10. «Թողարկողի թողարկման հաշիվը» բացվում է թողարկողի լիազորված ներկայացուցչի հանձնարարագրի հիման վրա՝ թողարկվող (դեռևս չտեղաբաշխված) արժեթղթերի համար:

127.11. «Թողարկողի անձնական հաշիվը» բացվում է թողարկողի լիազորված ներկայացուցչի հանձնարարագրի հիման վրա՝ թողարկողի կողմից հետ գնված (ծեռք բերված) արժեթղթերը հաշվեգրելու համար:

#### **Գ Լ ՈՒ Խ 128**

##### ***ԱՆՆԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ (ԿԱՆՈՆ 112.1բ-14.)***

128.1. Գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշվի տեղեկությունների փոփոխությունների մասին գրառումները ռեեստրում կատարվում են օրենքի, այլ իրավական ակտերի և սույն բաժնի կանոնների պահանջներին համապատասխան:

128.2. Թողարկողի և արժեթղթերի դասի մասին ռեեստրում առկա տեղեկությունների փոփոխությունների դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան թողարկողի հանձնարարագրով 1 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան գրառումներ է կատարում տվյալ թողարկողի արժեթղթերի բոլոր գրանցված սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներում:

128.3. Կենտրոնական դեպոզիտարիան գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) և/կամ նրա լիազորված ներկայացուցչի քարտերում ներառված տեղեկությունների փոփոխությունների մասին ռեեստրում համապատասխան գրառումներ է կատարում գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից սույն կանոնագրի 128.4 կետին համապատասխան տրված հանձնարարագիրը և նրանց լրացված քարտերը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

128.4. Անձնական հաշվի տեղեկությունների փոփոխության հանձնարարագրի ձևերը սահմանվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառեն համապատասխանաբար սույն կանոնագրի 128.4 և 128.7 կետերով սահմանված տեղեկությունները:

128.5. Եթե անձնական հաշիվն ունի «ինքնուրույնը չպարզված անձի արժեթղթեր» կարգավիճակը, ապա այդ հաշվով արգելվում են բոլոր գործառնությունները, բացառությամբ.

128.5.1. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) և նրա լիազորված ներկայացուցչի՝ սույն կանոնագրի 123-րդ գլխին համապատասխան լրացված քարտերի տեղեկությունները ռեեստր մուտքագրելու գործառնության: Այդ դեպքում նշված կարգավիճակը չեղյալ է համարվում, և այդ հաշվով կարող են իրականացվել այլ օրինական գործառնություններ:

128.5.2. թողարկողի և արժեթղթերի դասի մասին տեղեկությունների փոփոխությունների մասին գրառումներ կատարելու գործառնության.

128.5.3. կորպորատիվ գործողությունների մասին գրառումներ կատարելու գործառնության:

128.6. Գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի անվան (անվանման) մասին տեղեկությունների կամ նրա անձը հաստատող փաստաթղթի (գրանցման վկայականի) փոփոխման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիա են փոխանցվում այդ փոփոխությունը հավաստող փաստաթղթերի պատճենները:

128.6.7. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է պահպանել անձնական հաշվի փոփոխված տեղեկությունները և ապահովել գրանցված սեփականատիրոջ ինքնության հաստատման (նույնացման) հնարավորությունն ինչպես փոփոխված (նոր), այնպես էլ նախկին տեղեկություններով:

#### **Գ Լ ՈՒ Խ 129**

##### ***ԱՐՇԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-15.)***

129.1. Մեկ անձնական հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցումն իրականացվում է ռեեստրում գրառումներ կատարելու միջոցով՝ սույն կանոնագրի 130, 131, 132, 133, 134, 135 և 136 գլուխներին համապատասխան, բացառությամբ սույն կանոնագրի 129.2 կետով նախատեսված դեպքի:

129.2. Ֆոնդային բորսայում կնքված գործարքների արդյունքում մեկ անձնական հաշվից մյուսին արժեթղթերի փոխանցումն իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին համապատասխան:

#### **Գ Լ ՈՒ Խ 130**

##### ***ԱՐՇԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՄԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-16.)***

130.1. Գործարքի արդյունքում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ ռեեստրում գրառումներ կատարելու համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնագրի 130.12 կետում նշվածի.

130.1.1. փոխանցման հանձնարարագիրը՝ լրացված սույն կանոնագրի 131-րդ գլխին համապատասխան.

130.1.2. փոխանցման հանձնարարագիրը ներկայացնող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը (ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիա).

130.1.3. եթե փոխանցման հանձնարարագիրն ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա այդ ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ նոտարի կողմից վավերացված պատճենը: Սույն կետի պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ միաժամանակ բավարարվում են հետևյալ

պահանջները.

ա) հանձնարարագրի տրման պահին գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշվում առկա են գրառումներ այդ ներկայացուցչի մասին.

բ) Կենտրոնական դեպոզիտարիան հավաստիանում է, որ տվյալ լիազորված ներկայացուցչի լիազորությունները չեն դադարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

130.1.4. եթե արժեթղթերը փոխանցվում են մինչև տասնչորս տարեկան անչափահասին, ապա նրա ծնողների, որդեգրողների կամ խնամակալի գրավոր համաձայնությունը (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ մինչև տասնչորս տարեկան անչափահասին արժեթղթերը փոխանցվում են անհատույց գործարքի արդյունքում), որը վավերացվում է սույն կանոնագրի 133-րդ գլխով սահմանված կարգով.

130.1.5. եթե արժեթղթերը փոխանցվում են տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասին, ապա նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը (բացառությամբ այն դեպքերի, երբ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասին արժեթղթերը փոխանցվում են անհատույց գործարքի կամ նրա ստացած աշխատավարձի, կրթաթոշակի և այլ եկամուտների տնօրինման արդյունքում), որը վավերացվում է սույն կանոնագրի 133-րդ գլխով սահմանված կարգով.

130.1.6. եթե արժեթղթերը փոխանցող գրանցված սեփականատերը մինչև տասնչորս տարեկան անչափահաս է, ապա նրա ծնողների, որդեգրողների կամ խնամակալի գրավոր համաձայնությունը, որը վավերացվում է սույն կանոնագրի 133-րդ գլխով սահմանված կարգով.

130.1.7. եթե արժեթղթերը փոխանցող գրանցված սեփականատերը տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս է, ապա նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ փոխանցվում են անհատույց գործարքի, ստացած աշխատավարձի, կրթաթոշակի և այլ եկամուտների տնօրինման արդյունքում տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի կողմից ձեռքբերված արժեթղթերը), որը վավերացվում է սույն կանոնագրի 133-րդ գլխով սահմանված կարգով.

130.1.8. եթե արժեթղթերը փոխանցող գրանցված սեփականատերը դատարանի կողմից ճանաչվել է սահմանափակ գործունակ, ապա նրա հոգաբարձուի գրավոր համաձայնությունը, որը վավերացվում է սույն կանոնագրի 133-րդ գլխով սահմանված կարգով.

130.1.9. եթե արժեթղթերը փոխանցվում են նվիրատվության պայմանագրի հիման վրա և փոխանցման հանձնարարագիրը ստորագրված է նվիրառուի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից, ապա՝ նվիրատվության պայմանագիրը.

130.1.10. փաստաթղթային արժեթղթերի փոխանցման դեպքում՝ նախկին սեփականատիրոջը պատկանող՝ փոխանցվող արժեթղթերի հավաստագրերը (հավաստագրերի առկայության դեպքում).

130.1.11. անձնական հաշվի բացման համար անհրաժեշտ՝ սույն կանոնագրի 128-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե արժեթղթերը ձեռք բերող անձի համար նախկինում անձնական հաշիվ բացված չի եղել:

130.2. Ժառանգության արդյունքում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ ռեեստրում գրառումներ կատարելու համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնագրի 130.22 կետում նշվածի.

130.2.1. փոխանցման հանձնարարագիրը՝ լրացված սույն կանոնագրի 131-րդ գլխին համապատասխան.

130.2.2. փոխանցման հանձնարարագիրը ներկայացնող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը (ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիա).

130.2.3. եթե փոխանցման հանձնարարագիրն ստորագրված է ժառանգի լիազորված ներկայացուցչի կողմից՝ նրա այդ իրավունքը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ նոտարի կողմից վավերացված պատճենը: Սույն կետի պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ միաժամանակ բավարարվում են հետևյալ պահանջները.

ա) հանձնարարագրի տրման պահին ժառանգի անձնական հաշվում առկա են գրառումներ այդ ներկայացուցչի մասին.

բ) Կենտրոնական դեպոզիտարիան հավաստիանում է, որ տվյալ լիազորված ներկայացուցչի լիազորությունները չեն դադարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

130.2.4. ժառանգության իրավունքի վկայագիրը.

130.2.5. փաստաթղթային արժեթղթերի փոխանցման դեպքում՝ նախկին սեփականատիրոջը պատկանող՝ փոխանցվող արժեթղթերի հավաստագիրը (հավաստագրեր): Արժեթղթերի հավաստագիրը օբյեկտիվ պատճառներով Կենտրոնական դեպոզիտարիա փոխանցելու անհնարինության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան ռեեստրում համապատասխան գրառումներ է կատարում՝ արժեթղթերի փոխանցման համար այդ հավաստագրի հետագա ներկայացման հնարավորությունը բացառելու համար.

130.2.6. անձնական հաշվի բացման համար անհրաժեշտ՝ սույն կանոնագրի 128-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե ժառանգի համար նախկինում անձնական հաշիվ բացված չի եղել:

130.3. Գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) վերակազմակերպման դեպքում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ ռեեստրում գրառումներ կատարելու համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնագրի 130.3.2 կետում նշվածի.

130.3.1. փոխանցման հանձնարարագիրը՝ լրացված սույն կանոնագրի 131-րդ գլխին համապատասխան.

130.3.2. փոխանցման հանձնարարագիրը ներկայացնող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը (ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիա).

130.3.3. փոխանցման հանձնարարագիրն ստորագրող լիազորված ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ նոտարի կողմից վավերացված պատճենը: Սույն կետի պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ միաժամանակ բավարարվում են հետևյալ պահանջները.

ա) հանձնարարագրի տրման պահին գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշվում առկա են գրառումներ այդ ներկայացուցչի մասին.

բ) Կենտրոնական դեպոզիտարիան հավաստիանում է, որ տվյալ լիազորված ներկայացուցչի լիազորությունները չեն դադարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

130.3.4. քաղվածք փոխանցման ակտից կամ բաժանիչ հաշվեկշից՝ արժեթղթերի փոխանցման վերաբերյալ: Փոխանցման ակտից և բաժանիչ հաշվեկշիցի քաղվածքը պետք է ստորագրվի իրավաբանական անձի (անձանց) գործադիր տնօրենի (գործադիր մարմնի ղեկավարի) և գլխավոր հաշվապահի կողմից.

130.3.5. փաստաթղթային արժեթղթերի փոխանցման դեպքում՝ նախկին սեփականատիրոջը պատկանող՝ փոխանցվող արժեթղթերի հավաստագրերը (հավաստագրերի առկայության դեպքում).

130.3.6. իրավաբանական անձի անձնական հաշվի բացման համար անհրաժեշտ՝ սույն կանոնագրի 128-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե տվյալ իրավաբանական անձի համար նախկինում անձնական հաշիվ բացված չի եղել:

130.4. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի հիման վրա արժեթղթերի փոխանցման վերաբերյալ ռեեստրում գրառումներ կատարելու համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը.

130.4.1. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ վճռի պատճենը, ինչպես նաև դրա հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարողի կողմից կայացված համապատասխան որոշման պատճենը (նման որոշման առկայության դեպքում).

130.4.2. փաստաթղթային արժեթղթերի փոխանցման դեպքում՝ նախկին սեփականատիրոջը պատկանող արժեթղթերի հավաստագիրը (հավաստագրեր): Արժեթղթերի հավաստագիրը օբյեկտիվ պատճառներով Կենտրոնական դեպոզիտարիա փոխանցելու անհնարինության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան ռեեստրում համապատասխան գրառումներ է կատարում՝ արժեթղթերի փոխանցման համար այդ հավաստագրի հետագա

ներկայացման հնարավորությունը բացառելու համար.

130.4.3. անձնական հաշվի բացման համար անհրաժեշտ՝ սույն կանոնագրի 128-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե արժեթղթերը ստացող անձի համար նախկինում անձնական հաշիվ բացված չի եղել:

130.5. Մասնավորեցման դեպքում արժեթղթերի փոխանցման վերաբերյալ ռեեստրում գրառումներ կատարելու համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը.

130.5.1. պետական սեփականություն հանդիսացող արժեթղթերի առուվաճառքի պայմանագիրը կամ արժեթղթերի օտարումը հավաստող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ փաստաթուղթ.

130.5.2. այն անձանց ցուցակը, որոնք ձեռք են բերել արժեթղթերը մասնավորեցման արդյունքում՝ նշելով արժեթղթերի, դասը, քանակը և այն տեղեկությունները, որոնք թույլ են տալիս միանշանակ նույնացնել արժեթղթերը ձեռքբերող անձանց՝ հաստատված պետական լիազորված մարմնի կողմից.

130.5.3. փաստաթղթային արժեթղթերի փոխանցման դեպքում՝ նախկին սեփականատիրոջը պատկանող արժեթղթերի հավաստագիրը (հավաստագրերը): Արժեթղթերի հավաստագիրը օբյեկտիվ պատճառներով Կենտրոնական դեպոզիտարիա փոխանցելու անհնարինության դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան ռեեստրում համապատասխան գրառումներ է կատարում՝ արժեթղթերի փոխանցման համար այդ հավաստագրի հետագա ներկայացման հնարավորությունը բացառելու համար.

130.5.4. անձնական հաշվի բացման համար անհրաժեշտ՝ սույն կանոնագրի 128-րդ գլխով սահմանված փաստաթղթերը, եթե արժեթղթերը ձեռքբերող անձի համար նախկինում անձնական հաշիվ բացված չի եղել: Անձնական հաշիվներ կարող են բացվել նաև առանց նշված փաստաթղթերի ներկայացման, որի դեպքում նոր բացված հաշիվներին տրվում է «ինքնուրույնը չպարզված անձի արժեթղթեր» կարգավիճակը՝ մինչև նշված փաստաթղթերի փոխանցումը Կենտրոնական դեպոզիտարիային:

130.6. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով կարող է սահմանվել սույն կանոնագրի 130.1.-130.5 կետերում նշված փաստաթղթերի էլեկտրոնային ձևով փոխանցման կարգ, որն ըստ Կենտրոնական բանկի՝ բավարար երաշխիքներ կապահովի համակարգի գործունեության անընդհատության և հուսալիության համար:

130.7. Սույն կանոնագրի 130.1.2, 130.2.2 և 130.3.2 կետերով սահմանված պահանջները չեն տարածվում էլեկտրոնային ձևով ներկայացվող փոխանցման հանձնարարագրերի միջոցով արժեթղթերի փոխանցման վրա:

## Գ Լ ՈՒ Խ 131

### ՓՈՒՍԱՆՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-17.)

131.1. Փոխանցման հանձնարարագիրը Կենտրոնական դեպոզիտարիա կարող է փոխանցվել.

131.1.1. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կողմից.

131.1.2. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) լիազորված ներկայացուցչի կողմից.

131.1.3. այն անձի կողմից, ում անունով պետք է գրանցվեն արժեթղթերը.

131.1.4. այն անձի լիազորված ներկայացուցչի կողմից, ում անունով պետք է գրանցվեն արժեթղթերը.

131.1.5. փոխանցող գործակալի կողմից՝ սույն կանոնագրի 134-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով:

131.2. Փոխանցման հանձնարարագրի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

131.2.1. արժեթղթերը փոխանցողի մասին.

ա) գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը (անվանումը).

բ) անձնական հաշվի համարը.

գ) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը (ֆիզիկական անձանց համար), պետական գրանցման կամ դրան համարժեք այլ վկայականի համարը և գրանցման ամսաթիվը (իրավաբանական անձանց համար).

131.2.2. փոխանցվող արժեթղթերի մասին.

ա) թողարկողի անվանումը և արժեթղթերի դասը.

բ) արժեթղթերի գրանցման համարը և տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում).

գ) փոխանցվող արժեթղթերի քանակը.

դ) արժեթղթերի փոխանցման հիմքը (առուվաճառք, նվիրատվություն, ժառանգություն կամ այլ).

ե) արժեթղթերի փոխանցման գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթի վավերապայմանները (առկայության դեպքում).

զ) արժեթղթի միավոր գինը և գործարքի ծավալը, եթե ռեեստրում գրառումների կատարման համար հիմք է հանդիսանում առուվաճառքի պայմանագիրը կամ ռեպո գործարքը.

է) արժեթղթերի հավաստագրերի վավերապայմանները (հավաստագրերի առկայության դեպքում).

131.2.3. այն անձի վերաբերյալ, որի անձնական հաշվին պետք է փոխանցվեն արժեթղթերը.

ա) անունը, ազգանունը (անվանումը) և նշում արժեթղթերի սեփականատեր կամ անվանատեր լինելու վերաբերյալ.  
բ) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը (ֆիզիկական անձանց համար), գրանցման վկայականի համարը և գրանցման ամսաթիվը (իրավաբանական անձանց համար).

գ) անձնական հաշվի համարը (առկայության դեպքում).

131.2.4. փոխանցման հանձնարարագիրը ստորագրողի վերաբերյալ.

ա) նշում կարգավիճակի մասին (փոխանցվող արժեթղթերի գրանցված սեփականատեր (անվանատեր), ժառանգ, նվիրատու կամ նրանց լիազորված ներկայացուցիչ).

բ) եթե փոխանցման հանձնարարագիրը ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա նրա վերաբերյալ սույն կանոնագրի 133.2.1 կամ 133.2.3 կետերով սահմանված տեղեկությունները.

գ) տվյալ անձի ստորագրությունը (իրավաբանական անձանց համար՝ նաև կնիքը).

131.2.5. փոխանցման հանձնարարագրում ֆիզիկական անձի ստորագրությունը վավերացնող անձի վերաբերյալ (բացառությամբ Կենտրոնական դեպոզիտարիայի).

ա) անվանումը.

բ) ստորագրության վավերացման ամսաթիվը.

գ) ստորագրությունը վավերացնողի կարգավիճակը (մասնագիտացված անձ կամ նոտար).

դ) ստորագրությունը վավերացնողի լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը.

ե) ստորագրությունը վավերացնողի կնիքը.

131.2.6. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

131.3. Մինչև արժեթղթի փոխանցումն այդ արժեթղթով հավաստվող իրավունքները (այդ թվում՝ ծանուցումներ, շահույթաբաժիններ և այլ վճարումներ ստանալու իրավունքները) պատկանում են գրանցված սեփականատիրոջը (անվանատիրոջը), եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

131.4. Եթե արժեթղթերի նոր սեփականատիրոջ (անվանատիրոջ) մասին տեղեկությունները Կենտրոնական դեպոզիտարիայից անկախ պատճառներով ներառված չեն եղել ռեեստրում հաշվառման ամսաթվի դրությամբ, ապա այդ արժեթղթերով հավաստված իրավունքներն իրականացվում են գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կողմից:

131.5. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով կարող է սահմանվել փոխանցման հանձնարարագրի էլեկտրոնային ձևով փոխանցման կարգ, որն ըստ Կենտրոնական բանկի՝ բավարար երաշխիքներ կապահովի

համակարգի գործունեության անընդհատության և հուսալիության համար:

131.6. Սույն կանոնագրքի 131.2.4 և 131.2.5 կետերով սահմանված պահանջները չեն տարածվում էլեկտրոնային ձևով ներկայացվող փոխանցման հանձնարագրերի վրա:

**Գ Լ ՈՒ Խ 132**

**ՓՈՒՍԱՆԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԱԿԱՆ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-18.)**

132.1. Եթե գրանցված սեփականատերը (անվանատերը) իրավաբանական անձ է, ապա արժեթղթերի փոխանցման հանձնարարագիրը ստորագրում է այդ իրավաբանական անձի լիազորված ներկայացուցիչը:

132.2. Եթե գրանցված սեփականատերը ֆիզիկական անձ է, ապա արժեթղթերի փոխանցման հանձնարարագիրը ստորագրում է.

132.2.1. այդ անձը կամ նրա լիազորված ներկայացուցիչը, եթե անձը գործունակ է.

132.2.2. տասնչորս տարեկան չդարձած անչափահաս անձի ծնողները, որոնք գործող են կամ խնամակալները (բացառությամբ՝ այն դեպքերի, երբ տասնչորս տարեկան չդարձած անչափահասին արժեթղթերը փոխանցվում են անհատույց գործարքի արդյունքում, որի դեպքում փոխանցման հանձնարարագիրը կարող է ստորագրել նաև տասնչորս տարեկան չդարձած անչափահասը).

132.2.3. տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահաս անձը.

132.2.4. տասնութ տարեկանից բարձր և դատարանի վճռով սահմանափակ գործունակ ճանաչված անձը.

132.2.5. դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձի խնամակալը:

132.3. Եթե ֆիզիկական անձը ֆիզիկական արատների, հիվանդության կամ որևէ այլ պատճառով չի կարող անձամբ ստորագրել փոխանցման հանձնարարագիրը, ապա նրա հանձնարարությամբ և նրա ներկայությամբ փոխանցման հանձնարարագիրը կարող է ստորագրվել մեկ այլ ֆիզիկական անձի կողմից, որի դեպքում փոխանցման հանձնարարագրում նշվում է նրա կողմից փոխանցման հանձնարարագրի ստորագրման անհնարիության պատճառը: Ընդ որում, ստորագրող անձի ստորագրությունը վավերացվում է նոտարական կարգով:

132.4. Եթե փոխանցվող արժեթղթերը մի քանի անձանց սեփականություն են, ապա փոխանցման հանձնարարագիրը պետք է ստորագրվի բոլոր համասեփականատերերի կամ նրանց ընդհանուր լիազորված ներկայացուցչի կողմից:

132.5. Եթե արժեթղթերը փոխանցվում են նվիրատվության պայմանագրի հիման վրա, ապա փոխանցման հանձնարարագիրը կարող է ստորագրվել նվիրատուի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից:

132.6. Եթե արժեթղթերի սեփականության իրավունքը փոխանցվում է ժառանգության արդյունքում, ապա փոխանցման հանձնարարագիրը պետք է ստորագրվի ժառանգի կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից:

132.7. Սույն կանոնագրքի 132.1-132.6 կետերով սահմանված պահանջները չեն տարածվում էլեկտրոնային ձևով ներկայացվող փաստաթղթերի վրա:

**Գ Լ ՈՒ Խ 133**

**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՎԵՐԱՑՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-19.)**

133.1. Հանձնարարագրի, հարցման կամ սույն կանոնագրքի 130-րդ գլխով սահմանված այլ փաստաթղթերի ստորագրությունը կարող է վավերացվել Կենտրոնական դեպոզիտարիայի, Նոտարի կամ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձի կողմից, եթե սույն բաժնի կանոններով այլ բան սահմանված չէ:

133.2. Հարցման կամ ֆիզիկական անձ հանդիսացող գրանցված սեփականատիրոջ քարտի ստորագրությունը կարող է վավերացվել նաև թողարկողի կողմից:

133.3. Գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) լիազորված ներկայացուցչի քարտի ստորագրությունը վավերացվում է տվյալ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կողմից:

133.4. Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցվող հանձնարարագրի կամ հարցման ստորագրությունը վավերացնող անձը միաժամանակ հավաստում է, որ ստորագրման պահին.

133.4.1. հաստատել է փաստաթուղթը ստորագրող անձի ինքնությունը և գործունակությունը՝ իր տրամադրության տակ եղած փաստաթղթերի հիման վրա.

133.4.2. հաստատել է, որ փաստաթուղթը ստորագրող անձը, որն այդ փաստաթղթում նշված գրանցված սեփականատերը (անվանատերը) չէ, լիազորված է ստորագրել տվյալ փաստաթուղթը գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անունից.

133.4.3. հաստատել է, որ ստորագրությունը կեղծ չէ:

133.5. Ստորագրության վավերացումը չի նշանակում արժեթղթերի փոխանցման օրինականության հաստատում:

133.6. Ստորագրությունը վավերացնող անձը պատասխանատվություն է կրում Կենտրոնական դեպոզիտարիայի կամ թողարկողի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են հանձնարարագրի կամ հարցման վրա ստորագրության անվավերության պատճառով:

133.7. Հանձնարարագիր տվող արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձը, որը հանդես է գալիս անվանատիրոջ կամ լիազորված ներկայացուցչի կարգավիճակով, համարվում է նշված հանձնարարագրի ստորագրությունը վավերացնող անձ և պատասխանատվություն է կրում իր կողմից վավերացված փաստերի և տեղեկությունների հավաստիության և ամբողջականության համար:

133.8. Սույն կանոնագրքի 133.1.-133.7 կետերով սահմանված պահանջները չեն տարածվում էլեկտրոնային ձևով ներկայացվող փաստաթղթերի վրա:

**Գ Լ ՈՒ Խ 134**

**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԿՈՐՄԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍԱԳՑՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-20.)**

134.1. Կենտրոնական դեպոզիտարիան սույն կանոնագրքի 131-րդ գլխով սահմանված փաստաթղթերը ստանալիս պարտավոր է.

134.1. պարզել փաստաթղթերը ներկայացնողի ինքնությունը՝ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա (թղթային ձևով ներկայացվող փաստաթղթի դեպքում).

134.2. ստուգել փաստաթղթերը ներկայացնող անձի լիազորությունները, եթե նա արժեթղթերը փոխանցող կամ ստացող անձի լիազորված ներկայացուցիչն է.

134.3. Սույն կանոնագրքի 134.2 կետին համապատասխան համեմատել գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի ստորագրությունը (թղթային ձևով ներկայացվող փաստաթղթի դեպքում).

134. 4. իրականացնել սույն բաժնի կանոններով սահմանված այլ գործողություններ:

134.2. Լիազորված ներկայացուցչի լիազորությունները հավաստվում են հետևյալ փաստաթղթերից որևէ մեկով.

134.2.1. ֆիզիկական անձի լիազորված ներկայացուցչի լիազորությունները.

ա) լիազորված ներկայացուցչի անունով տրված՝ արժեթղթերի փոխանցման իրավունք տվող լիազորագիրը.

բ) ծնողների (որոնք գործող են) անձնագրում երեխաների մասին առկա գրառումներով, ծնունդի վկայականով և ծնողների (որոնք գործող են) անձնագրով կամ խնամակալ նշանակելու մասին փաստաթղթով՝ մինչև տասնչորս

տարեկան անչափահասների համար.

գ) դատարանով անգործունակ ճանաչված անձի նկատմամբ խնամակալ նշանակելու մասին փաստաթղթով.

դ) ծնողների (որդեգրողների) անձնագրում երեխաների մասին առկա գրառումներով, ծննդյան վկայականով և ծնողների (որդեգրողների) անձնագրով կամ հոգաբարձու նշանակելու մասին փաստաթղթով՝ տասնչորսից տասնութ տարեկան անչափահասների համար.

ե) դատարանով սահմանափակ գործունակ ճանաչված անձի նկատմամբ հոգաբարձու նշանակելու մասին փաստաթղթով.

զ) Կենտրոնական դեպոզիտարիայում առկա՝ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) քարտով.

134.2.2. իրավաբանական անձի լիազորված ներկայացուցչի լիազորությունները.

ա) իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանված համապատասխան լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց պաշտոնի նշանակումը հավաստող փաստաթղթով.

բ) իրավաբանական անձի կառավարման իրավասու մարմնի որոշմամբ.

գ) իրավաբանական անձի կողմից տրված լիազորագրով.

դ) Կենտրոնական դեպոզիտարիայում առկա՝ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) քարտով:

134.3. Հանձնարարագրի կամ հարցման վրա գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի ստորագրությունը համեմատվում է Կենտրոնական դեպոզիտարիայում առկա՝ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի քարտի ստորագրության նմուշի հետ (թղթային ձևով ներկայացվող փաստաթղթի դեպքում):

#### **Գ Լ ՈՒ Խ 135**

##### ***ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՌԵՆՏՐՈՒՄ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-21.)***

135.1. Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի փոխանցման վերաբերյալ ռենտրում գրառումներ է կատարում հետևյալ պայմանների առկայության դեպքում.

135.1.1. Կենտրոնական դեպոզիտարիա են փոխանցվել արժեթղթերի փոխանցման գրանցման համար սույն կանոնագրի 130-րդ գլխով սահմանված համապատասխան փաստաթղթերը.

135.1.2. փոխանցման հանձնարարագիրը լրացված է սույն բաժնի կանոնների համապատասխան.

135.1.3. փոխանցման հանձնարարագրի ստորագրությունը վավերացված է սույն կանոնագրի 133-րդ գլխին համապատասխան.

135.1.4. փոխանցվող արժեթղթերի քանակը չի գերազանցում արժեթղթերը փոխանցող անձի անձնական հաշվում հաշվառված՝ թողարկողի տվյալ դասի չարգելադրված արժեթղթերի քանակը, բացառությամբ սույն կանոնագրի 136.3 և 136.4 կետերով նախատեսված դեպքերի.

135.1.5. արժեթղթեր փոխանցող անձը Կենտրոնական դեպոզիտարիային վճարել է նրա ծառայությունների համար կամ երաշխիքներ է ներկայացրել Կենտրոնական դեպոզիտարիա՝ ծառայությունների սահմանված գներին համապատասխան վճարելու վերաբերյալ.

135.1.6. արժեթղթերի փոխանցումը համապատասխանում է սույն բաժնի կանոնների այլ պահանջներին և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջներին:

135.2. Փաստաթղթային արժեթղթերի փոխանցումը գրանցելու համար արժեթղթերի նախորդ սեփականատիրոջը տրված արժեթղթերի հավաստագիրը ենթակա է փոխանցման Կենտրոնական դեպոզիտարիա (բացառությամբ՝ սույն կանոնագրի 139.5 և 139.7 կետերով նախատեսված դեպքերի), որը չեղյալ է համարում այն և արժեթղթերը ձեռքբերողի պահանջով նրան տալիս է ռենտրից քաղվածք կամ նոր հավաստագիր: Եթե փոխանցվում է հավաստագրով հավաստված արժեթղթերի մի մասը, ապա արժեթղթերը փոխանցողի պահանջով Կենտրոնական դեպոզիտարիան նրան տալիս է ռենտրից քաղվածք կամ նոր հավաստագիր՝ մնացած արժեթղթերի քանակին համապատասխան:

135.3. Եթե արժեթղթերի փոխանցման գրանցումը մերժվում է դրանց արգելադրման պատճառով, ապա փոխանցումը կարող է իրականացվել արգելադրման դադարեցումից հետո:

#### **Գ Լ ՈՒ Խ 136**

##### ***ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԺԱՍԿԵՏՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-22.)***

136.1. Արժեթղթերի փոխանցման համար ներկայացված փաստաթղթերի ստուգումը պետք է ավարտվի դրանց ստացման պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում:

136.2. Արժեթղթերի փոխանցման համար ներկայացված փաստաթղթերի ստուգումն ավարտելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան գրանցում է արժեթղթերի փոխանցումը կամ գրույթամբ մերժում է դրա գրանցումը՝ նշելով մերժման պատճառները և այն գործողությունները, որոնք պետք է ձեռնարկվեն դրանց վերացման ուղղությամբ:

136.3. Արժեթղթերի փոխանցման գրանցումը մերժվում է, եթե արժեթղթերի փոխանցումը հակասում է սույն բաժնի և Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված պահանջներին:

136.4. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան արժեթղթերի փոխանցման գրանցումը կատարել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության կամ սույն բաժնի կանոններով սահմանված պահանջների խախտումներով, ապա Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է.

136.4.1. ապահովել սահմանված կարգով թողարկված արժեթղթերի քանակը գերազանցող արժեթղթերի հետգնումը (ձեռքբերումը) և դրանց չեղյալ համարումը, եթե նշված գրանցման պատճառով տեղի է ունեցել թողարկված արժեթղթերի քանակի ավելացում.

136.4.2. տուժող կողմի պահանջով նրան տրամադրել նոր արժեթուղթ կամ ռենտրում և այդ անձի անձնական հաշվում վերականգնել ճիշտ գրառումները:

#### **Գ Լ ՈՒ Խ 137**

##### ***ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-23.)***

137.1. Սույն գլխի դրույթները չեն տարածվում ֆոնդային բորսայում գործարքների կնքման համար նախատեսված արժեթղթերի արգելադրման վրա, որն իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին համապատասխան:

137.2. Արժեթղթերի արգելադրումն իրականացվում է հետևյալ հիմքերով.

137.2.1. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի կողմից տրված արգելադրման հանձնարարագրի հիման վրա.

137.2.2. անվանատիրոջ անվամբ գրանցված արժեթղթերն արգելադրվում են անվանատիրոջ մասնագիտացված գործունեության լիցենզիայի գործողությունը կասեցնելու, ուժը կորցրած ճանաչելու կամ դադարելու դեպքում.

137.2.3. դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի համապատասխան որոշման հիման վրա.

137.2.4. թողարկողի արժեթղթերով գործարքների կասեցման վերաբերյալ կայացված Կենտրոնական բանկի

որոշման հիման վրա.

137.2.5. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ հիմքերով:

137.3. Անվանատիրոջ մասնագիտացված գործունեության լիցենզիայի գործողությունը կասեցնելու դեպքում անվանատիրոջ անվամբ գրանցված արժեթղթերն արգելադրվում են լիցենզիայի գործողության կասեցման ժամկետով և կարող են փոխանցվել դրանց սեփականատերերի անձնական հաշիվներին՝ անվանատիրոջ հանձնարարագրով:

137.4. Անվանատիրոջ մասնագիտացված գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու կամ դադարելու դեպքում անվանատիրոջ անվամբ գրանցված արժեթղթերն արգելադրվում են և ենթակա են փոխանցման դրանց սեփականատերերի անձնական հաշիվներին:

137.5. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի անվանատերերից պահանջել այն անձանց ցուցակը, որոնց պատկանող արժեթղթերի գրանցված անվանատերն է լիցենզիայի գործողությունն ուժը կորցրած ճանաչվելու կամ դադարելու ամսաթվի դրությամբ: Գրանցված անվանատերը պարտավոր է անհրաժեշտ ցուցակը կազմել և Կենտրոնական դեպոզիտարիային անվճար տրամադրել պահանջը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

137.6. Եթե անվանատերը սույն կանոնագրի 137.5 կետով նախատեսված ցուցակը Կենտրոնական դեպոզիտարիա չի ներկայացրել դրա համար սահմանված ժամկետում, ապա Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է սահմանված ժամկետը լրանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

137.7. Սույն կանոնագրի 137.5 կետով նախատեսված ցուցակի հիման վրա Կենտրոնական դեպոզիտարիան անվանատիրոջ անվամբ գրանցված արժեթղթերը փոխանցում է դրանց սեփականատերերի անձնական հաշիվներին:

137.8. Արժեթղթերի արգելադրման համար Կենտրոնական դեպոզիտարիային են փոխանցվում հետևյալ փաստաթղթերը, բացառությամբ սույն կանոնագրի 137.8.2 կետում նշվածի.

137.8.1. արգելադրման հանձնարարագիրը (բացառությամբ՝ սույն կանոնագրի 137.2.2 և 137.2.3 կետերում նշված հիմքերով արժեթղթերի արգելադրման դեպքերի).

137.8.2. արգելադրման հանձնարարագիրը ներկայացնող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը (ներկայացվում է Կենտրոնական դեպոզիտարիա).

137.8.3. եթե արգելադրման հանձնարարագիրն ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա այդ ներկայացուցչի լիազորությունը հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ նոտարի կողմից վավերացված պատճենը: Սույն կետի պահանջը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ միաժամանակ բավարարվում են հետևյալ պահանջները.

ա) հանձնարարագրի տրման պահին գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշիվում առկա են գրառումներ այդ ներկայացուցչի մասին.

բ) Կենտրոնական դեպոզիտարիան հավաստիանում է, որ տվյալ լիազորված ներկայացուցչի լիազորությունները չեն դադարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

137.8.4. մասնագիտացված գործունեության լիցենզիայի գործողության կասեցման, ուժը կորցրած ճանաչվելու կամ դադարելու վերաբերյալ Կենտրոնական բանկի որոշման պատճենը՝ սույն կանոնագրի 137.2.2 կետով սահմանված հիմքով արժեթղթերի արգելադրման համար.

137.8.5. դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի որոշումը՝ 137.2.3. կետով սահմանված հիմքով արժեթղթերի արգելադրման համար.

137.8.6. արժեթղթերի գրավադրման հիմքով դրանց արգելադրման համար՝ արժեթղթերի գրավադրումը հավաստող փաստաթղթերը.

137.8.7. արգելադրվող արժեթղթերի հավաստագրերը՝ սույն կանոնագրի 137.2.1 կետով սահմանված հիմքով փաստաթղթային արժեթղթերի արգելադրման դեպքում.

137.8.8. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթեր:

137.9. Արգելադրման հանձնարարագրի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

137.9.1. հանձնարարագիրը տվողի մասին.

ա) անունը, ազգանունը (անվանումը).

բ) գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշվի համարը.

գ) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը (ֆիզիկական անձանց համար), գրանցման վկայականի համարը և գրանցման ամսաթիվը (իրավաբանական անձանց համար).

137.9.2. արգելադրվող արժեթղթերի մասին.

ա) թողարկողի անվանումը և արժեթղթերի դասը.

բ) արժեթղթերի գրանցման համարը և տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում).

գ) արգելադրվող արժեթղթերի քանակը.

դ) արգելադրման հիմքը և արգելադրման համար հիմք հանդիսացող փաստաթղթի վավերապայմանները.

ե) արգելադրվող արժեթղթերի հավաստագրերի վավերապայմանները (հավաստագրերի առկայության դեպքում).

137.9.3. արժեթղթերի գրավադրման հիմքով դրանց արգելադրման դեպքում արգելադրման հանձնարարագրում ներառվում են գրավադրման վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

ա) անունը, ազգանունը, ստորագրությունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը (ֆիզիկական անձանց համար).

բ) անվանումը, գրանցման վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, ինչպես նաև լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը, ստորագրությունը և գրավադրման կնիքը (իրավաբանական անձանց համար).

137.9.4. արգելադրման հանձնարարագրին ստորագրողի վերաբերյալ.

ա) նշում կարգավիճակի մասին (արգելադրվող արժեթղթերի գրանցված սեփականատեր (անվանատեր) կամ նրա լիազորված ներկայացուցիչ).

բ) եթե արգելադրման հանձնարարագիրը ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա նրա վերաբերյալ սույն կանոնագրի 137.9.1 կետով սահմանված տեղեկությունները.

գ) տվյալ անձի ստորագրությունը (իրավաբանական անձանց համար՝ նաև կնիքը).

137.9.5. արգելադրման հանձնարարագրում ֆիզիկական անձի ստորագրությունը վավերացնող անձի վերաբերյալ (բացառությամբ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի).

ա) անվանումը.

բ) ստորագրության վավերացման ամսաթիվը.

գ) ստորագրությունը վավերացնողի կարգավիճակը (մասնագիտացված անձ կամ նոտար).

դ) ստորագրությունը վավերացնողի լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը.

ե) ստորագրությունը վավերացնողի կնիքը.

137.9.6. արգելադրման ժամկետը կամ այն փաստը, կամ իրադարձությունը, որի տեղի ունենալու դեպքում արգելադրումը դադարեցվում է.

137.9.7. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

137.10. Կենտրոնական դեպոզիտարիան ռեեստրում արգելադրման մասին գրառումներ է կատարում (նշելով արգելադրման հիմքը) ոչ ուշ, քան սույն կանոնագրի 137.8 կետով սահմանված փաստաթղթերի ստացման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե արժեթղթեր արգելադրող անձը Կենտրոնական դեպոզիտարիային վճարել է նրա ծառայությունների համար կամ երաշխիքներ է ներկայացրել Կենտրոնական դեպոզիտարիա՝ ծառայությունների սահմանված գներին համապատասխան վճարելու վերաբերյալ:

137.11. Արգելադրման մասին ռեեստրում գրառումներ կատարելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել (տեղեկանք համապատասխան գործառնության մասին) այն գրանցված սեփականատիրոջը (անվանատիրոջը), որի անձնական հաշվում կատարվել է Նշված գրառումը: Սույն պահանջը չի տարածվում արգելադրման այն դեպքերի վրա, որոնք իրականացվում են գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի հանձնարարագրերի հիման վրա:

**Գ Լ ՈՒ Խ 138**

**ԱՐԺԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼԱԴՐՄԱՆ ԴԱՂԱՐԵՑՈՒՄԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-24.)**

138.1. Սույն գլխի դրույթները չեն տարածվում ֆոնդային բորսայում գործարքների կնքման համար արգելադրված արժեթղթերի արգելադրման դադարեցման վրա, որն իրականացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին համապատասխան:

138.2. Արժեթղթերի արգելադրումն ինքնաբերաբար դադարեցվում, և արգելադրման մասին Նշումն ինքնաբերաբար հանվում է անձնական հաշվից արգելադրման ժամկետը լրանալուց հետո:

138.3. Արգելադրման դադարեցման համար հիմք հանդիսացող փաստի կամ իրադարձության տեղի ունենալու դեպքում արգելադրման մասին գրառումն անձնական հաշվից հանվում է գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ), գրավառուի կամ նրանց լիազորված ներկայացուցիչների կողմից սույն կանոնագրքի 138.6 կետով սահմանված արգելադրման դադարեցման հանձնարարագիրը Կենտրոնական դեպոզիտարիային փոխանցելուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում: Գրավառուի հիմքով արգելադրված արժեթղթերի արգելադրումը դադարեցնելու համար ներկայացվում է նաև գրավառուի գրավոր համաձայնությունն արժեթղթերի արգելադրումը դադարեցնելու մասին (Ֆիզիկական անձ հանդիսացող գրավառուի գրավոր համաձայնությունը վավերացվում է սույն կանոնագրքի 133-րդ գլխին համապատասխան), բացառությամբ այն դեպքերի, երբ արգելադրման դադարեցման հանձնարարագիրը ստորագրված (կնքված) է նաև գրավառուի կողմից, կամ արգելադրումը դադարեցվում է գրավառուի հանձնարարագրով:

138.4. Արժեթղթերի արգելադրումը դադարեցվում է նաև արժեթղթերի արգելադրման դադարեցման մասին դատարանի, դատական ակտերի հարկադիր կատարողի կամ քննիչի որոշման հիման վրա:

138.5. Անվանատիրոջ մասնագիտացված գործունեության լիցենզիան կասեցվելու, ուժը կորցրած ճանաչվելու կամ դադարելու հիմքով արգելադրված արժեթղթերի արգելադրումը դադարեցվում է այդ արժեթղթերը դրանց սեփականատերերի անձնական հաշիվներին փոխանցելուց հետո կամ լիցենզիայի գործողության կասեցման ժամկետի ավարտից հետո:

138.6. Արգելադրման դադարեցման հանձնարարագրի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

138.6.1. հանձնարարագիրը տվողի մասին.

ա) անունը, ազգանունը (անվանումը).

բ) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը (ֆիզիկական անձանց համար), գրանցման վկայականի համարը և գրանցման ամսաթիվը (իրավաբանական անձանց համար).

գ) անձնական հաշվի համարը (առկայության դեպքում).

138.6.2. այն արժեթղթերի մասին, որոնց արգելադրումը դադարեցվում է.

ա) թողարկողի անվանումը և արժեթղթերի դասը.

բ) արժեթղթերի գրանցման համարը և տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում).

գ) արժեթղթերի քանակը.

դ) արգելադրման դադարեցման հիմքը և արգելադրման դադարեցման համար հիմք հանդիսացող փաստաթղթի վավերապայմանները.

ե) արգելադրված արժեթղթերի հավաստագրերի վավերապայմանները (հավաստագրերի առկայության դեպքում).

138.6.3. գրավառուի հիմքով արժեթղթերն արգելադրված լինելու դեպքում արգելադրման դադարեցման հանձնարարագրում ներառվում են գրավառուի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները, բացառությամբ գրավառուի հանձնարարագրով արժեթղթերի արգելադրման դադարեցման դեպքի.

ա) անունը, ազգանունը, ստորագրությունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը, սերիան և տրման ամսաթիվը (ֆիզիկական անձանց համար).

բ) անվանումը, գրանցման վկայականի համարը, գրանցման ամսաթիվը, ինչպես նաև նրա լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը, ստորագրությունը և գրավառուի կնիքը (իրավաբանական անձանց համար).

138.6.4. արգելադրման հանձնարարագիրը ստորագրողի վերաբերյալ.

ա) Նշում կարգավիճակի մասին (արգելադրված արժեթղթերի գրանցված սեփականատեր (անվանատեր), գրավառու կամ նրանց լիազորված ներկայացուցիչ).

բ) Եթե արգելադրման դադարեցման հանձնարարագիրը ստորագրված է լիազորված ներկայացուցչի կողմից, ապա նրա վերաբերյալ սույն կանոնագրքի 138.6.1 կետով սահմանված տեղեկությունները.

գ) տվյալ անձի ստորագրությունը (իրավաբանական անձանց համար՝ նաև կնիքը).

138.6.5. արգելադրման դադարեցման հանձնարարագրում ֆիզիկական անձի ստորագրությունը վավերացնող անձի վերաբերյալ (բացառությամբ՝ Կենտրոնական դեպոզիտարիայի).

ա) անվանումը.

բ) ստորագրության վավերացման ամսաթիվը.

գ) ստորագրությունը վավերացնողի կարգավիճակը (մասնագիտացված անձ կամ նոտար).

դ) ստորագրությունը վավերացնողի լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը, ստորագրությունը.

ե) ստորագրությունը վավերացնողի կնիքը.

138.6.6. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

138.7. Անձնական հաշվից արժեթղթերի արգելադրման մասին գրառումը հանելուց հետո Նշված արժեթղթերը կարող են փոխանցվել այլ անձանց:

138.8. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան մերժում է արժեթղթերի արգելադրման դադարեցումը, ապա արգելադրման դադարեցման համապատասխան հանձնարարագիրը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է հանձնարարագիրը տված անձին գրավոր ծանուցել արգելադրման դադարեցումը մերժելու մասին՝ Նշելով դրա պատճառը և իրավական հիմքերը:

138.9. Արգելադրման դադարեցման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել այն գրանցված սեփականատիրոջը (անվանատիրոջը), որի անձնական հաշվից հանվել է արգելադրման մասին գրառումը (տեղեկանք համապատասխան գործառնության մասին): Սույն պահանջը չի տարածվում արգելադրման դադարեցման այն դեպքերի վրա, որոնք իրականացվում են գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) հանձնարարագրերի հիման վրա կամ գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կողմից տրված արգելադրման հանձնարարագրում Նշված ժամկետի լրանալու հիմքով:

**Գ Լ ՈՒ Խ 139**

**ԱՐԺԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-25.)**

- 139.1. Սույն գլուխը չի տարածվում ապանյութականացված արժեթղթերի հավաստագրերի և ապանյութականացված արժեթղթերով կատարված գործառնությունների վրա:
- 139.2. Կենտրոնական դեպոզիտարիան վարում է արժեթղթերի հավաստագրերի հաշվառման մատյան, որտեղ գրառումներ է կատարում արժեթղթերի հավաստագրերով իր կողմից կատարված բոլոր գործառնությունների մասին:
- 139.3. Փաստաթղթային արժեթղթերի գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշիվը պետք է տեղեկություններ ներառի դրանում հաշվառված արժեթղթերի բոլոր հավաստագրերի մասին, այդ թվում.
- 139.3.1. արժեթղթերի հավաստագրերով հավաստված արժեթղթերի ընդհանուր քանակը.
- 139.3.2. գրանցված սեփականատիրոջը (անվանատիրոջը) տրված և ուժի մեջ գտնվող արժեթղթերի հավաստագրերի քանակը.
- 139.3.3. արժեթղթերի հավաստագրի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու մասին գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի դիմումի առկայության դեպքում՝ այդ հավաստագրի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու ծածկագիրը.
- 139.3.4. նշումներ օգտագործման համար ոչ պիտանի դարձած հավաստագրի փոխարեն արժեթղթերի նոր հավաստագիր տալու մասին (նոր հավաստագրի տրման դեպքում):
- 139.4. Արժեթղթերի հավաստագիրը ստացող գրանցված սեփականատերը (անվանատերը) կամ նրա լիազորված ներկայացուցչին պարտավոր է ստորագրել, որ այն ստացել է:
- 139.5. Եթե գրանցված սեփականատերը (անվանատերը) Կենտրոնական դեպոզիտարիային դիմում է արժեթղթի հավաստագրի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու մասին, ապա Կենտրոնական դեպոզիտարիան ռեեստրում փոփոխություններ է կատարում հետևյալ պայմանների պահպանմամբ.
- 139.5.1. գրանցված սեփականատերը (անվանատերը) ներկայացնում է իր կողմից ստորագրված (կնքված) դիմում՝ արժեթղթի հավաստագիրը կորած կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձած համարելու վերաբերյալ.
- 139.5.2. դիմումին կից Կենտրոնական դեպոզիտարիային է փոխանցվում օգտագործման համար ոչ պիտանի դարձած հավաստագիրը՝ հավաստագիրն օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում.
- 139.5.3. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) անձնական հաշիվում նշվում է հավաստագրի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու մասին.
- 139.5.4. արժեթղթերի հավաստագրերի հաշվառման մատյանում նշվում է հավաստագրի նոր կարգավիճակը՝ կորել է կամ օգտագործման համար ոչ պիտանի է դարձել, և կարգավիճակի փոփոխման ամսաթիվը:
- 139.6. Կենտրոնական դեպոզիտարիան գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) պահանջով իրավունք ունի նրան նոր հավաստագիր տրամադրել օգտագործման համար ոչ պիտանի դարձած հավաստագրի փոխարեն՝ սույն կանոնագրի 139.5 կետում նշված պայմանների պահպանման դեպքում, և եթե գրանցված սեփականատերը (անվանատերը) վճարում է նոր հավաստագրի պատրաստման և տրամադրման փաստացի ծախսերը չգերազանցող գումար:
- 139.7. Եթե արժեթղթերի հավաստագրերը Կենտրոնական դեպոզիտարիայից անկախ պատճառներով տրամադրված չեն եղել դրանց սեփականատերերին (անվանատերերին), ապա փաստաթղթային արժեթղթերի փոխանցման կամ արգելադրման համար դրանց փոխանցումը Կենտրոնական դեպոզիտարիային չի պահանջվում, եթե թողարկողը Կենտրոնական դեպոզիտարիային գրավոր հավաստագրում է, որ արժեթղթերի սեփականատերերին հավաստագրեր չեն տրվել:
- 139.8. Կենտրոնական դեպոզիտարիան, ստուգելով հավաստագրի իսկությունը, կարող է չեղյալ համարել այն՝ նախապես համոզված լինելով, որ.
- 139.8.1. առկա են այդ հավաստագրի տրման մասին գրառումներ.
- 139.8.2. հավաստագրի տվյալները համապատասխանում են արժեթղթերի հավաստագրերի հաշվառման մատյանում նշված տվյալներին.
- 139.8.3. տվյալ հավաստագրի չեղյալ համարման սահմանափակումներ չկան:
- 139.9. Սույն կանոնագրի 139.8 կետում նշված պայմանների բավարարման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան.
- 139.9.1. հավաստագիրը չեղյալ է համարում թողարկողի լիազորված ներկայացուցիչների ստորագրությունների տեղերում երկու անցք բացելու և հավաստագրի դիմային մասում «ՉԵՂՅԱԼ Ե ՀԱՄԱՐՎԱԾ» նշումը կատարելու միջոցով.
- 139.9.2. արժեթղթերի հավաստագրերի հաշվառման մատյանում նշում է հավաստագրի նոր կարգավիճակը (չեղյալ է համարվել) և կարգավիճակի փոփոխման ամսաթիվը.
- 139.9.3. անձնական հաշիվում գրառում է կատարում այդ հավաստագրի չեղյալ համարման մասին:

## Գ Լ ՈՒ Խ 140

### **ՌԵԵՍՏՐԻՑ ԶԱՂՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱԼՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-26.)**

- 140.1. Կենտրոնական դեպոզիտարիան ռեեստրում գործառնություններ իրականացնելիս գործառնության կատարման աշխատանքային օրվա ընթացքում գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) պահանջով նրան անվճար տրամադրում է ռեեստրից քաղվածք կամ անձնական հաշիվով կատարված գործառնությունների մասին տեղեկանք (այսուհետ՝ գործառնությունների մասին տեղեկանք):
- 140.2. Սույն կանոնագրի 140.1 կետում չնշված դեպքերում ռեեստրից քաղվածքները և գործառնությունների մասին տեղեկանքները գրանցված սեփականատերերին (անվանատերերին) տրամադրվում են համապատասխան հարցումը ստանալուց հետո մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, եթե տվյալ անձը Կենտրոնական դեպոզիտարիային վճարել է նրա ծառայությունների համար կամ երաշխիքներ է ներկայացրել Կենտրոնական դեպոզիտարիա՝ ծառայությունների սահմանված գներին համապատասխան վճարում կատարելու վերաբերյալ:
- 140.3. Ռեեստրից քաղվածքի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի.
- 140.3.1. գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) մասին.
- ա) անունը, ազգանունը (անվանումը).
- բ) անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը և սերիան (ֆիզիկական անձանց համար), գրանցման վկայականի համարը և գրանցման ամսաթիվը (իրավաբանական անձանց համար).
- գ) անձնական հաշվի համարը.
- դ) նշում կարգավիճակի վերաբերյալ (գրանցված սեփականատեր կամ անվանատեր).
- 140.3.2. արժեթղթերի մասին.
- ա) թողարկողի անվանումը և գտնվելու վայրը.
- բ) արժեթղթերի դասը.
- գ) արժեթղթերի գրանցման համարը և տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում).
- դ) արժեթղթերի քանակը (արգելադրված և չարգելադրված).
- ե) ռեեստրից քաղվածքի տրման ամսաթիվը.
- զ) Կենտրոնական դեպոզիտարիայի գտնվելու վայրը, փոստային հասցեն և կապի միջոցները.
- 140.3.3. վավերացում՝ ռեեստրի վարման համար պատասխանատու անձի ստորագրությամբ և Կենտրոնական դեպոզիտարիայի կնիքով.
- 140.3.4. դրույթ հետևյալ բովանդակությամբ. «Ռեեստրից քաղվածքն արժեթղթի չի համարվում: Ռեեստրից

քաղվածքի փոխանցումը մեկ անձից մյուսին չի նշանակում գործարքի իրականացում և չի հանգեցնում արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցմանը: Ռեեստրից քաղվածքի ներկայացումը Կենտրոնական ղեկավարության պարտադիր չէ արժեթղթերի փոխանցման գրանցման համար:»:

140.3.5. Կենտրոնական ղեկավարության կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

140.4. Գործառնությունների մասին տեղեկանքը տրվում է ցանկացած ժամանակահատվածի համար, որը նշված է գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ նրա լիազորված ներկայացուցչի հարցման մեջ: Տեղեկանքը պետք է ներառի հարցման մեջ նշված յուրաքանչյուր գործառնության վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

140.4.1. գործարքների գրանցամատյանում գործառնության մասին կատարված գրառման համարը.

140.4.2. գործառնության իրականացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի ստացման ամսաթիվը.

140.4.3. գործառնության իրականացման ամսաթիվը.

140.4.4. գործառնության տեսակը.

140.4.5. գործառնությանը մասնակցող արժեթղթերի թողարկողի անվանումը և գտնվելու վայրը.

140.4.6. գործառնությանը մասնակցող արժեթղթերի քանակը, գործարքի ծավալը և դասը.

140.4.7. գործառնությանը մասնակցող արժեթղթերի գրանցման համարը և տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում).

140.4.8. Կենտրոնական ղեկավարության կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

140.5. Կենտրոնական ղեկավարության ռեեստրից տրված քաղվածքների և գործառնությունների մասին տեղեկանքների առանձին հաշվառում չի իրականացնում:

140.6. Կենտրոնական ղեկավարության իրավունք չունի չեղյալ համարել գործառնությունների մասին տեղեկանքները և ռեեստրից քաղվածքները կամ պահանջել դրանց ներկայացումը արժեթղթերի փոխանցման դեպքում:

140.7. Կենտրոնական ղեկավարության կանոններով կարող է սահմանվել ռեեստրից քաղվածքների և գործառնությունների մասին տեղեկանքների էլեկտրոնային էլեկտրոնային ձևով տրամադրման կարգ:

140.8. Սույն կանոնագրի 140.3.3 կետով սահմանված պահանջը չի տարածվում էլեկտրոնային ձևով ներկայացվող ռեեստրից քաղվածքի վրա:

#### **Գ Լ ՈՒ Խ 141**

##### ***ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱՔԱՇԽԱՄԱՐ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-27.)***

141.1. Արժեթղթերի տեղաբաշխմամբ պայմանավորված գործառնությունների իրականացման ժամանակ Կենտրոնական ղեկավարության պարտավոր է.

141.1.1. ռեեստր մուտքագրել կամ ճշտել ռեեստրում առկա՝ արժեթղթերի և դրանց թողարկողի մասին տեղեկությունները.

141.1.2. բացել թողարկողի թողարկման հաշիվ (եթե այդ հաշիվը արժեթղթերի տվյալ դասի համար նախկինում բացված չի եղել).

141.1.3. թողարկողի թողարկման հաշվին արժեթղթեր հաշվեգրել սահմանված կարգով թողարկողի կառավարման իրավասու մարմնի կողմից ընդունված՝ արժեթղթերի թողարկման որոշման մեջ նշված քանակով.

141.1.4. արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) համար անձնական հաշիվներ բացել և արժեթղթերը թողարկողի թողարկման հաշվից դուրս գրելու միջոցով հաշվեգրել այդ հաշիվներին այն քանակությամբ, որը նշված է արժեթղթերի ձեռքբերումը հավաստող փաստաթղթերում: Մասնավորեցման գործընթացում արժեթղթերի տեղաբաշխման դեպքում արժեթղթերի ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերը վավերացվում են համապատասխան պետական կառավարման մարմնի կողմից.

141.1.5. թողարկողի կողմից տրված՝ արժեթղթերի տեղաբաշխման արդյունքներն հավաստող փաստաթղթի հիման վրա ստուգել տեղաբաշխված և գրանցված սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներում հաշվառված արժեթղթերի քանակների համապատասխանությունը: Թերտեղաբաշխման դեպքում թողարկողի թողարկման հաշիվը զրոյացվում է:

141.2. Թողարկողի կողմից սույն գլխում նշված փաստաթղթերի ներկայացման կարգը սահմանվում է Կենտրոնական ղեկավարության կողմից:

#### **Գ Լ ՈՒ Խ 142**

##### ***ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿՈՐԴՈՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԴՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-28.)***

142.1. Կորպորատիվ գործողության իրականացման դեպքում թողարկողը կորպորատիվ գործողության իրականացման մասին որոշումը, որտեղ պետք է նշված լինի կորպորատիվ գործողության իրականացման համար գրանցված սեփականատերերի (անվանատերերի) հաշվառման ամսաթիվը, տրամադրում է Կենտրոնական ղեկավարության կողմից՝ կորպորատիվ գործողության իրականացման համար նախատեսված ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

142.2. Կորպորատիվ գործողության իրականացման մասին թողարկողի որոշման մեջ նշված բանաձևի (գործակցի) կամ ընթացակարգի հիման վրա Կենտրոնական ղեկավարության կորպորատիվ գործողության իրականացման համար նախատեսված ամսաթվից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, ռեեստրում գրառումներ է կատարում սույն կանոնագրի 145.1 կետում նշված հաշվառման ամսաթվի դրությամբ անձնական հաշիվներում հաշվառված արժեթղթերի քանակի, դասի կամ թողարկողի (անհրաժեշտության դեպքում) փոփոխման մասին:

142.3. Արժեթղթերի բաժանման արդյունքում թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկման դեպքում թողարկողի որոշման մեջ նշված բանաձևի (գործակցի) հիման վրա Կենտրոնական ղեկավարության ռեեստրում գրառումներ է կատարում թողարկողի որոշմամբ սահմանված հաշվառման ամսաթվի դրությամբ անձնական հաշիվներում հաշվառված տվյալ դասի արժեթղթերի քանակի ավելացման մասին, որի դեպքում համամասնորեն նվազեցվում է թողարկողի տվյալ դասի արժեթղթերի անվանական արժեքը:

142.4. Արժեթղթերի կոնսոլիդացիայի արդյունքում թողարկողի տվյալ դասի արժեթղթերի փոխարկման դեպքում թողարկողի որոշման մեջ նշված բանաձևի (գործակցի) հիման վրա Կենտրոնական ղեկավարության ռեեստրում գրառումներ է կատարում թողարկողի որոշմամբ սահմանված հաշվառման ամսաթվի դրությամբ անձնական հաշիվներում հաշվառված տվյալ դասի արժեթղթերի քանակի նվազեցման մասին, որի դեպքում համամասնորեն ավելացվում է թողարկողի տվյալ դասի արժեթղթերի անվանական արժեքը:

142.5. Թողարկողի վերականգնման արդյունքում արժեթղթերի փոխարկման դեպքում Կենտրոնական ղեկավարության ռեեստրում համապատասխան գրառումներ է կատարում թողարկողի տվյալ դասի արժեթղթերի բոլոր գրանցված սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներում՝ ըստ նրանց պատկանող (նրանց անվամբ գրանցված) թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակի համամասնության:

142.6. Արժեթղթերը գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) հանձնարարագրով փոխարկելու դեպքում (եթե այդ իրավունքը նախատեսված է թողարկողի որոշմամբ) Կենտրոնական ղեկավարության ռեեստրում համապատասխան գրառումներ է կատարում սույն կանոնագրի 142.7 կետում սահմանված հանձնարարագիրը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

142.7. Կորպորատիվ գործողությունների վերաբերյալ Կենտրոնական ղեկավարության կողմից ռեեստրում գրառումների իրականացման համար թողարկողը, ի լրումն սույն գլխում նշված փաստաթղթերի, ներկայացնում է նաև

փոխարկման հանձնարարագիր: Արժեթղթերի փոխարկման հանձնարարագրի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

142.8. Կորպորատիվ գործողության իրականացման արդյունքում կոտորակային (ոչ ամբողջական) արժեթղթերի (այդ թվում՝ բաժնետոմսերի) առաջացման դեպքում դրանք ենթակա են թողարկողի կողմից դրանց շուկայական գնով հետգնման օրենքով սահմանված կարգով: Այս նպատակներից էլնելով՝ Կենտրոնական դեպոզիտարիան կորպորատիվ գործողություն իրականացնելիս պարտավոր է.

142.8.1. իրականացնել յուրաքանչյուր գրանցված սեփականատիրոջ (անվանատիրոջ) կոտորակային արժեթղթերի առանձին հաշվառում:

142.8.2. գրանցված սեփականատերերին (անվանատերերին) 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցել նրանց անձնական հաշիվներում կոտորակային արժեթղթերի հաշվառման վերաբերյալ՝ նրանց տրամադրելով այն գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը և կապի միջոցները, որոնց անձնական հաշիվներում հաշվառված են թողարկողի տվյալ դասի կոտորակային արժեթղթեր և տեղեկացնելով, որ նրանք, ցանկության դեպքում, կարող են միավորել իրենց պատկանող կոտորակային արժեթղթերը և ամբողջ թվով արժեթղթեր դարձնելուց հետո իրականացնել այդ արժեթղթերով հավաստված իրավունքները:

142.8.3. թողարկողին տրամադրել գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը՝ նշելով նրանց պատկանող կոտորակային արժեթղթերը:

142.9. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի մերժել թողարկողի կորպորատիվ գործողությունների հետ կապված գործառնությունների կատարումը, եթե կորպորատիվ գործողության իրականացման մասին թողարկողի որոշումը չի համապատասխանում օրենքին, այլ իրավական ակտերին կամ արժեթղթերի թողարկման որոշմանը, կամ եթե կորպորատիվ գործողության իրականացմամբ ի հայտ կգա նման որևէ խախտում:

142.10. Կենտրոնական դեպոզիտարիան իր կանոններով սահմանում է ռեեստրում գրառումների իրականացման ընթացակարգ այն դեպքերի համար, երբ թողարկողի կողմից իրականացված կորպորատիվ գործողության արդյունքներն արտացոլվել են թողարկողի կանոնադրությունում (կանոնադրությունը գրանցվել է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից)

#### **Գ Լ ՈՒ Խ 143**

##### ***ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԶԵՆՅԱԼ ՀԱՍՄԱՐՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-28)***

143.1. Թողարկողի լուծարման դեպքում տվյալ թողարկողի կողմից թողարկված բոլոր դասերի արժեթղթերը չեղյալ են համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ռեեստրում համապատասխան գրառումներ կատարելու միջոցով:

143.2. Արժեթղթերի մարման դեպքում դրանք չեղյալ են համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ռեեստրում համապատասխան գրառումներ կատարելու միջոցով:

143.3. Կենտրոնական դեպոզիտարիան կարող է իր կանոններով սահմանել արժեթղթերը չեղյալ համարելու ընթացակարգ:

#### **Գ Լ ՈՒ Խ 144**

##### ***ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՎԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ (ԿԱՆՈՆ 112.1բ-29)***

144.1. Կենտրոնական դեպոզիտարիան թողարկողի տվյալ դասի արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակը կազմում է թողարկողի կամ օրենքով սահմանված այլ անձանց կողմից իրենց իրավասության շրջանակներում տրված գրավոր հարցման հիման վրա, որի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

144.1.1. թողարկողի անվանումը:

144.1.2. գրանցված սեփականատերերի ցուցակի ստացման նպատակը (բաժնետերերի ժողովի գումարում, շահույթաբաժինների բաշխում, այլ).

144.1.3. գրանցված սեփականատերերի (անվանատերերի) հաշվառման ամսաթիվը:

144.2. Սույն կանոնագրքի 144.1 կետում նշված հարցումը ստանալուց հետո Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է մինչև հաշվառման ամսաթիվը ստացված փոխանցման հանձնարարագրերի տվյալները հաշվառման ամսաթվով մուտքագրել ռեեստր:

144.3. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակը, որի ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով, տրամադրվում է սույն կանոնագրքի 144.1 կետում նշված հարցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում (կամ հարցման մեջ նշված ավելի երկար ժամկետում) և պետք է ներառի գրանցված սեփականատերերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

144.3.1. գրանցված սեփականատիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի անունը, ազգանունը և բնակության վայրը (ֆիզիկական անձանց համար), անվանումը, գտնվելու վայրը և փոստային հասցեն (իրավաբանական անձանց համար):

144.3.2. անձը հաստատող փաստաթղթի տեսակը, համարը և սերիան (ֆիզիկական անձանց համար), գրանցման վկայականի համարը և գրանցման ամսաթիվը (իրավաբանական անձանց համար):

144.3.3. գրանցված սեփականատիրոջը պատկանող՝ թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակը:

144.3.4. Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով սահմանված այլ տեղեկություններ:

144.4. Արժեթղթերի գրանցված սեփականատերերի ցուցակը կազմելու համար Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի թողարկողի տվյալ դասի արժեթղթերի գրանցված անվանատերերից պահանջել այն անձանց ցուցակը, որոնց պատկանող թողարկողի տվյալ դասի արժեթղթերի գրանցված անվանատերն է թողարկողի կողմից նշված հաշվառման ամսաթվի դրությամբ: Գրանցված անվանատերը պարտավոր է անհրաժեշտ ցուցակը կազմել և Կենտրոնական դեպոզիտարիային անվճար տրամադրել պահանջը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

144.5. Անվանատիրոջ կողմից կազմվող ցուցակը պետք է ներառի սույն կանոնագրքի 144.3 կետում սահմանված տեղեկությունները:

144.6. Անվանատերն իր հաճախորդների, Կենտրոնական դեպոզիտարիայի և թողարկողի առջև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում սույն կանոնագրքի 144.4 կետում սահմանված ցուցակը Կենտրոնական դեպոզիտարիա ներկայացնելուց հրաժարվելու դեպքում:

144.7. Եթե անվանատերը սույն կանոնագրքի 144.1 կետում նախատեսված ցուցակը Կենտրոնական դեպոզիտարիա չի ներկայացրել դրա համար սահմանված ժամկետում, ապա Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է սահմանված ժամկետը լրանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել Կենտրոնական բանկին:

#### **Գ Լ ՈՒ Խ 145**

##### ***ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻ ԵՎ ՓՈԽԱՆՑՈՂ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-30)***

145.1. Մասնագիտացված անձը կամ բանկը, որը Կենտրոնական դեպոզիտարիայի հետ կնքած պայմանագրի

համաձայն իրականացում է սույն կանոնագրի 145.2 կետով սահմանված գործառույթները, կարող է հանդես գալ որպես փոխանցող գործակալ, եթե այլ բան սահմանված չէ Կենտրոնական բանկի որոշմամբ:

145.2. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի փոխանցող գործակալին վերապահել հետևյալ գործառույթները կամ դրանց մի մասը.

145.2.1. ռեեստրում գործառնությունների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը գրանցված սեփականատերերից (անվանատերերից) և նրանց լիազորված ներկայացուցիչներից.

145.2.2. ռեեստրում գործառնությունների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերի փոխանցումը Կենտրոնական դեպոզիտարիային.

145.2.3. Կենտրոնական դեպոզիտարիայից ստացված ռեեստրից քաղվածքների, գործառնությունների մասին տեղեկանքների և այլ փաստաթղթերի հանձնումը գրանցված սեփականատերերին (անվանատերերին) և նրանց լիազորված ներկայացուցիչներին:

145.3. Փոխանցող գործակալը պարտավոր է վարել Կենտրոնական դեպոզիտարիա ուղարկված կամ նրանից ստացված փաստաթղթերի հաշվառման մատյանը: Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է վարել փոխանցող գործակալին ուղարկված կամ նրանից ստացված փաստաթղթերի հաշվառման մատյանը:

145.4. Կենտրոնական դեպոզիտարիան պետք է սահմանի Կենտրոնական դեպոզիտարիայի և փոխանցող գործակալի միջև թղթակցության և փաստաթղթերի համեմատման և ստուգման կարգը:

#### **Գ Լ ՈՒ Խ 146**

##### ***ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՑ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ՌԵԵՍՏՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ (ԿԱՆՈՆ 112.1բ-31.)***

146.1. Այն թողարկողները, որոնց համար օրենքով և այլ իրավական ակտերով ռեեստրի վարումը Կենտրոնական դեպոզիտարիային հանձնելու պարտադիր պահանջ սահմանված չէ, և որոնց արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան, իրավունք ունեն ռեեստրի վարման պայմանագրով սահմանված կարգով ցանկացած ժամանակ Կենտրոնական դեպոզիտարիայից ստանալ և ինքնուրույն վարել տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը՝ Կենտրոնական դեպոզիտարիային գրավոր դիմում ներկայացնելով:

146.2. Եթե այլ բան սահմանված չէ օրենքով և այլ իրավական ակտերով, ապա թողարկողն իրավունք ունի Կենտրոնական դեպոզիտարիայից ստանալ և ինքնուրույն վարել տվյալ դասի արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը, եթե այդ արժեթղթերի գրանցումը դադարեցվել է՝ Կենտրոնական դեպոզիտարիային գրավոր դիմում ներկայացնելով և դիմումին կցելով այդ արժեթղթերի գրանցման դադարեցման վերաբերյալ Կենտրոնական բանկի կամ ֆոնդային բորսայի իրավասու մարմնի որոշման պատճենը:

146.3. Կենտրոնական դեպոզիտարիայից թողարկողին ռեեստրի փոխանցումն իրականացվում է սույն կանոնագրի 146.1 կամ 146.2 կետերում նշված դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում.

146.2.1. սույն կանոնագրի 146.1 կամ 146.2 կետերում նշված դիմումը ստանալուց հետո երկօրյա ժամկետում Կենտրոնական դեպոզիտարիան հրապարակում կամ գրանցված սեփականատերերին (անվանատերերին) ծանուցում է ռեեստրի փոխանցման գործընթացը սկսվելու մասին.

146.2.2. ռեեստրի փոխանցման վերաբերյալ կազմվում է ընդունման-հանձնման ակտ, որը ստորագրվում է Կենտրոնական դեպոզիտարիայի և թողարկողի լիազորված ներկայացուցիչների կողմից: Ընդունման-հանձնման ակտը և թողարկողին փոխանցվող փաստաթղթերը կազմվում են 2 օրինակից, որոնցից մեկը մնում է Կենտրոնական դեպոզիտարիայում.

146.2.3. ընդունման-հանձնման ակտի ստորագրման օրը ռեեստրի վարման պայմանագրի գործողության դադարեցման օրն է:

146.4. Ընդունման-հանձնման ակտով թողարկողին են փոխանցվում.

146.3.1. ակտի ստորագրման օրվա դրությամբ կազմված՝ թողարկողի տվյալ դասի արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակը՝ նշելով նրանց պատկանող թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակը.

146.4.2. թողարկողի տվյալ դասի արժեթղթերի գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և նրանց լիազորված ներկայացուցիչների քարտերի կրկնօրինակները:

146.5. Ռեեստրի փոխանցման ժամանակահատվածում (ռեեստրի փոխանցման գործընթացի առաջին օրվանից մինչև ռեեստրի ընդունման-հանձնման ակտի ստորագրման օրը) Կենտրոնական դեպոզիտարիան շարունակում է ռեեստրում գրառումների կատարումը:

146.6. Թողարկողի կողմից ռեեստրի վարման վերսկսումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում թողարկողը պարտավոր է հրապարակել կամ գրանցված սեփականատերերին (անվանատերերին) գրավոր տեղեկացնել ռեեստրի վարման վերսկսման մասին:

#### **Գ Լ ՈՒ Խ 147**

##### ***ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅԻՆ ՆԵՐԿԱՅՄՑՎՈՂ ԴԱՀԱՆՁՆԵՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-32.)***

147.1. Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր մարմնի ղեկավարը, ռեեստրի վարմանը մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ռեեստրում փոփոխություններ կատարելու իրավունք ունեցող Կենտրոնական դեպոզիտարիայի աշխատակիցները պետք է ունենան համապատասխան մասնագիտական որակավորում:

147.2. Կենտրոնական դեպոզիտարիան.

147.2. իր կողմից մատուցվող ծառայությունների գներն իրավունք ունի սահմանել միայն այդ ծառայությունների գների՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված առավելագույն չափերի սահմաններում.

147.2. պարտավոր է օրենքին և սույն բաժնի կանոններին համապատասխան ռեեստրը վարել տեղեկությունների էլեկտրոնային կրիչներով և ունենալ համապատասխան տեղեկատվական համակարգ և գործառնական ընթացակարգեր:

147.3. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է ռեեստրը վարել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն բաժնի կանոնների պահանջների պահպանմամբ, այդ թվում.

147.3. ապահովել գրանցված սեփականատերերի (անվանատերերի) կողմից ներկայացվող հանձնարարագրերի և հարցումների մշակումը՝ սույն բաժնի կանոններին համապատասխան.

147.3. իր կողմից ստացված յուրաքանչյուր փաստաթղթի շնորհիվ տարբերակիչ համար՝ նշելով այն ստանալու ամսաթիվը և ժամը և ապահովել փաստաթղթերի ժամանակագրական կարգով հաշվառումը: Ընդ որում, համապատասխան թղթապանակներին (ֆայլերին) պետք է կցվեն ժամանակագրական կարգով խմբավորված բոլոր լրացուցիչ փաստաթղթերը և գրառումները, որոնք թույլ են տալիս պարզել յուրաքանչյուր հանձնարարագրի կամ հարցման մշակման կարգը.

147.3. ռեեստրում կատարվող յուրաքանչյուր գրառմանը շնորհիվ հերթական տարբերակիչ համար՝ նշելով գրառում կատարելու ամսաթիվը.

147.3. արժեթղթերի սեփականատերերի ցուցակը կազմելու և տրամադրելու, ինչպես նաև թողարկվող արժեթղթերի տեղաբաշխման արդյունքների մասին հաշվետվության նախապատրաստման դեպքում ստուգել թողարկողի տվյալ դասի թողարկված և շրջանառության մեջ գտնվող արժեթղթերի քանակի և գրանցված

սեփականատերերի (անվանատերերի) անձնական հաշիվներում հաշվառված թողարկողի տվյալ դասի արժեթղթերի քանակի համապատասխանությունը.

147.3. անհապաղ և պատշաճ մակարդակով ուսումնասիրել ռեեստրի տեղեկությունների ճշգրտության կամ հնարավոր սխալների հայտնաբերման հետ կապված բոլոր հարցումները, անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան փոփոխություններ և 5 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել այդ հարցումներին՝ ներկայացնելով ստուգման արդյունքները և ձեռնարկված միջոցառումները.

147.3. ռեեստրում գրառումներ կատարելը կամ ռեեստրից տեղեկություններ տրամադրելը մերժելու դեպքում (բացառությամբ՝ արժեթղթերի փոխանցման, արգելադրման կամ արգելադրման դադարեցման հանձնարարագրերի) համապատասխան հանձնարարագիրը (հարցումը) ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնել այն ներկայացրած անձին՝ Նշելով մերժման պատճառները և իրավական հիմքերը.

147.3. ապահովել էլեկտրոնային տվյալների ամեն օր նորացվող պահուստային կրկնօրինակների պատրաստումը.

147.3. մշակել սարքավորումների, շինությունների կամ տեղեկությունների վնասման դեպքում գործունեության վերսկսման ծրագիր, որը Կենտրոնական դեպոզիտարիային հնարավորություն կտա ապահովել իր գործունեության անհապաղ վերականգնման հնարավորությունը՝ առանց վնաս հասցնելու համակարգում պարունակվող տեղեկությունների ամբողջականությանը.

147.3. ապահովել ռեեստրում առկա բոլոր տեղեկությունների գաղտնիությունը, որոնց ծանոթանալու իրավունք ունեն Կենտրոնական դեպոզիտարիայի միայն այն աշխատակիցները, որոնք անմիջականորեն մասնակցում են տվյալ ռեեստրի վարմանը.

147.3. իր կանոններով բացառել Կենտրոնական դեպոզիտարիայի աշխատակիցների փոխկապակցվածությունը մասնագիտացված անձանց կամ այն թողարկողների հետ, որոնց ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան, ինչպես նաև նրանց միջև շահերի հնարավոր բախումը.

147.3. ռեեստրից տեղեկություններ տրամադրել օրենքի և սույն բաժնի կանոնների պահանջներին համապատասխան.

147.3. իրականացնել օրենքով և սույն բաժնի կանոններով նախատեսված այլ գործառնություններ:

147.4. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է ֆոնդային բորսայում բորսայական առևտրին թույլատրված արժեթղթերով ֆոնդային բորսայից դուրս կատարված առուվաճառքի մասնավոր գործարքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել ֆոնդային բորսային՝ այդ գործարքների գրանցման պահից մինչև ֆոնդային բորսայի հաջորդ առևտրային նստաշրջանի սկիզբը: Նշված հաշվետվության ձևը սահմանվում է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններով և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները.

147.4. գործարքի առարկա արժեթղթի թողարկողի անվանումը.

147.4. գործարքի առարկա արժեթղթի դասը.

147.4. գործարքի առարկա արժեթղթերի քանակը.

147.4. մեկ արժեթղթի գինը.

147.4. գործարքի կնքման ամսաթիվը:

147.5. Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի մերժել թողարկողի կամ այլ անձի կողմից տրված հանձնարարագրերի (հարցումների) կատարումը, եթե դրանք չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի կամ թողարկողի հիմնադիր փաստաթղթերի պահանջներին: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից նշված հանձնարարագրի (հարցման) կատարումը հիմնավորված մերժելու դեպքում Կենտրոնական դեպոզիտարիան իրավունք ունի նշված անձին չվերադարձնել տվյալ հանձնարարագրի (հարցման) կատարման համար գանձված վճարը:

147.6. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից իրեն տրված օրինական հանձնարարագիրը չկատարելը կամ հարցմանը չպատասխանելը կարող է բողոքարկվել դատական կարգով:

## Գ Լ ՈՒ Խ 148

### **ՆԵՐՔԻՆ ՓԱՍՏԱԹՐԹԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱԳՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ (ԿԱՆՈՆ 112.1բ-33.)**

148.1. Կենտրոնական դեպոզիտարիան պարտավոր է մշակել և ընդունել կանոններ, որոնք ներառում են.

148.1.1. ռեեստրում գործառնություններ կատարելու կարգի ամբողջական նկարագրությունը ներառող գործառնական ընթացակարգերը՝ օրենքի և սույն բաժնի կանոնների պահանջներին համապատասխան.

148.1.2. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից մատուցվող ռեեստրի վարման ծառայությունների գները.

148.1.3. Կենտրոնական դեպոզիտարիայի կազմակերպական կառուցվածքի սխեման և կառուցվածքային ստորաբաժանումների պարտականությունների մանրամասն նկարագրությունը.

148.1.4. Կենտրոնական դեպոզիտարիայի աշխատակիցների կողմից տեղեկությունների գաղտնիության պահպանման չափանիշները օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որոնք պետք է աշխատակիցներին տրամադրվեն գրավոր շարադրված: Կենտրոնական դեպոզիտարիայի աշխատակիցները պարտավոր են պահպանել այդ չափանիշները և ամեն տարի գրավոր հաստատել դրանց պահպանումը:

148.2. Կենտրոնական դեպոզիտարիան իր գործունեության անվտանգության համար պարտավոր է ապահովել հետևյալ կանոնների ընդունումն ու կիրարկումը.

148.2.1. թողարկողներին, գրանցված սեփականատերերին (անվանատերերին) և նրանց հաշիվներին վերաբերող տեղեկությունների, գրառումների և փաստաթղթերի ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով ապահով և անվտանգ պահպանման կարգը: Կենտրոնական դեպոզիտարիան պետք է պարբերական ստուգումներ անցկացնի ոչնչացումից, կեղծումից, կորստից, ինչպես նաև թույլատրված օգտագործումից և իրապարակումից տեղեկությունների, գրառումների, փաստաթղթերի և ռեեստրի վարման համակարգի պատշաճ պաշտպանվածությունն ապահովելու համար.

148.2.2. համակարգչային ծրագրերի ամբողջականության ապահովման կարգը, որը պետք է ներառի.

ա) համակարգչային ծրագրերի և տեղեկատվական բազաների ամբողջական նկարագրությունը.

բ) համակարգից օգտվելու և պահուստային պատճենների ստեղծման կարգի մանրամասն նկարագրությունը.

148.2.3. Կենտրոնական բանկից, թողարկողներից, գրանցված սեփականատերերից (անվանատերերից) և այլ անձանցից ստացվող փաստաթղթերի մշակման, դրանց պահպանման և արխիվացման կարգերը.

148.2.4. արտակարգ իրավիճակներում Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեության հնարավոր սեղմ ժամկետում վերականգնման ապահովող միջոցառումների ծրագիր, որը պետք է ներառի.

ա) էլեկտրոնային տվյալների ամեն օր նորացվող պահուստային պատճենների պահպանման ապահովումը Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքում, ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքից դուրս.

բ) ռեեստրի վարման և տեղեկությունների մշակման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերի և բոլոր օժանդակ կյութերի մշտական պահպանման ապահովումը Կենտրոնական դեպոզիտարիայի տարածքից դուրս.

գ) Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեությունն արտակարգ իրավիճակներում անհապաղ վերականգնելու ծրագրի մշակումը.

դ) արտակարգ իրավիճակներում գրանցված սեփականատերերի (անվանատերերի) և թողարկողների հետ կապի հաստատման և պահպանման կարգը.

ե) արտակարգ իրավիճակներում մեկ այլ իրավաբանական անձի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային ռեեստրի վարման համար անհրաժեշտ տեխնիկական բազայի տրամադրման վերաբերյալ պայմանագրի կնքումը.

